

ՆԱԲ ԵՐԶԱՆ

Կ ՅԱՐԻ

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 9

Ս Ե Պ Տ Ե Մ Բ Ե Ր

1905



Թ Ի Յ Լ Ի Ս

Տպարան «ՀԵՐՄԵՆ»-ի Թաղար. Վար. № 25.

1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 9

Երեւ.

1. ԱՆՏԱՌԸ ՇԱՐԺԱՌԻՄ Է..., զրոյց Վ. Փափազեանի . 5
2. ԱՐՏՈՅՏՆ ԵՐԴՈՒՄ Է, ոտանաւոր Ա. Իսահակեանի 13
3. Ռ. ՊՍԿԱՆԵԱՆԻ ՆԱՄԱԿԵՐԸ, 14
4. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՉԱՐԳԱՅՄԱՆ ՖԱԶԵՐԸ Բ. Ի. 24
5. ԹՈՉՆԻԿՆԵՐ, ոտանաւոր Ա. Ժառուբեանի, 37
6. ՆԱՍՐԷԻԴԻՆ Շ. ԲԵՅՈՐՄԵՐ ՄՏՅՆԵԼՈՒ ՓՈՐՁԸ,
Գրինֆելդ, Թարգմ. Ա. Շահ. 38
7. ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՍԿԶՐՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՅՈՒՄԸ ԱՆԳ-
ԼԻԱՅՈՒՄ, Պորրիտ, 51
8. ՅՐԻԴՐԻԽ ԷՆԳԵԼՍ, Բ. Իշխանեանի 57
9. ԸՆՏՐԱԿԱՆ ՍԿԶՐՈՒՆՔԸ ՀԱՅ ԵԿԵՂ. ՊՍՄ. ԿԵԱՆ-
ՔՈՒՄ, Արսէն վարդապետի 68
10. ՀԻԻԱՆԴ ՄԱՐԴԸ, Շտերնի, Թարգմ. Լ. Բաքալեանի 86
11. ԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆՐ ԱԶԳԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ, Տ-ի 116
12. ՕՐԵՐԼԷՆԵՐԸ, վեպ Րընէ Բագէնի 118
13. ԴԻՏՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ, Ս. Նալբանդեանի 127
14. ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԻՑ, Հ. Ալեանարի 134
15. ԱՍՊԵՏԱԿԱՆ ՈԳԻՆ ՃԱՊՈՆԻԱՅՈՒՄ, Էմէսընի, 145
16. ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.—1)
Վ. Լուկիւիչ՝ «Կապիկները».—2) Գ. Լեոնեան՝
«Գծադրութեան եւ նկարչութեան տարրական դասըն-
թաց».—3) Դոկտոր Կ. Փաշայեան՝ «Ընդարձակ զրոյ-
րոցական առողջապահութիւն».—4) Ս. Ա. Մելիք-Սար-
կիսյան «Хлопковое дѣло въ Ферганской об-
ласти и мѣры къ его упорядоченію» Եր. Ս-ի. 164
17. ՆՈՐ ՄՏԱՅՈՒԱՅ ԳՐՔԵՐ 166
18. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Լատիվերոցին թուրք-թաթարնե-
րի մասին:—Համալսարանական տակտիկան:—Մի-
ջոցներ քաղաքացիական կռիւներին վերջ դնելու:—Հա-
յոց զպրոցների վերաբերեալ կարգադրութիւն:—Պետա-
կան դումայի իրաւասութիւնը:—Համալսարաններին
չնորոգած ինքնավարութիւնը Լ. Ս. 168
19. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Խաղաղութեան դաշինքը Ռու-

Դ. ԽՐ շրջան V տարի

Հրատ. XVII տարի

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՅԵՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 9

Ս Ե Պ Տ Ե Մ Բ Ե Ր

1905



ԹԻՖԼԻՍ
Տպարան „ՀԵՐՄԷՍ“ ԸՅԿ. Մազաք. փող., 15.
1905

Дозволено цензурою Тифлисъ 1905 г. 9-го сентября.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 9

Երէս

1. ԱՆՏԱՌԸ ՇԱՐԺԻՈՒՄ Է..., զրոյց Վ. Փափազեանի . 5
2. ԱՐՏՈՅՏՆ ԵՐԴՈՒՄ Է, ոտանաւոր Աւ. Իսահակեանի 13
3. Ռ. ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ, 14
4. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՖԱԶԵՐԸ Բ. Դ. 24
5. ԹՈՉՆԻԿՆԵՐ, ոտանաւոր Ալ. ծառուրեանի, . . . 37
6. ՆԱՍՐԷԴԴԻՆ Շ. ԲԵՖՈՐՄԵՐ ՄՏՅՆԵԼՈՒ ՓՈՐՁԸ,
Գրինգելը, Թարգմ. Ա. Շահ. 38
7. ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԱՆԳ-
ԼԻԱՅՈՒՄ, Պորրիտ, 51
8. ՖՐԻԴՐԻԽ ԷՆԳԵԼՍ, Բ. Իշխանեանի 57
9. ԸՆՏՐԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ ՀԱՅ ԵԿԵՂ. ՊԱՄՄ. ԿԵԱՆ-
ՔՈՒՄ, Արսէն վարդապետի 68
10. ՀԻԻԱՆԴ ՄԱՐԴԸ, Շտերնի, Թարգմ. Լ. Բարայեանի 86
11. ԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆՐ ԱԶԳԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ, Տ-ի . . 116
12. ՕՐԵՐԼԷՆԵՐԸ, վէպ Րընէ Բազէնի 118
13. ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ, Ս. Նալբանդեանի . . 127
14. ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԻՑ, Հ. Ալեանաքի . . . 134
15. ԱՍՊԵՏԱԿԱՆ ՈԳԻՆ ՃԱՊՈՆԻԱՅՈՒՄ, Էմէսընի, . . 145
16. ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏՆԱՆՈՍՈՒԹԻՒՆ.—1)
Վ. Լուկեիւի՝ «Կապիկները».—2) Գ. Լեւոնեան՝
«Գծադրութեան եւ նկարչութեան տարրական դասըն-
թաց».—3) Դոկտոր Կ. Փաշայեան՝ «Բնդարձակ դրպ-
րոցական առողջապահութիւն».—4) Ս. Ա. Меликъ-Сар-
кисянъ «Хлопковое дѣло въ Ферганской об-
ласти и мѣры къ его упорядоченію» Եր. Ս-ի. 164
17. ՆՈՐ ՍՏԱՅՈՒԱԾ ԳՐՔԵՐ 166
18. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Լատիվերդին թուրք-թաթարնե-
րի մասին:—Համալսմանների տակտիկան:—Մի-
ջոցներ քաղաքացիական կռիւներին վերջ դնելու:—Հա-
յոց դպրոցների վերաբերեալ կարգադրութիւն:—Պետա-
կան դռնապի իրաւասութիւն:—Համալսարաններին
շնորհուած ինքնավարութիւնը Լ. Ս. 168
19. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Խաղաղութեան դաշինքը Ռու-

սաստանի եւ շապոնիայի մէջ:—Անգլո-Յապոնական	
նոր դաշնագիրը:—Մերձաւոր Արեւելքի գործերը:—	
Թուրքիա եւ մեծ պետութիւնները: Լ. Ս.	182
20. ԵՐԻՏՐԵԱՆԻ ԴՈՒՐԻՆԵՐԻ ԿՈՉԸ, Տ. Չ.	185
21. ՎՐԻՊԱԿՆԵՐ	188
22. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ	
23. ՅԱԻԵԼՈՒՄԾ. Ջէյմս Մորիէր՝ «ՀԱՅԻ ԲԱԲԱՆ ԱՆԳ- ԼԻԱՅՈՒՄ», Վէպ պարսկ. կեանքից, թարգմ. անգլ. Մ. Կարապետեանի.	65—121

ՀԱՆՏԱՌԸ ՇԱՐԺԻՌԻՄ Է...

(Զրոյց)

I

...Եւ այդ սքանչելի հովիտում, առատաբուղիս ջրերի, կապուտակ վէս ծովալճերի, ծաղկաւետ բլրալճերի էղերին, հին, անյիշատակ ժամանակներից ի վեր, անձեղ-սփռուել էր մի շքեղ, խիտ անտառ:

Կաղնին ու թեղին, լորին և բոխին ճիւղ-ճիւղի միացրած, արմատներովը հողը պինտ զրկած, անհամար ճիւղաւորութեամբ, բիւրաւոր ընձիւղներով՝ տարածուել էին հեռուները, երկիրը բեղմնաւորել, սև-պարարտ հողով պարուրուել և ապրում էին գոռոզ ու ազատ՝ մեծ երկնքի տակ, ջերմացնող արևի մէջ, սնուցանող անձրևով ուռճացած, զովացած:

Դեռ այդ քիչ էր: Գնում էր, շարժւում անտառը, մազլցում բնակարանը շրջապատող քարաժայռերի վրայ, ճեղքում նրա կուրծքը, անցնում, պտոյտ զործում խոժու ու կնճուտ կոյտերի միջոցով, իր սերնդեան նոր շառաւիղներով ճգնում էր մի թիզ հեղ իսկ չթողնել անբնակ, մի քայլ իսկ չձգել անմշակ:

Ու անտառը շրջապատող կոյտերը ճակատնին կընճաւ՝ զիտում էին այդ, ատամ կըճտեցնում նրա շարժուն, կենսունակ գոյութեանը վրայ:

Չոր, լերկ ապառաժներ էին դրանք: Ոչինչ չէր բուսնում այնտեղ՝ բացի մամուռից. ոչ մի թռչուն, ոչ մի աւարած, բացի անարգ մողէսներից: Անձրևն ու արևը խանձում-մրկում էին նրա կողերը, քամին անարգել

ծեծում-շարդում գլուխները և նրանց գոյութիւնը մի-
միայն անտառին էր օգտակար լինում.— ստուերում էր,
պահպանում դժնդակ ցրտից:

Այդպէս էր բնութեան մէջ՝ երկրի այդ անկիւնը:
Ժայռը զայրանում էր անտառի վրայ, անշարժութիւ-
նը ատամ էր կրճտեցնում քայլող կեանքի դէմ. իսկ ան-
տառը, այն հովասուն, շքեղ, սաղարթալից ծառերով
անտառը աճում էր, ժպտում արեին, հրճում իր կեան-
քով, մեծանում, խտանում, գնում էր—գնում և ապա-
ռաժների դէմ կաղնիներ ցցում, նրանց ճեղքերում վարդ,
ծաղիկ սփռում:

—Ծաղրում են մեզ դրանք... մոռնեց վերջապէս
վիթխարի կատարը— ծաղրում են. նրանց իւրաքանչիւր
ժպիտը մե՛զ է հայհոյում:

—Ջարդենք յանդուգներին, դռաց ժանգոտ ապա-
ռաժը. ուզում են մեր սրտերը պատռելու ելնել:

—Գրաւենք հովիտը, խորհուրդ տուին մամուռտ
քարերը, այնտեղ հողը փափուկ է, օդն աւելի մեղմ,
շրերն առատ...

Երկար վիճեցին, երկար սպառնացին, ճահճին՝ ան-
տառը ողողելու հրաւէրը կարդացին, գաղաններին՝ ծառերը
ոչնչացնելու խորհուրդը ներշնչեցին:

Բայց անտառն այն շքեղ, ամեն առաւօտ զարթ-
նում էր մի նոր, աւելցած ոյժով, աճում էր—գնում
բեղմնաւորութեան հսկայ քայլերով:

Այնտեղ էր թռչունն իր երգը հնչեցնում, սոխակը
լուսադէմին՝ դայլայլով ողջունում, կենսապարար զովու-
թիւնը՝ մեծ սաղարթների տակ անուշ, քաղցր բուրում,
թաւիշ մարգագետինը արեւի տակ պսպղում:

Նոյն իսկ այնտեղ էր, որ վտակները ժայռերից
խուսափելով՝ հանգիստ էին որոնում, ուրախ-զուարթ
խոխոջում, իւրաքանչիւր ծառի, ընձիւղի արմատը
գզւում...

Այդ արդէն անտանելի էր քարաժայռերի դաժան հոյտի համար: Ամեն ինչ,— ծաղիկ, ջուր, նոյն իսկ մողէան ու մամուռ՝ կռանում էին դէպի անտառը. կարծես խուսափում էին ժայռերից, ուզում էին գնալ ապրելու թարմ կանաչներում, զով ստուերների, դալար ճիւղաւորութեան տակ:

Վիթխարի կատարը դողում էր զայրոյթից, ճահիճը մի կողմից ճգնում էր իր զազիր բորբոսը անտառին հասցնել, զազանները մի այլ կողմից փորձեցին նոր ընձիւղները տրորել, ջարդել...

Ու ամեն ինչ, ամեն անարգ ոյժ ի մի գումարուած՝ մտածեցին վերջապէս կասեցնել շարժուող կեանքի ընթացքը:

Ու յաջողուեցան:

Ինքը անտառը, իրերի բերմամբ, դուցէ և իր չափաբախտ դիրքի պատճառով, և կամ, ո՞վ գիտէ, տնաւերներքին դաւաճան երկպառակութեամբ՝ թուլացաւ, ջլատուեց և ժայռ ու դազանի, ճահիճ, զեռունի կերակուր եղաւ:

Նկաւ աշնանային ժանգ սփռող եղանակը. բարձրացան խորշակներ, ժայռերը իրանց մէջ կռտակած ջրերը բաց թողին, զազանները կատաղի ոյժով բանակ կազմեցին, ճահիճը մեծացաւ, բորբոս-զեռունով մօտեցաւ կեանքին...

Յետոյ, հովերը ծառերին միմեանց դէմ հանեցին, զարկին, ծեծեցին, ճիւղը ճիւղով ջարդեցին, արմատները բացին, թուլացրին, կաղնուն լորենու վրայ տապալեցին, բոխին՝ հացենու տակը ճգմեցին...

Նւ երբ քարաժայռերը չար քրքիջներով այդ աւերը ողջունեցին, վիթխարի կատարը ցնցուեց, դարձաւ լերկ ապառաժներին ու դոչեց ահեղ.

— Յառաջ, ժամանակն է այժմ վերջ տալու այդ ատելի, շարժուող կեանքին!...

Նւ ահա մէկէն դղրդաց գետինը, լեռ ու ապառաժ ցնցուեց-օրօրուեց, քար ու քառաժայռ շարժուեց-տա-

տանուկեց, մեծ որսորդմով ոսանեց, կասարը ծուխ-բոց արծակեց, մոխիր, խանձող ու այրող կրակ դուրս ժայթ-
ջեց՝ և այդ բոլորը, ահաւոր դանդաղութեամբ, թանձր
խաւարի մէջ իջաւ, անտառի վրայ ընկաւ, տակնին ա-
րաւ ծառ ու ճիւղ, ծաղիկ և ընձիւղ: Զարդեց, տրորեց,
մրկեց ու ծածկեց նրան քարի կոյտերի, փոշու, հողի,
տիղմ ու աւաղի մէջ...

Թռչունները ահաբեկ՝ փախան, հեռացան, ուրախ
կարկաչով հոսող ջրերը կամ ցամաքեցան և կամ ճա-
պող փախուստով՝ շտապեցին գետնի խորքը ապաստա-
նել:

Այլ ևս ոչ մի ստուեր. գովութեանը յաջորդեց չոր
անապատը. քարոտ, ամայի, արևի տակ տառապող ամ-
լութիւնը գրաւեց ամբողջ հովիտը:

Հճակները յուզուած՝ ջանացին կռիւ մղել, ծեծել,
հեռացնել զլորուող ժայռերին, մարել կատարի հոսա-
նուտ կրակը, և, մինչև այդ խաղաղ ժպտող ջրերը,
անընդհատ կռուի ելան ապստամբների դէմ, ճգնեցին
փշրել նրանց կողերը, ոյժ տուին լզելով մաշելու նրանց
կոշտ ներկայութիւնը, բայց չարադէմ ժայռերը աւելի
խորը մղուելով՝ իրանց տակ մեռցրին, ոչնչացրին ամեն
գալարիք, ամեն կեանք կամ շարժողութիւն...

Այդպէս էր ահա, որ անտառն այն չքով՝ տրորուեց
ժայռերի ոյժի տակ: Այդպէս էր ահա, որ այն սքանչե-
լի հովիտը սև ու ահաւոր քարերի անապատ դարձաւ,
ծովակների շուրջը քարերի շղթաներով կաշկանդուեցաւ
և շրջակայ ծաղկաւետ բլուրների վրայ չոր ամայութիւ-
նը եկաւ, բնակուեցաւ...

Եւ այդ դեռ բաւ չէր. ճահիճն էլ միւս կողմից
մօտեցաւ, դիմադրելու ոյժ չունեցող անտառի կուրծքը
մտաւ, եղած ծառերին իր գարշ բորբոսով պատեց,
գեղունների և գորտերի ձայներով ամեն թռչուն ու սո-
խակ հանեց, դուրս նետեց:

Վարդը մեռաւ բորբոսից, ընձիւղները արմատախիլ,
ախուր շարքերով, քարերի ճեղքերում իրանց գերեզմա-

նը դտան, և, մշտադալար, թարմ կանաչութեանը յաջորդեց տիղմով ու բորբոսով կանաչած՝ հոտած մի ճահիճ:

Եկան նաև գաղանները: Խմբովին եկան: Ջարդեցին, փշրեցին, ոտնատակ առին, ամեն ինչ տրորեցին և հովասուն վայրերը չոր խուհւների ասպարէզ շինեցին, ուր այնուհետև գայլերն էին միայն ոռնում, բորենիներ թափառում և խոզերը՝ հողը քրքրում...

Անտառը յաղթուել էր, ընկճուել-ոչնչացել, և գեղեցիկ հովիտը լերկ անապատի փոխուել...

II

Երկնք, անհաշիւ երկար տարիներ տօնեցին ժայռերն իրանց՝ յաղթութիւնը, վայելեց ճահիճը՝ իր տիրապետութիւնը, տրորեցին գաղանները՝ իրանց անկիւնը:

Երկնք, անհաշիւ տարիներ սուրաց աւաղախառն քամին հովտի վրայով, ծովալները ալեկոծեցին իրանց ափերը, մոնչացին, լացին, չշրուեցին քարերի շրջանակի գէմ:

Երկնք, անհաշիւ տարիներ մողէսներ ու օձեր աղտոտեցին հովիտը իրանց զգուելի երգերով:

Արեւը խանձեց, անձրեւը ծեծեց, աւազը շերտեր կազմեց, ճգնեց անցեալից ոչ մի հետք չթողնել, և ամեն ոք կարծում էր որ անտառը վերջնականապէս մեռել-ոչնչացել էր ու այլ ևս չպիտի կարողանար շարժուել:

Ստեփան այգապէս չեղաւ:

Լեռնային երկրներում, նոյն իսկ ամենախաղաղ գրանիտային ուշխարհներում, յաճախ տեղի են ունենում այնպիսի գէպքեր, որ նոյն իսկ բնութեան տարօրէն երևոյթների անվարժ անձը մնում է ապշած:

Ջրերից, բուսականութիւնից հեռու, միապաղաղ խոշոր ժայռերի մի ամենահնչին ճեղքը մտնելով, անձրեւի կաթիլներից սնունդ ստացած, տարիներով խուլ

աշխատանքից յետոյ, սակաւ առ սակաւ կուրծքը ճեղքում և վեր են պարզւում այնպիսի ոյժով մեծամեծ ծառեր, որ կատարելապէս անհասկանալի է մնում թէ ո՞ր աստիճան հսկայ ոյժ էր պէտք այդ բոլորն անել կարողանալու համար:

Բուսական աճեցողութեան ոյժը, յիշուի, եթէ նա գոյութիւն ունի նոյն իսկ փոքրիկ սաղմերով, ոչ միայն չէ մեռնում, այլ ոչինչ, բացարձակ ոչինչ չէ կարող ճնշել նրան, ժամանակի ընթացքում փշրել-ծակելու ամեն արգելք, բարձր պարզելու իր ճիւղաւորութիւնը և իր բեղմնաւոր սերնդեան պատուանդան շինելու լեռ ու ապառաժ...

Սակայն յաղթողներից ոչ մէկը չգիտէր այդ: Ո՛չ այն վիթխարի կատարը, որ ծուխ ու կրակով մրկեց ամեն ինչ և կարծեց մեռցնել անտառը, որ քար—ապառաժով փշրեց ամեն ընծիւղ և մտածեց ոչնչացնել շարժումը. ոչ ճահիճը գիտէր, որ բորբոս-գեռունով պատեց անտառը և ջանաց փտութիւնով կանգնեցնել կեանքը, և ոչ էլ գազանները գիտէին, որոնք տրորեցին ամեն ծառ և յուսացին անապատ շինել կեանքի փոխարէն:

Բայց հէնց վիթխարի կատարի մոխիրն ու կրակը, միացած ճահճի սփռած փտութեան, գազանների տրորած, խռիւ դարձրած տերևների հետ — խնամեցին, ամեն վտանգներից ազատ պահեցին մեռնող անտառի աճողութեան ոյժը և երկար, շատ երկար ժամանակներից յետոյ, ապշութեամբ զգացին, որ այնտեղ—խորքերում, քարերի տակ, ժայռերի թողած փոքրիկ ճեղքերի մէջ, ճահճի կռտած փտութեան խաւերում՝ կատարւում էր մի նոր բան:

Չնչին, վտիւ և փոքրիկ արարածներ այս այն կողմից զլուխ էին դուրս պարգում, ամենափոքր կաթիլից սնանւում, ստուերից զովանում և նուրբ կանաչութեամբ անապատը կենդանացնում...,

— Ի՞նչ է այն, գոչեց ապշութեամբ լերկ ապառաժը. կարծես կանաչ բաներ են լոյս ընկնում:

— Ոչի՞նչ բան, քրքշաց կատարը. ճզմեցէք կամ անուշադիր թողէք:

— Թող աճեն, ի՞նչ կայ, ասացին քարերը. մեզ հովանաւորում են, զարդարում միայն: Ի՞նչ են այդ չնչին արարածները, որ մեզ ուշադրութեան առարկայ դառնան...

Ու թողին: Ժպիտը դէմքին՝ ժայռերը դիտում էին փոքրիկ արարածների բազմանալը. ճահիճը մինչև իսկ ուրախացաւ, որ ինքն էլ բուսցնելու ընդունակ է. իսկ գազանները արհամարհութեամբ անցնում էին նրանց կողքով:

— Յիմար բաներ են, թողէք աճեն որքան կուզեն!..

Եւ աճեցին, բարձրացան, արմատները խորը մղեցին, լուռ, առանց աղմուկի պարզութեան ամէ՛ն ուղղութեամբ, ժայռերի տակ մտան, ճեղքերից, խորշերից զրլուխ դուրս պարգեցին, յետոյ մէկէն, բուռն մղումով այնպէս առաջ գնացին, որ ինչքան քար կար՝ ճեղքուեց, ինչքան ապառաժ՝ երկու կտոր եղաւ...

Անտառը շարժւում էր:

Գարնանային անձրևներից յետոյ եկան հիւթալից, աճեցնող օրերը. մանր ճիւղաւորութիւնները դուրս պարգուեցին ուժգնութեամբ, արմատները հսկայ ոյժով գէն զլորեցին իրանց ճնշող քարերը, ապա ուռելով՝ փշրտեցին, գրեթէ հող շինեցին ապառաժները, ճահիճը աեղի տուաւ ահաբեկ, գազանները սոսկումով ետ քաշուեցին նոր ծառերի դուրս պարգած փշերի առաջ, հովիտը մէկէն կենդանացաւ, առուները հոսեցին, ձգվակները՝ ժայռերին ծեծելով, տակը փորելով՝ փլեցրին ու ջրով ծածկեցին...

Ու այս ամէնը այնքան արագութեամբ կատարուեց ու մեծացաւ այնուհետեւ, որ վիթխարի կատարը սոսկումից կծկուեց. ժայռերը ջարդուած՝ շտապեցին թափնուելու աճող խոտերի տակ, գազանները առանց ետ

նայելով՝ դուրս թռան հովիտից, ճահիճը ամբած՝ իր վերջին բորբոսը տարաւ կծկելու հեռուոր ժայռերի ստորոտում:

Այնուհետեւ այլ ևս անհնար դարձաւ շարժուող անտառի առաջն առնել:

Իւրաքանչիւր ծառ, իւրաքանչիւր թուփ և ծաղիկ բխրաւոր ընծիւղներ արձակեց ամէն ուղղութեամբ. կաղնին, յորին, բոխին, հացենին դէն շպրտեցին իրանց նեղույ քարերը, ծակեցին-անցան ժայռերը. ոսնատակ տուին, իրանց արմատների իւրաքանչիւր թելով փշրտեցին— հող շինեցին նրանց և այնտեղ, ուր շատ սարիներ առաջ գազաններ էին ոռնում, գորտն էր կռկռում, մողէսը թափառում— այժմ բազմաթիւ վտակներ, աւելի առատ քան առաջ, եկան ոռնգելու ծառ ու ծառաստան, վարդ ու ծաղիկներ:

Այնտեղ, ուր չոր անապատը աւազն էր ոլորտում օդի մէջ, այժմ ծառերի տերեւներն էին սօսափում և ճիւղերի միջից թռչուններ էին դայլայլում:

Այնտեղ, ուր քամին սուրալով խանձում էր ամէն բոյս, այժմ թարմ գովութեան մէջ աճում էին շուշանն ու նարգիզը, պուտն ու մանիշակը:

Այնտեղ, ուր ժայռերն իրանց յաղթանակն էին սօսում, ճահիճն իր զաւիր բորբոսը հոսեցնում, գաղտնի իր ատամներով կտրատում, անցնում— այժմ սև հող էր դոյանում, խիտ, կենդանի, շարժուն անտառի մեծ տարածութիւն էր պարզւում և կեանքը ժպտում էր, ժրպտում խնդաւին, աճելով աւելի բարձր, աւելի ուժեղ, քան ամէն ժայռ կամ կրակ ցայտող կատար...

Անտառը դարձեալ շարժւում էր. աճողութեան ոյժը յաղթել էր. ոչինչ չէր կարողացել անհետացնել նրան. ոչ ժայռ, ոչ ճահիճ և ոչ գազաններ...

Եւ այժմ, այդ սքանչելի հովիտում, առատաբուղի ջրերի, կապուտակ վէս ծովակների, ծաղկաւէտ բլրակների կողերին, հին, անյիշատակ ժամանակներից ի վեր աճող անտառը դարձեալ իր հօլն է բռնել, դարձեալ

ճիւղ-ճիւղի միացրած, արմատներովը հողը պինդ դրրկած, անհամար ճիւղաւորութեամբ տարածւում է հեռուները և ճղնում է մի թիզ իսկ չթողնել անբնակ, մի քայլ իսկ անմշակ:

Սյդպէս է լինում: Լեռնային երկրներում, նոյն իսկ գրանիտային աշխարհներում յաճախ տեղի են ունենում այնպիսի դէպքեր, որ նոյն իսկ բնութեան տարօրէն երկւոյթների անվարժ անձը մնում է ապշած...

Վ. Փափազեան

ԱՐՏՈՅՏՆ ԵՐԳՈՒՄ Է

Առաւօտուն ծով—ճաճանչում
Արտուն ուրախ ճախրում է վեր.
Ցաւ ու խաւար չի ճանաչում,
Երգում է լոյս, երգում է սէր:

Իսկ իմ սիրտը տխուր ուսե՛,
Շուրջս աւեր ու ցաւեր.
Եւ իմ դարդոտ զլսի վերեւ
Աշտուն ուրախ երգում է սէր:

Ա. Խաճակեան

ՌԱՓԱՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ *)

Սիրելի եղբայր, Գէորգ,

Կարելի է դու ինձ սպասում կ'լինէիր՝ անցեալ ամսի 15-ին. իմ գործը այնպէս չի գնաց. ես յետ աւարտելուս քննութիւնը ամենեւին չի կարողացայ գալու, ինչու որ չէի կարող իմ գծուծ տնտեսութեան համար աւելորդ համարել մի քանի տասնհազկ մանկ թներ, և այդ պատճառաւ քու քաղցր տեսութիւնն աւանդաւ զոհեցի ծանր տաղտկութեան մայրաքաղաքիս: Բայց ես դիպուած գտայ և գնալու եմ այս օրերս սահմանից՝ դուրս մինչև Նիցցա, ի հարկէ Գերմանիա և Գալլիա ևս և իմ ուղևորութիւնը կ'տևի (զուցէ) ամիս ժամանակ: Ուղարկեց քեզ Իզմիրեանը իմ նոր մարսէլիսզը, որ յատկաբար խնդրել էի որ քեզ հասցնէր: Վարդան, կամ տուր Յովհաննէս եղբօրս, կամ անյապաղ ուղարկէ Կռունկի խմբադրատունն: Խնձանից ամենին շատ բարև:

Մնամ մտերիմ բարեկամ քու Ռաֆայէլ

1861, փետրուարի 3-ին

Ս. Պետերբուրգ:

Ամենապատուական եղբայր և բարեկամ

Շնորհաւորում եմ ի բոլոր սրտէ յաջողութեամբ քննութիւնդ աւարտելդ. բայց այդ մասին քու զրելը արդէն անագան էր, ինչու որ՝ պը. Ֆիդանեանը արդէն մեզ ծանուցել էր: Աստուծով ես յոյս ունիմ ուսումնական ճառդ պաշտպանելու ներկայ կ'գտնուիմ Մոսկ. համալսարանումն և աչքովս կը տեսնեմ քու փառքը:

Շնորհակալ եմ յուսադրիչ նամակիդ համար. ես այլ ազդ չէի կարող ակնունել քեզանից. ես գիտէի որ դու, եթէ մուսայած էլ լինէիր, չի պիտի տևողական լինէր: Իմ գալս այդ-

*) Տե՛ս «Մուրճ» № 8.

տեղ արդէն կարի հարկաւոր է լինում. ինչու որ տէրութեանիցն եւ թոյլտուութիւն ստացայ «Հիւսիս» անունով օրագիր հրատարակելու, որ գալիս, ՚ի հարկէ, իրաւունքս կը բերեմ այդտեղ և հղբայր ուսանողներին մեծապէս նիւթապէս կը շահեցնեմ:

Խորհուրդ եւ տալիս կանդիդատութիւն ևս ստանալու. եղբայր, եթէ հնար ունենամ կանեմ, բայց որ ասում եւ կարի հարկաւոր է՝ այդ ինձ մոլորեցնում է. բայց ես այնքան չեմ ելնչում, վասն զի այժմ կողմնակի կամ օգնական առարկաներիցն ազատ լինելուց, յոյս ունեմ զիարդ և իցէ ընկճել և այդ: Ի՛նչ ասել կ'ուզէ, եթէ այդ աստիճանն ստանամ՝ կ'ջանամ մի օրինաւոր շարադրութիւն գրելու հայոց դպրութեան վերաբերած:

Եւ անցեալ գրումս քեռորդուս (Քառաքաշի) մասին խնդրել էի և դու մոռացար ինձ միամտացնելով՝ միամտացնել տալ նորահօրն ու մօրը. ինչ որ խնդրել էի, ՚ի սէր Աստծոյ, քանի մի տողով պատասխանես, թերևս Խաչատուր բարեկամս յանձն առնէր այդ ծանրութիւնն, որով ՚ի հարկէ շատ կ'պարտաւորէր ինձ:

Միշտ մտերիմ բարեկամ և խոնարհ ծառայ քու Ռաֆայէլ

Դեկ. 9, 1861

Ս. Պ. Բ.

Քու նամակը, ճշմարիտ է, ուշ հասաւ, սիրական Գէորգ, բայց ունեցաւ այնքան ներդործութիւն, որ բաւականին թեթեւցուց այն վերահաս վտանգը, որ բոլէից բոլէ պատառուելու էր մեր գլխին. կարճ ասեմ, նամակդ որ ստացայ՝ իսկոյն վազեցի Բլիւմի մօտ, տեսայ որ նա ծախս էր անում մի գնողի հետ որ յայտարարութեան զօրութեամբ ևկել էր. բանը քանի մի ռուբլիի վրայ էր. իսկոյն ևկայ ու կանգնեցուցի, ցոյց տալով նամակդ (ներէ, ես ստիպուած էի բռնալ պը. Ստեփանեանի վրայ ուզղած, որ մեր բախտից զրած էր ռուսերէն. նոքա կարծեցին թէ մեր արածը ֆօքուս էր, բայց նա գնաց և իմացաւ որ այդպիսի անձն ևղել է և զնացել է): Իկժմ վերադարձնում եմ և խնդրում եմ, հէնց որ ստացար նամակդ՝ իսկոյն ստացիր գումարն և ուղարկէ. բայց մի ուզղիլ իմ հոսցէոթի, ես տանտիրոջ պարտական եմ 35 մանէթ, շատ կարելի է որ նա կ'ամենայ՝ վրայից առնելու: Ուրեմն ուղղէ Հայոց քահանայի վրայ Его Преподобию, Армян. священнику Отцу Григорию, на Нев. прос. въ д. Арм. Церкви, և եթէ բաց յայդմանէ կարող ես ինձ գհնէ 25 մանէթ ուղարկել այն փողից որ

ասար ինձ, իբր թէ ունիս, լաւ կ'անես, Աստուած հաւատացիք,
խիստ պէտք է: Մնամ եղբայրութեանդ խոնարհ

Ռափայէլ

P. S. Ես Իզմիրեանցից ոչ մի նամակ չեմ ստացած, ի՞նչ
նամակի անուն ես տալիս, չեմ հասկանում:

26 Ապրիլի

Սիրելի եղբայր Գէորգ,

Օրէ օր, ժամից ժամ, չեմ սխալիլ, եթէ բոլորից բոլոր ես
ասեմ, սպասում էի անհամբերութեամբ քու մի երկու տող
նամակին, քու ուրախալի, դոնէ վճռական երկու խօսքին հա՛
կամ չէ՛. սպասեցի օր, շաբաթ, շուտով ամիս կ'լինի, 'ի
զո՛ւր ակնկալութիւն. դու միանգամայն մտքիցդ հանել ես սր
ի՞նչ սրտամաշ դրութեան մէջ եմ ես. գուցէ ես քաշուել էի եր-
կար բարակ նամակով յայտնելն քեզ, բայց միթէ՞ դու չի պիտի
լինէիր այդքան սրտագէտ և հոգեբան, որ չկարօտէիր երկա-
րապատում նամակի և իմանայիր իմ հոգւոյ վիճակը, իբր
մի կողմից քու արագ նպատակի յոյսը, միւս կողմից տաժանա-
կան ձանձրոյթը Բիւմին ինձ հանդիստ և դադար չէին տա-
լիս: Գէորգ, ինքդ եղբր քու դատաւորը, պիտի՞ հանգստացնէ-
իր, թէ ոչ:

Ոչինչ չեմ խնդրում քեզանից. հա՛ թէ չէ, այս ինքն 600 մա-
նէթ իմ բրտինքի և քու ջանքի ճգի վաստակը պիտի կորսնենք
250 մանէթով, թէ պիտի յետ ստանանք: Եթէ ասես թէ թող
կորչէ, գլուխը քարը, հաւատացիր որ դոնէ ես կ'իմանամ, որ
ոչինչ առանց քեզ իմաց անելու չեմ ձեռնարկել. դոնէ կը մը-
խիթարուիմ, որ անհնարինը հնարաւոր անել իմ թոյլ ուժովն
անհնարին էր, իսկ մարդիկ երեսները դարձուցին օգնելից: Միթէ
այս մխիթարութեան ևս արժանի՞ չի պիտի լինեմ: Շնոր, շնոր,
շուտ հասցուր օգնութիւնդ, կամ թէ իմաց արած չէր:

Անհամբերութեամբ սպասելով երկտող նամակիդ մնամ

սիրող քեզ Ռափայէլ

13 Մայիսի

Սիրելի եղբայր Գէորգ,

Քու մխիթարական նամակը - ստացայ, ճշմարիտը պիտի
խոստովանիմ որ վրած էր ճարտասանութեան ամբողջ կա-
նոններովն, որ միանգամայն արդարացուց քու լուսթիւնը, և
ինձ քու ասած ամօթով ծածկից: Դու քաջ փաստարան ես, չեմ

կարող քեզանից այդ արժանաւորութիւնը խել. բայց և այնպէս իմ դրութիւնը չթեթեւացաւ: Քու պլանները խիստ պատուական են,—մեղք է ուրանալը և մերժելը. բայց այդ պլաններդ կարգալիս խելօք-Դաւիթի մի առակը միտս եկաւ: «Մայր, ասում են երեխէրքը, փորերս քաղցած է»: «Սպասէք բալաներս, տունը և կաթագին, զաւակասէր մայրը, հօրէս ձիւնը կ'հալի, հէրըդ արտ կ'երթայ, կ'վարէ, կ'ցանէ, յետոյ Աստուած ամպից անձրև կ'աղարկէ, ցորենը կ'ծլի, կ'կանաչի. յետոյ Աստուած ոսկի արևին կ'հրամայէ հասնացնելու մեր ցորենը, յետոյ Աստուած պայծառ օրեր կուտայ, կ'երթանք արտ, կը քաղենք կ'հնձնեն հասկերը, կալ կ'տանենք, կ'կաննենք, յետոյ աղօրթիք կ'տանենք՝ կաղանք, կ'մաղենք. ալիւրից հաց կ'թխենք ու թեփից մախոխ, կուտենք, կու կշտանք, Աստծոյ փառք կուտանք»: Լաւ երազ չէ:—

Թողունք այն ազգասիրի օգնութիւնը. ինձ շատ կը պալտաւորես եթէ իմ վարդանը ուղարկես Կոտնկին. թէև ճշմարիտ է, այնքան չենք ստանալ, բայց ինչ կ'ուզէ լինի՝ փոքր ինչ էլ կ'ստանամ, որով... Ճշմարիտն ասեմ, ես թերահաւատեցայ մեր գործոյ վրայ: Ես մտադիր եմ վերջապէս աչքս բանալ և ասանել իմ երկարատև սխալը:

Դու ինձանից հարցնում ես խոստովանանք,—ներքի, ես այս տարի չեմ հաղորդվում: Երբ որ դու ինձ չուղացիր ասելու (самосохранение предъ другомъ!?) ինձ մեղադրողների անունը և նրանց մեղադրանքը՝ ի՞նչ կ'երայ խոստովանանք ես սպասում: Ես չեմ հասկանում: Դու ինձ մի հին, մոռացած, կլասիկատար նամակ ես գրել էիր ծրարիդ մէջ և ուղարկել էիր. ինչո՞ւ, որ ինձ Փօզըլի խելագարին նամանացնէիր. զարմանալի ճնշուշտութիւն, որ միայն Քերոբին էր վայել: Եղբայր սիրական, եթէ դու որոնում ես իմ վրայ մեղադրանք, ամբաստանութիւն, տւելորդ է նոր 'ի նորոյ վիրաւորական և կսկծեցուցիչ ստույթիւններ հնարելը, ես քեզ կ'ազատեմ այդ աշխատանքից և քեզ միայն 10 կոպէկ կը նստի. մէկ նամակ գրէ Քերոբի և Սերօրի վրայ և խնդրէ որ նոքա քանի մի տող բան գրեն իմ մասին, և այն ժամանակ յիշոցների ընտիրները դու նոցանից կը լսես, էլ ուր ես ինքդ վաստակում:

Իմ վրայ ոչինչ նոր բան չեմ գրում. ամէնը անփոփոխ է, ինչպէս որ էր. տանից դուրս չեմ ողջ նոր բան չիմանալ: Բարեիդ համար քեզ ամենից շնորհակալութիւն և քեզ նոքա շատ բարեւ են ուղարկում:

Հէջուբովին աստ. նորա եղբայր Դարբիէլը ստացաւ 120 մանէթ. ի՞նչ արաւ չգիտեմ. ես, թէև Արշակի ապսպրանքով

պիտի ստանայի 60-ը, բայց խարազովը ինձ չի տուաւ: Ես քանի անգամ գիր գրեցի և հրաւիրեցի Գարրիէլին իմ մօտ, բայց նա չեկաւ: Իգուր է, ուրեմն, Արշակի պահանջմունքը ինձանից Ես նորից Ղօրղանեանից օգնութիւն խնդրել չեմ համարձակում, որովհետեւ նա հարուստ տղայ չէ: Մեր պայմանը այնպէս էր որ ես ստանայի խարազովէն այն 60 մանէթը, տանէի 50 Ղօրղանեանին և մեկնէի Արշակի գրութիւնը և խնդրէի որ այս անգամ չի պահանջէ իւր պարտքը, և ամենը միասին ուղարկէի Մոսկով: Ես մեղմուր եմ որ ուրիշները այլազգ կառավարեցին:

Գարրիէլ չէջուրեանին (Մոսկուա) շատ շնորհակալութիւն նորա խնդիրքը կ'կատարուի: Պր. Իգմիրեանին շատ բարև: Մնամ միշտ պատրաստ քու ծառայութեանը

Ռ. Պատկանեան

1860 Մայիսի 23.

Ս. Պ.

Սիրական բարեկամ իմ Գէորգ,

Դու զարմանում ես, թէ ինչո՞ւ խղուեցաւ մեր թղթակցութիւնը, և ուրիշ պատճառ չգտնելով՝ առգրում ես մեր ծուլութեանը. բայց ես ոչ զարմանում եմ այդ բանին և ոչ աշխատում եմ նորա շարժառիթը պտրելու. այդ մի հասարակ և սոսկական պատճառէ յառաջացաւ, որ է քու երկարատեւ բացակայումէն. ես քեզ չէի գրում՝ որովհետեւ չգիտէի թէ ո՞ւր ուղղեմ նամակս և որոյ վրայ նշանակեմ հասցէն. իսկ դու... դու չէիր գրում, որովհետեւ ինձնից աւելի մերձաւորք քեզ պատել էին և ստիպում էին ժամանակդ և մտածմունքդ նոցա զոհելու. Ի՞նչ զարմանք: Այժմ որ վերադարձար՝ հոգևոր գործունէութիւնդ (թերևս) պահանջեց քեզնէն իմ ներկայութիւնը. ահա ես պատրաստ եմ վերանորոգել մեր սուրբ եղբայրութիւնը:

Հանգամանքս ես հարցնում. ահա համառօտիւ (համառօտիւ եմ ասում, որովհետեւ լիակատարը իմ բերնէն կը լսես երբոր կուգամ այդտեղ մի ամսից). իմ քննութիւնը մինչի վրացոց լեզուն շատ լաւ էր. բոլորիցն 5 ստացայ. վրացերէնէն միայն 2 գրաւ Չուրխնովի՝ Գերոբի սերտ բարեկամը և ես փոխանակ կանգիդատութեան արժանացայ աւագ ուսուցչի վրակայանի:

Պօղոսը, գրումս ես, ինձ վերայ անկատար բաներ է պատ-

մում. միթէ Բերդի եղբարց բերնէն լսած կ'այ մէկ մարդ բարի խօսք. այդ տոհմի անգամքը մի հրաշալի բանքար ցնին հարսուտ խօսելու, մարդու անուն սեցնելու և իւրեանց առժամանակ մի ամենին սիրելի կացնելու. մարդ կարող չէ երևակայելու թէ մինչ որ աստիճան նրբացրել են նոքա կեղծաւորութեան արուեստը: Առաւել զարմանալու կ'լինէր, եթէ նա կատարեալ բան ասէր, ոչ իմ, այլ ում և իցէ վրայ: Միթէ, կարծում ես, դու ազատ ես մնացել նոցա դիւակաւն ժանիքներէն. խեղճ միամիտ. ի՞նչպէս խաբուում ես:

Հարցնում ես՝ ինչո՞ւ չեմ ընծայում Հայոց գրականութեանը մի նոր աշխատութիւն: Արդէն երեքն եմ ընծայել բու բացակայութեան ժամանակ, որոնցմէ մին արդէն տպեցի և կարծեմ որ այս նամակը ստանալիցդ 6—7 օր անցած՝ կ'ստանաս. լայց այս, ինչպէս ինքդ էլ կ'հասկանաս մեր նորածին տպարանի փորձն է և ոչ նշանաւոր մի բան, թէ և ինձ առդներ կան, որ բաւականին գեղեցիկ բան է: Ձեռագիրներս ուղարկեցի Հայաստան, որովհետեւ պահանջել էին մի քանի նոր մարդիկ: Ի՞նչ կը լինի հետեանքը՝ կ'իմանաս, երբ որ նոցանէն պատասխան ստանամ: Առ այժմ ուղարկում եմ ներածութիւնը իմ նոր բանաստեղծութեան, որ տակաւին միայն մտքումս է աւարտած. այսքանը կարդալով գուցէ կ'հասկանաս իմ բռնած ճանապարհը ազգային բանաստեղծութեան: Իմ Քօնօղլուն Հայ է, լայց ինձ յայտնի պատճառներով նա ուրանում է Հայոց հաւատը: Ես մտադիր եմ գորա մէջ իմովսանն կենդանացնել հայոց անկախութեան գարու վերջին նշոյլները. մէլիքներու (որոնք միւր նախարարաց ցոլացած պատկերն են) կեանքը, նոցա առուրին և քաղաքական գործունէութիւնը, նոցա իրար մէջ ունեցած երկպառակութիւնը կամենում եմ ազդիս հասկանալի միջոցովն պատմել նոցա: Քանի որ չէ սկսուել իմ Դիւցազնի վարքը՝ գրէ՛ք բու գատողութիւնը այս ներածութեան ոճի և պատմածքի վրայ. այսպէ՞ս է խօսում աշուղը, թէ այլադ: Իմ դիւցազնը իւր նուիրական իդէայի համար զոհում է մարդուս ամենաթանգ սրբութիւնը—կրօնը. գորա մէջ ես ուզում եմ երկու տարերք միաւորել. աստուածատուր քանքարը վեհ հոգի, նուրբ հայրենասիրութիւն և սխալ սկզբունք բարոյականութեան. դորան կանեմ ես զոհ իւր ամեն իդէային, միևնոյն ժամանակ չեմ մոռանալ, որ դա 16 դարու որդի է:

Տպարանի վիճակն ցանկանում իմանալ. մամուլը զբաւումս է 175 մանէթով. իսկ տառերու մէկ մասը՝ 250 մանէթով մի այլ մարդու մօտ է:

Նոր մարդու համար ես հարցնում: Նա այժմ մեծ ազ-

գոյին ձեռնարկութեամբ է պարագլած, որով ի հարկէ պիտի լինի Հայոց Մեկենասը (հը՛, ինչպէս ես. նախանձդ եկաւ նորա վրայ), թէև նա իւր նամակումը խոստանում էր 20 տարի ժամանակ, որ ցոյց տայ ամենուն իւր օգտաւէտութիւնն ազգի համար, այլ 2 տարի չի կայ, որ նա արդէն բացեց իւր ազգասիրական ասպարէզը. 12,000 մանէթ զոհեց իւր վեհ զործի և աշխիւ ձեռնարկութեան համար: Ի՞նչ է այդ ձեռնարկութիւնը, կ'հարցնես էրուիր Չգրիցդ, թող երեսդ կնճռուի ներքին վերջովմունքէդ, կրճտէ ատամներովդ: Տպարան է քանում Հայոց կ'հարցնես Ո՛չ, առաւել լաւ: Դպրոց է հիմնում խեղճ հայ երիտասարդներու համար. վեր բարձրացուր: Ուսանողներ է պահում իւր հաշուով, էլի վեր, էլի լաւ մտածէ: Ա՛րժանաւոր գրքեր է տպում և կամենում է ձրի ցրուել ազգի մէջ. քան զայդ ևս առաւել լաւ: Վերջապէս ի՞նչ է այդ մարդու ազգասիրական գործը, հարցնում ես զու անհամբերութեամբ. թատրոն է կամենում հիմնել Հայաստանումն: Ո՛չ, ո՛չ, ո՛չ, բայց լայն ամենից լաւ և աշխիւ գործ, պատասխանում եմ քեզ: Դէհ լսէ:

Մեր... Քերորը... 12,000 մանէթ... միսեց... և դնեց 15 ձի, 10 դռնկա և բռնեց 10 извозчикъ և պահում է ванькаներ, որոնք նորա սպասած 50 տոկոսի տեղ զուսարիցն են ուտում. և ա՛յ ժմ այնքան փոշմանել է, որ իւր բոլոր заведениеի համար պահանջում է 3000 մանէթ և ոչ ոք չէ տալիս: Դորա...ց էլ վեհ ազգային գործ կարելի՞ էր սպասել մեր ուսումնադէտ Քերորէն: Այս ազգային աւետիսովն աւարտում եմ նամակս:

Ռափայէլ

Р. С. Քու նամակը ինձ շատ ուշ հասաւ հոկ. 20 ստացայ. Իզմիրեանցէն. հասցէս առաջուանն է: Измайл. полкъ. 5-ая роты, д. Мягковой № 12, 1 квр.

Ընդունում եմ, իմ սիրական եղբայր, քու ազնիւ սիրոյ զեղումը, որ կայանում է քու գէպ ինձ ցոյց տուած զարմանքիդ. զգում եմ, որ խորը ինձ սիրելով՝ իմ տողերն էլ քու աչքին գին են ստանում, բայց առաւել թանկ, քան թէ իրօք արժէին նոքա. իհարկէ քու սէրը ծածկում է իմ անթիւ պակասութիւններն: Չգիտեմ՝ արդարացի՞ է արդեօք արածդ, թէ ո՛չ. բայց ինձ այնպէս է թուում որ՝ քու խիստ դատմունքը (ամաչելով խոստովանում եմ փոքրոգութիւնս) կարող էր վհատեցնելու, և ես իսկ և իսկ պիտի զգայի իմ թուութիւնը որպէս և իցէ գործ կատարելու աշխարհիս երեսին: Կարդացի Սուլթան-Շահի-

կատարկերգութիւնը, տեսայ մէջը մի կողմիտ նախանձի արժանաւոր պատուդ, հասկացայ (մեծ խելք պէտք չէր հասկանալու համար) որ նորա դուլ նետերը քու վերայ էին ուղղուած. բայց կասկածում եմ, որ հոգեով կոյրը կարող է արդեօք բարոյական նետաձիգ դառնալու: Ես վաղուց գիտէի ձեր յարաբերութիւնը. բայց որ ինչ բամբասանք նորերումս լսայ քու վերայ՝ իմ խելքից բարձր էր: Ծղմարիտն ասեմ՝ չէի սպասում, որ այդ աստիճան չարահոգիքը կարող էին հասցնելու իւրեանց լրբութիւնը քու գէմ: Այստեղ, պիտի ցաւելով խոստովանիմ. սողունը քու գէմ շատ բորբոքել է: Քերորը և Սերորը նորան օգնել և օգնում են, ինչպէս պիտի սպասէիր դու. և կային մարդիկ (անունը չեմ ասիլ քեզ) որոնք գիտէին քու անմեղութիւնը և շատ թոյլ էին արդարացնում քեզ: Ես, ուր որ պատահում էի, զօրութեանս չափ, պատասուում էի քեւ վատաբաններուն բերանը. բայց ուր որ իմ ոտըը մուտք չունէր՝ դու մնում էիր անպաշտպան: Առհասարակ՝ ես մի բան եմ նկատել, որ քու բարեկամքը շատ թոյլ և առանց պինդ համոզմունքի մարդիկ են. այդ լնւ իմացիր: Բայց այս ամենը ոչինչ բաներ են, եթէ իմանաս, որ այստեղ դու մի անտես բարեկամ ստացար՝ իմ քեզ նկարագրելով. իմ աշակերտն հայերէն լեզուի՝ Աղէքս. Դօրդանեանը (Офицеръ Генеральнаго Штаба, штабсъ-капитанъ աստիճանով) տեղը մնայ, որ պատուական կրթած (Военная Академія-ումն է աւարտել իւր ուսման ընթացքը), գլխուն, բարեհոգի, ճշմարտասէր երիտասարդ է, այլ և տաք ազգասէր, մարդասէր. և իւր այդ գովանի առաքինութիւններն արդեամբ ցոյց է տալիս: Նորա մարդասիրութիւնը չէ խանգարում միեւնոյն ժամանակ զգուելով նայել թէ՛ Քերորի, Սերորի, թէ՛ Նալբանդեանի և թէ՛ Նազարեանի ծուռ ընթացքի վրայ: Իմ պատմածովն նա քեզ այնքան սիրում է արդէն, որ խիստ կամենում է քեզ հետ ի մօտոյ ծանօթանալու: Ես նորան ասացի, որ երբ քեզ տեսնէ՝ գէպ ինձ կ'սառի, որովհետեւ ես երբէք չեմ համարձակիլ քու առաքինութիւնը իմի հետ միեւնոյն կշռի վերայ գնելու... և առաւել բորբոքեց նորա իղձը քեզ տեսնելու: Առհասարակ, եթէ ուզում ես որ դորան ի մօտոյ ճանաչելու՝ ես քեզ կարճ խօսքով, կ'մեկնեմ դորա ինչ հոգու տէր լինելը: Դա նոր ուղղութեան մարդ է, պարզ, ուղիղ հայեցողածով ներկայ դարուս վերայ. Քօշուրին, Ժիւլ-Սիմօնին և Հիւգօյին պաշտողը և աշակերտողը. դա ինձ շուտով հասկացաւ և սիրեց՝ իմ պակասութեանցը ներողամիտ լինելով: Թէև հայերէն չգիտէ, բայց Հայոց ընաւորութեանը քաջ տեղեակ է. նորա փափուկ սիրտը շատ ցաւում է, մեր առաջաւոր (quasi) հայերու ծուռ ուղղութեանն ատող է.

Սեպտեմբեր, 1905.

սիրում է միամիտ ժողովուրդը, ասում է նորա փթած գլուխներուն: Այսպէս է մեր ընդհանուր բարեկամը: Այո, իմ սիրական Գէորգ, մենք, այսինքն մեր ուխտը, թուով սակաւ է. Դու, Մնացականը, Դօրդանեանը, Ամբարդանեանը և ձեր ամենիդ խոնարհ ծառան, բայց ցոյց տուր ինձ այնպիսի ժողով, որ աւելի սերտ և ազնիւ սիրով կապուած լինի, քան թէ մենք. թող ենք, ճշմարիտ է, բայց ժամանակաւ մեծ յոյս կայ, որ մենք մեծ ազդեցութիւն ունենալու ենք ազգի բարոյականութեան վրայ մեր վարքով և անձնուէր գործով: Դօրդանեանը ասում է՝ պէտք չէ մեր ուխտը մտցնել ամենային օյին մարդիկ. համախոհներ պտրել պէտք չէ. եթէ լաւ մարդիկ կան՝ նոքա մեղ կ'որոնեն: Առհասարակ՝ դա շատ խելօք և հետադարձ երիտասարդ է. թէև տարիքով 24 ամեայ է: Դէմքը քաջառողջ, ձայնը ուժեղ, մարմնոյ կազմուածքը—պարթևի, խոշոր աչքերով, թաւ ունքերով, երեսի տիպարը բուն հայի. բարոյականութիւնը մաքուր և կուսական. միով բանիւ՝ ինձէն շատ գոհ կ'լինիս այս գիւտիս համար:—Մեր պը. Իզմիրեանը շատ հակամիտ է դէպի Նաղարեանցի ուղղութիւնը, և մեր վրայ միայն ներդաշնան աչքով է նայում, և այդ բլիզում է նորա ընածին բարութիւնէն. այն ինչ մեր ոստիկներուն համոզմունքով յարգում է:

Այս խնդիրը երկար մեկնութեանց է կարօտ: Դու գրում ես թէ միտք ունիս շուտով գալու. ես ևս եկած շարաթ մտադիր էի գալու այդտեղ. ուրեմն դու սպասէ՛ մեզ և յետոյ մենք (այսինքն ևս և Դօրդանեանը) կը բերենք քեզ մեր մօտ: Բայց յառաջ քան թէ ես ոտս Պետրքուրգէն դուրս կ'դնեմ՝ դու ինձ մի փոքրիկ, ներք, ուզում էի ասել՝ մեծ, զոհ բեր, որ ես քեզ յետ կ'դարձնեմ նոյն հետայն: Միւս շարաթ օրուան, այսինքն 17-ին ամսոյս, և թէ կարող ես ուղարկէ, եթէ չես կարող՝ գրէ Իզմիրեանին, որ ինձ 60 մանէթ աւայ. ես քեզ չեմ գրում պատճառը, որ քեզ չերեի սրտաշարժ. յուսամ որ մեր մէջ հաշիւ հարցնելը աւելորդ է. և մանաւանդ կ'խնդրեմ քեզ Իզմիրեանցին մի՛ աղնարկիր, որ յատկապէս ինձ համար է, այլ հասկացուր որ առաւել քու պիտոյից համար է. և պատճառը միւս համակուծակ կը յայտնեմ: Խնդրեմ, նախ ներք ինձ այդ վստահութեան քու վրայ, և երկրորդ՝ իմ պատճառ չյայտնելու, առաջինը քեզ պատիւ է, երկրորդը ինձ անպատուութիւն չէ, կարծում եմ:

Ուրեմն՝ շարաթ ես կ'ստանամ նշանակած գումարն, և երկուշաբթի, այս 19-ին ճառարայ կ'ընկնեմ, և գուցէ 3—4 օր քնանք: Երկար նամակ էիր պահանջում. ներք, ես քեզ երկար

քաներ ունեւմ պատմելու. ուրեմն այժմուայ լուելս քեզ կը վարձաւորեմ շուտով քանի մի օրից:

Եթէ Փանեանին տեսնես, ասա որ ինձ ուղարկէ Հայաստանի աշխարհացոյցը և տաճկերէնից 'ի հայ բառարանը, որ էնֆրաշխանցինն է. ես արդէն վճարել եմ նոցա դինն 5 հատ տաղարան աւելորդ տալով (Իզմիրեանցի հրամանաւ 200 հատ տուել էի): Նաղարեանցին ուղարկել էի քանի մի ոտանաւոր, որ նա չի տպեց, եթէ դիպուած ունիս նորան տեսնելու կամ ձեզնէն մէկը՝ առէք, խնդրեմ, իմ Մըուս անունով պարերգութիւնս (баллада): Յուսամ որ դու իմ խնդիրքը կ'կատարես, ինչպէս և ես պատրաստ եմ քուները կատարելու:

Հատ բարև Իզմիրեանէն, Ղօրդանեանէն, Վանիւշէն:

Ռափայէլ

Անցեալ նամակիս մէջ ես գրել էի 4—5 ոտանաւոր նոր մարդու դէմ. պր. Վարդազարդեանը խորհուրդ չէ տուել Իզմիրեանին քեզ ուղարկելու, որ, կարծում եմ, վերջինի մօտ է մնացել: Ձարմանք բան. կան մարդիկ, որոնք այն կարծիքի են, որ մարդ իր սերտ քարեկամէն ևս զսղանիք պիտի ունենայ:?!?!:

Ձեր ընկերութեանը շատ բարև: Հէջուբեանին ասա, որ նորա փոքրիկ գրքոյկը շատ հաւանեցայ սիրուն милый, а не красивый. — գեղեցիկ) աշխատութիւն է. բայց այդ դիպուածով ես նորան քանի մի պիտանի խորհուրդներ տալու եմ:

Խնդրեմ, նամակդ իմ վրայ ուղղէ. քու նամակը ստացայ 8 թէ 10 օրից: Измайл. полкъ 5-ая роты, № д. 12 № кв. 1, այսպէս է հասցէս:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓԱԶԵՐԸ

Արդի ժողովրդական տնտեսութիւնը կազմում է հազարաւոր տարիների պատմական զարգացման արդիւնք։ Գիտութեան խնդիրն է՝ ժողովրդական տնտեսութեան հանդէպ, ամենից առաջ ճանաչել ու բացատրել այն, ինչ որ եղել է և է։

Պրոֆ. Կարլ. Բիւխեր։

Ինչպէս մարդկային հասարակութեան ընդհանուր կուլտուրական-պատմական զարգացումը, այնպէս էլ նրա զուտ տնտեսական զարգացումը ունի իր պատմական առաջնութացութեան ընտրող դարեշրջանները։ Եւ ինչպէս որ պատմական-սոցիալական գիտութիւնները պողիտիւ հիմունքներով հետազոտում են մարդկութեան պատմական հասարակական կեանքի երևոյթները և մշակում նրանց զարգացման օրէնքները, այնպէս էլ տնտեսագիտութիւնը իր ինքնուրոյն սահմանում քննում ու վերլուծում է տնտեսական կեանքի ողջ կառուցուածքը և նրա առանձին երևոյթները և գտնում դրանց զարգացման օրէնքները։

Սնտարակոյս, մարդկային հասարակութեան ընդհանուր կուլտուրական զարգացման պատմութիւնը, կեանքի բոլոր կողմերի—իրաւական, քաղաքական, մտաւոր, բարոյական, կրօնական, գրական և այլն—հետ միասին տեղ է տալիս և՛ տեխնիքական-տնտեսական կողմին։ Սակայն գիտական հետազոտութիւնների այն յատուկ դիագնօզը, որի համաձայն տնտեսական ձևերը, նրանց փոխակերպումները, տնտեսական երևոյթների յառաջադիմական ընթացքը, նրանց ներգործումները և այլն, չենք կարող գտնել ընդհանուր կուլտուրական զարգացման պատմութեան մէջ. ճիշտ այնպէս, ինչպէս կեանքի միւս կողմերից իւրաքանչիւրը ևս՝ իրաւական, մտաւոր և այլն, չի կարող այնտեղ թէ՛ ծաւալով և թէ՛ որակով այնքան խոր ու բազմակողմանի ուսումնասիրութեան նիւթ դառնալ, որքան իր սեփական ճիւղի մէջ, ինքնուրոյն սահմանում։

Միւս կողմից, ընդհանուր պատմական-կուլտուրական

զարգացման թէօրիան բովանդակ կեանքի յառաջադիմութեան հիմնական մղումները որոնելու և հաստատարու ժամանակ ի թիւս այլ պատճառների ուշադրութեան է առնում և՛ տնտեսական շարժառիթը, և իրաւ, վերջինիս տալով ստորագրաւ կամ նախագրաւ տեղ, նայած թէ՛ այս կամ այն թէօրիտիկը ինչ ուղղութեամբ և ուղղունքներով (իդէօլոգիական, թէ՛ մատերիալիստական պրինցիպ) է առաջնորդում իր քննական անալիզների մէջ: Նոյնիսկ զուտ տնտեսական երևոյթների, նրանց ծագման պատճառների և հետևանքների, նրանց աստիճանական զարգացման քննական բացատրութեան ժամանակ՝ տնտեսագիտական հին ուղղութիւնը (սմբողջ պատմական դպրոցը, որ այժմ դեռ բազմաթիւ կողմնակիցներ ունի) առաջնորդում է իդէօլոգիական տեսակէտից. այսինքն տնտեսական կեանքի յառաջադիմութեան, նրա ձևերի բարեփոխումների մէջ հիմնական շարժառիթը համարում է իրաւական, հոգեբանական, բարոյական մոմենտները: Մինչդեռ ըստ մատերիալիստական տեսակէտի, ինչպէս որ հասարակական կազմի կրած փոփոխութիւնները անմիջապէս կախում են տնտեսական կեանքի յարաբերութիւններից, այնպէս էլ տնտեսական կեանքի փոփոխութիւնները առաջնապէս պայմանաւորում են տեխնիքական միջոցների, արդիւնաբերական յարաբերութիւնների փոփոխութիւններով:

Մեր տեսակէտը լինելու է զուտ մատերիալիստական (մարքսիստական): Ի հարկէ, մեզ զբաղեցնող թեմայի վերնագիրը լինելով՝ «Տնտեսական զարգացման Ֆազերը», կարելիութիւն չպիտի տայ մեզ, մանաւանդ այս հանդէսի էջերում, երկար ծանրանալու ամեն մի Ֆազի մէջ հասարակութեան սոցիօլոգիական ստրուկտուրայի կրած փոփոխութիւնների վրայ՝ առաջացած տնտեսական Ֆակտորների և յարաբերութիւնների ազդեցութեան տակ: Սակայն հասարակական այնպիսի կարևոր երևոյթներ, ինչպէս են օրինակ՝ դասակարգային յարաբերութիւնների կազմաւորումը, և մանաւանդ աշխատանքի բաժանման միջոցով առաջացած սոցիալական խաւերը, տնտեսական փոխազդեցութեամբ, — պիտի էական տեղ գրաւեն մեր դիսկուրսի մէջ:

Սեր Կլեթի ծաւալն է՝ նախ համառօտ, և քննական դիտողութիւններով յիշատակել տնտեսական զարգացման յայտնի թէօրիաները, ապա փոքր ինչ ընդարձակ շօշափել տնտեսական զարգացման տարրեր Ֆազերը, սկսած պատմական հին անցեալից մինչև նորագոյն կապիտալիստական տնտեսութեան ձևը: Վերջին խնդրում մեր ուղղեցոյցը լինելու է բացառապէս

պրօֆ. Կարլ Բիւխերի (Լայպցիգի համալսարանում) թէօրիան, տմենայայտնին, ամենատարածուածը և մեր կարծիքով ամենաճշգրիտը մինչև օրս եղած թէօրիաների մէջ: Դ հարկէ, մենք չպիտի խօսենք այս կամ այն ֆազում տիրապետող սլր-դիւնաքերութեան սխտովի մասին. դա ըստինքեան մի առանձին թեմայի նիւթ է կազմում: Մենք պիտի ցոյց տանք միայն պատմական մարդու տնտեսութեան զանազան ձևերը, նրանց աստիճանական բարդացումը, հազարաւոր տարիների օրգանական զարգացումը, այն որոշիչ կրիտերիումները, որոնցով սուր տարբերում են տնտեսական ֆազերը, և վերջապէս այն տնտեսական ֆէնոմեններն ու հասարակական երևոյթները, որոնք արդիւնք են աշխատանքի բաժանման աստիճանական կատարելագործութեան, տնտեսական փոփոխիւթեան հաստատութեան—Ահա այս պիտի լինի մեզ զբաղեցնող խնդիրը:

I

Տնտեսական զարգացման թէօրիաները.

Փրիդրիխ Լիտտի թէօրիան: Որսորդական կեանքի, խաշնաբաժութեան, երկրագործական կեանքի և ինդուստրիական կեանքի շրջաններ: Արդիւնաբերութեան ուղղութիւնը՝ որպէս որոշիչ կրիտերիում:—Բրունօ Հիլտեբրանդի թէօրիան: Բնական իրերի, փողային և կրեղիտային տնտեսութեան ֆազեր: Փոխանակութեան դրութիւնը՝ որպէս որոշիչ կրիտերիում:—Միշարք թէօրիաներ, որոնց հիմնական կրիտերիումը կազմում է աշխատանքի բաժանումը: Կարլ Բոտրերտուսի թէօրիան:—Կարլ Մարքսի թէօրիան: Ասիական անտիկ ֆէօդալական և արդի կապիտալիստական տնտեսութեան ֆազեր: Կրիտերիումներ՝ բանուորի իրաւական դիրքը, տնտեսական կեանքի թէզիսական, անտիթէզիսական և սինթէզիսական վիճակը, արդիւնաբերութեան տեխնիկան:—Փրիդրիխ Էնգելսի թէօրիան: Սեփական փոխանակութեան և կապիտալիստական տնտեսութեան ֆազեր:—Գուստաւ Շմոլերի թէօրիան: Ցեղային, քաղաքային, տերիտորիական և պետական տնտեսութեան շրջաններ:—Կարլ Բիւխերի թէօրիան (ծանօթ. Վերներ Զոմբարտի թէօրիան): Տնային փակ տնտեսութեան, քաղաքային և ժողովրդական տնտեսութեան ֆազեր:

1.

Առաջին թէօրիան պատկանում է գերմանական յայտնի տնտեսագէտ Ֆրիդրիխ Լիստին: Նա բաժանում է ժողովուրդների տնտեսական ամբողջ զարգացումը չորս տարրեր շրջանների. որսորդական կեանք, խաշնարածութիւն, երկրագործական կեանք և ինդուստրիական կեանք ¹⁾: Լիստը բառացի անուանում է այսպէս. որսորդական դրութիւն, հովուական դրութիւն, ագրիկուլտուրային դրութիւն, ագրիկուլտուր—մանուֆակտուրաւորական դրութիւն. այդպէս վերջին ինդուստրիական շրջանը բաժանում է նա երկու մասի: Այս թէօրիայի սահմային սկզբնաւորութիւնը գտնում ենք դեռ Արիստոտելի մօտ («Politik» I եր.), և ենթադրում է, որ Լիստը օգտուել է այդ սխեմայից:

Մինչև անցեալ դարու 80-ական թուականները Լիստի տնտեսական զարգացման ուսմունքը սիրով տեղ էր բռնում ակադեմիական շրջաններում, մասնագէտների մոնոգրաֆիաների մէջ: Եւ նոյն իսկ այսօր պրօֆ. Շեօնբերգը իր դասագրքի մէջ բնորոշում է այդ շրջանները հետեւեալ անունները տալով. որսորդական ժողովուրդ, ձկնորս ժողովուրդ, խաշնարած կամ թափառական ժողովուրդ: ²⁾

Տնտեսական զարգացման տարրեր ֆազերը բնորոշելու համար, Լիստը աչքի տուալ է ունեցել, ինչպէս այդ պարզ երևում է իր թէօրիայից, միայն մի հիմնական կրիտերիում, այն է արդիւնաբերութեան զլխատր ուղղութիւնը, այսինքն թէ ինչ իրերի և ինչ ուղղութեամբ արդիւնաբերութիւն է ունեցել այս կամ այն շրջանում ապրող ժողովուրդը: Մի բնորոշումն, որ նոյնքան անբաւարար է, որքան և մակերեւոյթային: «Անկարելի է նեղերի կամ եւրոպական միջին դարերի տնտեսութեան սխեմայի բոլոր տարբերութիւնները՝ արդի եւրոպական տնտեսութեան նշանակից, բնորոշել միայն տիրապետող արդիւնաւ բերութեան ուղղութեամբ»—իրաւամբ նկատում է պրօֆ. Զոմբարտը ³⁾:

1) Fr. List, «Das nationale system der politischen Oekonomie» (նրա գրական ժողովածուի մէջ III հատ. եր. 14).

2) Schönberg, «Handbuch der politischen Oekonomie» (հատ. 1 եր. 29).

3) Sombart, «Die gewerbliche Arbeit und, ihre Organisation» (տե՛ս «Archiv für sociale Gesetzgebung und Statistik» (XIV հատ. 1 և 2 տետրը, եր. 372)

Երկրորդ զեռ բաւական տարածուած թէօրիան պատկառում է Բրունօ Հիլդերբրանդին: Տնտեսական կեանքի ամբողջ պատմական զարգացումը, սկսած ամենահին դարերից մինչև օրս, բաժանում է նա երեք ֆազերի՝ բնական իրերի տնտեսութիւն (Naturalwirtschaft) փողային տնտեսութիւն եւ կրկողիտային տնտեսութիւն 1): Հիլդերբրանդի բաժանական սխտեմի որոշիչ կրիտերիումը, ինչպէս տեսնում ենք, կազմում է փոխանակութեան դրութիւնը: Հին ժամանակներում, երբ բացակայում էր տնտեսական բարիքների արժէքը որոշող մի ընդհանուր մասշտաբ փողը, մարդիկ փոխանակում էին իրար հետ բնական իրերը. մէկը տալիս էր միւսին այն, որից նա շատ ունէր, և զրա փոխարէն ստանում այն, որին նա կարիք ունէր: Ուշ ժամանակներում արդէն տիրապետող է դառնում փողի տնտեսութիւնը, իր զանազան ֆունկցիաներով: Իսկ նորագոյն շրջանում՝ կապիտալիստական տնտեսութեան օրով, արագ զարգանում ու ծաւալւում է կրեդիտային տնտեսութիւնը:

Այս թէօրիան ևս միակողմանի է և մակերոյթային: Փոխանակութեան դրութիւնը ըստ ամենայնի չի բնորոշում որևէ դարձըրձան: Ժողովրդի տնտեսութեան եզանակը և ոչ էլ լիափութիւն ու հիմնական կրիտերիում կարող է ծառայել, որի տեսակէտից կարելի լինէր ամբողջ տնտեսական զարգացումը տարբեր ֆազերի բաժանել: Հիլդերբրանդը տարբերում է տնտեսական սխտեմները ըստ արտաքին սիմպտոմների, փոխանակ ըստ տնտեսութեան էական բնոյթի, որ արտադրում է այդ սիմպտոմները: Միւս կողմից այդ թէօրիան մոռանում է փողի մի կարևոր ֆունկցիան՝ արժէքի չափը (Wertmass), որ թէ փողային և թէ կրեդիտային տնտեսութեան մէջ միանգամայն անխախտ է մնում: Եւ վերջապէս աւելացնելու է, որ արդի տնտեսութեան շրջանում կրեդիտային կազմը երբէք այն ստորին չի տիրապետել և դուրս մղել կանխիկ փողային տնտեսութիւնը, որ կարելի լինէր նորագոյն դարերի տնտեսական ֆազը կոչել կրեդիտային տնտեսութիւն: Այդ թէօրիայի յայտնի կողմնակիցն է այժմ պրոֆ. Կոնրադը:

1) Տես Հիլդերբրանդի հանդէսը «Jahrbuch für Nationalökonomie und statistik» II հատ. (1864), էր. 1.

3.

Այնուհետև գալիս է ժամանակագրական կարգով երրորդ կաթեդրիային պատկանող թէօրիաների մի շարք, որոնց մէջ ընդհանուր է մի հիմնական կրիտերիում, այն է՝ աշխատանքի բաժանումը:

Այդ խմբի առաջին ներկայացուցիչը համարւում է պետական կամ կաթեդր սոցիալիզմի (Staats oder Katheder-socialismus) հայր Կարլ Րոտերտուսը: Անուրանալի է, ի հարկէ, որ Րոտերտուսը առաջինն է եղել իր տեսակում, որ պարզ ու որոշ ժամանացոյց է արել այն իրողութեան վրայ, թէ ինչպէս ժամանաւոր տնտեսութիւնները հետզհետէ կլանւում են հասարակական խոշոր ձեռնարկութիւնների մէջ, թէ ինչպէս տնտեսութեան տիրապետող ձեւ՝ նորագոյն դարերում, որ պատմականօրէն պայմանաւորուած մի երևոյթ է, հակադրւում է սոցիալական տնտեսութեան եղանակին: Նա դարձրել է տնտեսագիտական այդ հայեցակէտը իր ամբողջ սխտեմի մեկնակէտը, դեռ իր առաջին երկու աշխատութիւնների մէջ: ¹⁾

Րոտերտուսը պարզ որոշում է հին դարերի կղզկացած տնտեսութիւնը՝ կատարեալ անհատական տնտեսութեան դրութիւնը՝ ապագայ դարերի աշխատանքի բաժանման զբաղմունք: «Աշխատանքի բաժանման հետ, ասում է նա, առաջ է գալիս անհատների մէջ մի խմբակցութիւն, որ կղզկացած տնտեսութեան վրայ մի բոլորովին նոր բնոյթ է զրոշմում»: ²⁾ Իսկ աշխատանքի բաժանման զրութիւնը բաժանում է նա երկու տարրեր շրջանների. առաջին այն շրջանը, ուր դեռ գոյութիւն չունէր կալուածի և կապիտալի հիմնական շահագործութիւնը (առաւելապէս միջին դարերում), ուրեմն և կալուածն ու կապիտալը համադաստատան հասոյթ ու շահ չունէին: Ապա երկրորդ՝ կալուածի և կապիտալի արժատական էքսպլուատացեայի, շահագործման շրջան (նոր ու նորագոյն դարերը), ուր հասոյթն ու շահը իւրաքանչիւր տնտեսական ձեռնարկութեան նպատակն է համարւում:

Րոտերտուսի թէօրիան զուրկ է սխտեմատիկական խոր ու հիմնական լուսարանութիւնից. նա չի վարկացրել այդ աւելի ուշ տարիներում իր մտաւոր արտադրութիւնների հա-

¹⁾ Karl Rothertus, Zur Erkenntnis unserer staatswirtschaftlichen Zustände» (1842 թ. հր. 67)

²⁾ » «Verter socialer Brief an von Kirchmann» (հր. 77.)

սուճութեան շրջանում, այլ թողել է այն կիսատ ու թերի վիճակում, ինչպէս նախկին երկերի մէջ է եղել: 1851 թուականից յետոյ նա այլևս չի գրադրուել այդ խնդրով:

4.

Այդ խմբի թէօրիայի ներկայացուցիչների շարքին են պատկանում նաև Կարլ Մաքսն ու Փրիդրիխ Էնգելսը: Տնտեսապիտութեան և սոցիալական գիտութիւնների մէջ եզակի տեղ են գրաւում այդ հանճարեղ մտածողները: Առաջ ոչ ոք այնքան խորաթափանց ու փայլուն կերպով չէ ըմբռնել ու պատկերացրել արդի կապիտալիստական արդիւնաբերութեան սիստեմը, նրա ներքին գաղտնիքը, տնտեսական զարգացման պատմական տենդենցիան և դրանով պայմանաւորուած սոցիալական կեանքի անժխտելի էվոլյուցիան, ինչպէս Մաքսն ու Էնգելսն են արել: Այնքան բազմաթիւ ու ծանրակշիւ պրոբլէմներ յարուցանող և նրանց լուծում տուող հեղինակները, անտարակոյս, չէին կարող չարտայայտուել նաև այնպիսի կարգի՛նալ խնդրի վերաբերմամբ, ինչպիսին է՝ մարդկային հասարակութեան տնտեսական զարգացման փազերը:

Մոստովանելու է, ի հարկէ, որ Մաքսն ու Էնգելսը այնքան խոր ու մասնագիտօրէն չեն գրադրուել հին ու միջին դարերի ժողովրդների տնտեսական դրութեամբ, որքան արդի երոպական աղգերի տնտեսութեան ու արդիւնաբերութեան ձևերով, որպէս զի կարողանային տնտեսական աստիճանական զարգացման ուսմունքի մէջ ևս կորիֆէյներ, պարագլուխներ լինելու: Այնպէս որ Մաքս-Էնգելսի այդ սահմանում արած հետազոտութիւնը մի ուրոյն սիստեմ չէ կազմում, կարօտ է լայն, փաստալից լուսարանութեան: Սակայն միանգամայն անուրանալի է, որ այդ երկու մտածողների տուած հատուկորո բացատրութիւնները, մանաւանդ նրանց առաջարկած կրիտիցիզմները, իրանց զանազան երկերի մէջ, աւելի պարզ ու որոշակի են շեշտում տնտեսութեան հղանակների տարբերութիւնները պատմական շրջաններում, քան միւս թէօրեալիւներն են արել: Եւ պրոֆ. Բիւխերի յաջողութեամբ պատկած թէօրիան, ինչպէս այդ յետոյ կը տեսնենք, ամենից շատ ազդուած է Մաքս-Էնգելսեան հայեցակէտերից:

Մաքսի և Էնգելսի մօտ տարբերում են իրարից թէօրիայի ձևակերպումները, թէև մի և ընդհանուր է այն հիմնական հայեցակէտը, որ ելակէտ է ծառայել նրանց դիալոգութիւնների համար: Երկուսի մօտ յաճախ են շեշտում երկու

կամ աւելի «տնտեսութեան ու արդիւնաբերութեան եղանակները» տարբերութիւնները: ¹⁾ «Ընդհանուր գծերով, ասում է Մարքսը, կարող են ասիական, անտիկ, ֆէօդալական և արդի կապիտալիստական արդիւնաբերութեան եղանակները համարուել որպէս պրոգրեսիւ էպոխաներ տնտեսական-հասարակական կազմակերպութեան մէջ»: ²⁾

Առանձին-առանձին ծանօթանանք Մարքսի և էնգելսի տեսական ձևակերպումների հետ:

Մարքսի մօտ կարելի է գտնել հետեւեալ հիմնական կրիտերիումները, որոնք որոշում են դանազան տեսեսական-պատմական ֆազերի տարբերութիւնները:

1. Բանուորի իրաւական դիրքը: Մարքսի թէ առաջին և թէ վերջին աշխատութիւնների մէջ, սկսած «Կոմունիստական մանիֆեստից» մինչև «Կապիտալը» (օրինակ 1 հատ. եր. 43, 133 և այլն) շատ տեղեր են շեշտուում շահագործող ու շահագործուող, տիրապետող ու ենթարկուող դասակարգերի փաստական և իւրաւական դրութիւնները: Շահագործուող տարրը հին դարերում եղել է ստրուկ, միջին դարերում՝ ճորտ և նորագոյն դարերում՝ իրաւապէս ազատ բանուոր. սա էական կրիտերիում է համարուում Մարքսի մօտ, տարբերելու տնտեսական զարգացման զանազան շրջանները: Նոյն իսկ մարքսիզմի քննադատներից մէկը՝ պրոֆ. Լ. Շտայնը, Մարքսի այդ կրիտերիումը համարում է միակ տարբերիչ մօդուսը տնտեսական ստորիմանների: Նա գտնում է Մարքսի մօտ հետեւեալ տնտեսական շրջանները. ստրկական տնտեսութիւն, ճորտային տնտեսութիւն և սոցիալիստական տնտեսութիւն: ³⁾

2) Տնտեսական ողջ կառուցուածքի թեզիսական, անտիթեզիսական և սինթեզիսական վիճակը: Մարքսի այս կրիտերիումը հիմնուած է Հեգելի տիալեկտիքական տրիադի (երրորդութիւն) վրայ, և ձևակերպուում է այսպէս.

¹⁾ Տե՛ս K. Marx und Fr. Engels, «Das Kom. Manifest» (եր. 10). K. Marx, «Das Elend der Philosophie» (եր. 105). Fr. Engels, «Anti Dühring» (եր. 254).

²⁾ Marx, «Zur Kritik der politischen Oekonomie», յառաջաբան եր. XII, նոյնը նրա «Lohnarbeit und Kapital»-ի մէջ (եր. 15).

³⁾ L. Stein, «Die sociale Frage im Lichte der Philosophie» (եր. 383): Վերջերս կարլ կառուցկին ևս փորձել է մի ինքնուրոյն թէօրիա տալու, որ մի քանի որոշիչ կրիտերիումների կոմբինացիա է կազմում: Նա բաժանում է այսպէս. բնական իրերի տնտեսութիւն, ֆէօդալական տնտեսութիւն համըստական-մենափաճառ տնտես. (Zünftige Monopolwirtschaft) և ապրանքային տնտեսութիւն. նա վերջինս կրկին բաժանում է՝ պարզ ապրանքային տնտես. և կապիտալիստական տնտեսութիւն: (Տե՛ս «Agarfrage» եր. 60—61)

Թեզիս.	Անտիթեզիս	Սինթեզիս
1 Նախնական կոմունիզմ:	Ապրանքային արդիւնաբերութիւն:	Գիտակցական կոմունիզմ:
II Անմիջապէս հասարակականացած արդիւնաբերութիւն:	Անձրագիր արդիւնաբերութիւն:	Միջնորդապէս հասարակականացած արդիւնաբերութիւն:
III. Բանուորները տէր են արդիւնաբ. միջոցներին:	Բանուորները զըրկուած են արդիւնաբ. միջոցներից:	Բանուորները տէր են զառնում արդիւն. միջոցներին աւելի բարձր աստիճանի վրայ:

Այս տրիագի մէջ պատկերանում է մեզ մարդկային հասարակութեան տնտեսական դրութեան տիպիկտիքական զարգացումը, բաժանուած խոշոր դարեշրջանների. սկզբնական կոմունիստական շրջան, մասնաւոր սեփականութեան շրջան և ապագայ սոցիալիստական շրջան, որի իրականացումը ըստ Մարքսի զարգացման թէօրիայի նոյնքան անհրաժեշտ է, որքան անհրաժեշտ է եղել առաջին և երկրորդ տնտեսական-հասարակական շրջանների դարաւոր գոյութիւնը:

3. Տնտեսական տատիւնանների տարբերութիւնը ըստ արդիւնաբերութեան տեխնիկայի: Այս կրիտերիումը մեծ տեղ է գրաւում Մարքսի, ինչպէս և Էնգելսի տնտեսական զիտողութիւնների մէջ, և այդ մասնաւոր այն դէպքում, երբ նրանք պատմական մատերիալիզմի տեսակէտից ցոյց են տալիս, թէ ինչպէս հասարակական քաղաքական կեանքի կերպարանափոխութիւնը անմիջապէս և հիմնապէս ազդւում է տնտեսական ֆակտորներից, իսկ վերջիններս իրանց կողմից անմիջապէս ենթակայ են արդիւնաբերութեան տեխնիքական յարաբերութիւններին, աշխատանքի միջոցներին: «Տնտեսական էպոխաները, ասում է Մարքսը, տարբերում են ոչ թէ նրանով, թէ ինչ է արդիւնաբերում, այլ նրանով, թէ ինչպէս, աշխատանքի ինչ դործիքներով է արդիւնաբերում: Աշխատանքի միջոցները կազմում են ոչ միայն մարդկային աշխատանքի ոյժի զարգացման մասշտաբը, այլ և այն հասարակական յարաբերութիւնների յայտանշանը, ուր նրանք բանեցնում, գործադրում են»:¹⁾ Աւելի որոշ արտայայտութեամբ գտնում ենք նոյնը Մարքսի պատմական մատերիալիզմի կլասիք դեֆինիցիայի մէջ, հէնց առաջին տողերում. «Հասարակական արդիւնաբերութեան մէջ, ասում է Մարքսը, առաջ են ընթանում որոշ, անհրաժեշտ,

¹⁾ K. Marx, «Kapital», (I հատ. եր. 142).

մարդկանց կամքից անկախ յարաբերութիւններ՝ արդիւնաբերութեան յարաբերութիւններ, որոնք համապատասխանում են արտադրողական նիւթական ոյժերի զարգացման աստիճանին»։¹⁾

Այլ կերպ է ձևակերպում թէօրիան Էնգելսը. և պէտք է տեսլ, որ նրա յետագայ գրուածքներում, մանաւանդ նրա «Ընտանիքի, մասնաւոր սեփականութեան և պետութեան ծագումը» (1884 թ.) վերնագրով երկի մէջ, աւելի հասունացած և սիստեմատիկաբար ներկայացրած վիճակի մէջ ենք գտնում տնտեսական զարգացման ուսմունքը, քան Մարքսի մօտ։

Էնգելսի թէօրիայի մէջ ամենահիմնական կրիտերիումը կազմում է աշխատանքի բաժանումը կամ անդամահատումը (Zergliederung) իրերի արդիւնաբերութեան պրոցեսի մէջ։ Աշխատանքի բաժանումը, իբրև կրիտերիում ընդունել է եւ Մարքսը (տես օրինակ «Կապիտալ» եր. 46, 78, 322 և այլն), սակայն Էնգելսն է եղել գլխաւորապէս, որ այդ կրիտերիումը տնտեսական զարգացման ֆազերը ընդորոշող ուսմունքի հիմք է ծառայեցրել։ Էնգելսը որոշում է տնտեսական զարգացման երեք գլխաւոր էտապներ։²⁾

1. Սեփական տնտեսութիւն—արդիւնաբերութիւն սեփական կարիքների համար։

2. Փոխանակութեան տնտեսութիւն—որ երեք տարբեր աստիճաններ ունի՝

ա. Իբրև պատահական երևոյթ, երբ փոխանակում է միայն առատ բերքերի աւելորդ մասը։

բ. Իբրև կանոնաւոր, մշտական երևոյթ, երբ կենսական պիտոյքների արդիւնաբերութեամբ զատւում են խաշնարած և երկրագործ ցեղերը և այդպիսով մշտական կարիք է զգացւում տարբեր իրերի փոխանակութեան։

գ. Իբրև անհրաժեշտ երևոյթ, երբ երկրագործութիւնը և ձեռնարհեստը բաժանւում են իրարից և գրաւում արդիւնաբերութեան զատ-զատ սահմաններ, տոն տալիս սոցիալական տարբեր խաւերի։

3. Կապիտալիստական տնտեսութիւն—որ բնորոշւում է ապրանքային արդիւնաբերութեամբ, ենթակայ կապիտալիստի բացառակի ղեկավարութեան։

1) Marx, «Zur Kritik der politischen Oekonomie», յառաջաբ. եր. XI.

2) Fr. Engels, «Anti-Dühring» (եր. 138), Engels, der Ursprung der Familie, der Privateigentums und des Staats», (121 եր.).

Այստեղ յիշելու է նաև պրոֆ. Շմոլերի թէօրիան: Շմոլերը տարբերում է հետևեալ տնտես. ֆազերը.

1. Ցեղային, գիւղական կամ շրջանային տնտեսութիւն.
2. Քաղաքային տնտեսութիւն.
3. Տերիտորիական տնտեսութիւն.
4. Պետական տնտեսութիւն.

Այստեղ ևս տնտեսական շրջանների տարբերութեան էական կրիտերիումը համարում է աշխատանքի բաժանումը: Սակայն մի հիմնական կէտում Շմոլերի թէօրիան տարբերում է այդ կաթիլագործային պատկանող միւս թէօրետիկներէ: Շմոլերը հիմնաւորում է զանազան տնտեսական սիստեմների տարբերութիւնները բոլորովին այլ կերպ, քան միւս հեղինակները: Մինչդեռ Բոտերտուսը, Մարքսն ու Էնգելսը և Բիւխսերը—ինչպէս յետոյ կը տեսնենք—զանազան տնտեսական շրջանների տարբերիչ կողմերը բացատրում են զուտ կառուցալ (պատճառակցական) կերպով—բացառապէս պայմանաւորուած արդիւնքաւէտ սյօթերի ներգործութեամբ և տնտեսական-արդիւնաբերական յարաբերութիւնների օրգանական զարգացումով,—Շմոլերը ընդհակառակը, առաջնորդւում է զուտ թելէօլոգիական սկզբունքից (նպատակայարմարութեան սկզբունք): Ըստ Շմոլերի, տնտեսական զարգացման զանազան ֆազերի մէջ տարբերութիւններ ծագում են այն պատճառով, որովհետեւ պէտք է զանազան—առաւելապէս քաղաքական նպատակներ իրականանային: «Նշանակալից է, ասում է Շմոլերը, տնտեսական կեանքի կապակցութիւնը առհասարակ սոցիալական և քաղաքական կեանքի էական ղեկավար օրգանների հետ... տնտեսական-սոցիալական էական հիմնարկութիւնների կախումը քաղաքական կարեւորագոյն մարմիններից և ֆակտորներից: ¹⁾

Շմոլերի «նպատակայարմարութեան» ուսմունքը չունեցաւ ոչ մի կողմնակցութիւն նոյն իսկ իր աշակերտների և պատմական դպրոցի (որի յայտնի ներկայացուցիչն ինքն է) կուսակիցների կողմից: Նրա թէօրիան սուր քննադատութեան ենթարկուեց սոցիալիստների, ապա Բիւխսերի և Զոմբարտի կողմից:

¹⁾ Städtische, territoriale und staatliche Wirtschaftspolitik (in SC H mollers' Forshungen (Հաս. VIII (1884) եր. 16 - 17)

6.

Մինչև այստեղ մենք բաւականացանք տնտեսական զարգացման ֆազերը բնորոշող այն թէօրիաների յիշատակութեամբ, որոնք յայտնի տեղ են զբաւում տնտեսագիտութեան մէջ: Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ այդ բոլոր թէօրիաները—մի կողմ թողնելով մէկի կամ միւսի մասնաւոր առաւելութիւնները—մնացել են թերի, անմշակ և անսխտեմ վիճակի մէջ: Նրանց բոլորի մէջ—բացառութեամբ Մարքս-էնգելսեան թէօրիաների—սկսկասում է խոր ու բաղձակողմանի լուսարանութիւնը, կրիտիկական ոգին: Նրանց շատերի մէջ տնտեսական շրջանների տարբերութիւնները որոշող կրիտերիումները մնացել են միայն որպէս պոստուլատ, առանց ընդարձակ ու լրացուցիչ բացատրութիւնների, հիմնաւորութեան:

Միակ թէօրիան, կամ, ինչպէս ասում են, տնտեսագիտութեան վերջին խօսքը այդ սահմանում, որ մինչև օրս (ընդամենը 12 տարուայ ընթացքում, 1893 թուականից սկսած) խիստ ժողովրդականութիւն է վաստակել գիտնական շրջաններում, համարում է պրոֆ. Կարլ Բիւխերի թէօրիան ²⁾: Անտարակոյս Բիւխերի տեսութիւնը կրում է նախորդ գիտնականների—առաւել Մարքս-էնգելսեան—տեսութիւնների որոշ դրոշմը: Սակայն այն լրիւ սխտեմը, քննական հետազօտութիւնը, փատերի ահագին տարափը, որ նա զանազան ֆազերի տնտեսական սխտեմների ընդարձակ նկարագրութեամբ և էտնոգրաֆիական բազմաթիւ լրացուցիչ տեղեկութիւններով տալիս է,—համար-

²⁾ Այստեղ յիշելու է, որ Բիւխերի տեսութիւնից յետոյ, Վերներ Զոմբարտը ևս փորձեց (տե՛ս «Die gewerbliche Arbeit und ihre Organisation» in Archiv für sociale Gesetzgebung und Statistik XIV (հատ. 1 և 2 տետրը, էր 392 1899 թ.) այնուհետև նոյնը ընդարձակած իր «Der moderne Kapitalismus» գրքի առաջին հատորում, (էր. 50, 1902 թ.) մշակել տնտեսական զարգացման ուսմունքը: Նա ևս երեք մասերի է բաժանում տնտեսական զարգացումը, այն է՝ անհատական փոխանցում և հասարակական տնտեսութիւն: Առաջնակարգ կրիտերիումը, որով Զոմբարտը որոշում է տնտեսական ֆազերի տարբերութիւնը, կազմում է նրա մօտ արդիւնաւէտութան ոյժը (Produktivitätskraft) որ տարբեր են զարգացման բոլոր շրջաններում: Առաջ, նահապետական գործիքների շրջանում, խիստ սակաւ է եղել արդիւնաւէտութեան ոյժը, հետզհետէ, գործիքների կատարելագործութեամբ նա հասել է ներկայ շոգոյ և էլեկտրականութեան օրով զարգացման պոտենցիլի աստիճանին: Որովհետև Զոմբարտի թէօրիան քիչ է տարբերում Բիւխերի ուսմունքից, այդ պատճառով աւելորդ ենք համարում առանձին գիտողութիւնների նիւթ վարձնելու: Բիւխերի թէօրիայի առաւելութիւնները չենք դրում Զոմբարտի մօտ նոյն չափով:

ւում է Բիւխերի եղակի ծառայութիւնը: Ըստ այդ թէօրիայի պիտի ծանօթանանք մենք տնտեսական զարգացման ֆազերի հետ:

Բիւխերի տեսութիւնը ընդգրկում է իր մէջ տնտեսական զարգացման երեք խոշոր ֆազեր՝ սկսած պատմական հին դարերից մինչև արդի եւրոպական տնտեսութեան աստիճանը: Նա ձևակերպում է այսպէս ¹⁾.

1. Տնային փակ տնտեսութեան աստիճան (Die Stufe der geschlossenen Hauswirtschaft).—Արդիւնաբերութիւն զուտ սեփական կարիքների համար, փոխանակութիւնից (մշտական) զուրկ տնտեսութիւն: Այդ աստիճանի վրայ իրերը սպառւում են այն տնտեսութեան մէջ, ուր նրանք արտադրւում են:

2. Բաղաքային տնտեսութեան աստիճան (Die Stufe der Stadtwirtschaft).—Արդիւնաբերութիւն վաճառորդների համար կամ անմիջական փոխանակութեան աստիճան: Այդ աստիճանի վրայ իրերը արդիւնաբերական տնտեսութիւնից անմիջապէս անցնում են սպառողական տնտեսութեան մէջ:

3. Ժողովրդական տնտեսութեան աստիճան (Die Stufe der Volkswirtschaft).—Ապրանքային արդիւնաբերութիւն, իրերի շրջանառութեան աստիճան: Այդ աստիճանի վրայ իրերը սովորաբար անցնում են մի շարք տնտեսութիւնների բովով (շրջանառութեան պրոցես), նախ քան սպառման հասնելը:

Բիւխերի թէօրիայի մէջ ևս հիմնական կրիտերիումը կազմում է աշխատանքի բաժանումը: Բացի դրանից այդ թէօրիայի մէջ ուշադրութեան է առնւում եւ մի այլ խիստ կարևոր մոմէնտ, որ ոչ մի թէօրեալի մօտ այնքան փաստալից ու կառուցալ չի բացատրւում, ինչպէս Բիւխերի մօտ: Դա կազմում է այն յարաբերութիւնը, որ գտնւում է իրերի արդիւնաբերութեան կամ արդիւնաբերողների և իրերի սպառման կամ սպառողների մէջ. ուրիշ խօսքով դա կազմում է այն ճանապարհի երկարութիւնը (Weglänge), որով իրերը արդիւնաբերողի ձեռքից հասնում են սպառողի ձեռքը:

Եթէ ուզում ենք մանրամասն բնորոշել տնտեսական այս երեք ֆազերը և ցոյց տալ նրանց պատմական զարգացման խոշոր տարբերութիւնները, ապա մենք պէտք է ուշադրութեան առնենք բացառապէս նրանց տիպիքական առանձնայատկութիւնները, մի կողմ թողնելով այն մասնաւոր ու անցողական երևոյթները, որոնք խոտորում են այս կամ այն պատմական շրջանում տիրապետող տնտեսութեան ընդհանուր սխտեմից: Այդ

1) K. Bücher, «Die Entstehung der Volkswirtschaft» (3-րդ հրատ. եր. 108)՝

սղատահական և մասնաւոր երևոյթները լինում են երբեքն հին
շրջանի մնացորդներ կամ աղագայ շրջանի սկզբնաւորութիւն:

(Կը շարունակուի)

ԹՈՉՆԻԿՆԵՐ

(Աղուֆ Շուլցից)

Իղճւր, իղճւր, այ թռչնիկներ,
Ինձ որ տեսաք, լըռեցիք.
Թո՛ղ ձեր աղաւ դայլայլիկներ
Լըցնեն դաշտերն ու այգիք:

Մի վախենաք դուք ինձանից,
Ես ձեզ թակարդ չեմ լարում.
Գիտեմ, գիտեմ—աղաւ կեանքից
Լաւ բան չըկայ աշխարհում:

Ա. Ճատուրեան

ՆԱՍՐԷԴԴԻՆ ՇԱՀԻ ԲԵՖՈՐՄՆԵՐ ՄՏՏՆԵԼՈՒ ՓՈՐՁԸ ԵՒ
ԻՐ ՅԱԶՈՐԴԻ ՕՐՈՎ ՏԵՂԻ ՈՒՆԵՅԱԾ ԱՆՅՔԵՐԸ *):

Պարսից պետութիւնը ներկայ Կաջարեան հարստութեան ներքոյ (սկսած 1794) իր կառավարութեան կազմով կարող է համարուել որպէս շարունակութիւն Սեֆավիտեան իշխանութեան (1502—1736):

Ուսումնասիրելով Իրանի կացութիւնը սեֆավիտական հարստութեան ժամանակ այնպէս, ինչպէս որ այդ նկարագրել են Chardin, Kaempfer, Mirza Iskender Beg և այլք, մենք հարաւորութիւն ունենք միաժամանակ և ճշգրիտ հասկացողութիւն կազմելու ներկայ Պարսկաստանի մասին:

Արեւելեան յաժառ պահպանողականութեան հետ միասին Կաջարեան առաջին անփորձ միապետները, իրանց քաղաքական տակտիկայով բազմիցս սեֆավիտական աւանդութեանց հարազատ հետևողներ են հանդիսացել: Միւս կողմից սակայն պետութեան կազմն և քաղաքականութիւնը Կաջարեան տան տեղական առանձնայատկութիւնների շնորհիւ (օրինակ զահակալութեան սովորութիւնը), ինչպէս նաև սկսած 19 դարու սկզբից Պարսկաստանի ուժգնակի շփումն արևմտեան քրիստոնեայ պետութիւնների հետ, յառաջ բերին մի քանի կերպարանափոխութիւններ:

Եւրոպայի քրիստոնեայ պետութեանց հետ ունեցած յարաբերութիւնները սկսում են դեռ Սեֆավիտների ժամանակ և նոյնիսկ սրանից էլ առաջ, Պարսկաստանի մոնզոլ տիրապետների օրով, սակայն տեական բնաւորութիւն են ստացել միայն Կաջարներից սկսած: Իրանի հիւսիսում զարգացել էր մի հզօր պետութիւն Պետրոս Մեծի արեւելեան քաղաքականութեան նպատակներով, իսկ Նապոլէօնեան Ֆրանսիան երազում էր Հնդկաստանի տիրապետութիւնը: Սրանց համար Պարսկաստանը մի ցանկալի դաշնակից էր, ոչ պակաս նաև Անգլիայի

1) Die Verfassung des Persischen staates, Dr. Greenfeld-ի գրքից թարգմանուած:

համար մի թիկունք 'ի պաշտպանութիւն իր վտանգի ենթարկուած հնդկական կալուածներէ: Այս հանգամանքները սկսած 19-րդ դարու սկզբից զիւանազիտական յարաբերութիւններ ստեղծեցին վերոյիշեալ երեք մեծ պետութիւններէ և Պարսկաստանի մէջ: Պայմաններ կնքուեցան և սկսեցին մշտական զիսպանութիւններ փոխանակուել:

Նապոլէօնից յետոյ Յրանտիան դադարեց Պարսկաստանում քաղաքական որևէ դեր կատարելուց, թողնելով ասպարէզը Անգլիային և Ռուսիային, որոնց մրցութիւնը մինչև այսօր Թէհրանի պալատում Շահերի քաղաքականութեան մասշտաբն է համարուած:

Յետագայում Նասրէդդին Շահի կառավարութեան ժամանակ (1848—1896) զիւանազիտական յարաբերութիւններ սկսուեցան նաև Եւրոպայի միւս քրիստոնեայ պետութեանց հետ, և դրա շնորհիւ Եւրոպայի զրեթէ բոլոր պետութիւններէ և հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգների ու Պարսկաստանի միջև առևտրական պայմաններ կնքուեցան:

Այսպիսով անցեալ դարու սկզբից Պարսկաստանը սերտ յարաբերութեանց մէջ մտաւ Եւրոպայի հետ, որոնք համաշխարհային երթևեկութեանց զիւրացման շնորհիւ հետզհետէ շարունակ զարգացան: Պարսից պետութիւնը այլևս չէր կարող փակել իր աչքերը եւրոպական պետութեանց գերակշռութեան առաջ: Կաջարների անյաջող պատերազմները Ռուսաց հետ (1804—1813 և 1826—1828) և 1838 և 1856 թուականներին Մեծն Բրիտանիայի հետ, ստիպեցին Պարսկաստանին հրաժարուելու որոշ նահանգներից և իրաւունքներից և զինուորական ուժի նկատմամբ ունեցած սեփական կարողութեան գիտակցութիւնը հետզհետէ աներևոյթացաւ: Միւս կողմից Եւրոպայի քաղաքականութեան մօտ ծանօթութիւնը ցոյց տուեց, որ Իրանը կուտուրապէս շատ յետ է մնացել Եւրոպայից և իրնէ ազատական ձգտումներով օժտուած Կաջար միապետների մէջ ցանկութիւն առաջ եկաւ բեֆորմներ մտցնել իրանց երկրում:

Պարսից զինուորական ոյժը այլևս անկարող էր եւրոպական կանոնաւոր բանակների դէմ մրցելու: Հանճարեղ զահաժառանգ Արրաս Միրզան, դժբաղդարար 1833 թուին դեռ ևս գահ չբարձրացած մեռաւ. նա իրան նպատակ էր դրել Պարսից զօրքը եւրոպականի նման բարեկարգել: Սկզբում ֆրանսիական օֆիցիւրների աջակցութեանը զիմեց, որոնց՝ Նապոլէօն 1-ի զեսպան գեներալ Դարգանը իր հետ Պարսկաստան էր բերել. յետոյ էլ անգլիական բարենորոգիչներին: Զօրքի բարեկարգութեան հարցը յետագայ ժամանակումն էլ պետութեան զրադման ա-

ուարկայ դարձաւ, սակայն ոչ մի դրական հետեանք չունեցաւ և առաջ բերեց այն գիտակցութիւնը, որ անհնարին է կազմակերպել զօրքը, առանց բարեկարգելու միաժամանակ նաև պետութեան միւս հաստատութիւնները:

Մի պարսիկ ղիլանագէտ իրաւամբ նկատում է հետեւեալը. «Մինչդեռ մեր երկրի կառավարման եղանակն և ուրիշ բոլոր սովորութիւնները Ջէմշիտի և բարբարոս մոնղոլների ժամանակից սկսած մինչև այսօր անփոփոխ են մնացել, մասնաւորապէս զօրքը եւրոպական բանակների ստորձանիւն հասցնել: Հարկերը զեռ Ջինգիզխանի եղանակով են հաւաքւում, կամենում են գնդերը Նապոլէօնի գնդերի նման կրթել: Թղթազրաւի անունն անգամ չեն լսել, մտադիր են զինազործարաններ հիմնել»:

Հիմնական բեֆորմի անհրաժեշտութիւնը ամբողջ պետութեան համար արսիօմա դարձաւ և Նասրէդդին Շահի լուսամբ կառավարութեան օրով (1848—1896) եղան մի քանի հետադարձ նախարարներ, որ հետամտեցին այդ զփուար խնդրի իրագործմանը: Տալանդաւոր մեծ վեզիր Միրզա Թաղի խանը եղաւ առաջինը, որ մեծ եռանդով ջանաց հեռացնել կառավարութիւնից աննպաստ պայմանները: Ուրախ խոհարարի սրդի, առաջ որեւէ դպրոցական կրթութեան ամենաստորին պաշտօնից ըսկշած հետզհետէ ամենաբարձր ստորձանիւն հասաւ:

Թոքով Միրզայի ուղեկցութեամբ (1828 թ.) Պետերբուրգ ուղարկուեց, ուր նա և Մաքսիմ Լիանժիին մօտից ծանօթացաւ և իր այդ ծանօթութիւնը աւելի արժատուցաւ և կատարելագործուեց, երբ նա պարսկա-թրքական սահմանների որոշման (1844—47) էրզրումում յանձնարարի անգամ նշանակուեց, որին մասնակցում էին նաև անգլիացի ու ռուս պորձակաւներ: Էրզրումում նա տիրի ունեցաւ օսմանեան պետութեան նոր օրէնքի—Թանզիմատի հետ ի մօտեց ծանօթանալու և ժամանակի կրթումը հայ ղինուօրականներից մէկի՝ Ժան Դալիթ խանի միջոցով ծանօթացաւ ընդհանուր տղաների պատմութեան, աշխարհագրութեան հասարակական և պետական գիտութեանց հետ և սովորեց զբնահատել եւրոպական մամուլի կարծիքները:

Երբ 1848 թուին Նասրէդդին Շահը գահ բարձրացաւ, Միրզա Թաղի խանին մեծ վեզիր կարգեց. Շահի հարազատ քոյրը սրա կինը լինելու պատճառով, շուտով յաջողուեց մեծ վեզիրին մեծ ազդեցութիւն ձեռք բերել պետութեան մէջ: Նրա ձգտումները—սահմանափակել հոգեւորականների և պաշտօնեաների ոյժը, կանոնաւորել զօրքը, նախարարութիւնը և ամբողջ վարչական սխեման, վերացնել կաշառքը, աւելորդ կենսաթու-

շակները և պաշտօնների վաճառումը, պատանիներին ուղարկել Եւրոպա կրթութիւն համար և եւրոպական իմաստով դպրոցներ հիմնել Պարսկաստանում—գրգռեց իր դէմ մոլեռանդ հոգևորականութեանը և մի շարք աղբիցիկ պաշտօնեաների թշնամացրեց իր դէմ. դեռ շատ երիտասարդ, Նասրէզդին Շահը վերջապէս ենթարկուեցաւ այդ ներշնչումներին և 1861 թուին հրաժարեցրեց նրան պաշտօնից, իսկ մի տարի յետոյ նոյնիսկ մահուան դատապարտեց:

Դժբաղդարար Միրզա Թաղի խանի անշափ վաղ հեռանալու հետ միասին, որին Պարսից նոր պատմութեան ամենախոշոր պաշտօնեան կարելի է համարել, վերացաւ նաև բեֆորմների ծրագիրը: Զօրքը և կառավարութիւնը էլի իրանց նախկին դրութեանը դարձան և կաշառակերութիւնը իր բազմատեսակ ձևերով կրկին իշխող հանդիսացաւ:

Մինչ այս Միրզա Թաղի խանի ոգին ապրում էր իր միապետի մէջ և այդ ժամանակից սկսած նա ոչ մի փորձ ու ջանք չխնայեց կառավարութեան բոլոր մասերը բարելաւութեան ենթարկելու համար:

Այս ձգտումների գլխաւոր ներկայացուցիչներն էին Հաջի Միրզա Հիւսէյին խան և Միրզա Մելքոն խան: Սրանցից առաջինը (սկզբում դեսպան է. Պոլսում) մեծ վեղիւր կարգուելով գործ դրեց իր փորձառութիւնը յօգուտ իր հայրենիքի բարւորման. 1873 թուին նա ուղեկցեց Նասրէզդին Շահին Եւրոպա կատարած առաջին ճանապարհորդութեան ժամանակ, ցոյց տալով իր միապետին արեւմուտքի յառաջդիմութիւնը: Սակայն յետագայում սա էլ հակառակորդների ինսուրդներին զոհ գնաց: Վերադարձին մայրաքաղաքում տեղի ունեցող խռովութիւնների պատճառով ստիպուեց մնալ Ռաշտում և շուտով պաշտօնանկ եղաւ:

Յետոյ որպէս զօրքերի հրամանատար և արտաքին գործերի նախարար առիթ ունեցաւ եռանդը հանդէս բերելու:

Պրինց Մելքոն խանը լինելով երկար ժամանակ որպէս գործակալ եւրոպական զանազան պալատներում և ապա դեսպան Լոնդոնում, առիթ ունեցաւ եւրոպական ժամանակակից պետութեանց կարգ ու կանոնի հետ հիմնօրէն ծանօթանալու:

Իրանի աղբիցիկ նախարարի հետ ունեցած թղթակցութեան շնորհիւ, նա աշխատում էր Պարսկաստանի հնացած կարգերը վերացնել տալ և բարելաւման միջոցներ առաջարկել: Նա հրատարակեց մի անանուն գրքոյկ—Kitabtschejighejbi որ նոյնիսկ Շահի ձեռքը հասաւ և նրան բացարձակ կերպով իր երկրի դրութեան մասին տեղեկութիւններ տուեց. հեղինակը անխոնջ

կերպով աշխատում էր տարածել իր այս աշխատութիւնը Պարսկաստանի կրթութեամբ դասակարգի շրջաններում: Նասրէզդին Շահի Եւրոպա կատարած 3-րդ ճանապարհորդութեան միջոցին մեծ վեզիրի և Միրզա Մելքոն խանի մէջ գտնութիւն ծագեց և վերջինս իր պաշտօնից հրաժարուած հրատարակուեց: Յետագայում Մուղաֆէրէզդին Շահը ներկելով նրան՝ Հոռվմի դեսպանութեան պաշտօնը շնորհեց, ուր և նա ներկայումս գրտնւում է:

Նոյնպէս ուրիշ քաղաքական բարձր պաշտօնեաներ սիրով զբաղուել են ընթերցանքի հարցով: Միրզա Սէյիդ-խանը, այն ժամանակուայ արտաքին գործերի նախարարը իր մի ձեռագիր յիշատակարանում խիստ քննադատութեան է ենթարկում իր երկրում իշխող կարգերը և պահանջում է Եւրոպայի յառաջդիմութեան օրինակին հետևել: Սոյն շրջանում Իրանի կացութիւնը խիստ սուր քննադատութեան է առնւում. այդ առթիւ ընդորոշ են մի պարսիկ դիւանագէտի հետևեալ խօսքերը. «Մենք մայրաքաղաքում հաւաքել ենք մի քանի հազար ամեն գոյնի մարդիկ՝ կայանու, արարի, մոնգոլի, թիւրքի և եւրոպացու մաշուած կարգերով, մեծ ու փոքր, խելօք ու խելառ իրար ենք խառնել և այս բարբարոս խառնուրդին բարձր կառավարութիւն անուը կնքել»: Սակայն այս երեւելի վեզիրների բարի ցանկութիւնները, ինչպէս նաև հէնց իրան Շահինը, չնայած իր երեք անգամ Եւրոպա կատարած ճանապարհորդութեանը, ոչ մի աչքի ընկնող փոփոխութիւն առաջ չբերին իրերի նկատմամբ:

Ժիշտ է հեռագրատան և պոստատան հաստատութիւնը, ինչպէս և գաւառները վերահսկողութեան ենթարկեց և սահմարձակ պաշտօնեաների կամայականութեանը մի քիչ սահման դրաւ իրաւէ թէհրանի բարձրագոյն դպրոցը, ինչպէս նաև այլ և այլ նահանգներում հիմնուած դպրոցները մասամբ նպաստեցին պաշտօնեաների զարգացմանը. հպատակների իրաւունքները շեղտուեցան և Եւրոպայի հետ ունեցած ուժգին շփումը ազնուացրեց պետական որոշ կարգերը, քանի որ Նասրէզդին Շահը մեծ նշանակութիւն էր տալիս Եւրոպայի հրապարակական կարծիքին, սակայն և այնպէս հիմնական բարենորոգումներ մտցնելու բոլոր ջանքերը ապարդիւն անցան: Պետութեան բարեմիտ ձգտումները զոհ դնացին պաշտօնեաների անհաւատարմութեանը և հոգևորականների հալածանքին, ընթերցանքը խորտակուեցան մեծամասնութեան կաշառակերութեան և տգիտութեան առաջ: Օտարներին տրուած մենաշնորհները արտաքին ազդեցութեանց պատճառով մասամբ ետ առնուեցան:

«Իրան նէզմ բերնէ միդարեա»²—«Իրանը բեֆորմ չի վերցնի», առածը հետզհետէ ամենքի համոզման մէջ ամրապնդուեց: Անյաջող փորձերը առաջ բերին յուսահատ լքումն և սկզբնական եռանդը նորանոր խաղերով այլասեռուեց: Այն մարզիկ, որոնք, սկզբում մեծ եռանդով գործի էին կաել, համոզուած լինելով իրանց անձնագոյութեան ապարդիւն լինելու վրայ, կրկին պահպանողականների բահակը դարձան, ուրիշների նման իրանց գրպանները պարարտացնելու և զուր տեղը վատամարդ չլինելու համար:

Նասրէդդին Շահի կառավարութեան բեֆորմների անյաջող հետևանքների պատճառը՝ պարսկի անտարրեր և անհաստատամիտ բնաւորութեան հետ միասին և հետեւեալներն էին:

- 1) Պարսիկ ժողովրդի տգիտութիւնը.
- 2) Տգէտ հոգևորականութիւնը, որը վախենում է լուսաւորութեան և նոր կարգերի շնորհիւ կորցնել իր ազդեցութիւնը:
- 3) Պարսիկ պաշտօնեաների բարոյական և մտաւոր սնանկութիւնը:

Սրանց հետ միասին նաև այն հանգամանքը, որ կառավարութեան թուլութեան շնորհիւ երբեմն արտաքին ազդեցութիւնները արգելք են հանդիսացել պարսից կառավարութեանը որոշ ազատութեամբ գործելու:

Այսպէս, օրինակ, երկրի տնտեսական զարգացման վերաբերեալ անզլիացոյց տուած մի քանի կարևոր կոնցեսսիօնները ¹⁾ մասամբ ռուսաց դիպլոմատիայի ազդեցութեան շնորհիւ, նորից յետ առնուեցան և 1890 թուին ռուսաց պետութիւնը մի պայմանագրով հարկադրեց Շահին մի որոշ ժամանակ երկաթուղիների կառուցման ոչ մի կոնցեսսիօն չկապել ուրիշների հետ:

Օտար հովերից անկախ լինելու հարցը անշուշտ միայն այն ժամանակ կարող է իրականանալ, երբ Շահը հզօր է և արտաքին ազդեցութիւններին դիմադրելու ուժ ունի: Դրա համար պէտք է բարեկարգ զօրք, իսկ դա առանց փողի չի կարող լինել: Ուրեմն հարկաւոր է շահագործել ֆինանսական բոլոր աղբիւրները և խոհեմ կերպով տնօրինել: Բայց որովհետև տեղացի պաշտօնեաները անընդունակ են այդ նպատակի համար, մնում է իրրև միակ միջոց հրաւիրել մեծ քանակութեամբ եւրոպացի պաշտօնեաներ և միաժամանակ բոլոր շրջանների բա-

¹⁾ Ռէյտէրի կոնցեսսիօնը 1872. թ. ճանապարհների հաղորդակցութեան համար: Ծխախոտի կոնցեսսիօնը 1890 թ. Ռէժի ընկերութեան հետ:

ցարձակ կառավարութեան և վերահսկողութեան ղեկը նրանց յանձնել: Օտար պաշտօնեաներից բաղկացած մի վստահելի կաղմակերպութիւն կարող պիտի լինէր Շահնշահների բարի ցանկութիւնները իրագործել և անկաշառ արդարութեամբ վերականգնած իրաւունքի ապահովութեան շնորհիւ՝ մատչելի դարձնել թէ օտար և թէ լոնկ կապիտալը պարսկական ինդուստրիայի համար: Ընդունակ է պարսիկը, և ճարպիկ ու ամեն տեսակ զարգացման կարող: Նա նոյնպէս լիբերալ է և պակաս ֆանատիկ քան թիւրքը և հակուած է եւրոպական կուլտուրան ընդունելու և իւրացնելու: Թէպէտև նրա մօրալը դեպպիտիզմի տակ շատ է տուժել, բայց և այնպէս պատշաճաւոր դպրոցական կրթութեան և անհատական իրաւունքների ապահովութեան միջոցով կարելի է դրան մի դարման անել:

Յիշատակելու արժանի է որ Նասրէդդին Շահը պարսից առաջին թագաւորը եղաւ, որ օտար երկիր ոտք կոխեց, ոչ թէ որպէս ռազմիկ կամ աշխարհակալ, այլ միայն որպէս ուսանող և հնազանդող արեւմտեան քաղաքակրթութեան:

Այսպիսի մի քայլի դժուարութիւնը այն ժամանակ միայն ըմբռնելի կը լինի մեզ համար, երբ ի նկատի ունենանք, որ այդ հոգեորականութեան և ժողովրդի կամքին հակառակ էր:

Պարսկական մի հին սովորութեամբ, թագաւորը կարող էր օտար երկիր ոտք կոխել միայն իւր թշնամի և աշխարհակալ: Հնում ոչ մի պարսիկ իշխող սիրտ չէր անի ոտքը երկրից դուրս դնել, վախճնալով դահլիճէն լինելուց իր ապստամբ ազգականներից կամ շէֆերից: Ժամանակը փոխուեց. Ռուսաստանը և Անգլիան որոշ չափով երաշխաւորում էին օրինաւոր թագա-ժառանգի ապահովութիւնը, իսկ հոգեորականութիւնը Նասրէդդին Շահից ակնածում էր:

1870 թուին Նասրէդդին Շահը թիւրքաց սահմանից անցնելով այցելեց շիաական սրբավայրերը—Քերբելա և Նէջէֆ և այնտեղից էլ Բաղդադ ճանապարհին շարունակ բարեկամական հեռագիրներ փոխանակելով Սուլթանի հետ:

Սրան հետեւեց 1873 թուին տեղի ունեցած ընդորմների բարեկամ կուսակցութեան շնորհիւ կաղմակերպուած առաջին ճանապարհորդութիւնը դէպի Եւրոպա, թողնելով որպէս տեղապահ իր որդի Նայիրը Սալթանէին, իր հօրեղբօր Մոհթէմէշէղ-էղ-Դովլէի աջակցութեամբ: Շահը այցելեց բոլոր եւրոպական պալատները և Սուլթանին: 1879 թուին նա կատարեց իր 2-րդ ուղևորութիւնը դէպի Եւրոպա: Եւրոպական երկրների արուեստն ու գիտութիւնը ճանաչելու համար, որոշեց ճանապարհորդել ծպտուած: Ժանապարհորդութեան գլխաւոր նպա-

տակն էր, այցելել Պարիզի համաշխարհային ցուցահանդէսը։ Այս անգամ էլ տեղապահութիւնը վստահացաւ Նայիրը Սալ-թանէին, որին օգնական կարգուեցան յաջարական գործե-րի համար Մոստոֆի-էլ-Մեմալէքը, իսկ ղինուորական և ար-տաքին գործերի համար Մոնթմէլէ-Մուլքը։

Այլևս ժողովուրդը հաշտուել էր այս նոր սովորութեան հետ և 1889 թուին Նասրէդդին Շահը ձեռնարկեց իր 3-րդ ճանա-պարհորդութեանը դէպի Եւրոպա, թողնելով այս անգամ իբրև տեղակալ՝ հինգ հոգուց բաղկացած մի խորհուրդ։ 1896 թուին, մայիս 1-ին, մահացաւ Շահը՝ սպանիչ Միրզա Մոհամմէդ-Ռի-զայի գնդակից, Շարդուղիմի մզկիթում իր սիրելի կնոջ գերեզմանի վրայ աղօթելու ժամանակ այն սրբազան վայրում, ուր ամենամեծ ոճրագործներն անգամ հետապնդումից ապաս-տարան են գտնում։ Շահը 65 տարեկան էր և բոլոր նախա-պատրաստութիւնները տեսել էր, մեծաշուք կերպով տօնելու իր գահակալութեան 50 ամեայ տարեդարձը։

Նասրէդդին Շահը ինտելիգէնտ էր, եռանդուն և յառաջու-դէմ։ Իր իշխանութեան առաջին 10 ամեակում նա պաշտպան հանդիսացաւ իր մինիստրների բեֆորմներ ներմուծելու ձգտու-մներին և ըստ ամենայնի նպաստեց դրան։

Երկիրը հեռագրական ցանցերով ծածկուեցաւ, պոստը կանոնաւորուեց, արհեստն ու վաճառականութիւնը ծաղկեցին, ժողովրդի ճնշումը նուազեց, կեանքի և գոյքի ապահովութիւնը բարձրացաւ, եւրոպական կրթութեան համար ճանապարհ բա-ցուեցաւ Լայն, Լայն։ Սակայն, ինչպէս յիշեցինք, հիմնական բեֆորմներ մտցնելու բոլոր փորձերը խորտակուեցան և հառ-կանալի է թէ ինչու Շահը իր կառավարութեան վերջին տաս-նամեակում աւելի լուրջ բարենորոգումներ մտցնելու եռանդն ու կորովը կորցրել էր։

Նասրէդդին Շահի թափուր գահը ժառանգեց 1896 թուին Մուղաֆֆէրէդդին Շահը, արտաքոյ կարգի բարեմիտ և հեղա-համբոյր բնաւորութեան տէր մի իշխող։

Նա ներողամիտ է, մեղմ և միայն ակամայից կարող է որեւէ մահուան վճուի արձակման ստորագրութիւնը տալ։ Սա-կայն մի այնպիսի երկրում, ուր իշխողը հաստատուն և անփո-փոխ օրէնքները չեն, հարկաւոր է որ խստութիւնը իշխողի սրտում տեղ գտնէ, քանի որ արքայական բնաւորութեան չափազանց մեղմութիւնը միշտ նպաստաւոր չէ։ Միւս կողմից էլ նոր Շահի դէպի եկեղեցին ու հոգևորականութիւնը ունեցած նպատակութիւնը, նրա հեղինակութեան ազատ զարգացմանը խոչընդոտ է հանդիսանում։

Ալի Ասկար խանը, որը էմինը Սուլթան տիտղոսի տակ 1888 թուականից մեծ վեզիրի պաշտոնը զգեցաւ, մեծ ճարպիկութեամբ հոգաց զահալալութեան անվրդովութեան համար և նոր Շահից հաստատուեցաւ կրկին իր պաշտօնի մէջ: Սակայն Մուզաֆէրէզզին Շահի հետ միասին Թաւրիզի շրջապատողներից Թէհրան էին եկել մի քանի մտերիմ անձնաւորութիւններ, ինչպէս օրինակ իր աներորդին՝ Ֆերման-Ֆերմանը, իր բժիշկը և ֆաւորիտ՝ Հաքէմէլ-Մուլքը, թիկնապահների գլխաւոր՝ էմիր-Բահադուրը և այլք, որոնք մեծ մեծ պահանջներով մայրաքաղաք մտան, հիմնուելով Մահմէդ և Նասրէզզին Շահերից մնացած այն սովորութեան վրայ, որով մեծ վեզիրը ընտրուում էր միապետի թագաժառանգ ժամանակի շրջապատողներից:

Մեծ վեզիրի զիջողութիւնները նրանց չհաշտեցրեց և նրա պաշտօնավարութեան յարատեւութիւնը թշնամացրեց նրանց իր հետ, որոնք վերջապէս հարկադրեցին Շահին նրան հրաժարեցնել իր պաշտօնից: Մուզաֆէրէզզին Շահը այնուհետեւ հիմնեց մի կարինետ, վերապահելով իրան պետական գործերի բարձրագոյն վճիռը: Սակայն կառավարութեան մէջ այդ երեւոյթից առաջ եկած յուզմունքները, ստիպեցին նրան 1897 թուին անգլիաւոր էմին-էդ-Դովլէին պետութեան գլուխ կարգելու, կարճ ժամանակից լիաւոր շնորհելով նրան մեծ վեզիրի պաշտօնական տիտղոսը:

Էմին-էդ-Դովլէն, որ դժբաղդաբար այնքան կարճ ժամանակ վարեց իր պաշտօնը, եւրոպական կրթութիւն ստացած մի արժանաւոր պետական անձն էր, որ իր ազնիւ բնաւորութեամբ իր շուրջն էր հաւաքում իւրաքանչիւր անշահասէրի: Երկար ժամանակուայ ընդմիջումից յետոյ առաջին անգամ սրա օրով կրկին լուրջ քայլեր եղան բարելաւելու երկրի վիճակը:

Նոր վեզիրը ժշակեց մի ծրագիր, որի հիման վրայ հարկահաւաքութիւնը պիտի վերահսկողութեան ենթարկուէր. դրամական հարցը պէտք է կանոնաւորուէր և միայն զօրքի թիւը, 20,000-ի վերածուէր: Նա աշխատեց սահմանափակել հոգեւորականութեան ոյժը, կեանք տուեց մի քանի ժամանակակից բնաւորութեամբ դպրոցների և առիթ եղաւ Բիզիայի մաքսատուն պաշտօնեաներին Պարսկաստան հրաւիրելու, որոնց և յետոյ յանձնուեցան պետութեան մաքսերի կառավարութիւնը: Միւս կողմից էլ Էմին-էդ-Դովլէն ստիպուած էր Թէհրանի պալատում իշխող դրամական տաղնապի համար հոգ տանել: Սպասածին հակառակ հանգուցեալ Շահը փոխանակ հարուստ դանձարանի, միայն պարտքեր էր թողել: Շուտով սպառեցաւ ֆու-

ցած թանկագին մետաղների պաշարը. յետաձգուած ոռճիկներին, մանր պարտքերին, ինչպէս նաև իր առողջութեան առթիւ Եւրոպա ճանապարհորդելու համար Շահին փող էր պէտք: Պարսկաստանում անմիջական քաղաքական նպատակներ չունեցող պետութիւններից (Ֆրանսիա, Հոլանդիս) պարտք վերցնելու փորձը չյաջողուեց և Էմին-էդ-Դովլէն իր աչքը դէպի անգլիական շուկան դարձրեց: Անգլիական կապիտալիստների առաջարկած պայմանը—մաքսերի անմիջական կոնտրոլը որպէս երաշխիք իրանց յանձնելու, ուստաց զիպլոմատիայի և մի քանի պարսիկ պաշտօնեաների մէջ բողոք յարուցեց: Էմին-էդ-Դովլէն մնացել էր անեկանելի դրութեան մէջ, իսկ միւս կողմից զրամի պահանջը աւելի ու աւելի ճնշող էր դառնում: Այս և սրա հետ միասին այն հանգամանքը, որ Էմին-էդ-Դովլէն, ուստ, ինչպէս նաև Շահին շրջապատող հեղինակաւոր անձնաւորութեանց ազդեցութիւնից հեռու էր պահել իրան, պատճառ եղան նրա անկմանը և 1898 թուին Ալի-Ասկար խանը կրկին մեծ վեզիր լինելու կոչուելու:

Ալի-Ասկար խանը գտնուում էր Կումի սրբավայրում, ուր նա մազապուրծ եղաւ Շահի աչքից ընկնելու պատճառով իրան սպառնացող աւելի լուրջ պատիժներից:

Անգլիացոց կողմից աչքաթող անուած, մեծ յաջողութեամբ նա դէպի ռուսները դարձաւ, որոնց Պարսկաստանի վրայ ունեցած ազդեցութիւնը նա դեռ Ռէժի ընկերութեան (1891/92) գործի առթիւ լաւ ճանաչել էր. վերահաստատուելով կրկին իր պաշտօնի մէջ, նա մի առանձին հակումն ցոյց տուեց դէպի ռուսները և այս հանգամանքը դիւրին դարձրեց նրա համար 22½ միլիօն ռուբլու մի փոխառութիւն անել: Փոխառութիւնը պլուխ եկաւ 1900 թուին 50/0-ով, 75 տարուայ ժամանակամիջոցով, և Շահը պարտականութիւն յանձն առաւ՝ վճարել բոլոր արտաքին պարտքերը և մինչև ուստաց պարտքի հատուցումը, առանց վերջինների համաձայնութեան՝ արտասահմանում ոչ մի նոր փոխառութիւն չանել: Առանց անմիջական կերպով միջամուխ լինելու պարսից մաքսային գործերին, ռուսները բաւականացան միայն հիւսիսային Պարսկաստանի մաքսերի վերահսկողութեամբ, եթէ միայն պարտքի հատուցումն իր որոշեալ ժամանակին չկատարուէր: Լոնդոնում ևս զիջողութիւն անելու հակումն ցոյց տուին, սակայն արդէն ուշ էր և ըրիտանական զիպլոմատիան ուստաց յաջողութեան հետեանքից յանկարծակիի եկաւ: Պարտքի հատուցումը մատնուեցաւ անփութութեան: Ռուսները այս փոխառութեամբ խիստ մեծ յաղթութիւն տարին պարսից քաղաքականութեան մէջ, իսկ նրանցից հովանաւորուած մեծ վե-

ղիրը, սրանով աւելի ևս իր պետի աչքը մտաւ: 1900 թուին Մուզաֆէրէզդին Շահը կարող էր լի գրպաններով իր առաջին ճանապարհորդութիւնը կատարել դէպի Եւրոպա:

1900 թուին վերցրած դրամը ծախսուած էր նախկին պարտքերի հատուցման, չվճարուած ռոճիկների և ճանապարհորդութեան համար. Շահը սնպայման փողի կարիք ունէր մի նոր ճանապարհորդութիւն կատարելու դէպի Եւրոպա: Իր առողջութիւնը վատթարացել էր և բժշկները խորհուրդ էին տալիս նորից բուժուելու Contrexéville-ում: Բացի դրանից նա ուզում էր այն պալատներին այցելել (Լոնդոն, Հռոմ և Բեռլին), որոնց նա առաջին ճանապարհորդութեան ժամանակ տեսնելու յարմարութիւն չէր ունեցել:

Ռուսաց մի լրագրի տակով (Вѣстникъ финансовъ 1900 г, № 13) անգլիացոյ կողմից երկու անգամ փոխառութիւն է առաջարկուել պարսից կառավարութեան, սակայն վերջինս վերոյիշեալ պայմանի հիման վրայ մերժել է այդ: Ուրեմն միայն Ռուսաստանը պէտք է ի նկատի առնուէր և Շահը նորից վճուէր Ռուսաց Դեսկոնտո և փոխառու բանկի միջոցով 1902 թուին Թէհրանում 10 միլիոն ռուբլու մի նոր փոխառութիւն անել, 1900 թուի փոխառութեան պայմանների համաձայն:

1902 թուին Մուզաֆէրէզդինը կատարեց իր երկրորդ ճանապարհորդութիւնը դէպի Եւրոպա: Նրան փոխանակեց այս անգամ Շուա-էս-Սալթանէի կրտսեր եղբայրներից մէկը, որովհետև վերջինիս յարաբերութիւնները մեծ վեզիրի հետ լարուած էին: Ուղեորութիւնը կատարուեցաւ Վիեննայի վրայով դէպի Հռոմ: Ապա Շահը այցելեց Վիլհելմ Բ. կայսեր և Contrexéville-ի բուժարանից յետոյ անգլիական պալատին: Վերադարձին Կուրսկում նա ներկայ եղաւ Ռուսաց զինուորական մանեօվրին. ընդունելութիւնը թէ Անգլիայում և թէ Ռուսաստանում խիստ սիրալիւր էր:

Ալի Ասկար խանը իր դէպի Ռուսաստանն ունեցած ծառայութեանց և բարեկամութեան շնորհիւ, հետզհետէ աւելի համարձակութեամբ էր բարձրացնում իր գլուխը և պիտութեան դեկը վարում էր գրեթէ միահեծան կերպով: Իր պալատական ախոյանները — էմին-էզ-Դովլէ, Նասիր-էլ-Մուլք, Ալա-էլ-Մուլք և այլք, մասամբ արքայութեան և մասամբ էլ որպէս նահանգապետներ զանոգան կողմեր ուղարկուեցան: Իր վերջին ազդեցիկ թշնամուն, Շահի ֆաւորիտ Հաքէմ-էլ-Մուլքին, կարողացաւ նա երկրորդ ճանապարհորդութիւնից յե-

տոյ, որպէս նահանգապետ Գիլան ուղարկել, ուր նա շուտով յանկարծամահ եղաւ:

Սակայն մեծ վեզիրի բռնած ընթացքը ժողովրդին ու հոգևորականութեանը հաճելի չէր, հնաշած որ նա՝ ընդունուած սովորութեանց հակառակ՝ նրանց շողոքորթում էր ու ընծաներով, կիսաթոշակներով և այլ բաներով զրաւել էր ուղում: Նրան մեղադրում էին, որ նա փոխադուլթեամբ երկիրը օտարներին է ծախել և վերջրած ահագին գումարից երկրի անհրաժեշտ պէտքերի համար ոչինչ չի ծախսել. ապա մաքսերի կուտավարութիւնը յանձնել է բելգիացիներին, որոնք թէև աւելացրել են մաքսաւին եկամուտները, բայց դա եղել է միայն աուրքերի յաւելման շնորհիւ, իսկ միւս կողմից էլ նրանք իրանց չաղ ոռճիկներով երկրի հարստութիւնը դուրս են տանում: Այն լուրը թէ մտադիր են նաև դիւղական տուրքերի հաւաքումը օտարների կառավարութեան յանձնել, սոսկալի կերպով գրգռեց հոգևորականութեան, քանի որ նրանց ձեռքում բաղմաթիւ կալուածներ են գտնուում: Թաւրիդում և պետութեան ուրիշ կողմերում ամբոխը ժնջալով վրդովեց ընդհանուր խաղաղութիւնը և խիստ եռանդով պահանջում էր, որ բոլոր բրիւստնայ ծառայողները արտարտունակ պարսից պաշտօնավայրերից (պառտ, մաքսատուն), վաճկուն Կարողական մեթոքով հիմնուած դպրոցները, արդելուի ալիուլի (հրապարակային) վաճառումը և արա նման ուրիշ բաներ:

Այս ընդհանուր անբաւականութիւնը մեծ վեզիրի հակառակորդ ազդեցութեան հետ միասին և անգլիացոց գործ դրած աղդեցութիւնը, վերջապէս Շահին ստիպեցին (1903 սեպտ.) Ալի Ասկար խանին զրկել իր բարձր պաշտօնից և Պարսկաստանից հեռացնել: Պաշտօնանկ մեծ վեզիրը Ռուսիայի վրայով Եւրոպա անցաւ: Այստեղ յիշատակութեան արժանի է մի փառա, իբր ապացոյց թէ՛ հրանում իշխող բարքերի աղէտացման. Շահը կարգադրեց ամեն տեղ Պարսկաստանում որ նրան պատշաճ եղած պատիւները մատուցուեն:

Ալի Ասկար խանը սիրալիր էր, լիբերալ և բուսամտ: Նա ուղեկցեց Նասրէզդին Շահին վերջին անգամ, և Մուզաֆֆէրէզդին Շահին երկու անգամն էլ դէպի Եւրոպա: Խիստ ճապիկութեամբ յաջողուեց նրան պետութեան բարձրագոյն գեղը իր ձեռքում պահել. սակայն իր այդ երկար պաշտօնավարութեան ժամանակամիջոցում նա անկարող եղաւ որևէ ուշադրութեան արժանի բարենորոգում ներմուծելու Պարսկաստանում: Երեկ հետզհետէ նա էլ եկաւ վերոյիշեալ եզրակացութեան թէ՛ «Պարսկաստանը բեֆորմ չի վերցնի»:

Վերջիվերջոյ նրա գլխաւոր ձգտումը եղաւ միայն իր անձնական շահերի համար հողալ: Մեծ վեզիրի հետ միասին ընկան և նրա համախոհները: Մեծ վեզիրին առ ժամանակ յաջորդ չկարգուեց. դժուար էլ կը լինէր մի յարմար մարդ գտնել դրա համար: Իրան վերապահելով անմիջական բարձր դեկավարութիւնը, Շահը երկրի կառավարութիւնը յանձնեց պըրինց էյնը-Դովլէի նախագահութեամբ կազմուած խորհուրդին:

Իր պաշտօնանկ լինելուց առաջ, Ալի Ասկար խանին յաջողուեց մի մեծ ծառայութիւն ևս մատուցանել ռուսաց, գլուխ բերելով (1902—ratif. 13 դեկտ.) ռուս-պարսկական մաքսային պայմանագիրը: Այս պայմանագրի տրամադրութեամբ պարսից մաքսերը ձեւած են ռուսաց առևտրական շահերի համաձայն և մասամբ էլ ի վնաս օտար պետութեանց Պարսկաստան ներմուծելիք ապրանքներին:

Փոխառութեան և մաքսային պայմանների շնորհիւ ռուսները կարողացան խիստ նպաստաւոր դիրք գրաւել Պարսկաստանում: Մի կողմից ձեռնտու մաքսերի շնորհիւ ռուսաց վաճառանոցը ընդլայնուցաւ Պարսկաստանում, միւս կողմից փոխառութեան շնորհիւ Թէհրանի կառավարութիւնը հետզհետէ իրան անտեսապէս կախուած պայմանների մէջ գրեց ցարի կառավարութիւնից:

Վերջին փոխառութիւնը վաղուց արդէն սպառուած է և մի նորը անխուսափելի է: Միակ պատճառը ընդհանուրի հակակրութիւնը կարող է լինել, որ այդ մինչև այժմ տեղի չի ունեցել, չնայած որ Թէհրանում արդէն գրաւական մեծ տազնապ է տիրում:

Ի՞նչ կը լինի սրա վերջը, դժուար չէ գուշակել, երբ մենք նկատի ունենանք որ հէնց այժմ ռուսաց վերահսկողութիւնը հիւսիսային Պարսկաստանի մաքսային եկամուտների վրայ մասամբ աւելի զգալի, իրական է դարձել, քանի որ ամորտիզացիան իր որոշուած ժամանակին տեղի չի ունեցել:

Ա. Շահ.

Բերլին

1) Պրինց էյնը-Դովլէն, որ ներկայումս արդէն Մեծ վեզիր է կարգուած, Եւրոպա տեսած մարդ է և յայտնի է իր անդիւրացող և ռուսաց վերաբերմամբ ունեցած անկողմնապահ քաղաքականութեամբ:

**ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԱՆԳԼԻ-
ԱՅՈՒՄ *)**

Սկզբնական կրթութեան սխտեմը Անգլիայում շատ դան-
դաղ էր զարգանում: Գէորգ III-ի ժամանակից մինչև Վիկտո-
րիայի թագաւորութեան չորրորդ կամ հինգերորդ տարին (1841
— 1842), սկզբնական ուսուցումը բացառապէս ընկերութիւննե-
րի ձեռքումն էր: Այդ ընկերութիւնները հիմնուած էին՝ ժողո-
վրդի բարօրութեան մասին հոգացող մարդկանցից և չէին վայ-
ելում պարլամենտի ոչ վաւերացումը ոչ էլ աջակցութիւնը:
Անգլիայում գոյութիւն ունէին ուսումնարաններ, որոնք հիմ-
նուել էին 300 տարի առաջ և ապահովուած էին դրամագլխով.
սակայն նրանք համարեա բացառապէս գտնուած էին ունեոր
մարդկանց ձեռքում, և 19-րդ դարի սկզբին ուսումնարաններ կա-
յին, շատ քիչ՝ բանուոր դասակարգի զաւակներին մատչելի:

Այս կարիքին գոհացում տալու նպատակով հիմնուած ըն-
կերութիւններից առաջինը (Բրիտանական) հաստատուած էր 1808
թ., իսկ երկրորդը (Ազգային) կազմակերպուած էր անգլիական
եկեղեցուց 1811 թուին և եռանդով պահպանուած էր անգլիա-
կան եպիսկոպոսներից և հոգեւորականութիւնից: Այդ երկու ըն-
կերութիւնները գոյութիւն ունեն և՛ այժմ և իւրաքանչիւրը
մանկավարժական աշխարհում ահագին ոյժ է ներկայացնում: Ա-
ռաջինը (Բրիտանականը) պահպանուած էր անգլիկան եկեղե-
ցուն չպատկանող համայնքներից: Երկու ընկերութիւնն էլ,
որ սկզբում մրցում էին իրար հետ, ամեն տեղ այնքան տար-
րական ուսումնարաններ հիմնեցին, որքան թոյլ էին տալիս
իրանց ֆոնդերը. բացի այդ՝ հիմնեցին մի քանի կոլլեժ-
ներ՝ սկզբնական ուսումնարանների ուսուցիչների սխտեմատիկ
պատրաստութեան համար: Այդ ընկերութիւններից իւրաքան-
չիւրը գործեց ինքնագլուխ 20 տարի, մինչև որ կառավարու-
թիւնը նրանց վրայ ուշք դարձրեց: 1833 թուականին դրանց
երկուսին էլ պետական գանձարանից բաց թողուեց 20 հազար

*) Эдуард Порригъ, „Современная Англія“ գրքից:

Ֆունտ ստ. (մօտ 200 հազ. բուրլի) ուսումնարանական շինութիւններ կառուցանելու նպատակով: Յետոյ պարլամենտը ըսկըսեց իւրաքանչիւր տարի նորոգել այդ գումարը, իսկ 1839 թուականին նա հասցրուած էր մինչև 30 հազար ֆունտ ստերլինգի: Հէնց այդ ժամանակ էլ հիմնուած էր՝ ժողովրդի կրթութեան Գաղտնի Խորհրդի Յանձնաժողովը, որ այն օրից մինչև այժմ հանդիսանում է՝ պետութիւնից օժանդակուող բոլոր կրթական գործերի իրրև պատասխանատու կառավարական հաստատութիւն: Նոյն ժամանակ նշանակուած էին գլխորդների համար կառավարական տեսուչներ, չազփռած էր ուսումնարանական կանոնադրութիւն և որոշուած էր առաջադիմութեան կամ արդիւնքների համեմատ օժանդակելու սխեմներ, որով կառավարութիւնը վճարում է որոշ գումար իւրաքանչիւր ժանուկի համար, որ բռնում է տեսչի կողմից կատարուած քննութիւնը՝ ուսումնարանական կանոնադրութեան պահանջների համաձայն:

Կառավարութեան օժանդակութիւնները շնորհիւ մասնաւոր ուսումնարանների գործունէութիւնը շատ բան արեց ժողովրդի կրթութեան համար 19-րդ դարի առաջին 60—70 տարիների ընթացքում: Սակայն 1860—1870 թուականներին հասարակութեան մէջ սկսեց զարթնել գիտակցութիւն՝ որ միայն մասնաւոր տնձանց ջանքերով անկարող են երկրի մէջ աղահոլել ընդհանուր ուսուցումը: Ակներև դառաւ որ պարլամենտը չպէտք է բաւականանայ լոկ որոշ գումարի յատկացումով և այն սխեմին օժանդակութեամբ, որ վերև յիշեցինք: 1867 թուականին պարլամենտի մեծ բեֆորմը տեղի ունեցաւ, որով ընտրողական իրաւունքը տրուած էր քաղաքներում նաև բնակարանատէրերին: Այդ բեֆորմի շնորհիւ 1870 թուականին ընդունուած էր սկզբնական ուսուցման օրէնքը, որ յայտնի է Ֆորստերի օրէնք անունով (Elementary Education Bill): 1876 թուականին Ֆորստերի օրէնքը լրացրուած էր մի որոշումով, որով պարլամենտը իրաւունք էր տալիս մտցնել ընդհանուր պարտադիր ուսուցում այն տեղական հաստատութիւններին, որոնց վրայ դրուած էր ժողովրդի կրթութեան օրէնքների իրագործումը: Եւ 1880 թուականին ուսումնարան յաճախելը ամբողջ երկրում պարտադիր էր դարձրուած, իսկ 1891 թուականին օրէնքը լրացրուած իր մի որոշումով, որի զօրութեամբ իսկապէս մտցնում էր ձրի ընդհանուր սկզբնական ուսուցում:

1870 թուականի օրէնքի կազմողների համար գլխաւոր ղեկավարութիւնը կայանում էր նրանում որ պէտք էր

ստեղծել այնպիսի նոր սիստեմ, որ չշօշափէր անգլիկան եկեղեցու մասնաւոր ուսումնարանների շահերը: Այդ ուսումնարանները, ինչպէս վերև ասացինք, գոյութիւն ունէին 19-րդ դարու սկզբից և 1870 թուականին կրթութիւն էին տալիս մօտ 2 միլիօն երեխաների: Այդ դժուարութիւնը հեռացրուած էր հետևեալ զիջողութեամբ. միայն այնպիսի տեղերում էին հիմնուում ուսումնարանական խորհուրդներ, ուր սկզբնական ուսումնարանների թիւը չի գոհացնում հասարակութեան պահանջը: 1870 թուականի օրէնքում ասուած էր. «Իւրաքանչիւր ուսումնարանական շրջան պէտք է ունենայ այդ շրջանում ապրողների համար մատչելի բաւական թուով սկզբնական ուսումնարաններ, եթէ դրանց սկզբնական կրթութիւնը բաւականաչափ չի ապահովուած ուրիշ միջոցներով. իսկ այնտեղ ուր բաւականաչափ ուսումնարաններ չկան—այդ պակասը պէտք է լրացնուի օրէնքում ցոյց տուած միջոցով»: «Օրէնքում ցոյց տուած միջոցը» կայանում է նրանում, որ այնտեղ, ուր չկան բաւական թուով ուսումնարաններ, հիմնուած է Ուսումնարանական խորհուրդ, որ ունի իրաւունք իր շրջանից տուրք հաւաքելու և այդ փողերով շինելու և պահպանելու հարկաւոր թուով ուսումնարաններ:

1870 թ. և 1876 թ. օրէնքների շնորհիւ այժմ երկրի նոյնիսկ ամենահեռուոր անկիւնը ունի որոշ իշխանութիւն, որը պարտաւոր է իրագործել՝ կրթութեան մասին նոր օրէնքի որոշումները: Ինքնավարութիւն ունեցող քաղաքում, ուր մասնաւոր ուսումնարանների թիւը բաւական է համարուում, և ուրեմն կարիք չկայ Ուսումնարանական խորհուրդ հաստատելու, Քաղաքային խորհուրդը իր Ուսումնարանական Յանձնաժողովի ձեռքով իրագործում է համարեա ըողոր այն լիազօրութիւնները, որ օրէնքը տալիս է Ուսումնարանական խորհրդին: Գիւղական համայնքում, ուր նոյն պատճառներով Ուսումնարանական խորհրդի կարիք չկայ, կրթական օրէնքի իրագործման պարտականութիւնը դրւում է Աղքատախնամ հոգաբարձութեան վրայ, որը Քաղաքային խորհրդի նման, իր լիազօրութիւնները յանձնում է Ուսումնարանական Յանձնաժողովին և իրաւունք ունի այս վերջինի ծախքերը ծածկելու համար տուրք նշանակելու:

Քաղաքային խորհրդի կամ Աղքատախնամ հոգաբարձութեան Ուսումնարանական Յանձնաժողովը պարտաւոր է միայն հսկելու որ պարտադիր ուսումնարան յաճախելու օրէնքի որոշումները կատարուեն: Ուսումնարանական Յանձնաժողովը ունի տեսուչներ, որոնք հետևում են անկանոն կերպով ուսումնարան յաճախող երեխաներին, և պատասխանատուութեան են Սեպտեմբեր, 1905.

ենթարկում այն ծնողներին, որոնք հոգ չեն տանում որ իրանց զաւակները ուսումնարան գնան: Այդ զէպքերում ծնողներին նախ կանչում է Ուսումնարանական Յանձնաժողովը. եթէ նրանք շարունակում են առաջուայ նման անփոյթ մնալ, կանչւում են տեղական ոստիկանական դատարան, որ իրաւունք ունի նրանց վրայ ոչ մեծ տուգանքներ դնելու: Ծնողների չըքաւորութիւնը յարգելի պատճառ չի համարւում որ երեխաները ուսումնարան չյաճախեն. կան ձրիալարժ ուսումնարաններ:

Բոլոր ծնողները պարտաւոր են իրանց զաւակներին ուղարկել ուսումնարան: Միայն հետեւեալ երեք զէպքերում ծնողները կարող են իրանց զաւակներին ուսումնարան չուղարկել. 1) եթէ մանուկը որեւէ այլ կերպով կանոնաւոր ուսում ստանում է, այսինքն սովորում է տանը կամ յաճախում է մի ուսումնարան, որի ծրագիրը ժողովրդապէս հաւասար է սկզբնական ուսումնարանի ծրագրին. 2) եթէ մանուկը անկարող է յաճախել ուսումնարան հիւանդութեան կամ այլ յարգելի պատճառով. 3) եթէ ոչ մի հասարակական սկզբնական ուսումնարան չկայ նրա տնից բաւականաչափ մօտ տարածութեան վրայ:

Ուսումնարանական Յանձնաժողովը կարող է օգտուել բոլոր այս պարտադիր լիազօրութիւններով և քաղաքում, ուր պահպանւում է մասնաւոր ուսումնարանների սխտեմը: Սակայն Յանձնաժողովը ոչ մի միջոց չունի ստիպելու մասնաւոր ուսումնարանի վարիչներին՝ յարմարեցնել ուսումնարանը աւելի մեծ թիւ աշակերտների համար: Նրբ աշակերտների հոսանքը չափազանց մեծանում է, ուսումնարանի վարիչները, սեփական նախաձեռնութեամբ, ձեւնարկում են իրանց ուսումնարանական շինութիւնների ընդարձակման: Նրանք այդ անում են, որպէս զի խոյս տան Ուսումնարանական Խորհուրդ հիմնուելուց. որովհետեւ հէնց որ ժողովրդական կրթութեան Խորհրդի յանձնաժողովը Ուստիւղում հասողուեց թէ այս կամ այն քաղաքի կամ ծխի ուսումնարանները անկարող են տեղաւորելու բոլոր ուսման կարօտներին, նա հրաման է արձակում Ուսումնարանական Խորհուրդ հիմնելու: Նախ քան այդ հրամանի հրատարակութիւնը, մասնաւոր ուսումնարանների կողմնակիցներին կատարեալ հնարաւորութիւն է տրւում լրացնել ուսումնարանների նկատած սակաւութիւնը, որովհետեւ համարեա տարի է տևում մինչև որ հրատարակւում է Ուսումնարանական Խորհուրդ հիմնելու հրամանը: Վերջին նախադրուշացումը հրատարակւում է վեց ամիս առաջ. իսկ երբ այդ ժամանակամիջոցը լրանում է, եթէ, օրէնքի բաւերով ասած, «զեպարտամենտը հասողուի որ ուսումնարանական շինութիւնները՝ այն թուով աշակերտների համար,

որ ցոյց էր տրուած վերջին նախադգուշացման մէջ, աւելացրած չեն և չեն կարող աւելացնուել կարճ միջոցում, դեպարտամենտը կը հրամայի այդ շրջանում կազմել Ուսումնարանական խորհուրդ, այն եղանակով, որ նախատեսուած է օրէնքում, և կ'ուղարկի այդ կերպ հիմնուած խորհրդին առաջադրութիւն՝ իսկոյն ձեռք առնել միջոցներ այդ շրջանին տալու այնքան ուսումնարաններ, որքան նշանակուած է առաջադրութեան մէջ, որ Ուսումնարանական խորհուրդը և ի կատար կածի։»

Շատ քաղաքներում, ուր շատ են մասնաւոր ուսումնարանները կողմնակիցները, որոնք առատածեռն նուէրներ են տալիս դրանց պահպանութեան համար, կարիք չէ եղել Ուսումնարանական խորհուրդ բանալու։

Հիմքերից մէկը, որով գերադասուած են առանց Ուսումնարանական խորհրդի իրանց գործերը տանել, սկզբնական ուսուցման օրէնքների գործադրութիւնը յանձնելով քաղաքային իշխանութիւններին և Աղքատախնամ հոգաբարձուներին,—տուրքերի նուազացումն է։ Երկրորդ պատճառն է այն յամառութիւնը՝ որով զանազան կրօնական, մանաւանդ անգլիկան եկեղեցու, կաթոլիկների և ուէսլէյեան մեթոդիստների կազմած ընկերութիւնները կպել են իրանց ուսումնարաններին։ Քանի որ քաղաքում պահպանուած է մասնաւոր, այսինքն ոչ տուրքերով պահուող ուսումնարանների սիստեմը, և Քաղաքային խորհրդին է յանձնուած ժողովրդային կրթութեան օրէնքների իրագործումը, մինչ այդ զանազան կրօնական ընկերութիւններ կարող են ստանալ պետական գանձարանից ուսումնարանների պահպանութեան գումարի $\frac{2}{3}$ -ը, միաժամանակ չկորցնելով համարեա անսահման կոնտրոլի իրաւունք ուսումնարանների վրայ։ Սակայն հէնց որ դրանք յանձնուած են Ուսումնարանական խորհրդին և դրանց պահպանութեան գումարի պակասորդ $\frac{1}{3}$ -ը հաւաքուած է տուրքի ձևով, և ոչ մասնաւոր նուիրաբերութիւններով, կրօնական ընկերութիւնները կորցնում են իրանց կոնտրոլը ուսումնարանների վրայ, և այն անդամները, որոնք ցանկանում են պահպանել իրանց ազդեցութիւնը սկզբնական կրթութեան վրայ, պէտք է աշխատեն տեղ գրաւել Ուսումնարանական խորհրդի մէջ։

Ուսումնարանական խորհրդի հաստատութիւնով իսկոյն քաղաքի բոլոր սկզբնական ուսումնարանները չեն յանձնուած նրա կառավարութեան։ Շատ քաղաքներում մասնաւոր և խորհրդի ուսումնարանները գոյութիւն ունեն միաժամանակ. սակայն մասնաւոր ուսումնարանները սովորաբար մրցման մէջ չեն դիմանում, որովհետեւ խորհրդի ուսումնարանները շատ աւելի

նիւթական միջոցներ ունենալ յետ մասնաւոր ուսումնարանները պահպանում են իրանց ինքնուրոյնութիւնը Ուսումնարանական խորհուրդ հաստատուելուց յետոյ, նրանք շարունակում են ստանալ կառավարական օժանդակութիւններ 1870 և 1891 թուականների օրէնքներով. սակայն սովորաբար նրանց օգտին նուէրները աւելի նուազում են, որովհետեւ քաղաքի իւրաքանչիւր բնակարանատէր օրէնքով պարտաւոր է վճարել իր տուրքը այն ուսումնարանների համար, որոնք հիմնուած են Ուսումնարանական խորհուրդից: Կաթոլիկները և մեթոդիստները, ինչպէս և անպիլիկան եկեղեցին շարունակում են վարել իրանց զարոյցները նոյնիսկ այդ պայմաններում:

Անգլիկան և կաթոլիկ ընկերութիւնների ուսումնարաններում ուսուցանւում է Քրիստոնէական: Անգլիկան եկեղեցու ուսումնարաններում կրօնի քննութիւնը կատարւում են թեմական եպիսկոպոսներից նշանակուած տեսուչները, որոնք զործում են անկախ խորհրդի կողմից ընտրուած ժողովրդի կրթութեան յանձնաժողովից, սակայն որպէսզի այդ տեսակ ուսումնարանը իրաւունք ունենայ կառավարական օժանդակութիւն ստանալու, անպայման պէտք է պարտաւորուի՝ չստիպել երեխաներին ուսանել Քրիստոնէականը¹⁾: Երբ առաջին անգամ հիմնուած է Ուսումնարանական խորհուրդ, նրա անդամների թիւը որոշուած է ժողովրդի լուսաւորութեան դեպարտամենտի կողմից: Յետագայում զրանց թիւը որոշուած է խորհրդի վճռով, որ հաստատւում է դեպարտամենտից: Անդամները ընտրւում են երեք տարով: Հարկ վճարող բոլոր բնակարանատէրերը ձայնի իրաւունք ունեն: Կանայք ևս ձայն են տալիս և կարող են ընտրուել խորհրդի անդամ: Ընտրութիւնը կատարւում է գաղտնի քուէարկութեամբ: Իւրաքանչիւր ընտրող այնքան ձայն ունի, որքան անգամ պէտք է ընտրուի խորհրդում և կարող է իր բոլոր ձայները տալ կամ մէկ թեկնածուին կամ բաժանել թեկնածուների մէջ այնպէս՝ ինչպէս ինքն է յանկանում:

S.

(Վերջը յաջորդ համարում)

1) Катехизисъ.

ՖՐԻԴՐԻԽ ԷՆԳԵԼՍ

(Մահուան տասնամեակի ամիթոլ)

1895 թ. օգոստոսի 5-ին յաւէտ փակեց աչքերը գիտնական սոցիալիզմի հիմնադիր նախահայրերից մէկը, Կարլ Մարքսի մտակից ու սրտակից անդուգական ընկերը, Ֆրիդրիխ Էնգելսը, այն մարդը, որի բովանդակ կեանքը՝ անհատական անսպառ ոյժերը, մտաւոր, հասարակական և քաղաքական անգուլ գործունէութիւնը ցմահ նուիրուած են եղել պրոլետարիատի ազատադրութեան գործին:

Այսօր, երբ լրանում է Էնգելսի մահուան տասնամեակը, աւելորդ չէր լինի յիշեցնելու նրա կատարած ահագին դերը հասարակական աւելի արդար կարգեր ստեղծելու մեծ գործում:

Ֆրիդրիխ Էնգելսը ծնունդ է 1820 թ. նոյեմբերի 20-ին Բարմեն քաղաքում (Հռենոսի մօտ, արևմտ. Գերմանիայում), որպէս հարուստ գործարանատիրոջ զաւակ: Պատանի Ֆրիդրիխը աւարտելով իր հայրենի քաղաքի բէալական դպրոցը, տեղափոխուում է Էլերֆելդի գիմնազիան: Մի կողմից ընտանեկան յարաբերութիւնները (հօր զբաղմունքը) և միւս կողմից Ֆր. Էնգելսի վաղաժամ քաղաքական դիմադրական ուղղութիւնը սկզբից և եթէ ատելի են դարձնում նրա համար բիւրոկրատիական որևէ կարիերա, այնպէս որ Էնգելսը գեմնազիան դեռ չաւարտած (մի տարի մնացած) մտնում է առևտր. ասպարէզը (1838), ապա մի տարի իրրև ազատաւամ վինսուր ծառայում է Բերլինում, որից յետոյ նա տեղափոխուում է Անգլիա առևտրական գործով և 1842—1844 թ. ծառայում Մանչեստրի մի գործարանում որին բաժանորդ էր իր հայրը:

Անգլիայում, կապիտալիզմի փարթամ հայրենիքում, հետզհետէ կաղապարւում է երիտասարդ Էնգելսի տնտեսական-հասարակական աշխարհայեացքը. նա մեծ եռանդով հետաքրքրւում, զբաղւում է բանւորական գրութեամբ ու շարժումով, և դեռ նոյն թուականներին աշխատակցում է չարտիստների

կուսակցական օրգանում («Northern Star»—«Հիւսիսային աստղ») և Բորերտ Օվենի թերթում («New Moral World»—«Նոր բարոյական աշխարհը»): 1845—1848 թ. էնգելսը ապրում էր Բրիտանիայում, Մարքսի հետ միասին, և մէջ ընդ մէջ Փարիզում: 1848—49 թ. նա աշխատակցում էր Մարքսի յայտնի «Neue Rheinische Zeitung» օրգանին Քեօլնում: 49 թ. յունիս և յուլիս ամիսներին էնգելսը անձամբ մասնակցում է հարաւային Գերմանիայի ապստամբութեան, որպէս հրամանատար Վիլիխի ազատական խմբի օգնական, բաղկացած 13000 հոգուց: 1850 թ. էնգելսը կրկին դառնում է Անգլիա և մինչև 1869 թ.-ը վարում այնտեղ հօր առևտրական գործերը: Նոյն թուականին թողնում է նա ընդմիջտ իր առևտրական գրադմունքները և 1870 թուականից ի վեր բնակութիւն հաստատում Լոնդոնում: Գրեթէ ամբողջ քսան տարի (1850—1870 թ.) Մարքսն ու էնգելսը իրարից բաժանուած էին ապրում: Սակայն և այնպէս չէր խզուած նրանց մտաւոր կապը. նրանք անդադար նամակագրութեան մէջ էին. ժամանակակից տնտեսական, քաղաքական և գիտնական կեանքն ու խնդիրներն էին նրանց շարունակ գրադիցնում: Եւ այն ժամանակամիջոցում, երբ մեծ մտածողներից աւագ ընկերը ցամաքային Եւրոպայի ազմկայոյզ շարժումների անմիջական մասնակցութիւնից հեռացած՝ Լոնդոնում մշտաւոր ինտենզիւ աշխատանքով էր զբաղուած, որի արդիւնքը եղաւ այն հսկայ երկունքը, որ տնտեսական գիտութիւնների մէջ նմանը չտեսնուած դարագլուխ կազմեց—նոյն ժամանակամիջոցում կրտսեր ընկերը, նստած Մանչեստրում, ամենևին չէր կլանուել առևտրական գործերով: Դրանք միշտ երկրորդական տեղ են զբաւել էնգելսի համար: Նոյն տարիներում էնգելսը եռանդով ուսումնասիրում էր պատերազմի պատմութիւնը, սազմական գիտութիւնները, ապա համեմատական լեզուաբանութիւն—որ վաղուց ի վեր նրա սիրած գիտութիւնն է եղել և տնտեսական ու բնական գիտութիւններ:

Բաւականանա՞նք այս համառօտ կենսագրական գծերով և անցնենք էնգելսի զրական ու քաղաքական գործունէութեան:

Ոչ միայն իբրեւ լոկ անհատ, այլև իբրեւ գիտնական, քաղաքական և հասարակական մեծութիւն՝ էնգելսը այնպէս սերտ շաղկապուած էր Մարքսի հետ, նրա մտաւոր ոյժերն ու արտադրութիւնները այն աստիճան հոծ բաղադրուած են այն ընդհանուր ձուլարանի մէջ, որ կռել կոփել է մարքսիզմի վիթխարի շէնքը, որ իրաւ դժուար է խօսել էնգելսի բազմակողմանի ծառայութեան մասին, առանց շօշափելու Մարքսին ու մարքսիզմը: «Գիտնական և կուսակցական շրջաններում սովոր-

րական է խօսել Մարքս-Էնգելսեան կեանքի ու աշխատութիւնների մասին—ասում է պրոֆ. Վ. Չոմբարտը,—որովհետեւ Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը իրանց երիտասարդութեան օրերից սկսած՝ մէկը 25, միւսը՝ 23 տարեկան, այնպիսի ընկերական մտաւոր սերտ յարաբերութեան մէջ են ապրել, մտածել, զգացել ու գործել են միասին այնպէս, որ անկարելի է մէկի աշխատանքը բաժանել միւսից»¹⁾։ Եւ իսկապէս Էնգելսին հասկանալու համար՝ իբրեւ անձնաւորութիւն, իբրեւ մտածող ու կոռուող սուրեկաւ, ամենալաւ մեթոդը կը լինէր այն՝ վերլուծել ամբողջ մարքսիզմը, պատկերացնել Մարքս-Էնգելսի գործնական ծառայութիւնը, անձնական յարաբերութիւնը և ուշի ուշով զատել—թէ և զգալի գիտարութեամբ—Էնգելսի անհատական բաժինը։

Սակայն, ինչպէս ասացինք, տեղը չէ այստեղ, և շատ հետո կը տանէր մեզ այդ մեթոդը, ուստի մենք կ'առաջնորդուենք այլ եղանակով—մի-մի և յաջորդաբար աչքի անցնել Էնգելսի միայն առաջնակարգ աշխատութիւնները և համառօտ գծերով առաջ բերել նրանց արծարծուած մաքրերը։

Էնգելսի առաջին գիտնական աշխատութիւնները համարւում են՝ նախ նրա մի մեծ յօդուածը՝ «Umriss zu einer Kritik der Nationalökonomie» («Քաղաքատնտեսութեան կրիտիկայի ստուերագիծը») վերնագրով, տպուած 1844 թ. Մարքսի և Ռուդէր խմբագրութեամբ հրատարակուող «Deutsch-Französische Jahrbücher» հանդէսի մէջ (յետոյ արտատպած «Neue Zeit»-ի մէջ), ապա «Die Lage der arbeitenden Klasse in England» («Բանուոր դասակարգի դրութիւնը Անգլիայում») (1845 թ., գրուած մի տարի առաջ)։ Այս երկու օրիգինալ երկերը, ուր արծարծուած են աղաքայ մարքսիստական հայեացքները, միանգամայն ազատ են Մարքսի ազդեցութիւնից։ Էնգելսի մարքսիստական ուղղութեամբ մտածելու ինքնուրոյնութեան ամենամեծ գովումն ենք, որոնք բացայայտ վկայում են երիտասարդ Էնգելսի հանձարեղ մտածողութեան բեղմնաւոր սաղմաւորումը, կազմում են այդ երկու աշխատութիւնները։

Առաջին գրուածքը կարեւոր է նրանով, որովհետեւ այնտեղ առաջին անգամ ձեռնարկուած է սոցիալիզմը քաղաքատնտեսութեան վրայ հիմնելու մի խիզախ փորձի։ Այդտեղ արդէն պարունակուած են այն տեսական-պատմական գիտողութիւնների սաղմերը, որոնք բնորոշում են գիտնական սոցիալիզմի հիմքերը։

¹⁾ W. Sombart, «Friedrich Engels, ein Blatt zur Entwicklungsgeschichte des Socialismus» էր. 3.

ըլը էնգելսը ցոյց է տալիս տնտեսական ֆենոմենների ծագման և զարգացման մէջ պատմական բեկառիվիզմը. աշխատանքի վարձ, առևտուր, արժէք, գին, փող և այլ տնտեսական կաթն-գորիաներ պատժաբար պայմանաւորուած և ոչ թէ բացարձակ (արսողիւտ) երևոյթներ են, ինչպէս բիրգերական տնտեսագիտութիւնն է աշխատում ապացուցանել: Այնուհետև էնգելսի այդ յօդուածը ամփոփում է իր մէջ համառօտ ցուցմունքներ տնտեսական մարքսիզմի մի քանի հիմնական ուսմունքների վերաբերեալ, օրինակ՝ կրիզիսների, ինդուստրիական պահետի գնդի, ակումուլացիայի և այլ թէօրիաների մասին:

Որքան էլ էնգելսի այդ առաջին գիտնական աշխատանքը ապագայ մարքսիզմի տեսակէտից մի թոյլ փորձ լինի, «մակերևոյթային և սխալներից ոչ ազատ գրուածք»—ինչպէս Կառլ-Կլին է նկատում ¹⁾—այնուամենայնիւ այն ժամանակուայ տեսակէտից դա գիտնական մեծ արժէք ունի, «նշանակալից փըշրանք է տնտեսագիտութեան պատմութեան համար» ²⁾—ասում է Զոմբարտը: Յայտնի է, որ այն ժամանակուայ նշանաւոր տնտեսագէտ Բրունօ Հիլդերբրանդը՝ տնտեսագիտութեան «պատմական շկոյայի» հիմնադիրներից մէկը, այնքան մեծ արժէք տուաւ 24 տարեկան էնգելսի վերոյիշեալ աշխատութիւններին, որ իր «Die Nationalökonomie der Gegenwart und Zukunft» («Տնտեսագիտութիւնը ներկայում և ապագայում» 1848 թ.) յայտնի գրքի մէջ գրեթէ մինչև կէսը զբաղուեց էնգելսի թէօրիաների քննադատութեամբ: Նոյն Հիլդերբրանդը էնգելսին ահուանում է «ամենատաղանդաւոր և ծանօթութիւններով բազմակողմանի գրողը գերմանական սոցիալական բոլոր գրողների մէջ»:

Անհամեմատ աւելի մեծ արժէք ու նշանակութիւն ունի էնգելսի երկրորդ գիտնական աշխատութիւնը՝ «Die Lage der arbeitenden Klasse in England» վերնագրով: Այդ «հանճարեղ երկի» մէջ, ինչպէս անուանում է նրան Մարքսը, առանձնապէս փայլում է էնգելսի տաղանդը: Թէ որքան խորն է ըմբռնել էնգելսը կապիտալիստական արդիւնաբերութեան սխտեմի ոգին—ասում է Մարքսը այդ գրքի մասին խօսելու ժամանակ—դա վկայում են Factory Reports, Reports on Mines, որոնք լոյս են տեսել 1845 թ.-ից ի վեր. և թէ որքան հրաշալի կերպով է պատկերացնում նա ամբողջ տիրապետող գրութիւնը, ցոյց է տալիս նրա գրքի թուուցիկ համեմատութիւնը 18—

1) K. Kautsky, Fr. Engels, sein Leben, sein Wirken, seine Schriften» էր. 9.

2) W. Sombart, Ibid. էր. 6.

20 տարի յետոյ հրատարակուած պաշտօնական յանձնաժողովի զեկուցումներին հետ 3)»։ Հում նիւթերի մեծ վարպետութեամբ մշակումը և պատկերացման ու նկարագրութեան մեթոդը՝ էնգելսի դրբում, ահագին նշանակութիւն է ունեցել Մարքսի համար՝ անգլիական բանտրների տնտեսական-սոցիալական դրութիւնը ուսումնասիրելու ժամանակ, և նա զրականապէս հրաժարուած է անգլ. բանտը դասակարգի պատմութիւնը, մինչև 1845 թ. տալուց, մատնացոյց անելով էնգելսի աշխատութեան վրայ։

«Բանուոր դասակարգի դրութիւնը Անգլիայում» գիրքը անպայման համարուած է իր տեսակում մի զարագուելի կազմող երկ, գեոլիքիստիւ (նկարագրական) տնտեսագիտութեան մէջ։ Որովհետև նա առաջին աշխատութիւնն է (նրանից առաջ և՛ դաժ փորձերը թոյլ են և անաջող) — ինչպէս գեղեցիկ կերպով ապացուցել է Զոմբարտը, որ իրողութիւնների և երևոյթների վերաբերեալ քաղած նիւթերը ենթարկուած են խոր անալիզի, տեսական դիտողութիւնների ու ցուցմունքների, ուր իշխում է կրիտիկական համարձակ ոգին, ուր — մարքսիստական արտայայտութեամբ — տիրապետում է սոցիալ-տնտեսական երևոյթներին պատմական ըմբռնողութիւնն ու մեկնաբանութիւնը։ Առաջին անգամ, ասում ենք, էնգելսը այնքան խորութեամբ ու հմտութեամբ — որքան այդ իր բարձր աստիճանով մատչելի կարող էր լինել նրա երիտասարդական հասունութեան — ցոյց է տուել սոցիալ-տնտեսական զփնդակ երոցյթների պատմարար պայմանաւորուած կառուցող կապակցութիւնը այն պողիտիւ կուլտուրայի հետ, որին հայթհայթել ու զարգացրել է կապիտալիստական արդիւնաբերութեան սխտեմը։ Ինքը՝ կապիտալիզմը, պողիտիւ կուլտուրայով հանդերձ բնանհրաժեշտօրէն արտաբերել է իր ծոցում այն նեգատիւ էլեմենտները, որոնք պիտի ժամանակի ընթացքում կրծեն կապիտալիզմի գոյութեան արժանիքը և խորտակեն կապիտալիստական սխտեմի ողջ կառուցուածքը։

Եւ այդ գաղափարները արծարծել է էնգելսը այն ժամանակ, երբ արևմտեան եւրոպայում ուտոպիստ սոցիալիստները, ընդգերական վերամբարձ իդիօլոգները, իզէալիստ բարոյագէտները տրտունջով ու խորին ապատիայով բողոքում էին տնտեսական-տեխնիքական յեղաշրջումների դէմ, որոնք տոն էին տալիս մասսայական չարիքների, յուզիչ ու վթաշարժ նըկարագիրներով կոչել էին ուղղում բարձր դասակարգի հասցէին և օգնութեան կոչում նրանց ֆիլանտրոպիան — վերացնե-

3) K. Marx, «Kapital» I հատ. 224.

լու, բուժելու մասսայական չարիքը, ապաքինելու սոցիալական օրգանիզմի տկար ու հիւանդոտ մասնիկներին:

Էնգելսը իր գրքի մէջ կրիտիկական գիտակցութեամբ հակադրում է ժամանակակից անգլիական բանուորական և սոցիալիստական (որ այն ժամանակ տարրեր դրութիւններ էին ներկայացնում) շարժումներին—չարտիզմին և օվենիզմին,—և պահանջում երկուսի ձուլումը մի աւելի բարձր միութեան մէջ, բանուորական շարժումը պիտի այն ուժը դառնայ, որ իրականացնէ սոցիալիզմը, իսկ սոցիալիզմը պիտի այն նպատակը լինի, որ դնում է իրան բանուորական շարժումը:

Բորեքա Օվենի ուսուպիստական սոցիալիզմը ընդհանուր առմամբ ոչ մի գործ չունէր բանուորական շարժման հետ,—գործադուլ, պրոֆեսիօնալ կազմակերպութիւն, բաղադրական գործունէութիւն—զին ու արժէք չունէին նրա համար: Միւս կողմից բանուորական շարժումը՝ չարտիզմը, չէր ուզում ոչինչ լսել սոցիալիզմից, նա պտտում էր գոյութիւն ունեցող վարձու սխտեմի սահմանների մէջ—կօալիցիայի կատարեալ ազատութիւն, ընտրողական իրաւունք, աշխատանքի նորմալ օր, մանր—գիւղացիական կալուածատիրութիւն,—սրանք էին կազմում չարտիստների մեծամասնութեան համար իրանց կռուի գրական ղէնքերը, և իրաւ ոչ թէ գոյութիւն ունեցող հասարակական կարգերը խորտակելու համար, այլ մասսայի համար տանելի, համակրելի ձևով կազմաւորելու համար:

Այդ միմեանց հակադրող տենդենցները դէմ էնգելսը բացատրում է հետևեալը. «Սոցիալիզմը իր այժմեան կազմի մէջ չի կարող երբէք բանուոր դասակարգի հանրական բարիքը դառնալ. նա անպամ կը ստորացնէ ինքն իրան, խոնարհուելով մինչև չարտիստների տեսակէտի աստիճանը... Սոցիալիզմի և չարտիզմի ի մի ձուլումը, ֆրանսիական կոմունիզմի վերարտադրութիւնը՝ անգլիական եղանակով, պիտի ընդհանուր շարժման յաջորդ բայլը լինի և նա արդէն սկսուել է: Միայն այն ժամանակ, երբ վերաստեղծուէ այդ դրութիւնը, կարող է բանուոր դասակարգը իրապէս տիրապետող դառնալ Անգլիայում»¹⁾: Սոցիալիզմի և բանուորական շարժման ի մի ձուլումը, սակայն, որի անհրաժեշտութիւնը վճռապէս շեշտում է երիտասարդ Էնգելսը, ուրիշ ոչինչ չէ, բայց եթէ մօղերն սոցիալիզմի էութիւնը, մարքսիստական սոցիալ գէմոկրատիզմի կորիզը: Էնգելսի գրք իմէջ տիրապետող աշխարհայեացքը մեծ մասամբ կը թնուծ է այն ամուր հեռաբանի վրայ, որի վրայ երկու

1) «Die Lage der arbeitenden Klasse in England» էր. 285—286.

տարի յետոյ (1847 թ.) կառուցուած է Մարքս-էնգելսեան չնաշխարհիչ շէնքը՝ «Կոմունիստական Մանիֆեստով»:

«էնգելսը-ասում է Կառեցկին-տիրապետող թշուառութեան մէջ չէր նկատուած միայն թշուառութիւն, ինչպէս իր ժամանակի սոցիալիստներն էին, այլև մի աւելի բարձր հասարակական ձևի սաղմեր: Մենք, որ մնուել ենք արդի սոցիալիզմի մտքերի աշխարհում, հազիւ կարող ենք չափել այն խոշոր ծառայութիւնը, որ կատարել է 24 տարեկան էնգելսը իր այդ աշխատութեամբ մի այնպիսի ժամանակ, երբ մարդիկ կամ ուրանում է կամ ողբում էին բանուոր դասակարգի ցաւերն ու տառապանքները, և ոչ թէ հետազօտում էին այդ բոլորը, որպէս պատմական զարգացման անխուսափելի երևոյթ»²⁾).

Այդ երկու օրիդինալ աշխատութիւններից յետոյ էնգելսը թեւակոխում է իր մտաւոր կեանքի երկրորդ շրջանը. մի աւելի բարձր ու հասունացած շրջան, ուր Մարքս-էնգելսեան մտածողութիւնն ու արտադրութիւնները դառնում են երկուսի համար հանրաժէշ սեփականութիւն ու բարիքներ: Երկուսի ստեղծագործող ոյժերը այն աստիճան են իրար հետ սերտ շաղկապւում, որ մէկի դրածի ու արածի համար պատասխանատու էր միւսը, և ընդհակառակը. երկու ֆիզիքական օբյեկտների մէջ իշխում ու զեկավարում էր միևնոյն ոգին. դա մեծ մտածողների պատմական կեանքի մէջ մի չտեսնուած ու եզակի մտաւոր զուգաւորում է (Զօմբարալ նոյն իսկ մտաւոր ամուսնութիւն է անուանում, Մարքսին կոչելով տղամարդ, իսկ էնգելսին կին ամուսիններ) — եթէ կարելի է այսպէս արտայայտել, որ մարքսն ու էնգելսը ունէին.

1847 թուից 'ի վեր, այսինքն «Կոմունիստական Մանիֆեստի» խմբագրութիւնից յետոյ, ինչ որ էնգելսը գրել ու գործել է, բխել է այն ընդհանուր մարքսիզմի բովից, որի կառուցման ու հիմնաւորման մէջ էնգելսը ունեցել է իր պատկառելի մասնակցութիւնն ու բաժինը: Մարքսն ու էնգելսը-երկու մտաւոր եղբայրները-իրենց մտաւոր զբաղմունքների ժամանակ ունեցել են աշխատանքի նպատակայարմար բաժանում: Մարքսը նուիրուած էր ամբողջ սիստեմի հիմնաւորման, լրացման և կատարելագործման, «Կապիտալը» դարձաւ նրա մտաւոր կեանքը բովանդակող ինտենզիւ գրադմունքը: Մինչդեռ էնգելսին վերապահուած էր ամբողջ բւամունքը պաշտպանելու հակառակորդների հարձակումների դէմ և մատչելի դարձնելու այն լայն խաւերում. ասել է՝ էնգելսը ստանձնել էր իր վրայ

²⁾ K. Kautsky, Ibid. Էր. 10—11.

պոլիմիկայի—որի մէջ նա անչափ ճկուն ու հմուտ էր—և մարքսիզմի ժողովրդականացման պատասխանատու դերը:

Մեր ընտրած մեթոդին հաւատարիմ չէինք մնայ և շատ կշեղուէինք ընտրած թեմայի սահմանից, եթէ այստեղ կանդաւունէինք Մարքս-էնգելսեան հաւաքական աշխատութիւնների վրայ, ուստի մենք կը շարունակենք խօսել բացառապէս էնգելսի միայն գլխաւոր երկերի մասին:

Փրիզրիւ էնգելսի ամենայայտնի, կուզենայի ասել՝ կլասիքական պոլիմիկան, որի մէջ ըստ ամենայնի փայլում է նրա ունիվերսալ ուղեղը, համարւում է նրա «Herrn Engen Dührings Umwälzung der Wissenschaft» («Պարոն Օյգեն Դիւհրինգի գիտութեան յեղաշրջումը» 1877 թ.) վերնագրով աշխատութիւնը: Դա մի երկ է, որ էնգելսը հետեւելով Դիւհրինգի (եղել է պրիվատօցնետ Բերլինի համալսարանում) բազմակողմանի կրիտիկային, զբօսանք է կատարում գրեթէ բոլոր գիտութիւնների (փիլիսոփայութեան, ընափիլիսոփայութեան՝ իր ստորաբաժանումներով, մօրալի, իրաւունքի, գիւլեկտիկայի, տնտեսագիտութեան՝ իր բոլոր կարեւոր պրոբլեմներով, և սոցիալիզմի՝ իր տեսական գիտական հիմնաւորութեամբ) այգեստանում, քայլ առ քայլ ջախջախում Դիւհրինգի ֆիլիստրական հայեացքները և ամենուրեք դրօշմում մարքսիստական տեսակէտը, առաջնորդուելով մատերիալիստական գիւլեկտիկայով»¹⁾: Անտի-Դիւհրինգը—ինչպէս նա կարճ խօսքով անուանում է—համարւում է «Կապիտալից» յետոյ միակ հիմնական նշանակալից աշխատութիւնը արդի սոցիալիզմի գիտական գրականութեան մէջ: «Die Entwicklung des Socialismus von der Utopie zur Wissenschaft» («Սոցիալիզմի զարգացումը ուտոպիայից դէպի գիտութիւն») յայտնի բրօշուրը կազմում է «Անտի-Դիւհրինգի» յաւելումը:

Թէ որքան հարազատ մարքսիստական է «Անտի-Դիւհրինգը», դա վկայում է ինքը էնգելսը երկրորդ հրատարակութեան յառաջարանի մէջ (երես 10). «Որովհետեւ այստեղ արծարծուած տեսակէտները մեծ մասամբ Մարքսն է հիմնաւորել ու զարգացրել և միայն մի չնչին մասն է պատկանում ինձ, այդ պատճառով հասկանալի է, որ իմ աշխատութիւնը չեմ

1) Այն հակադարձիական և հակամարքսիստական հայեցակետերը, որոնցով հակադրում է Դիւհրինգը օրգանական կեանքի և մարդկային սեռի հասարակականպատմական կեանքի զարգացման թէօրանքներին, այնպիսի խոր ու հիմնաւոր կրիտիկայի է ենթարկւում զարմինական և մարքսիստ էնգելսի կողմից, որ «Անտի-Դիւհրինգի» յաջորդութիւնն ու արժանիքը զգում են անդամ հակառակորդները:

հրատարակել առանց նրա գիտութեան: Նախ քան տպագրելը ես գրել եմ Մարքսի առաջ աշխատութեանս ամբողջ ձեռագիրը. և քաղաքատնտեսութեան վերաբերեալ հատուածի տասերորդ գլուխը («կրիտիկական պատմութիւնից») գրել է ինքը Մարքսը, որը, սակայն, գծրադրտարար կրճատել եմ կողմնակի պատճառների շնորհիւ: Մեզ համար սովորութիւն էր վաղուց 'ի վեր միմիանց փոխադարձաբար օգնել մասնագրտական ճիւղերում»:

1884 թ. ամառը Էնգելսը հրատարակում է իր մի նշանաւոր ուսումնասիրութիւնը «Der Ursprung der Familie, des Privateigentums und des Staates» («Ընտանիքի, մասնաւոր սեփականութեան և պետութեան ծագումը») վերնագրով, որով նա լրացնում է այն, ինչ որ Մարքսն էր մտադիր անելու. այսինքն Մորգանի հետազոտութիւնները կարևոր լուսարանութեամբ և լրացումներով ծանօթացնել հասարակութեան: Մորգանը իր նախապատմական ուսումնասիրութիւններով հասել է նոյն մատերիալիստական պատմական ըմբռնողութեան (materialistische Geschichtsauffassung), որին յանգել են Մարքսն ու Էնգելսը իրանց պատմական հետազոտութիւններով: Էնգելսի աշխատութիւնը ունի այն մեծ արժանիքը, որ նա լրացնելով և զուտ մարքսիստական կոլորիտ տալով Մորգանի նշանաւոր հետազոտութիւններին (ընտանիքի նախնական վիճակը, նրա աստիճանական փոփոխութիւնը, հասարակական կազմի սկզբնական կոմունիզմը և այլն), միմիանց հետ սերտ միացրել, շաղկապել է մարդկային անցեալի նախապատմական և պատմական դարեշրջանների օրգանական զարգացման օղակները, քաջատրելով մարդկային հասարակութեան ամենամեծ ու արմատական ինստիտուցիաների—ընտանիքի, մասնաւոր սեփականութեան և պետութեան—ծագումը, զարգացումը և էութիւնը:

Մի տարի ուշ, 1885 թ., Էնգելսը ձեռնարկում է իր գրական ամենախոշոր ծառայութիւններից մէկին՝ «Կապիտալի» երկրորդ հատորի, 1888-ին՝ երրորդ հատորի հրատարակութեան: Առաջին հատորի մէջ, ինչպէս յայտնի է, Մարքսը հետազոտում է կապիտալի արդիւնաբերութեան պրոցեսը, թէ ինչպէս է արժէքը և յաւելեալ արժէքը (Werth und Mehrwerth) արտադրուում: Երկրորդ հատորի մէջ, նա ուսումնասիրում է կապիտալի շրջանառութեան պրոցեսը, նրա զանազան ձևերը, որոնց ընթացքում կապիտալիստը վաճառում է արժէք և յաւելեալ արժէք պարունակող արդիւնքները (ապրանքը), որպէսզի նրանց փոխարէն ստացած փողի գումարով կրկին արդիւնաբերութեան միջոցներ և աշխատանքի ոյժեր գնէ և արժէք ու յաւելեալ

արժէք արտադրէ—աւելի բարձր աստիճանով ու մեծ քանակով: Նրորորդ հատորի մէջ արդէն Մարքսը հետազոտում է կապիտալիստական արդիւնաբերութեան ամբողջ պրոցեսը (արդիւնաբերութեան և շրջանառութեան), գնի կազմաւորումը արժէքից, յաւելեալ արժէքի բաժանումը իր առանձին մասերի վրայ՝ կալսածային հասոյթ, շահ, տոկոս և այլն:

1883 թ. մեռնելով իր հանճարեղ ընկերը, մեն-մենակ իր վրայ էր ծանրացել ամբողջ գրական-քաղաքական գործունէութեան բեռը: Մարքսի մահից յետոյ միայն Էնգելսը կարող էր իր ընկերոջ կոյտալ ձեռնարկը յաջողութեամբ պսակել: Թէ ինչպիսի մեծ գիտարութիւնների է յաղթահարել Էնգելսը «Կապիտալի» երկու հատորների մանուսկրիպտը քրքրելու, նիւթերը սիստեմով դասաւորելու, մութ ու թերի կէտերը ծանօթութիւններով պարզարանելու և լուսաբանելու համար, դրա մասին ընդարձակ պատմում է ինքը երբորդ հատորի յառաջարանում:

«Մարքսի «Կապիտալի» երկրորդ և երրորդ հատորների հրատարակութիւնը-ասում է դօկտօր Վիկտօր Ադլերը «Wiener Arbeiterzeitung»-ի մէջ—կազմում է վերջին մեծ ընծան, որ Էնգելսը նուիրել է պրօլետարիատին: Մենք ասում ենք լոկ «հրատարակութիւն», մինչդեռ դա իրապէս մի նորաստեղծում է, մի բարձր գործի պսակում, չնայելով որ Էնգելսը մեծ հոգիների յատուկ համեստութեամբ իրենը ցածր էր գտնում իր ընկերոջ երկերից: «Կապիտալի» երկու հատորներից Էնգելսը ժայռամուր կառուցուածքով մի յարատեւ արձան է կանգնեցրել իր ընկեր Մարքսի համար, և առանց ինքը ցանկանալու՝ քանդակել է նա այդ արձանի վրայ իր անունը անջնջելի տառերով: Ինչպէս որ Մարքսը և Էնգելսը կեանքի մէջ անբաժանելի են եղել, այնպէս էլ «Կապիտալը» չպիտի մէկի անունով կոչուի, այլ տնտեսագիտութեան պատմութեան մէջ պէտք է միշտ կոչուի Մարքսի և Էնգելսի «Կապիտալը»:

Մենք շատ հեռու կը գնանք, եթէ խօսենք Էնգելսի միւս բոլոր բրօշուրային աշխատութիւնների, բաղմաթիւ յօդուածների և Մարքսի գրեթէ բոլոր երկերի համար գրած ներածութիւնների և յառաջարանների մասին, ուստի սրտնով փակում ենք այստեղ մեր թուղթիկ նկատողութիւնները Էնգելսի զրաւան գործունէութեան մասին ինչ-ինչ պատճառներով մի կողմ թողնելով նրա քաղաքական գործունէութեան բնորոշումը: Պէտք է ասենք միայն որ Էնգելսը աւելի շատ, քան Մարքսը, տարիներ է մաշել քաղաքական գործունէութեան և սոցիալական ու սոցիալիստական շարժման մէջ: Ոմանք սպեցիֆիկ կոչումներ

են տալիս Մարքս-էնգելսին. սուսջնին անուանելով «միայն թեօրեաիկ», երկրորդին՝ «միայն պրակտիկ»: Այդ սուր զատումները, սակայն, միանգամայն սխալ են, ինչպէս Զոմբարտը ևս իրաւամբ նկատում է: «Կապիտալի»-թէօրետիկական այդ հսկայ երկի հեղինակը միեւնոյն ժամանակ «ինտերնացիօնալի» փայլուն ղեկավարն էր, նրա գործունէութեան տոն տուողը: Իսկ «միայն պրակտիկ» էնգելսը իր թէ նախամարքսիստական օրիգինալ երկերի մէջ, ինչպէս մենք տեսանք, և թէ իր ժարքսիստական աշխատութիւնների մէջ ամեն քայլափոխման վկայում է իր ինքնուրոյնութիւնը, տեսական բարձր ըմբռնողութիւնը: «էնգելսը Մարքսին հաւասար չէր, այլ համածին ու համանշման»¹⁾ նկատում է Ֆրանց Մենցերինը: Կամ ինչպէս Պօլ Լաֆարգն է նկատում, էնգելսը յետ չէր կանգնած Մարքսից, այլ կանգնած էր նրա կողքին իր յատուկ մեծութեամբ²⁾: Ինքը Մարքսը, ասում է Լաֆարգը, հիացած էր էնգելսի հանրագիտութեամբ. վարպետ գիտութեան բոլոր ճիւղերում: Նոյն նկատողութիւններն է անում նաև Վիլհելմ Լիբկնեխտը:³⁾

Բ. Իշխանեան

1) Franz Mehring, «Friedrich Engels» («Neu Zeit» № 44, 1905)

2) Paul Lafargue «Erinnerungen an Friedrich Engels» (նոյն համարը)

3) Wilhelm Libknecht, «Karl Marx zum Gedächtniss», Կր. 109.

ԸՆՏՐԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ
ԿԵԱՆՔՈՒՄ *):

Նախընթաց գլխի մէջ առաջ բերինք Հայ եկեղեցու պատմական կեանքից (IV—XVI դարերի) մի շարք փաստեր: Մեր ձեռքի տակ եղած նիւթերից քաղեցինք յատկապէս այնպիսիները, որ պատմած դէպքերի ժամանակակից, կամ ժամանակով ամենից մօտիկ հեղինակներից հն ֆնացել մեզ, թողնելով ամբողջ մեր հաւաքած նիւթերի հրատարակութիւնը մի այլ անգամի և մի այլ աշխատութեան մէջ:

Մեզ ֆնում է այժմ մի ընդհանուր հայեացք ձգել մեր եկեղեցու կանոնական կարգերի վրայ և տեսնել, թէ արդեօք ի՞նչ կարող ենք գտնել նրանց մէջ, որ թէկուզ հեռուոր կերպով առնչութիւն ունենային մեր առաջ դրուած խնդրի հետ: Այդ նպատակով մենք կարող ենք ՚ի՛ նկատ ունենալ 1. Առաքելական. 2. Երեք տիեզերական. 3. Վից տեղական օտար եկեղեցիների. 4. Հայ եկեղեցու տեղական ժողովների և 5. Մեր ս. հայրերի կանոնները:

Եկեղեցական կանոնների մէջ թէ վարչական և թէ հոգևոր ամենատեսակ պաշտօնեաների ընտրութեան եղանակի մասին պարզ և որոշ բան համարենք թէ չկայ:

Այսպէս ուրեմն, մասամբ նիւթն սպառած լինելու և մասամբ էլ հոգևոր վարչական պաշտօնեաներ կարգելուն վերաբերեալ կանոնների ընդթը պատկերացնելու համար, առաջ բերենք այդ կանոններն իրանց համառօտ բովանդակութեամբ:

1. Առաքելական կոչուած կանոններից 20-րդը ասում է, որ ընտրուածը թէ որ արժանաւոր է, թող կարգուի քահանայ. և այլն: 21-րդը թւում է մի առ մի այն արատները, որոնց աէրերը չեն կարող քահանայ լինել:

2. Նոյն առաքեալներին ընծայուած թուով 85 կանոններից 30-րդը ասում է, որ իշխանների բռնութեամբ եպիսկոպոս եղողը կարգաւոյժ պիտի լինի: 36-րդը՝ թէ ժողովուրդը

*) Տես «Մուրճ» № 8:

իր վրայ ձեռնադրուած եպիսկոպոսին չընդունելու. դէպքում, քաղաքի հոգևորականները պիտի պատիժ կրեն այն բանի համար, որ ժողովրդին չեն կայսրացիլ նախօրօք իրատել: 76-րդը՝ եպիսկոպոսն իր ազգականներին եպիսկոպոս չպիտի ձեռնադրի խաթեր համար՝ այն պատճառով որ, եկեղեցին ժառանգութեամբ չի կարելի յանձնել մէկին. ով այդպէս կանի՝ ձեռնադրութիւնը վաւերական չի լինի ու ինքն էլ եկեղեցուց կը մերժուի:

3) Նիկիական ժողովի 4-րդ կանոնի համաձայն նահանգի եպիսկոպոսների համաձայնութեամբ պիտի նոր եպիսկոպոս նշանակուի, որոնցից երեքն անպատճառ ներկայ պիտի գրանուին ձեռնադրութեանը: 6-րդ կանոնով, եթէ եպիսկոպոսի ընտրութիւնը ժողովականների (եպիսկոպոսների) մեծամասնութեան համաձայնութեամբ լինի՝ ընտրուածը թող հաստատուի: 15-րդ կանոնով արգելուած է հոգևորականների տեղափոխութիւնը:

4) Տեղական կոչուած ժողովներից Անտիոքիւնը (341 թ.) 16-րդ կանոնով, եթէ թեմ չունեցող մի եպիսկոպոս առանց եպիսկոպոսների ժողովի որոշման գրաւի մի թափուր թեմ, թէկուզ այդ թեմի ժողովրդի համաձայնութեամբ նոյնիսկ, նա, այդ եպիսկոպոսը պիտի կարգաւոյժ լինի: 19-րդ կանոնը սահմանում է, որ միտրապոլիտի հրաւիրմամբ կայացած ժողովի որոշմամբ պիտի եպիսկոպոսի ձեռնադրութիւն լինի. ընտրութիւնը կատարում են եպիսկոպոսները և ընտրելիի ապագայ պաշտօնակիցները, որոնք իրանց բացակայութեան դէպքում գրաւոր պիտի իրանց կարծիքը յայտնեն: 23-րդ կանոնը արգելում է մահուանից առաջ իրան յաջորդ նշանակել, այդ իրաւունքը ժողովին (եպիսկոպոսների) վերապահելով:

5) Լատիկէայի տեղական ժողովի (365 թ.) 13-րդ կանոնը արգելում է որ ժողովրդի խումն բաղմութիւնը հոգևորական ընտրի:

6) Հայ եկեղեցու տեղական ժողովներից մէկը որ կայացել է Երուսաղէմում (1651 թ.) Փիլիպպոս կաթողիկոսի նախագահութեամբ, թէև գումարուած է եղել Ս. Էջմիածնի և Սսի աթոռները հաշտեցնելու և փոխադարձ իրաւական յարաբերութիւնները հարթելու, այնուամենայնիւ կարևոր է համարել շօշափել և ընդհանուր վարչական և այլ խնդիրներ, ու յատուկ կանոններ սահմանել: Այդ կանոններից երրորդն ասում է որ առանց ժողովրդի խնդրանաց և վկայութեան թղթի եպիսկոպոս չպէտք է ձեռնադրել: Իսկ իններորդ կանոնը որոշում է. եթէ քահանան կամ ժառանգաւորը առանց իրանց ժողովների, 1905.

զովորդի համաձայնութեամբ են ձեռնադրուել, պիտի կարգաւոյժ լինին: Նոյն ժողովի Եօթներորդ կանոնը ասում է, որ եպիսկոպոսը կաթողիկոսի հրամանով և ոչ թէ այլազգիների բռնութեամբ պէտք է իշխէ:

7) Ներսէս Շնորհալու Ընդհանրականի մէջ կայ հետեւալ խորհրդածութիւնը, թէ Լուսաւորչի աթոռը ձգտում են գրաւել ոչ թէ Աստուծոյ և ազգիս աստուածային մարդոց ընտրութեամբ, այլ աշխարհի բռնակալների (իշխանների) հրամանով:

8) Մխիթար Գօշի Դատաստանադրքի (I մ.) ԽԶ (46) կանոնի բացատրութեան մէջ կարդում ենք.—ձեռնադրութեան (եպիսկոպոսի) համար՝ նախ բաղմաց ընտրութիւնը և ամենքի հաւանութիւնը պիտի լինի. ԽԸ (48) կանոնի (Յաղագս դատաստանաց ձեռնադրութեան կաթողիկոսաց) բացատրութեան մէջ ասում է, կաթողիկոսի հրամանով կամ կամքով չեն ձեռնադրուում (եպիսկոպոսները). թէ որ պատահի՝ ոչ իր (կաթողիկոսի), այլ բաղմաց ընտրութիւնից յետոյ. նոյնն է և կաթողիկոսի ձեռնադրութիւնը. (բաղմաց ընտրութեամբ):

Ազգային եկեղեցական այն ժողովների և եկեղեցու այն ա. հարց կանոնները, որոնք որեւէ կերպ կապ ունին մեր առաջ գրուած խնդրի հետ՝ մենք բաց ենք թողնում, որովհետեւ նրանք արդէն առաջ բերուած կանոնների կրկնութիւններ ու բացատրութիւններ են: Նրանց մասին խորհրդածութիւնները տեղին կը լինէին մի զուտ ժամագիտական ու մանրազնին աշխատութեան մէջ, և ոչ այստեղ, որ մի ժողովրդականացրած գործ է, ուր աշխատում ենք և ստիպուած ենք նիւթը չծանրաբեռնել:

Այսպէս ուրեմն, ահա այն բոլորն իրանց սեղմ չափով, ինչ որ կարող ենք հայ ընթերցողի ուշադրութեանը ներկայացնել: Այս բոլորից յետոյ մեզ մնում է մի ակնարկ ձգել Հայ եկեղեցու պատմական կեանքի մեղ թողած այդ թանկագին նիւթերի վրայ ու խոշոր գծերով ուրուագծել մեր եկեղեցու իրաւունքի ընտրական սկզբունքի հիմունքներն և արտայայտութեան եղանակները:

IV

Նախ բան անցնելը ներկայ գլխի նիւթերին, հարկ եմ համարում մի բանի կարեւոր բացատրութիւններ տալ:

Մենք ամենևին չէինք ցանկայ այն կարծիքը կազմել տալ, որ սոսմեր ցանկացած ձևով մի լրիւ աշխատութիւն է. թէև իր տեսակի մէջ կազմում է մի ամբողջութիւն, դրա հետ միա-

սին և մի նորութիւն մեր պրականութեան մէջ՝ Հայ եկեղեցու կեանքի նկատմամբ:

Այս խնդիրը մենք կուզէինք ուսումնասիրուած տեսնել համեմատական ուսումնասիրութեան եղանակով, որին արդէն փորձել ենք հետեւել մեր տպուած մի աշխատութեան մէջ: Ուրեմն պարզ է, որ որոշ կրճատումներ անելու հարկի մէջ ենք եղել:

Մեր ներկայ աշխատութիւնը համառօտ, թուցիկ կանոններ են, ուր պատմական որոշ դէպքերի ցուցումների հիման վրայ, մեր ուժերին և պատրաստութեանը ներածին չափ աշխատել ենք բնորոշումներ անել որոշ խնդիրների ներկատմամբ և հնարաւոր եղածին չափ պարզ եզրակացութիւններ յանգել:

Դիմենք պատմական փաստերի վերլուծութեանը:

Եկեղեցու իրաւունքի ամեն մի խնդրի ուսումնասիրութեան համար առաջնակարգ նշանակութիւն ունին այդ իրաւունքի ցուցումները. հետեւապէս ընտրական սկզբունքի համար պարտաւոր ենք դիմել նախ նրան: Արդ, Հայ եկեղեցու իրաւունքը և նրա ազդիւրները թիւ են տուած: Տեսնենք:

Առաջ բերածս բոլոր կանոնների մէջ մի առանձին տեղ են բռնում Երուսաղէմի ժողովի երրորդ և իններորդ կանոնները, ուր առաջին անգամ մենք հանդիպում ենք ժողովրդի իրաւունքը մասնանիշ արուած: Բայց այս մասին յետոյ: Մնացած բոլոր կանոնների հիման վրայ, եպիսկոպոսների ընտրութիւնը, ձեռնադրութիւնը և պաշտօնի կոչուելը կարող էր տեղի ունենալ թեմի եպիսկոպոսների ընտրութեամբ: Եթէ ընտրութեանը որեւէ պատճառով չէին կարող մասնակցել թեմի բոլոր եպիսկոպոսները, յամենայն դէպս նրանք պարտաւոր էին իրանց միտքը դրաւոր յայտնել, իսկ ձեռնադրութեան ժամանակ նրանցից առնուապէս երեք հոգի պիտի ներկայ լինէր: Եթէ ընտրութեան ժամանակ կողմերի բաժանուէին, մեծամասնութեան որոշումն էր իրագործում միտրապոլիտը՝ եպիսկոպոս ձեռնադրելիս:

Միտրապոլիտին և պատրիարքին ընտրուած էին նրանց իրաւասութեան տակ գտնուած բոլոր եպիսկոպոսների ժողովները: Այդ կանոնների ընդհանուր կերպարանքը գալիս է համոզելու, որ բարձր հոգեւորականութիւնը նոյն իսկ կանոնական ժողովներով աշխատել է իր ձեռքը կենդրոնացնել իշխանութիւնը: Նա նոյն իսկ աշխատել է պատժական միջոցներով խեղդել աւանդական կարգը, որի հիմամբ ժողովուրդն անմասն չէ եղել եպիսկոպոսների և քահանաների ընտրութեան գործում:

Այդ տեսակէտից խիստ բնորոշ է Անտիոքի տեղական ժողովի 16-րդ կանոնը, որ արդէն առաջ ենք բերել: Այդ կանոնով մի խիստ միջոց է ձեռք առնուած այնպիսի եպիսկոպոսների դէմ, որոնք կը կամենային որևէ թեմ գրաւել ժողովրդի ցանկութեամբ: Ժողովրդի իրաւունքը ճանաչող այդպիսի մի եպիսկոպոս կարգաւոյժ լինելու վտանգին էր ենթարկուած իր այդ քայլի համար:

Բարձր հոգևորականութեան այդ ձգտումը—եկեղեցու հոգևոր վարչական գործերի ղեկավարութիւնը իր մէջ կենդրոնացնել—ապագայում առաջ բերեց արևմտեան եկեղեցու մէջ պապական միահեծանութիւնը, մինչդեռ արևելեան միւս եկեղեցիները՝ յունաց, հայոց և այլն, պատմական մի շարք հանգամանքների շնորհիւ, է որ աւել կամ պակաս չափով ժողովրդական բնոյթն ստացան, է որ վերոյիշեալ կանոնների գործադրած շրջանում մնացին՝ ոչ այնքան կարևոր շեղումներով, և է որ կորցրին իրանց որոշ իրաւունքները քաղաքական իշխանութեան՝ եկեղեցու նկատմամբ ձեռք բերած իշխող և նոյն իսկ օրէնսդիր գործունէութեամբ: Այդ շարք եկեղեցիների մէջ, իբր ամենաբնորոշ տիպ, կարող ենք առաջ բերեց ուսում-ուղղափառ եկեղեցին, ուր որևէ թեմի առաջնորդ կամ փոխանորդ կոչուած է որևէ եպիսկոպոս կամ վարդապետ՝ կայսերական հրովարտակով: Բայց այդ չէ դեռ ըստը. այդ եկեղեցու մէջ վարդապետը եպիսկոպոս կարող է գտնաւ կայսերական ուկրադով և ոչ եպիսկոպոսների ժողովի ընտրութեամբ. էլ չենք խօսում թեմի կամ վիճակի ժողովրդի ընտրական իրաւունքի մասին:

Այս խնդրի առթիւ աւելի մանրազնին բացատրութիւնների մէջ ընկնելը մեզ շատ հեռուն կը տանէր, որի համար ներկայ յօդուածիս շրջանակից հարկ կը լինէր դուրս գալուստի և բաւականանում ենք այդքանով: Այժմ համառօտակի ակնարկենք Հայ եկեղեցու մասնակի կանոնները:

Միտիթար Գօշը իր Դատաստանագրքի (1 մ.) մէջ արտաքին ժողովների երկու կանոնի կցած իր բացատրութեամբ, ըստեղևոյթին տարակուսութեան և թէութիւնների մէջ է ձգուած ընթերցողին: Այն կանոնները (102 և 103) որ նա բերում է, շատ պարզ են, ու այդ բացատրութեանը ոչ միայն կարօտ չեն, այլ և հակասում են այդ կանոնների, ինչպէս և նրանց սահմանող ժողովի (Նիկիական) ժողովին: Մենք հիմք ունենք կարծիք, նոյն իսկ քաղմաթիւ փոստերը գալիս են գրականապէս համոզելու, որ Միտիթար Գօշը Հայ եկեղեցու աւանդական կարգերի գրգռմամբ ու նրանց ի նկատ ունենալով է աւելաց-

բել իր բացատրութիւնները: Նրա «բազմաց ընտրութիւնը ևւ
սամնքի նաւանութիւնը», նաեւ թէ՛ «կաթուղիկոսի հրամանով,
կաժքով չեն ձեռնադրուում. թէ որ պատահի՝ ոչ իր (կաթուղի-
կոսի) այլ բազմաց ընտրութիւնից յետոյ» բացատրութիւննե-
րը, ինչպէս և կաթուղիկոսի ձեռնադրութեան մասին բազմաց
ընտրութեամբ լինելու ակնարկը (ԽԸ կանոն) չեն վերաբերում
միայն հոգեորականաց ժողովի բազմութեանը, այլ նաեւ ազգի
ներկայացուցիչներին: Թէ իրօք այդ նպատակն է ունեցել Մխի-
թար Գօշը և թէ նա արտայայտիչ է եղել աւանդական կար-
գի ու այդ աւանդական կեանքի մէջ գործադրուող կարգը կա-
նոնի վերածել, դա մենք կաշխատենք ցոյց տալ յետագայ տո-
ղերում, երբ պատմական փաստերի վերլուծութեանը կը դի-
մենք:

Եթէ եկեղեցական պաշտօնեաների ընտրութեան մասին
ներկայումս ոչ մի սովորութիւն չլինէր, կամ, աւելի ճիշտն
ասած՝ վերացած լինէր գոյութիւն ունեցած այդ սովորութիւ-
նը ու այդ սովորոյթի իրաւունքի մասին ոչ մի պատմական
փաստ հասած չլինէր մեր ձեռքը, այնուամենայնիւ Երուսաղէ-
մի 1651 թ, ժողովի երրորդ և ինններորդ կանոնները բաւա-
կան են լիովին հաստատելու այն բանը, թէ Հայ եկեղեցու մէջ
մի ժամանակ իշխող է եղել այն աւանդական կարգը, որի հի-
մամբ նրա պաշտօնեաների ընտրութիւնը եթէ լիովին կախուած
չէր ժողովրդի ձայնից, զոնէ այդ ընտրութիւնը նրա մասնակ-
ցութեամբ պիտի լինէր: Երուսաղէմի՝ այդ թէ՛ն ոչ բուն երկրի՝
մէջ կայացած ժողովի անդամները՝ մի խելացի, թերեւս պատա-
հակոնութեամբ իրանց սահմանած այդ երկու պարզ և անպա-
ճոյճ կանոնների մէջ արտացոլել են Հայ եկեղեցու մէջ գոյու-
թիւն ունեցող 1300 տարուայ աւանդական կարգը:

Այդ կանոնները, որ մենք առաջ ենք բերել № 55 քաղ-
ուածքի մէջ, ընտրական սկզբունքի իրագործման և կարգա-
ւորելու միայն մի մոմենտն է կանոնի տակ դնում, այն է՝ թէ
եղիսկոպոսի և թէ առհասարակ ժառանգաւորի (եկեղեցու պաշ-
տօնէի) ընտրութիւնն ու ձեռնադրութիւնը ժողովրդի վկայու-
թեան թղթով և համաձայնութեամբ պիտի լինին: Թէ եկեղեցին
իր ամբողջ կազմով և թէ ի մասնաւորի նրա բարձր վարչու-
թիւնը որքան էր գնահատում ու առաջնակարգ նշանակութիւն
տալիս ժողովրդի ձայնին և իրաւունքին՝ ընտրական խնդիրնե-
րում, դրա ամենապարզ ապացոյց՝ ասածս ժողովի իններորդ կա-
նոն է, որով սահմանուած է մի խիստ պատժական կարգ.—
կարգալոյծ անել այն քահանային կամ ժառանգաւորին, որ ա-
ռանց իրանց ժողովրդի համաձայնութեան են ձեռնադրուել:

Արժէր, որ այս կանոնի միտքը անխախտ պահուէր և մեր օրերում, ու սրբութեամբ գործադրուէր: Սա միջանկեալ:

Այսպէս ուրեմն, Հայ եկեղեցու աւանդական կարգը սրբազործող այդ կանոնն ասում է, որ Հայ եկեղեցու պաշտօնականները ձեռնադրուելուց առաջ պիտի իրանց ժողովրդի հաւանութիւնը ունենան, ու նրանցից ընտրուած լինին: Իսկ թէ այդ ժողովուրդը ի՞նչ ձևով պիտի կայացնէ ընտրութիւնը, ձվքեր պիտի մասնակցեն՝ դիցուք եպիսկոպոսի կամ թեմական առաջնորդի ընտրութեանը, և ովքեր քահանայի կամ այլ պաշտօնականների ընտրութեանը և այլն՝ մի շարք դրան յարակից խնդիրներ ոչ մի լուսարանութիւն չեն գտած, ինչպէս այլ, նոյնպէս էլ այդ կանոնների մէջ: Մեզ թւում է թէ, աւանդական կարգն այնքան զօրեղ է եղել և այնքան յաճախ կրկնուող, որ ամենքի համար պարզ է եղել. որի հիմամբ և սովորոյթի օրէնքը դրաւոր կարգի վերածելու փոյթը չեն ունեցել:

Ասացինք, որ Երուսաղէմի կանոնները, ինչպէս և Մխիթար Գօշէ ԽԶ, ԽԸ կանոնների տակ աւելացրած բացատրութիւնները Հայ եկեղեցու աւանդական կարգերից ըլխած իրողութիւններ են: Արդ, որքան իրաւացի են մեր այդ համոզումները: Դիմենք եկեղեցու պատմական կեանքի տուած փաստերին:

№ 1. 7. 8. 10. 12. 13. 21. 22. 23. 25. 35. 37. 39. 40. 41. 42. 45. 46. 47. 48. մեր առաջ բերած պատմական փաստերը ասում են, որ՝ Ա.) Գրիգոր Լուսաւորչի (301—325 թ.) քահանայապետութեան համար Տրդատ Թագաւորը խորհուրդ և ժողով է անում, ու ամենքի հաւանութեամբ ընտրում՝ կաթողիկոս: Բ.) Տիրանի օրով Յուսիկ կաթողիկոսի մահից յետոյ նախարարները ժողով են անում թէ ո՞ւմ ընտրեն կաթողիկոս և Գրիգոր Լուսաւորչի ուղղից մարդ չլինելու պատճառով ընտրում են Փառնեբսէհին: Գ.) Աշխարհօրէն խորհուրդ են անում թէ ո՞վ պէտք է կաթողիկոս լինի, և որովհետեւ Լուսաւորչի տոհմից մարդ չկար, ուստի և Ալբիանոսի տոհմից Շահակ (373—377 թ.) անունով մէկին են ընտրում և ուղարկում Կեսարիա ձեռնադրուելու: Դ.) Արշակ Թագաւորի (Բ) մօտ ժողով են գումարում և բոլորի խնդիրքով Ներսէսին՝ (353—373 թ.) Յուսիկ կաթողիկոսի թոռին են արժան գտնում և միաբան խորհրդով ընտրում կաթողիկոս: Ե.) Պարսից Կաւառ Թագաւորից Վարդապետից Բագրատունին նշանակում է հայոց տանուտէր մի ժամանակ, երբ հայրապետական գահը թափուր էր: Նա բոլորի հետ խորհուրդ է անում արժանաւոր մէկին գտնելու համար, և ընտրում են Քրիստափո-

րին (539—541 թ.): Զ.) Սմբատ Վրկան մարզպանը երկու անգամ ժողով է անում Վրթանիսի տեղակալութեան օրով (Vll-դարի սկզբում) Հայրապետի ընտրութիւն կատարելու համար. առաջին ժողովին չաջողելով, երկրորդ ժողովում ընտրում են Աբրահամ Աղբաթանցուն կաթողիկոս (607—615 թ.): Է.) Աբրահամ կաթողիկոսի ընտրութիւնից յետոյ ժողով է լինում ուղիղ դաւանութեան ձեռնարկ տալու համար: Ը.) Արաբական արշաւանքների ամենակատաղի ժամանակներից մէկում Սմբատ սղարապետը ժողով է անում և ընտրում են Զաքարիային (855—877 թ.): Թ.) Գէորգ կաթողիկոսի մահից յետոյ ընտրում են Մաշտոցին (898—899 թ.): Ժ.) Ներսէս Լամբրոնացին (Vll դար.) իր խորհրդածուլթիւնների մէջ (№ 35 քաղուածք) ասում է, որ Տէր Բարսեղ կաթողիկոսը (1105—1113 թ.) ազգիս և Աղուանից ընտրութեամբ կաթողիկոս եղաւ: ԺԱ.) Հայոց 670 թուին (1211 թ. ք.) Կոստանդին Ա. նստաւ կաթողիկոսական աթոռի վրայ՝ բոլորի միաբան ընտրութեամբ: ԺԲ.) Լևոն Թազաւորը մեծ աշխարհաժողով է անում և ընտրում են Կոստանդին (1286—1289 թ.) հայոց կաթողիկոս: ԺԳ.) Կոստանդին վահնկէց անկուց յետոյ, Հեթում Թազաւորը ժողով է անում և Գրիգոր Անաւարդեցուն կաթողիկոս (1293—1307 թ.) կարգում: ԺԴ.) 1441 թուին, երբ կաթողիկոսական դահլիջմիածին տեղափոխելու խնդիրը կար, մեծ համագումար ժողով է լինում էջմիածնում և բոլոր հայերի միարան նախաձեռնութեամբ էջմիածնի հայրապետական վահն են բարձրացնում Տէր Կիրակոսին: ԺԵ.) Մեծ ժողով են գումարում և Սրապիօնին հայրապետական աթոռին նստեցնում: ԺԶ.) Շահ Սեֆիի օրով արեւելեան և արեւմտեան հայերը միարանական թղթով եւ խօսքով Մովսէս (1629—1632 թ.) վարդապետին կաթողիկոս են հաստատում: ԺԷ.) Մովսէս կաթողիկոսի մահուան ժամանակ գումարումները՝ նրա խօսքի համաձայն՝ Փիլիպպոսին (1633—1655 թ.) են կաթողիկոս ընտրում և ամեն կողմից նաւանութեան թղթերով հաստատում Մովսէս կաթողիկոսի մահուանից առաջ արած այդ ցուցումը. ԺԸ.) Յաջորդ պատմական մի շարք փաստեր, որ մենք ստիպուած ենք եղել կրճատել, բոլորը միասին, մինչի պոլոթենիայի հաստատումը, կրկնում են այն ընտրական սկզբունքը, ինչոր առաջ բերածս փաստերն են տալիս:

Առաջ բերածս պատմական փաստերը Հայ եկեղեցու պատմական կեանքից (IV—XVII դարերի) յուսով եմ թէ պարզ կերպով ապացուցին որ Հայոց Հայրապետի զանակալութիւնը ժողովով եւ ընտրութիւնով էր լինում:

Այժմ դառնանք այն էական խնդրին, թէ հայրապետական ընտրութիւններին ովքեր էին մասնակցում:

Այդ խնդրի առթիւ մեր առաջ բերած փաստերը հետեւեալ պատկերն են ներկայացնում.

Ա.) Առաջին կաթողիկոսի ընտրութիւնը կայացել է զուտ աշխարհական համագումարով: Թագաւորի հրամանով ժողովուել են բոլոր նախարարները, զաւաստականները, ազատները, դատաւորները, ինչպէս և արքայական տունը: Բ.) Յուսիկի մահից յետոյ թագաւորը, նախարարները և ամբողջ աշխարհը խորհուրդ են անում կաթողիկոսացու զտնել: Գ.) Շահակի ընտրութիւնը կատարւում է աշխարհօրէն խորհրդով: Դ.) Ներսէս մեծի ընտրութեան համար ժողովի են գումարւում Արշակ թագաւորի մօտ բոլոր տոհմերի մեծ նախարարները, սատրապները, ազատները, տէրերը, իշխանները եւ սահմանապահները: Այդ ընտրութեանը ժողովւում են նաև եպիսկոպոսների բազմութիւնը: Ե.) Նախարարները ժողովուելով Սահակ Պարթևի մօտ, խնդրում են յանձն առնել հայրապետութիւնը: Զ.) Սուրմակի մահից յետոյ հայոց Հայրապետները (եպիսկոպոսները) ընտրում են Յովսէփին: Է.) Աբրահամ կաթողիկոսի ընտրութեան ժողովին մասնակցել են եպիսկոպոսներ, վանահայրեր, երէցներ, Սմբատ Վրկան Մարզպանը և աշխարհականներ: Ը.) Մաշտոցի կաթողիկոսութեան ընտրութեանը մասնակցել են թագաւորը, զահամեծար իշխանները և պատուական ազատ մարդիկ: Թ.) Եպիսկոպոսներ, վանահայրեր և հոգևորականներ Աշոտ Շահնշահի կամակցութեամբ ընտրում են Սահեփաննոսին կաթողիկոս: Ժ.) Դաւիթ թագաւորը արևելեան և արեւմտեան հայոց եպիսկոպոսների ժողովով Տէր Սարգսին կաթողիկոս նսանցրին: ԺԱ.) Յովհաննէս թագաւորը Պետրոս Դեատադարձին բանտարկելուց յետոյ, նախարարների հետ միասին, Հայոց եպիսկոպոսների կամքին հակառակ կաթողիկոս են դնում Դիոսկորոսին: ԺԲ.) Խաչիկ կաթողիկոսի մահից յետոյ հայ թագաւորազններից և իշխաններից մնացածները խորհուրդ են անում կաթողիկոս դնել: ԺԳ.) Ներսէս Շնորհալու ընտրութեան մատակցում են եպիսկոպոսներ, վարդապետներ եւ բոլոր վանականները: ԺԴ.) Լևոն թագաւորի եւ եպիսկոպոսների ժողովով ընտրւում է Յովհաննէս Խճկտորը: ԺԵ.) Տէր Կոստանդինին ընտրում են իշխանները և եպիսկոպոսները: ԺԶ.) Լևոն թագաւորը մեծ աշխարհաժողովով է կատարւում Կոստանդինի ընտրութիւնը: ԺԷ.) Կոստանդին կաթողիկոսին գահընկէց անելուց յետոյ թագաւորը (Հեթում) և ժողովը հրաւիրա-

կան նաժարով խնդրում են արեւելեան եպիսկոպոսներին և աշխարհի իշխաններին նոր կաթողիկոսի ընտրութեանը գնալ: ԺԸ.) Լևոն Թագաւորի և շատ եպիսկոպոսների հրամանով են կաթողիկոս գնում Տէր Կոստանդին Դ-ին: ԺԹ.) 1441 թուին Կիրակոսի ընտրութեան մասնակցում են բոլորը՝ եպիսկոպոսներ, առաջնորդներ, վարդապետներ՝ վանահայրեր, երէցներ և աշխարհականների խումն բազմութիւն: Ի.) Սրապիօսին ընտրում է աշխարհականների և եկեղեցականների ժողովը: ԻԱ.) Արեւելեան և արեւմտեան հայերը միաբանական թղթով և խօսքով ընտրում են Մովսէսին: ԻԲ.) Փիլիպպոսին ընտրում է աշխարհականների և եկեղեցականների ժողովը: ԻԳ.) Նոյն-պիսի ընտրութեամբ նմ դահակաւում և յաջորդ Հաջրատեոսներից շատերը մինչև 19-րդ դարի առաջին կէսը, երբ սուլտան պետական օրէնքներով որոշ կանոնների է ենթարկւում այդ ընտրութիւնը:

Առաջ բերուած մասերը՝ երուսաղէմի ժողովի երրորդ կանոնի հետ միասին, մեզ բերում են մի ընդհանուր եզրակացութեան որ, Հայոց Հայրապետի ընտրութիւնը լինում է Հայ ազգի և նրա եկեղեցու ներկայացուցիչների ժողովով: Ի մասնաւորի ընտրական սկզբունքի իրագործումը մեր առաջ պատկերացնում է այս երեք, եթէ այսպէս կարելի է ասել, ֆազիսը. 1.) Հայրապետի ընտրութիւնը, հայ քաղաքական անկախութեան ժամանակ, երբ ընտրութիւններին գերակշռող ձայն են ունեցել արքայական տունը և նախարարները, այդ՝ Արշակունեաց, Բագրատունեաց և Ռուբինեանց օրերով: 2.) Քաղաքական անկախութիւնը կորցնելուց յետոյ, գերակշիռ ձայն են ստանում այդ խնդիրներում նախարարական մեծ տները, եթէ ոչ աւելի, գոնէ հաւասար հոգեւորականութեան ձայնին: 3.) Իշխանական տների վերանալուց՝ Հայ եկեղեցու իրաւունքի շրջանում հանդէս է գալիս բուն ժողովուրդը, ի գէժս իր միջի առաջաւոր մարդոց: Այս շրջանում իրօք Հայ եկեղեցին ժողովրդականացնում է: Այդ ժամանակ է, որ նա իրան աւելի մօտ է գլուծւում եկեղեցուն, և նրա մէջ գտնում իր պաշտպանը: Եկեղեցու մէջ ժողովրդի հանդէս գալն իրր իրաւատէ՞ր՝ միջին դարերի գործ է: Այստեղ աւելորդ եմ համարում մանրամասն կանգ առնել այն բանի վրայ, թէ տիրապետող տէրութիւնները միշտ հնարաւորութիւն ունեցել են և ունեն որեւէ միջամտութիւն գործել հայ եկեղեցական հոգեւոր-վարչական գործերի մէջ, ու նոյն իսկ նրա ոգուն հակառակ կարգադրութիւններ անել: Դա տիրապետողի և ուժի իրաւունքն է, որի դէմ մաքառելու համար Հայ եկեղեցին անգոր է:

Այս բոլորից խօսքը ներկայիս դարձնելով կարող ենք ասել, որ Հայ եկեղեցու մէջ այժմ ժողովրդական լինելու շատ աւելի տենդենցիաներ կան, քան երբ և իցէ, ու հայ ժողովրդի մէջ իր եկեղեցին զուտ ժողովրդական դարձնելու աւելի հասկացողութիւն և ձգտումներ կան, քան նախկին բոլոր դարերը միասին առած: Հայ եկեղեցու անկախ գոյութեան տմննալաւ գործօնը՝ դրա, այդ ձգտման մէջ պիտի որոնել:

Ինձ թւում է թէ, այժմ լիովին ապացուցուեց, որ թէ Մըխիթար Գօշի մեր առաջ բերած բացատրութիւնները և թէ նա՝ մանաւանդ Նրուսապէմի ժողովի կանոններն իրանց հիմքն են ունեցել Հայ եկեղեցու մէջ գոյութիւն ունեցող ընտրական կարգը, որ աւանդաբար անցել է սերնդէ սերունդ:

Ներկայացուցչութեան համար հարկ է պարզել մի գլխաւոր հանգամանք. արդեօք հայրապետական ընտրութիւններին ովքեր պիտի մասնակցէին յատկապէս: Ժողովրդի կողմից, ինչպէս մեր բերած քաղաածքները ցոյց են տալիս, իրաւատէր էին 1. արքայական տունը, 2. նախարարները, 3. պետական բարձր պաշտօնեաները, 4. մանր ազնուականութիւնը, 5. ժողովրդի առաջաւոր, ձայն ունեցող մարդիկ: Սրանից պարզ է, որ ներկայացուցչութեան համար ընտրական շրջաններ չեն եղել, որ ներկայացուցիչներն ընտրութեամբ չէին ստանձնում այդ գերը, այլ կերպ ասած՝ ձայնատուութեամբ չէր կարգադրւում պատգամաւորութեան խնդիրը:

Նոյնը չենք կարող ասել հոգևորականութեան մասին: Մեր բերած օրինակները, ինչպէս և այլ բազմաթիւ նիւթեր մեզ ասում են, որ ընտրութիւններին մասնակցել են 1. եկեղեցական կանոնների համեմատ՝ եպիսկոպոսները, թեմական առաջնորդ մօքով, որի համար առաջ է բերւում նշանաւոր թեմերի անունները, 2. վանքերի առաջնորդները կամ վանահայրերը, մեր օրինակները թւում են մի շարք վանքեր:

Այստեղ հարկ ենք համարում ասել, որ վանքերն այդ առաջնորդութեան հանգէս են դալիս Բագրատունեաց ժամանակ, բայց նա՛մանաւանդ զօրեղ գիրք են բռնում արևելքում, ինչպէս և Ռուբինեանց ժամանակ, մինչև 18-րդ դարը՝ վանքերի անկումը: Այդ այն ժամանակ էր, երբ առաջնորդութիւնները համարեն թէ վանքերում կենտրոնացան: 3. Առհասարակ եպիսկոպոսները նշանաւոր վարդապետները, երէցները:

Այս գէպքում տեսնում ենք, որ ձայնի իրաւունքը անսխալօք կապուած է հիմնարկութեան հետ—առաջնորդութեան և վանահայրութեան կամ վանքերի հետ: Վերջին դէպքում նաև երբեմն տեսնում ենք, ինչպէս Կիրակոս կաթողիկոսի ընտրու-

Թեան ժամանակ, մի վանքից մի քանի հոգի են գնում իրր ընտրող, թէպէտև հազիւ թէ կարողանանք զրահանապէս պնդել, որ բոլորն էլ մասնակցէին ընտրութեանը:

Թէ ժողովուրդը և թէ հոգևորականութիւնն ի՞նչ կանոնական հիմունքներով էին ղեկավարուում. ինչպէս տեսանք համարեա՞ն ոչ մի: Բայց մի իրաւունք կար, որ ազգի գիտակցութեան մէջ գործում էր. դա սովորոյթի բազմադարեան իրաւունքն էր, դա պապինական, աւանդական կարգն էր: Այս գէպքում եթէ մի ցաւալի կամ աւելի ճիշտն ասած, պահասաւոր կողմ կար, դա այն էր, որ հայ միտքը չէր կանգ առել այդ պապինական կարգը գրաւոր կանոնի վերածելու կարևորութեան վրայ:

Մեր առաջ բերած ընդհանուր եկեղեցական կանոններից արդէն զիտեմք, որ եպիսկոպոս կամ առաջնորդ ընտրելու ժամանակ պահանջուում էր, որ ընտրութեանը բացակայ զանուոյ ձայն ունեցողները իրանց կամքը գրաւոր կերպով յայտնեն: Այս կերպը մեր եկեղեցու մէջ Հայրապետի ընտրութեան ժամանակ, միջին դարերի կէսերից մինչի համարեա՞ն 19-րդ դարի սկզբները գործադրուեց, բայց աւելի լայն մտքով: Իրանց կամքը կամ համաձայնութիւնը գրաւոր եղանակով յայտնում էին ոչ միայն հոգևորականները, այլև, չենք սխալուի, եթէ ասենք, գլխաւորապէս՝ ժողովուրդը: Ընտրութեան չմասնակցողների համաձայնութիւնն այնքան կարևոր էր համարուում, ըստ աւանդական սովորութեան, որ ընտրութիւնից յետոյ էլ պահանջուում էր այդպիսի մի հաւանութեան թուղթ: 18-րդ տարի մեր լաւագոյն Հայրապետներից մէկը, Ղուկաս կաթողիկոսը, չնայելով որ արդէն ընտրուած և օծուած Հայրապետ էր, այնուամենայնիւ հայրապետական աթոռի վրայ չէր բազմում եկեղեցու մէջ, այլ կանգնում էր նրա կողքին, մինչի այն ժամանակ, որ Պոլսի հայ ժողովրդի հաւանութեան թուղթն ստացուէր: Իսկ այդ թուղթը ուշացաւ տարիներ: Ահա թէ որքան զօրեղ էր աւանդական կարգը, և որքան հրամայող ու պարտաւորական: Այս ձևի ընտրութեանը մասնակցելու մէջ մեզ համար մնում է տարակուսական, արդե՞օր հեռաւոր թեմներում զանուոյ անձինք, որոնք իրաւատէր էին ընտրութեանը, կարո՞ղ էին իրանց ձայնը մի այլ պատգամաւորի տալ: Դժբախտաբար մեր ձեռքի տակ գտնուած նիւթերն այդ մասին ցուցումներ չեն անում: Մնում է ենթադրել, որ եթէ նրանք կարող էին հեռուից թուղթով մասնակցել ընտրութեանը կամ հաստատութեանը, կարող էին և գրաւոր ձևով իրանց ձայնի իրաւունքը տալ ներկայ գտնուող մէկին:

Մնում է պարզել և մի խնդիր, թէ մի էր հրաւիրում պատգամաւորներին՝ կատարելու նոր Հայրապետի ընտրութիւնը: Այս խնդրի նկատմամբ մեր փաստերն ասում են, որ նոյնանման ժողովների հրաւիրողներն եղել են քաղաքական անկախութեան ժամանակ՝ թագաւորները, մարզպանութեան ժամանակ՝ մարզպանները, անիշխանութեան ժամանակ՝ գլխաւոր նախարարները: Իսկ ապագայում երբ հոգեւորականութիւնն աւելի գերակշռող դիրք ստացաւ նախարարական տների բնաջինջ լինելուց յետոյ, աւելի պարզ ասած 1441 թ. յետոյ, էջմիածնեան շրջանում, այդ բանն անում էր էջմիածինը ի դէմս իր ղեկավարող հոգեւորականների: Մի գեր, որ նրան տուին պատմական մի շարք հանգամանքներ, որոնց լուսարանութիւնը դուրս է ներկայ խնդրի շրջանից: Էջմիածինը նոյն դերը կատարում է և այժմս արդէն պետական օրէնքների հիման վրայ:

Հայրապետական գահակալութեան կարգի մէջ մեզ մնում է մի վերջին խոշոր գիծ ակնարկել, ու անցնել յաջորդ խնդիրներին:—Ինչպէս յունա-բիւզանդական եկեղեցու մէջ կայսերական իշխանութիւնը յաճախ, առանց սահմանուած կարգերը պահելու, գահազուրկ էր անում պատրիարքներ, ու գահ բարձրացնում, նոյնպէս էլ Հայաստանում հայ թագաւորներն ու իշխանները ձգտումներ են ցոյց տուել եկեղեցու վրայ միաշխատական իրաւունքներ ձեռք բերել, ու ըստ իրանց հայեցողութեան կարգադրել եկեղեցու բարձր ղեկավարութիւնը: Եղել են մոմկնանքներ, երբ եկեղեցին — խօսքս հոգեւորականութեան մասին է—զօրեղ տենդենցիաներ է ունեցել իր մէջ կենդրոնանալու, ու իր գործերը իր մէջ կարգադրելու: Դրանք խիստ կղերական և հակաժողովրդական—պապ սկսնութեան նման—ձգտումների զօրեղ հոսանքներ են եղել մեր եկեղեցու կեանքում:

Ահա համարենք թէ այն բոլորն, ինչ որ խոշոր գծերով կարող ենք տեսլ Հայ եկեղեցու գլխի, Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրութեան մասին՝ հիմնուած այդ եկեղեցու պատմական կեանքի մեզ թողած փաստերի վրայ:

Թեմական առաջնորդ՝ եպիսկոպոսի ընտրութեան մասին միայն մի փաստ է մնացել Հայ եկեղեցու պատմական կեանքից. յամենայն դէպս դրանից աւելին մեզ անյայտ է: Դա Սիւնեաց աթոռի Ստեփաննոս եպիսկոպոսի ընտրութիւնն է, որի մասին ինքը՝ Ստեփաննոս Ուռարեւեան պատմագիրն է հաղորդում: Դրա մանրամասնութիւնը ընթերցողը կը գտնէ № 39, 40 քաղուածների մէջ: Թէ թեմական առաջնորդները ժողովրդի

ընտրութեամբ և հաւանութեամբ պիտի լինին, դրա համար, բացի նրանից, որ կանոնական որոշ յօդուած ունենք, որի մասին արդէն խօսել ենք—Երուսաղէմի ժողովի Գ. կանոն—այլ նաեւ աւանդական այդ կարգի գոյութեան վաստը մենք տեսնում ենք մնացած՝ Թրքահայաստանի թեմերում, որը մտել է նոյն իսկ Պոլսի սահմանադրութեան մէջ:

Միւրեմար Գօշը նոյն իսկ կաթողիկոսին իրաւունք չի տալիս եպիսկոպոս ձեռնադրել, եթէ նախօրօք բաղձաց ընտրութիւնը չի եղել:

Մեր եպիսկոպոսական ձեռնադրութեան Մաշտոցի մէջ մի կէտ կայ, որ այժմ թէն ձեռնական, բայց իր ժամանակին իրական գործադրութիւն է ունեցել: Նրա համեմատ եպիսկոպոսի ձեռնադրութեան ժամանակ ժողովրդի երկու դասակարգի (ազնուական և հասարակ) ներկայացուցիչներ զալիս են ընտրեալի համար վիճակը լինելու. դա ժողովրդի կողմից մի կենդանի վկայական էր իր ընտրած եպիսկոպոսացուի համար, որն իբր ձեռնական մի ծէս մնացել է Մաշտոցի մէջ, վկայելու աւանդական մի համարեան մեռած կարգի գոյութեան մասին:

Եպիսկոպոսների կամ առաջնորդների ընտրութեան և ձեռնադրութեան մասին հին կարգի ասածն այդ է: Մեր ժամանակներում հին աւանդական կարգը պահպանուել է Թրքահայաստանում, ուր առանց թեմի ընտրութեան առաջնորդ չի կարող լինել և առանց նրա վկայութեան վարդապետ առաջնորդը եպիսկոպոս չի կարող ձեռնադրուել: Մեզանում այդ կարգը քնել է, չի գործադրուում. թեմերը զրկուած են իրանց աւանդական իրաւունքներից, մի իրաւունք, որ կենդրոնացել է մասամբ հայրապետական իշխանութեան մէջ և մասամբ պետական իրաւունքի: Նոյն իրաւունքից զրկուած էին և Պարսկաստանի թեմերը, որոնցից Թաւրիզի կամ Ատրպատականի թեմը այժմ գահակալող Հայրապետի հրամանով վերստացաւ առաջնորդ ընտրելու իրաւունքը:

Մեր եկեղեցու մէջ երկու պաշտօն, որ զուտ ժողովրդական գոյն է ունեցել, ու նրա անմիջական ընտրութեանը ենթակայ—դա քահանաների և երեսփոխանների պաշտօններն են: Ի հարկէ չենք ժխտում, որ քահանայ ընտրելու իրաւունքը յաճախ կամայականութիւնների է ենթարկուել ու ենթարկուում. սակայն այդ հանգամանքը միշտ անցողական ընդթ է ունեցել, ու տեական չէ եղել:

Քահանաների և եկեղեցու այլ պաշտօնեաների ընտրական լինելու վճռական նշանակութիւն ունեցող գրաւոր ապացոյցը, որ մեզ թողել է Հայ եկեղեցու պատմական կեանքը, դա Երու-

սաղէմի ժողովի իններորդ կանոնն է, որի հիմամբ պահանջ-
ւում է ժողովրդի համաձայնութիւն: Այնուհետև քննուած է մեր
եկեղեցու մէջ ամեն բան կարգադրող՝ միմիայն սովորոյթի ի-
րաւունքը: Իսկ այդ իրաւունքը այսօր էլ զործում է. Հայ
ժողովուրդն ամեն տեղ ինքն է ընտրում իր քահանային և քա-
հանայացուն: Ինչ վերաբերում է երեսփոխանի ընտրութեանը,
զրա համար միակ առաջոյցը, սովորոյթի՝ այժմ էլ գործադրուող՝
իրաւունքն է:

Այդ երկու պաշտօնների ընտրութիւնն էլ, ինչպէս մեր
ժամանակներում—գլխաւորապէս գիւղերում—տեղի է ունե-
նում, կատարուելիս է եղել այսպէս.—կը հաւաքուէին գիւղի
մեծերը, կամ ժողովրդի մեծերը և կընտրէին, ըստ իրանց հայե-
ցողութեան, այս կամ այն անձին: Չայնաւութիւնը բաց էր
լինում, առանց քուէարկութեան: Սա ի հարկէ մի ենթադրու-
թիւն է, բայց հաղիւ թէ սխալ ենթադրութիւն:

Եկեղեցական հաստատութիւնների մէջ մի առանձին տեղ
են ընկել միշտ վանական հաստատութիւնները: Չենք սխալուի,
եթէ ասենք, որ առաջնորդանիստ աթոռներում, ուր առաջնոր-
դը նաև վանահայր էր, վանահօր ընտրութիւնն՝ իբր առաջ-
նորդի ընտրութիւն, կատարւում էր ժողովրդի հաւանութեամբ:
Բայց այն վանքերը, ուր իրանց միաբանական ուխտով աւելի
ազատ, անկախ էին, ժողովրդի միջամտութիւն՝ նրանց ներքին
կառավարական կարգերի մէջ, հաղիւ թէ լինէր: Յամենայն
դէպս պատմութիւնը և ոչ մի փաստ չէ թողել մեզ: Ճշմարիտ
է, Պոլսի սահմանադրութեամբ մի կերպ ժողովրդականացւում
են այդ հիմնարկութիւնները ինչ որ մի աւանդական կարգի
հիմամբ, սակայն մենք այդպիսի աւանդական հին կարգի գո-
յութիւնը կառկածի ենթակայ և ստուգութեան կարօտ ենք
հաշւում: Յամենայն դէպս մի բան անուրանալի է, որ վանքերը
եթէ ոչ այդ կերպ, գոնէ իբր միակ կրթական հաստատութիւն-
ները մեր դժբաղդ երկրում՝ ժողովրդական էին:

Վանահայրական պաշտօնի ընտրական լինելու մենք մի
բանի պատմական փաստեր ունենք, որոնք բերում են մի եղ-
րակացութեան—որ առ հասարակ աւանդական սովորութեամբ,
վանահայրի ընտրութիւնը կատարւում էր միաբանական ուխ-
տով:

Անկախ դրանից՝ Գրիգոր Տաթևացու (XIX դարի կէսից
յետոյ) ընտրութիւնը մեզ անել է տալիս այլ խորհրդածութիւն:
№ 44 քաղուածքից մենք իմանում ենք, որ այդ հռչակաւոր
Տաթևացու ընտրութիւնը, կամ Տաթևի աթոռին յաջորդելը՝
ենթարկուել է ոչ միայն ժամանակի նշանաւոր վանքերի վա-

նահայերի հաւանութեանը, այլ և այդ վանքերի միաբանութեանց:

Արդ, մեզ թուում է թէ, այնպիսի նշանաւոր կենդրոնական վանքերի վանահայրութիւնը, ինչպէս Տաթևի աթոռն էր, գահի յաջորդութիւնը պիտի ենթարկուէր միւս վանքերի հաւանութեանը:

Եկեղեցական-վարչական պաշտօնեաների մասին ընտրական խնդիրների մեր այն համառօտ ակնարկները ըստ կարելոյն լրիւ անելու համար, մեզ մնում է մի թեթեւ հայեացք գցել մեր եկեղեցու մէջ գոյութիւն ունեցող ժառանգական կարգի վրայ:

Արտաքին ժողովների կանոնների մէջ (Առաքելոց 76-րդ, Սնտիոքի 23-րդ), այն տեղից էլ մեր մէջ, արգելում էր Հայրապետի կամ եպիսկոպոսի աթոռը, ինչպէս և եկեղեցական սրբազնագործ պաշտօններն առ հասարակ ժառանգութեամբ յաջորդել, կամ մահուանից առաջ իրան յաջորդող նշանակել: Մեր եկեղեցու աստուածաբան հայրերից մէկը, Ներսէս Լամբրոնցին (քաղուածք № 35) դառն խորհրդածութիւնների մէջ է ընկնում իր ժամանակներում տիրող ժառանգաբար յաջորդելու սովորութեան մասին: Այդ տղեղ սովորութիւնը նա համարում է մոլորութիւն և օրէնքի խախտումն:

Նա բերում է մի շարք փաստեր, որոնց վրայ մենք կաւելացնենք նաև մի քանիսը 1. որ չորրորդ և հինգերորդ դարերում յաջորդաբար հայրապետական դահն հ' բարձրացել Ալեքիանոսի կամ Մանուկեբեռեան տոհմի մի շարք եպիսկոպոսներ: 2. Վանական վարդապետի մահից յետոյ նրա վանահայրական աթոռը յաջորդում է նրա եղբօր որդին (1251 թ. ք.): 3. Գրիգոր կաթողիկոսի բռն զորդին (1327 թ. ք.) որ Անաւարդի արքեպիսկոպոս էր, կաթողիկոս է լինում և այլն. և 4. Մի շարք զբաւոր փաստեր, որ քաղուած են վանագան արձանագրութիւններից և ձեռագրերի յիշատակարաններից, պատմում են մերձաւոր ազգականների իրար յաջորդելը իբր վանահայր, եպիսկոպոս, բայց նամանաւանդ քահանայ: Այս բոլորի հետ միասին՝ ի նկատ ունենալով քահանայական դասակարգի մէջ դեռ այժմ էլ ժառանգաբար իրար յաջորդելու սովորութիւնը, կարող ենք ասել, որ Հայ եկեղեցու մէջ ժառանգաբար իրար յաջորդելու կարգը, հակառակ եկեղեցական կանոնների, մի տանելի սովորութիւն է եղել:

Բայց երկու կարգ, որ իրար տրամադծօրէն հակասում և հերքում են, չէին կարող միաժամանակ գոյութիւն ունենալ: Եթէ Հայ եկեղեցու պաշտօնեաները ընտրովի էին, ինչ որ ստոյգ է,

ժառանգաբար իրար յաջորդելը չէր կարող պարտադիր լինել ժողովրդի համար: Արդ, ինչպէ՞ս էին հաշուում իրար հետ այդ երկու հակառակ ծայրերը:

№ 12. 30. 33. 34. և 135 քաղաածքները ցոյց են տալիս որ, Ներսէս մեծը, Գրիգորիսը, Պետրոս Գետադարձը, Խաչիկը, Ներսէս Շնորհալին և նրանից առաջ իր եղբայր Գրիգոր կաթողիկոսը և այլն՝ մի շարք կաթողիկոսներ, հնայելով որ յաջորդել են իրանց մերձաւոր ազգականներին, այնուամենայնիւ այդ յաջորդութիւնը տեղի է ունեցել ընտրութիւնից յետոյ:

Մխիթար Գօշն էլ իր Դատաստանազրքի 48-րդ կանոնի բացատրութեան վերջում ասում է, թէ կաթողիկոսի ձեռնադրութիւնը բազմաց ընտրութիւնից յետոյ միայն կարող է լինել: Իսկ Մխիթարն ասելով էր ժառանգութեամբ իրար յաջորդող մի շարք կաթողիկոսներին շատ մօտ ժամանակներում: Ժողովրդի մէջ տիրող կարգն էլ նոյնն է տրամադրում, այսինքն քահանայացուն եթէ քահանայորդի էլ լինի, դարձեալ ժողովրդի հաւանութեամբ միայն կարող է քահանայ ձեռնադրուիլ: Հակառակ այդ հաւանութեան ձեռնադրուողն առ հասարակ, կարգալոյժ լինելու վաանդին էր ենթարկւում Երուսաղեմի ժողովի իննսորորդ կանոնով, որ թուի թէ, զգուշացնող սպառնանք էր միայն:

Մեզ թւում է թէ, այդ երկու իրար հակասող հիմունքները հաշուութեան էին գալիս այս կէտում.—Հոգևորական ընտրելու ժամանակ, եթէ ընտրելիների մէջ կային հոգևորականների սերնդից արժանաւոր ընտրելիներ, նախադատութիւնը վերջիններին էր արւում: Խնդրի այսպիսի լուծմամբ եւ սկզբունքը չէր խախտւում, և քահանայորդին, իհարկէ՝ եթէ արժանի էր, չէր զրկւում հոգևոր կոչումն ընդունելուց:

Իւրաքանչիւր ընտրական պաշտօն հետեցնում է իր հետ նաեւ պատասխանատւութիւն. արդ ի՞նչ պատասխանատւութեան կարող էր կոչուել Ամենայն Հայոց Հայրապետը իրան ընտրող ազգի կողմից և ի՞նչ հետեանքներով:

Մեր բերած № 15. 16. 29. 36. 41 քաղաածքները և 1443 թ. Կիրակոս Գանձակեցուն գահընկէց անելը ցոյց են տալիս—մինք դեռ թողնում ենք մի շարք այլ փաստեր, իբր նմուշ դրանք միայն առաջ բերելով—որ մի անգամ գահակալող Հայրապետը կարող է ոչ միայն պատասխանատւութեան կոչուել, այլ և որոշ դատից յետոյ նաեւ գահընկէց լինել:

Գահընկէցութեան համար ազգն ու եկեղեցին կանոնական սահմաններ չունին, որով որոշուէր պատասխանատւութեան պատճառները և նրան համապատասխան պատժական օրէնքներ—

րը: Այդ դէպքումն էլ միակ զլխաւոր հրամայողն ու ղեկավարողը՝ սովորոյթի իրաւունքն էր: Իսկ այդ սովորոյթի իրաւունքն ասում է.—իւրաքանչիւր անգամ, երբ Ամենայն Հայոց Հայրապետը դուրս կը գայ իր իրաւասութեան սահմանից և կը ձեռնարկէ այնպիսի միջոցի, որով վտանգի ենթարկուին Հայ եկեղեցու հիմնական շահերը, երբ կը խախտուին նրա ինքնուրոյն, մի անգամ ընդունած դաւանական հիմունքները և երբ վտանգ կը սպառնայ նրա ինքնագոյութեանը, այն ժամանակ այդ եկեղեցու ղուլը դատի պիտի ենթարկուի և պատասխան տայ իր հաւցրած չարիքների համար:

Եւ ամեն անգամ, երբ ժամանակի մարդիկ իրանց հասկացողութեամբ կտրծել են թէ Հայոց Հայրապետն իր կոչման բարձրութեան վրայ չէ կանգնած, երբ համոզուել են որ վրտանգում են եկեղեցու նուիրական շահերը, միշտ դիմել են այդ ծայրայեղ, բայց արդար հատուցման միջոցին:

Աւելի երկար կանգ առնել այս խնդրի վրայ մեր անմիջական նպատակից դուրս էր, ուստի և մեր քաղաւածների առաջ բերելով միայն մի նպատակ ունէինք—ցոյց տալ, որ Հայոց Հայրապետի պաշտօնը ընտրական լինելուց յետոյ, ունինաւ նրան անհրաժեշտ զուգընթաց կողմը՝ այն է ընտրողների սուղ պատասխանատւութեան պարտականութիւնը:

Արդ մի ամփոփումն անելով՝ վերջ տանք ներկայ աշխատութեանը:

1) Հայ եկեղեցու բոլոր պաշտօններն ընտրովի են, սկսած Հայրապետից՝ մինչի երեսփոխանի ընտրութիւնը:

2) Հայրապետի ընտրութեանը մասնակցում է Հայ ազգն իր հոգևոր և աշխարհական ներկայացուցիչներով:

3) Թեմական առաջնորդին ընտրում է թեմը. քահանային, ստորին սրբազնագործ պաշտօնեաներին և երեսփոխանին՝ ժողովուրդը—ծուխը:

4) Հայոց Հայրապետը, ինչպէս և եկեղեցու իւրաքանչիւր պաշտօնեայ պատասխանատու է իր ընտրող ժողովուրդի առաջ՝ իւրաքանչիւրն իր իրաւասութեան շրջանում:

5) Այդ բոլոր խնդիրներում հայ ժողովուրդը իր իրաւունքները յենում է առաւելագէս սովորոյթի իրաւունքի վրայ:

Արսէն վարդապետ

ՀԻՒԱՆԴ ՄԱՐԴԸ

(Բ. Շ Ե Լ Ե Ի)

Կուլտուրական պատկերներ Թիւրքիայից

Ա.

Ոսթիւնուքիւնը եւ լոստուքիւնը Արդու Համիդ Բ.-ի տնայնացի մէջ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կոստանդնուպոլսի ֆիզիոնոմիան: Նախանձ հացի համար: Արդարապատուութիւն: Ոստիկանութիւնը և նրա ոստիկանները: Իմ բարեկամ Պանին՝ սուլթանի անձնական (Leib) ոստիկանը: Այց ոստիկանութեան նախարար Նազիր փաշային: Ներկայ ոստիկանութեան կազմակերպութիւնը: Զափթիաներ, գողեր և ընկերութիւն: Կէս-ոստիկանութիւնը: Բէզլի, հաճալ, քայրչի և թուլումբաչի: Դիսցիպլինայի բացակայութիւնը վարչական բոլոր մասերում: Լրտեսութիւնը: Պալատական լրտեսներ: Պատմական ուղղութիւններ: Լրտեսութեան ընտելութիւնը Թիւրքիայում: Սուլթան Մուրադի կուր լրտեսների դէմ: Լրտեսութեան յաղթանակը Արդիւլ Համիդի օրով: Լրտեսների առաջնորդ Ահմէդ Ջէլալեդդինի մրցութիւնը Քատրիի հետ: Ազատութեան հերոսից լրտես կամ Նազիր բէշի պատմութիւնը: Ալբանական լրտես Մէհմէդ Ռասսիմի կարիւրան: Լրտեսութեան մի զուարճալի պատմութիւն:

Կ. Պոլսն աշխարհիս ամենավիթխարի բաղաճններից մէկ է:

Օսմանեան տէրութեան մայրաքաղաքը տարածւում է Սև Ծովից մինչև Մարմարա ծովը, Բոսֆորի և Ոսկեղջուրի վրայ: Նա իր բոլորնայնների մէջ սեղմում է մի կտոր Ասիա և մի կտոր Եւրոպա: Կ. Պոլսի ոտքերի տակ փռուած են քսան արուարձաններ բազմազան ազգաբնակչութիւններով, որոնք բազմազան են թիւրքերից, քրդերից, յոյներից, հայերից, հրէաներից, պարսիկներից, թաթարներից, զնչուներից և վերջապէս եւրոպացիներից ու ամերիկացիներից:

Ո՞վ է հաշուում այն ազգերը, որոնք այնտեղ միասին ապրում են, կամ ո՞վ կարող է թուել այն անվերջ խմբերը, որոնց

վրայ կրկին բաժանուում է իւրաքանչիւր ազգ: Ամեն մի ազգ կարելի է հեշտութեամբ հարկւր՝ միմիանցից տարրեր դասակարգելի բաժանել և մարդ գեռ ստիպուած կը լինի այդ հարկւրաւոր դասակարգերն էլ բազմաթիւ ստորաբաժանումների վերածելու:

Կ. Պօլսում ապրում են զանազան տարրեր և խառնուածքներ: Դրանք բոլորն էլ միայն մի բանով նշման, հաւասար են միմիանց: Միեւնոյն է ինչ ազգի կամ ինչ դասակարգի էլ նա պատկանելիս լինի, միշտ աշխատում է ուրիշի հաշով ապրել: Այդ բանը կարելի է վկայել մեծ վեզիւրից սկսած մինչև ամենավերջին բեռնակիր-համալի վերաբերմամբ. այդպէս է վարւում եւրոպական ամենապատուաւոր դասպանից մինչև եւրոպացի ամենաողորմելի բաղդախնդիրը:

Թիւրքին ընդհանրապէս գեռ ևս անծանօթ է այն գաղափարը, որին մենք հայրենասիրութիւն ենք կոչում: Նա ունի միայն կրօնական հաւատարմութիւն կամ աւելի ճիշտն առած կրօնական մոլեռանդութիւն: Խալիֆան նրա համար մինչև այժմ միշտ բարձր է եղել, քան սուլթանը, իսլամը աւելի բարձր, քան օսմանեան տէրութիւնը՝ օսմանականութիւնը: Եթէ երբ և իցէ խալիֆայութիւնը սուլթանութիւնից բաժանուի, այն ժամանակ թիւրքերի աչքում ներկայ Սուլթան-խալիֆը երկրիս վրայ Աստուծոյ ստուերը, հազիւ ստուերի ստուերը լինի:

Եթէ որեւէ արաբ Ստամբուլ է գալիս և Իլդըզ-Քիոշկում սուլթանի պալատում տեղ է գտնում, այն ժամանակ նա ամենից առաջ աշխատում է թիւրքին ճնշել: Սիւննի թիւրքն էլ իր կողմից է ատում ու հալածում շիա պարսկին: Քուրդ համալը հայ բեռնակիրն սպանեց ոչ թէ քաղաքական-հայրենասիրական հիմունքներից զրդուած, այլ միմիայն իր հացի մրցակցից ազատուելու համար:

Կաթոլիկ հայը՝ լուսաւորչական և բողոքական հային աւելի արիւնդուշտ կերպով է հալածում, քան քուրդը, յոյները, սերբերը, բուլղարները, սև լեռնցիք և վալախները, չնայելով որ միեւնոյն կրօնն ունին քրիստոնեային, բայց այնուամենայնիւ միմիանց վերաբերմամբ մահացու թշնամիներ են: Էլ չեմ ուզում ասել եւրոպական տարրեր ազդուութիւնների մասին:

Ճշմարիտն եմ ասում, բոլորովին վարմանալի չէ, որ այնտեղ բարձրը վայրենացել և պատուի գաղափարները շփոթուել են:

Արդարադատութիւնը չէ կարող կուսակցութիւններից բարձր կանգնել: Նա ոչ թէ ոյժ է ներկայացնում, այլ ուժաս-

պատուութիւն՝ թուութիւն: Նա ներկայացնում է ոչ թէ մի ամբողջութիւն, այլ քարքարոսական մի կարկատան:

Կ. Պոլսում բացի զրանից իւրաքանչիւր հիւպատոսարանունի իր յատուկ դատաւորութիւնը և ծաղրում է թիւրքական դատաւորները և օրէնքները:

Իսկ թիւրք զարմանալի կառավարութիւնը և նրա պալատական քաղաքագէտները, Տէր Աստուած, միթէ դրանցից էլ աւելի տարօրինակ բան կարող է լինել: Այդ թիւրքական կառավարութեան մինիստրները, ոչ այլ ինչ են եթէ ոչ երկիւղից ձուլուած բռնակալութիւն: Նորմալ գրութեան մէջ չեն գտնուում նաև անդական կամ օտար պետութիւնների դիպլոմատները, որոնք այսօր ամեն ինչ ուրանում են, ինչի համար նրանք երեկ նոյնիսկ երկուել են: Եւ սրանից էլ ըստ ինքեան հասկանալի է, թէ իսկապէս ի՞նչ կարող է լինել թիւրքական տէրութեան ոստիկանութիւնը:

Ահա ձեզ ոստիկանութեան մինիստրը: Չնայելով որ նա ներքին գործոց նախարարին է հպատակուում, բոլորովին ուշադրութիւն չէ դարձնում ոչ միայն նրա, այլ և նոյնիսկ մեծ վեզիրի վրայ: Նա շարունակ որոգայթներ է լարում երկուսի դէմ և դրա համար էլ նրանցից աւելի զօրեղ է: Նա տեղեկութիւններ է հաղորդում միմիայն Սէրային և միայն այնտեղից է պատուէրներ ստանում:

Անցագրային վարչութիւնը ոստիկանութեան նախարարութեան մի մասն է կազմում: Բայց այդ անցագրային վարչութեան վերատեսուչը թէգքերէ (անցագիր) բաց թողնելու ժամանակ ահագին դժուարութիւններ է ստեղծում, եթէ նոյնիսկ ոստիկանութեան մինիստրը պատահմամբ անցագիր ցանկացողի համար երաշխաւորում է: Չէ՞ որ այդ երկու պարոնները միմիանց մահացու թշնամիներն են և դրանցից ամենապիտոքը ամենաուժեղն է, որովհետեւ իր մեծի դէմ Սէրայում որոգայթներ է լարում:

Ներքին գործոց մինիստրն էլ նրանից պակաս չէ: Նա էլ նոյնպէս Իլդիզ-Քիօշկում ոստիկանութեան մինիստրի և Պերայի, Բէշիկթաշի և Սկիւտարի նահանգապետների դէմ, որոնք իր ստորադրեալները և միևնոյն ժամանակ մրցակիցներն են, ինտրիգաներ է սարքում:

Իսկ դրանք բոլորը միասին դողում են պալատական ոստիկանութեան գլխաւորից՝ Խլրանացի Թայիր փաշայից, որը կարգալ, մինչև անգամ իր անունը գրել չգիտէ, բայց չնայելով դրան աւելի զօրեղ է, քան վերոյիշեալ բոլոր պաշտօնեաները միասին: Ժամանակ առ ժամանակ երևան է զալիս պալատա-

կան որևէ լրտես, որը ոստիկանութեան դեր է խաղում և նոյն-
խաղ գործում է ընդդէմ իսկական ոստիկանութեան:

Այդպիսի մի լրտես էր և մի ուրիշ ալրանացի, Արդու-
կանի բէյ անունով, վայրենի հսկան, որ սուլթանի անձնական
ոստիկանն էր և ամբողջ ոստիկանութիւնը նրա առաջ ծունկ
էր չորում:

Նա Սուլթանի աղջիկների անձնական ոստիկանն էլ էր և
երբ այդ աղջիկները ամուսինները անհաւատարիմ դարձան,
Կանին այդ քրտակցութիւններին մէջտեղից անյայտացրեց:

Նա բարբերի մի այնպիսի բնորոշ ոստիկան էր, որի նը-
մանը աշխարհն հազիւ տեսած լինի: Որովհետեւ նա թղթախա-
ղը և անառակութիւնը սաստիկ ատում էր, դրա համար երբե-
մըն յանկարծակի մտնում էր Պերայի անառականոցները և
թղթախաղարանները և շուայտասէրների ու խաղացողների ձեռ-
քից փողը ուժով խլում էր, սպառնալով իր ատրճանակով:

Օրինակ, միանգամ նա միայն իր երկու ուղեկիցներով մտաւ
Պերայի թիւօնէ փողոցում գտնուող Արտեմիդիա անունով
յայտնի կնոջ տունը: Բայց որովհետեւ այդ տունը յաճախորդներ
ունէր և գիպլոմատիական մարմնի հովանաւորութիւնն էր վայե-
լում, դրա համար օտար պետութիւնների դեսպանութիւն-
ներից մէկի առաջին թարգմանը, որ մի փառաւոր և ասպետ
մարդ էր, գնաց Սուլթանի մօտ և պահանջեց վերոյիշեալ աւա-
ղակին պատժել: Սուլթանն էլ խոստացաւ թարգմանին և
Կանին կանչեց իր մօտ բացատրութիւն տալու:

— Կանի, եկ այստեղ, դու շո՛ւն Կանի, ասում է նրան
Սուլթանը: (Նա բոլորովին լուռ մօտենում է Սուլթանին). ճիշտ
է, որ դու յարձակուել ես Արտեմիդիայի տան վրայ:

— Այո՛, Տէր, պատասխանում է Կանին ցածր ձայնով:

— Դու սպառնացի՞ր ես այնտեղի մարդկանց ատրճանակով,
աւերացնում է սուլթանը:

— Այո՛, Տէր արքայ, վրայ է բերում Կանին:

— Ինչո՞ւ համար այդպէս վարուեցիր: Քեզ հարկաւոր է
պատժել, սպառնում է նրան Սուլթանը մոայլուած:

— Վեհափառ Տէր, ես այդպէս վարուեցի, որովհետեւ կար-
ծում էի թէ այնտեղ գտնուող մարդիկ, ուզում են քու դէմ դա-
ւադրութիւն կազմել:

— Այդպէս ուրեմն: Դէհ այժմ կարող ես գնալ, ես քեզ կը
վարձատրեմ, Կանի բէյ, ասում է Սուլթանը ժպտալով:

Դրանից յետոյ Կանի բէյը իր քաջագործութեան համար
առատ կերպով վարձատրուեցաւ և գիշեր ու ցերեկ հսկում էր
Սուլթանի ննջարանի մօտ:

Եթէ մի կողմ դնենք նրա միւս գժութիւնները և յափշտակելու ու սպանելու վատ սովորութիւնը, այն ժամանակ Սուլթանի այդ թիկնապահը մի բոլորովին փառաւոր և սիրալիր մարդ էր և ափսոս որ նա մի քիչ երկար չապրեց: Վերջապէս ոստիկանութեան յաջողութեց՝ իր համար անյարմար այդ ոստիկանակցին, որ ներում էր իր դատապարտած մարդկանց և բանտարկել տալիս իր ազատածներին, վերջ դնելու նրա կեանքին: Մի անգամ հրապուրեցին իմ սիրելի բարեկամ Կանի բէյին Պերայի մի գինետուն ժտնելու, որտեղ ծագած մի կռուի ժամանակ ոստիկանութեան գլխաւոր Հաֆիզ բէյը սպանեց նրան: Մարդասպանը տեղն ու տեղը անյայտացաւ, որին քիչ չնպաստեց հէնց ինքը ոստիկանութիւնը...

Վերջին տարիների թիւրքական ոստիկանութեան ամենանշանաւոր մինիստրը Նազիմ փաշան էր, որի հետ ես ծանօթացայ 1895 թ. մարտ ամսին, երբ գնացել էին նրան այցելութեան, որպէսզի հայկական խռովութիւնների մասին մի քանի տեղեկութիւններ հարցնեմ: Նրա կոնակը գտնւում էր Ստամբուլում, Բայազէդի հին և հռչակաւոր մզկիթի մօտ: Ես կառքով անցայ Մհաջիտի լայն հրապարակով և մտայ մի նեղ, ծուռ և անճանաչելի փողոց, որտեղով երկու կառքեր հազիւ իրար մօտով կարող էին անցնել:

Թիւրքական ոստիկանութեան ամենազօրեղ մի մինիստրի կոնակը փայտեայ մի հին, ողորմելի շինութիւն էր, որ երեսի վրայ թողնուած բանտի տպաւորութիւն էր թողնում: Մուտքը ախոռի մուտքի էր նմանում, իսկ տան առաջ միշտ պատրաստ կանգնած էին կառքեր և թամբած ձիաներ:

Մի խափշիկ վերցրեց իմ այցետոմսը և ինձ հրաւիրեց դրան առաջին յարկի նախասենեակը, որ վերին աստիճանի անհաճելի, մերկ և ցուրտ էր և շատ ցածր առաստաղ ունէր:

Վերջապէս ինձ վերև հրաւիրեցին. սանդուխներով բարձրանալիս ես մի ինչ որ անհաճելի հոտ զգացի: Ընդունարանը աւելի տաք և հաճելի էր. այնտեղ նոյնիսկ մի քանի հատ գորգեր էին փռուած, որոնք բաւական գեղեցիկ զարդարում էին ընդունարանը: Ինձ համար բերին սովորական մոկկայի սուրճը: Հազիւ էի ես խմել, երբ ինձ հրաւիրեցին Նպարքոսի մօտ:

Մարդ հազիւ կարող էր հաւատալ, որ արտաքուստ զղուշի տպաւորութիւն թողնող այդ տան մէջ կարող էր վեզիրի կաբինէտի պէս մի գեղեցիկ, ընդարձակ, օդաշատ, խաղաղ և գրքերով զրեթէ լիքը սենեակ գտնել, որտեղից և հրաշալի տեսարան էր բացուում դէպի ծովը:

Բայց չէ՞ որ Նազիմ փաշան նշանաւոր բանաստեղծ, կըր-

թուած, ազատամիտ և ազնիւ գաղափարներն տէր մի մարդ էր, որոնք վերջը նրան աւելի ֆեստեցին, քան օգուտ տուին:

Հայկական խռովութիւններն ժամանակ, որոնք մի տարի յետոյ սկսուեցին մայրաքաղաքում, Նազիմ փաշան պատուէր ստացաւ հայերին կոտորելու: Երբ նա իր պարտականութիւնը կատարեց և հայկական յեղափոխութիւնը սրով վերջացրեց և մայրաքաղաքը ազատեց, ներկայացաւ Սուլթանին իր կազմած բարենորոգումների մի ծրագրով, իբր թէ ապագայումն էլ առաջ գալիք վտանգների առաջն առնելու դիտաւորութեամբ: Սուլթանն իսկոյն կարգաց նրա ձեռագիրը, գովեց և վարձատրեց նրան 500 ֆունտով և Նշանթաշում, Իլդիզ-Քիօսկի մօտ գտնուող մի կոնակով, ապարանքով:

Եւ յիշաւի, Սուլթանը ցանկանում էր Նազիմի կազմած բեֆորմների նախագիծը իրագործել, իսկ քաջ վեզիրը այսուհետեւ այլևս պէտք է ոչ թէ իրանից հեռու՝ Ստամբուլի մի ողորմելի կոնակում ապրէր, այլ միշտ իր մօտ մի փառաւոր ու շքեղ պալատում:

Նազիմ փաշան իրան չափազանց երջանիկ զգալով գնաց տուն, երազում էր մեծ վեզիրութեան մասին և իրան արդէն մի երկրորդ Միհդատ փաշա էր համարում:

Նա հագիւ էր Սուլթանի մօտից հեռացել, երբ պալատում սկսեցին կամարիլլա խաղալ: Իզգէթ ըէյը այդ ժամանակ Սուլթանի ամենաառաջին սիրելին էր: Ուտիկանութեան մի մինիստրը, որ իրան յանձնուած արիւնալի պատուէրը ճշտութեամբ կատարել էր, (Իզգէթը համարւում է հայկական կոտորածների անմիջական ստեղծողը) նրա հետ սաղեց: Ուտիկանութեան մի այնպիսի մինիստր, որ բարենորոգումներ էր ցանկանում և ևւրոպական գաղափարների տէր մարդ էր, Սուլթանի հետ այլևս չէր յարմարւում:

Ի դէպ Նազիմ փաշան արդէն իր հին կոնակն էր հասել՝ նա արդէն պատուէրներ էր տալիս Նշանթաշ՝ մեծ պաշտօնեաների և Սուլթանի սիրելիների հպարտ թաղը տեղափոխուելու, երբ յանկարծ նրա մօտ եկաւ մի պալատական պաշտօնեայ, որ յայտնեց Նազիմ փաշային, որ Սուլթանը ևրան պաշտօնանկ է արել:

Ուրեմն ընդամենը 24 ժամ էր անցել Նշանթաշի կոնակը ընծայելուց յետոյ և Նազիմ փաշան ոչ թէ տեղափոխուեց այն կոնակը, այլ մենակ ու տխուր ճանապարհ ընկաւ դէպի արսոր, ամեն ինչից զրկուած և արհամարհուած:

Բայց նրա հռանդը և քաջ գաղափարները՝ թշնամիների վերաբերմամբ՝ յաղթանակը տարան. նա դարձաւ գոնէ եթէ ոչ

նորից մինիստր, բայց զլիաւոր նահանգապետ Դաժասկոսում, և իբրև Սուլթանի ամենաարժանաւոր ներկայացուցիչները մէկը ընդունեց Վիլնիւի կայսրին:

Եթէ այսօր թիւրք ոստիկանութիւնը մասամբ կազմակերպուած է, այդ բանի համար նա զլիաւորապէս պարտական է հէնց վերոյիշեալ Նազիմ փաշային, չնայելով որ եւրոպական հասկացողութեամբ այդ դեռ ևս բաւական վատ կազմակերպութիւն է: Կ. Պոլիսը նուաճող Մեհմետ Բ-ը ոստիկանական հետեւեալ կարգադրութիւն էր ստեղծել: Նրա ամենագլխաւոր շեֆը Իստամբուլ ազասին կամ Ստամբուլի կոմմենդանտն էր: Նրանից յետոյ գալիս էր բոստանչի բաշին կամ թիկնապահ ֆնդի այն գնեւերալը, որ հսկում էր ջրանցքի և զրա մօտ գտնուող եւրոպական ու ասիական մասերի թաղերի վրայ: Բոստանչի բաշին մահու և կեանքի վրայ իշխանութիւն ունէր և ամեն ինչ շատ կարճ էր կտրում, օր. մեղաւորներին ծովն էր ձգել տալիս. նա ապրում էր Եալի-Քիօշկում և սովորաբար անցնում էր 7 զոյգ թիակներով թիավարուող նաւակով:

Արհեստների և արհեստաւորների կազմած ընկերութիւններին վերաբերող օրէնքների գործադրութեան համար հոգում էր մուխթէսեբը կամ շուկային. դատաւորը: Նրան իրաւունք էր տրուած այդ սահմանում կատարուած պարտադանցութիւնները ամենայն խստութեամբ պատժելու, ի բաց առեալ մահուան պատիժը: Նրա նշանակած զլիաւոր պատիժները հետեւեալն էր. ականջներ և քթեր կտրել, մարմնի գանաղան մասերը ասեղով կամ ուրիշ գործիքներով ծակել և այլն:

Այաք Նայիրը հսկում էր ուտելիեղէնների և նրանց ֆների ու քաշի վրայ: Նա էլ իրաւունք ունէր պատժելու:

Ազադբաշին, որ սովորաբար ենիչերիների զլիաւորն էր, հսկում էր բանտերի վրայ: Ենիչերական մի ուրիշ սպայ գործում էր իբրև ոստիկանութեան կոմիսար: Վերջապէս ոստիկանութեան զլիաւորի իրաւասութեան տակ էր գտնուում և միմարբաշին կամ շինութիւնների վերահսկիչը, առանց որից իրաւունք ստանալու ոչ ոք չէր կարող որևէ տուն շինել, ընդարձակել կամ նորոգել: Այդ պաշտօնը ամենարդիւնաւէտն էր:

Ներկայումս, ի նկատի չունենալով քաղաքային թիկնապահները, որոնք էլի ոստիկանութեան հետ են կապուած, Կ. Պոլսում կան երեք տեսակ ոստիկանութիւն. զափթիաներ կամ ժանդարմական ոստիկաններ, գինուորական և կէս ոստիկաններ:

Մի առանձին խումբ են կազմում լրտեսները:

Զինուորական ոստիկանները կամ պոլիցիստները, որոնք

մեծ մասամբ ալբանացիներից են բաղկացած, սովորաբար թիւրքական զօրքի սպաների համադրեցութեամբ են հազնուած և միայն նրանք են կրում իրանց պարանոցի վրայ կիսալուսնի նշանը, ինչպէս որ աւստրիական կամ ունգարական ոստիկանները: Դրանք իրաւունք ունեն միմիայն զինուորական անհատների վերաբերմամբ:

Չափթիւաները հպատակուած են մեծ զափթիւային կամ ոստիկանութեան նախարարին: Իւրաքանչիւր վիլայէթ ունի այդպիսի զափթիւաների մի վաշտ, որ ամբողջովին ժամեղականներից է բաղկացած: Միայն դրանց բարձրագոյն աստիճանաւորները երբեմն զանազան քրիստոնեայ ազգութիւններից կամ ընդհանրապէս չեն ընտրուած: Հայկական կոտորածներից յետոյ, եւրոպական դիպլոմատիայի պահանջած բեֆորմներից մէկն էլ այն էր, որ թիւրքական ժանդարմերիան պէտք է բաղկացած լինի թէ՛ ժամեղականներից և թէ՛ քրիստոնեաներից խառն ընտրուած անհատներից: Թիւրքիան դէպքերի ճնշման ազդեցութեան տակ խոստացաւ այդ պահանջը կատարել, բայց դժբաղդաբար այդ բանը մինչև այսօր չիրականացրին:

Վերոյիշեալ զափթիւաները ժողովուած են նամանաւանդ զաւանդներում ամենալատ արարածներից, կարելի է ասել հասարակութեան կղկղանքից և երևի առաջնորդուած են այն հայեցակէտով, որ միայն աւագակները և մարդասպաններն են ամենայնաւոր կոռուպցիոնները մարդասպանների և աւագակների դէմ: Ոչ մի լաւ անհատ չէ կարող ոստիկանների այդ խմբի մէջ մտնել, օրէնքով սրանք ամսական մէկ ու կէս ֆունտ պէտք է ստանան, բայց ամբողջ տարուայ ընթացքում հազիւ երեք կամ չորս անգամ են ճշտութեամբ և կանոնաւոր կերպով իրանց խոստացուած ուժիկը ստանում. հետեւապէս և այդ ուժիկը ամսական կէս ֆունտ պէտք է հաշուել, որ ինչպէս տեսնուած էր գրաւիչ նիւթական միջոց չէ: Դրա համար Թիւրքիայում միայն ամենապակասեղի արարածներն են յանձն առնում այդ ամենատըխուր արհեստին նուիրելու: Այդ ոստիկանների վատ վարձատրութիւնը ու ծառայութեան աննախանձելի պայմանները պատճառ են դառնում, որ նրանք շարունակ խաբեբայութիւններով ու կեղեքումներով պարապեն: Նոյնիսկ մայրաքաղաքում ծառայող ոստիկանութեան կոմիսարները վատ և անկանոն վարձատրութիւն են ստանում: Նրանցից ոմանք ինձ զանգատուած էին, որ իրանք 18 ամսից ի վեր վարչութիւնից դեռ ոչ մի պիտատր չեն ստացել: Պարզ է, որ սուլթան՝ բախշիշը նրանց համար աւելի սիրելի է քան Սուլթան Աբդուլ Հա-

միզը: Դրա հետևանքը այն է որ մի քանի պիտատորով նրանք ամեն բան անում են: Նրանք հեշտութեամբ բանում են իրանց ձեռքերը և վաղում աչքերն ու ականջները:

Փող ունեցողը կարիք չէ զգում զափթիւաներից ակնածելու: Բայց վնայը տարել է նրան ով թոյլ է, այսինքն փող չունի և ընկնում է նրանց ձեռքը: Այն ժամանակ արի և տես զափթիւաների բարբարոսութիւնը, որ իր տեսակի մէջ առած է դարձել:

Նրանց նպատակը միմիայն փող կորզելն է: Փողոցային անկարգութիւնների ժամանակ նրանք անյայտանում են, նամանաւանդ երբ թուով քիչ են լինում: Երեւակայեցէք մէկից որեւէ բան են գողացել և այդ մարդը դիմում է ոստիկանութեան օգնութեան: Բայց ծաղրից և նոր ֆրանսերից ոստիկանութիւնը այդ մարդուն ոչինչ չէ տալիս: Յափշտակուած մարդը ամենից առաջ ոստիկաններին ծախսերի համար փող պէտք է տայ:

Պէտք է ասել, որ թիւրքական ոստիկանութեանը երբեմն յաջողում է գտնել գողացուած իրը, բայց նա այդ բանը կամ պահում է իր համար, կամ թէ չէ կիսում է գողի հետ: Վնասուած մարդը ոչ մի դէպքում իր զողացուած առարկայի երեսը չէ տեսնում:

Մայրաքաղաքում զափթիւաները դեռ մի քիչ լաւ են հագնւում, նամանաւանդ տօներին, երբ այնտեղ ժամանած են լինում քարձրագոյն հիւրեր: Այդպիսի դէպքերում ձիաւոր ժանդարմներին կամ ոստիկանութեան բարձր պաշտօնեաներին շատ անգամ պատահում էք սպիտակ ձեռնոցներով:

Այդ երևոյթի ամբողջ պատիւն պատկանում է ոստիկանութեան նախկին տեսուչ պարոն Բոնէնին, ծագումով ֆրանսիացի: Հայկական կոտորածների ժամանակ վերոյեշեալ ֆրանսիացու կատարած դերը ամբողջ աշխարհի զգուանքը այն աստիճան շարժեց, որ եւրոպական մեծ պետութիւնների ցանկութեամբ պաշտօնից զրկեցին և հայրենիք ուղարկեցին մի մարդու, որը թիւրքիա էր կանչուել յատկապէս ոստիկանական կազմը բարեկարգելու: Ֆրանսիա վերադառնալիս նա իր հետ այնպիսի խոշոր հարստութիւն տարաւ, որ մինչև ծերանալը նրան նոյնիսկ ջրի վրայ կարող էր պահել:

Նրա յաջորդ Լեֆուլոն, որ Պարիզում երբեմն, թիկնապահ խմբի պարագլուխն էր, չնայելով որ Մօսիո Բոնէնի պաշտօնագլուխ լինելու օրից իվեր իր գործունէութեան շրջանում մի քանի օգտաւէտ բաներ է կատարել, բայց այնուամենայնիւ նրան դեռ մինչև արօր էլ չէ լաջողուել բոլոր

ինտրիգների առաջն առնել և իր նախամտածած ընթերցանները իրագործել:

Եթէ մայրաքաղաքում իրերի դրութիւնը այդպէս է, միթէ դեռ ևս կարլիք կայ ասելու, թէ գաւառներում ինչպէս անմխիթար են ոստիկանական պայմանները: Դեռ մի քիչ տանելի են այն դեղեցիկ պայմանները, ուր հասնում են երկաթուղու գծերը: Բայց Թիւրքիայի ներքին գաւառներում, որտեղից դեսպանների ականջին ոչինչ չէ հասնում, որքան էլ նրանց լսողութիւնը զարգացած լինի, այն ժամանակ երեւակայեցէք, ընթերցող, իսկական գործունէութիւնը այն ապականուած և յուսահատուած աւազակների, որ ընդհատ խօսքով Թիւրքական ոստիկանութիւն է կոչւում:

Յուզկահարներից էլ աւելի թշուառ են պատառոտած հագուստների մէջ կորած այդ մարդիկը, որոնց ես շատ անգամ տեսել եմ նոյնիսկ առանց կօշիկների: Ռայաները՝ Թիւրքիայի քրիստոնեաները այդ կեղեքումներից ի հարկէ աւելի չեն տուժում քան թէ մահմեդականները, որոնք առանց այն էլ անմխիթար վիճակի մէջ են գտնուում:

Սաֆիէն իր արհեստը բանեցնելու ժամանակ հաւատի և միջոցների խտրութիւն չի դնում: Մահմեդականի տունը նա խարդախութեամբ մտցնում է կեղծ փող, հարուստ հայի տունը ուռմբեր, և դրանց փոխարէն մահմեդականը նրան տալիս է իսկական արծաթ, իսկ գեաւուրը իսկական ոսկի:

Կէս ոստիկանութիւնը բաղկացած է բեկչիներից կամ գիշերապահներից և թուրումբաչիներից կամ վայրենի հրգեհաշէջներից: Դրանց ամեն մի խումբը մայրաքաղաքում բաղկացած է մի քանի հազար մարդկանցից:

Բեկչին կամ գիշերապահը ծառայում է արեգակի մայրմանելուց մինչև ծագելը: Ծանր և երկաթապատ գաւազանը ձեռքին նա անդադար չափելու է իրան հսկողութեան յանձնուած փողոցը և գաւազանով շարունակ զարկում է քարին: Նա զրանով թէ խանգարում է գիշերային խաղաղութիւնը և թէ զգուշացնում է անկարգութիւն անելուց: Պէտք է աշխատել նրա հետ լաւ յարաբերութիւն պահպանել, այսինքն կանոնաւոր կերպով տալ նրան բախշիշ, որ կազմում է նրա ամբողջ վարձատրութիւնը, այն ժամանակ միայն ապահով է մարդս: Ով նրան կանոնաւոր կերպով վճարում է, բէկչին էլ նրան է պաշտպանում: Պաշտպանել բէկչիի գործն է, ցանկացած դէպքում գողերի հետ նա ամեն ինչ խաղաղ կերպով է վերջացնում: Գիշերապահի ամենալաւ եկամուտը մանուկներ գողանալուց է առաջանում:

Երբ ծնողների մօտից որևէ երեխայ է անյայտանում, նրա լրանք իսկոյն կանչում են գիշերապահին: Բաւական է ծնողները նրան որևէ գումար խոստացան, այն ժամանակ երեխան իսկոյն երևան է գալիս:

Գիշեր ժամանակ հրդեհ պատահած դէպքում գիշերապահը սարսափելի ձայնով գոռում և յայտարարում է հրդեհի տեղը, եթէ դա իրանից նոյնիսկ մի քանի ժամ հեռաւորութեան վրայ գտնուի: Հոգ չէ, այդ բանը նրա ձանձրալի արհեստի տեսակէտից մի տեսակ հաճելի փոփոխութիւն է:

Թուումբաչիները կամ հրդեհաշէջները նոյնպէս ցրուած են ամբողջ քաղաքում: Իրանք սովորաբար բաղկացած են բեռնակիր համալներից և քայքչիներից կամ նաւավարներից: Ինքանք մեծ մասամբ վիթխարի են և Ֆիզիքական արտասովոր ոյժով: Որովհետև Կ. Պոլսի փողոցները առհասարակ անկանոն ու խորդուրորդ են, և բեռնակիր կառքերը ամեն տեղով չեն կարող անցնել, դրա համար էլ համալները ամեն ինչ կրում են իրանց ուսերի և մէջքի վրայ: Մարդ յաճախ պատահում է այնպիսի մշակի, որ իր մէջքին մեծ զաշնամուր կամ մի քանի փթանոց բեռներ դրած փողոցներով այս ու այն կողմն է տանում: Ամենածանր ապրանքն անգամ նրանց համար գնդակի նման թեթև է: Այդ արտօնութիւնը վաղուց ի վեր համալներին է պատկանում: Քաղաքի գրեթէ բոլոր մասերումն էլ համալները իրանց յատուկ ժողովատեղին ունեն:

Քայքչիները կամ նաւավարները իրանց մենաշնորհն ունեն: Թէ համալները և թէ քայքչիները պարտաւոր են հրդեհների ժամանակ իբրև կամաւոր հրդեհաշէջներ հարկաւոր տեղերում իսկոյն երևալու: Նրանք հրաշալի կերպով վազել գիտեն, դրա համար էլ նրանք ոտաբոբիկ և կիսամերկ իսկոյն համնում են վտանգաւոր տեղերը: Իժրադարար դրանք էլ մայրաքաղաքի համար փնտասկար ու սարսափելի են, որովհետև աշխատում են աւելի շուտ գողանալ քան թէ հրդեհը հանգցնել: Հէնց այդ է գլխաւոր պատճառը, որ շատ մարդիկ իրանց ունեցած չունեցածը աւելի շուտ մատնում են հրդեհին, քան թէ թոյլ են տալիս այդ վայրենի բարբարոսներին իրանց տունը մըտնելու: Զինուորական հրդեհաշէջների պահակախումբը որանից մօտ 30 տարի առաջ կազմակերպել է գրաֆ Զիչինի փաշան և մինչև այսօր էլ նա է կառավարում: Վերայիշեալ փաշայի շնորհիւ մի անգամ ընդմիշտ կարգադրուած է, որ երբ ինքը հանում է հրդեհուած տեղը, այդ վայրենի թուումբաչիները պէտք է իսկոյն հեռանան, բայց չնայելով այդ հանգամանքին, յաճախ երկու կուսակցութիւնների մէջ տուաջ են գալիս սաս-

տիկ ընդհարումներ, նոյնիսկ արիւնահեղ կռիւներ, որոնց հետեանքը լինում է այն, որ երբեմն սպանւում կամ վիրաւորւում են բաւական մարդիկ միևնոյն տեղում:

Գիշերապահները և թուլումբաչիները ժողովրդական խռովութիւնների ժամանակ էլ ոստիկանութեան օգնականներն են հանդիսանում: Հայկական կոտորածների ժամանակ ամենատնտեսարկուած մարդիկը հէնց այդ թուլումբաչիներն էին: Բեկչիներն առաջնորդներ էին հանդիսանում, որովհետեւ նրանք իբրեւ գիշերապահներ ճանաչում են իւրաքանչիւր տան, գրեթէ բոլոր անդամներին: Հէնց գրա համար էլ հայերը դրանց շնորհիւ բաւական ֆեաներ կրեցին, որովհետեւ ամենից շատ տուժողը արդարաւ թիւնը եղաւ...

Թիւրքական ներկայ վարչութեան մէջ քացաւայում է ամենակարեւոր տարրերից մէկը՝ ղիսցիպլինան:

Ուզիդ ճանապարհը կամ շիտակութիւնը ամենահազուադիւտ բանն է: Գրեթէ ամեն մարդ մոռանում է իր մեծաւորի անձնաւորութիւնը և իր ստացած տեղեկութիւնները լրտեսութեան փաղտնի ճանապարհով անմիջապէս հասցնում է Սկրային:

Փոխադարձ վստահութիւն ասած բանը Թիւրքիայում գոյութիւն չունի: Այնտեղ մարդ ունի թշնամիներ, լրտեսներ, բայց աշխատակիցներ, ամենեւին:

Աննախանձելի են ներկայ պայմանները և Բ. Դոսնը: Սուլթանին հաճոյանալու համար ամենաւարձը պաշտօնեաները միմիանց վերաբերմամբ տածած նախանձից և ատելութիւնից դրդուած շարունակ լրտեսում և բամբասում են իրար: Այնտեղ եռում է յաւիտենական կռիւը մեծ վեզիրների և վեզիրների մէջ, այնտեղ կռւում են փաշաները փաշաների, էֆէնդիները էֆէնդիների դէմ, և նոյնիսկ Բ. Դոսն զանազան սենեակներ և բաժանմունքների կապուչիները կամ գոնապանները միմիանց դէմ: Այնտեղ է կատարւում եսասիրական ցանկութիւններ ի տրապի-կոմեդիան, որի բաղդախնդիր հերոսները միմիանց դէմ ինտրիգաներ սարքող արարածներ են:

Գրեթէ ամեն ժամանակ և ամեն երկրում լրտեսներ են եղել: Նրանք աշխարհից երբէք չափտը է վերանան: Նորագոյն ժամանակում մենք դրանց սիրագործութիւններին պատահել ենք հնր նոյնիսկ ազատութեան և քաղաքակրթութեան երկիր Ֆրանսիայում, ուր մի դատաւոր միւսին լրտեսում և ամբաստանում էր:

Բայց միմիայն ժամանակակից Թիւրքին է պատկանում լրտեսութեան արհեստի մէջ ամենափայլուն դասին:

Ոստիկանական կազմակերպութեան ամենանշանաւոր մասը կազմում է «խաֆիէլիքը» կամ գաղտնի լրտեսութիւնը: Այդ մասն է, որ ունի ամենաշատ անգամները:

Իլդըզ-Քիօսկի գաղտնի ծախսերի վերջին ցուցակում «Սուլթանի ապահովութեան» վրայ հսկող 43,000 լրտեսների համար նշանակուած է մի քանի միլիօնի հասնող պատկառելի մի գումար: Այդքան լրտեսներից 3000-ը միայն Իլդըզ-Քիօսկի համար են գործում, իսկ մնացած 40,000-ը ցրուած են ամբողջ տէրութեան մէջ:

Այդ մարդկանց պարտականութիւնն է հսկել մինիստրըներին, զինուորներին, շէյխերին, սոֆթմաներին, մասնաւոր մարդկանց և օտարազգիներին վրայ, մեքենայութիւններ հնարել, դաւադրութիւններ երևան հանել, մէկը միւսի դէմ զինել, դեսպանատներից լուրեր բերել կամ նրանց տեղեկութիւններ հաղորդել: Իրանց լրտեսութեան են նուիրում ոչ միայն թիւրքերը, այլ և յոյները, նամանաւանդ հայերը, եւրոպական գրեթէ բոլոր ազգութիւններին պատկանող շատ մարդիկ, որոնք պատկանում են գրեթէ բոլոր դասակարգերին, իսկ գերմանական տարրի արեւելքում զօրանալու օրից ի վեր նոյնպէս և շատ գերմանացիներ, մեծ մասամբ իհարկէ, ունեգատներ: Դրանցից շատերին իսկոյն կարելի է ճանաչել, թէ և նրանց մեծ մասը աշխատում և գործում է մութ խաւերում:

Ծառան մատնում է իր տիրոջը, որդին հօրը, տէրը ծախում է իր ծառաներին, իսկ հայրը որդիներին:

Սուլթանի ամենամեծ սիրելիներից մէկը՝ Իզլէթ բէյը, որ երկար ժամանակ փոխ-սուլթանի դեր էր կատարում, սկըզբում ամենասովորական լրտեսներից մէկն էր: Լրտեսների վրայ էլ հակալրտեսներ են նշանակուած: Ոստիկանական այդ խումբը թէ մայրաքաղաքում և թէ տէրութեան միւս մասերում ամենանշանաւորն է, իսկ նրա գործունէութիւնը ամենաշահաւէտը: Լրտեսութիւնը հեշտ բան է, իսկ նրա համար տրուած վարձատրութիւնը ապահով ու կանոնաւոր: Գրեթէ ամեն մարդ կարող է լրտես դառնալ. բաւական է մէկը այդ պաշտօնի համար ցանկութիւն յայտնեց, նրան ուրախութեամբ կընդունեն:

Արեւելեան լրտեսութիւնը յիշատակւում է Իսլամի գոյութեան նոյնիսկ ամենահին ժամանակներում:

Առաջին մարդը, որ արաբացիներին մէջ, նրանց ժամանակագիրներին ասելով, «գիշերային շրջագայութիւն» էր անում, Աբդուլլահ իբն Մասուդն էր, որին Աբուբէկիր խալիֆան պատուիրել էր Մէզինէի բնակիչների վրայ հսկել:

Նրա մասին Աբու Դաուդը պատմում է հետևեալը:

Մի օր մի մարդ եկաւ Աբդուլլահ իբն Մասուդի մօտ և իր հարեանին ամբաստանեց հետեւեալ խօսքերով. «Տես, այստեղ մեզ մօտ՝ Մէդինէյում, Վալիդ բէն Ակաբա անունով մի մարդ է ապրում, որի միրուքից գինի է կաթում», բայց Աբդուլլահ իբն Մասուդը նրան պատասխանեց. «Լրտեսելը մեզ արգելուած է. միայն այն դէպքում մենք կարող ենք մէկին պատժել, երբ մեր սեպհական աչքերով տեսնում ենք, որ այդ մարդը օրէնքի հակառակ որևէ մեղք է գործում»:

Արաբական Օմար իբն Ալխատտաբ խալիֆայի մասին պատմում են, որ նա իր նախկին ստրուկ Ասլամի ուղեկցութեամբ միշտ սովոր էր գիշերային շրջագայութիւններ անելու:

Աբբասական հարստութեան ժամանակ արաբական տէրութեան մէջ Սահիբ-Ուշ-Շորտա անունով մի առանձին պաշտօնեայ գոյութիւն ունէր, որի պարտականութիւնն էր քաղաքների բնակիչների ապահովութեան վրայ հսկել, և զրա պաշտօնակատարը գիշերները շարունակ թափառում էր փողոցներում: Իբն Յալտունը այդ պաշտօնեայի գործունէութեան մասին հետեւեալ մանրամասնութիւններն է պատմում:

Աֆրիկայում նրան անուանում են Հաբիմ, Անդալուզիայում՝ Սահիբ-էլ-Մէզլինա, քաղաքի տէր, քաղաքի վարպետ, ոստիկանապետ, իսկ թիւրքերի կամ մամուլեկների մօտ՝ վալի: Այդ պաշտօնեայի հեղինակութիւնը մի քանի դէպքերում տարածւում է նոյնիսկ իր միապետի վրայ: Նրա պարտականութիւնն է ոճրագործութեան առաջն առնելու և մեղաւորներին պատժել, եթէ ակնյայտնի է նրանց գործած ոճիրը, որովհետեւ աստուածային օրէնքը ճանաչում է ոչ թէ կասկածելի, այլ բոլորովին հաստատուած ոճիրը:

Բայց դժբաղդաբար շուտով իրիսուեց այդ գեղեցիկ կարծիքը: Վերոյիշեալ պաշտօնեան, որ սկզբում իր անձնաւորութեան մէջ մարմնացնում էր արդարադատութիւնը, շեղուեց իր նպատակից և իրան բոլորովին նուիրեց լրտեսութեան: Այդ ժամանակից ի վեր գրեթէ իւրաքանչիւր քաղաքում Սահիբ Ալբարիդ անունով մի մարդ կար, որի պարտականութիւնն էր խալիֆային գաղտնի կերպով տեղեկութիւններ տալ այն բոլոր բաների մասին, որոնք կատարւում էին քաղաքում, նրա շրջակայքում, պաշտօնեաների ու ազգաբնակչութեան մէջ:

Սակայն Ալկադիր Բիլլահ Ահմեդ խալիֆան հալածում էր լրտեսներին: Հռչակաւոր Ասսաֆեդդինը նրա մասին հետեւեալն է պատմում:

Մի անգամ վերոյիշեալ խալիֆան զբօսնում էր Բաղդադի

շուկայում: Այդ ժամանակ նա լսեց մի մարդու իր ուղեկցին ուղղած հետեւեալ խօսքերը. «Այս գարշելի Ալիադիր կառավարութիւնը մեզ համար շատ երկար է տևում: Նրա կառավարութեան օրով առ հասարակ ոչ ոք չգիտէ, թէ ինչով պէտք է ապրի»:

Խալիֆան այդ մարդուն կանչել տուեց իր մօտ և նրան հարցրեց իր գբադմուների մասին:

Մարդը պատասխանեց:

Ես պատկանում եմ այն զրպարտուածներին, որոնց գործերը քննելու համար լրտեսներ են նշանակուած. և որովհետև այդ մարդը չգիտէր, որ ինքը կանգնած էր խալիֆայի տառ, շարունակեց հետեւալը. բայց ներկայ խալիֆայի կառավարութեան օրով մեր դրութիւնը շատ վատ է. նա մեզ արդէն իմացնել է տուել, որ ինքը կարիք չէ գտում, դրանով մեր գոյութիւնը վտանգուած, իսկ մեր արհեստի հեղինակութիւնը ընկած է:

Դրանից յետոյ խալիֆան հարցրեց.

—Ճանաչում ես դու Բազդադում գտնուող այն բոլոր մարդկանց, որոնք քո արհեստովն են պարագում:

—Այո, պատասխանեց լրտեսը:

Խալիֆան հրամայեց թուել դրանց բոլորի անունները և իր գրադրին պատուիրեց գրելու:

Դրանից յետոյ ամբողջ Բազդադի բոլոր լրտեսները բերին խալիֆայի մօտ: Վերջինս նրանց բոլորին էլ բաւականաչափ փող ընծայեց, բայց և այնուամենայնիւ նրանց աքսորեց զէպի իր տէրութեան ամենահեռուոր սահմանները: Այնտեղի երկրներում նրանք նշանակուեցին իրեն «լրտեսներ տէրունական կրօնի թշնամիների վրայ»:

Խալիֆան այս բոլորը անելուց յետոյ, դարձաւ իրան շըրջապատող մարդկանց և ասաց.

—«Տեսնում եք, սրանք այն մարդիկն են, որոնց Աստուած ստեղծել է աշխարհումս չարիքներ սերմանելու: Նրանց սիրտը լցուած է ատելութեամբ զէպի իրանց ընկերները, նրանց համար անհնարին է չարիքներից խուսափել և հէնց դրա համար էլ աւելի լաւ է, որ այդպիսի մարդկանց գործունէութիւնը ուղղուած լինի զէպի կրօնի թշնամիները, քան զէպի հաւատացեալները:

Հարուն-ալ-Ռաշիդի կեանքից այդպիսի զէպեր շատ են պատմում:

Հազար և մէկ զիշեր-նիւրի պատմութեան մէջ էլ կան նոյնանման ակնարկներ լրտեսութեան մասին:

Նա ցանկանում եմ այստեղ պատմել և մի անեկդոտ Հաբիմ Բիսմիլա խալիֆայի մասին, որ հենց ինքը լրտես էր և գիշեր ու ցերեկ շարունակ պտտում էր փողոցներում, որպէսզի չարագործներին բռնի:

Նա կանոնաց արգելել էր աներից դուրս գնալ: Մի անգամ նա փողոցում պատահեց մի կնոջ, որը չէր յարգել իր պատուէրը: Նա այդ կնոջը յանձնեց իրան միշտ ուղեկցող գահճին, որը նրան տեղն ու տեղը սպանեց:

Եթէ այդ խալիֆան պատահում էր այնպիսի մարդկանց, որոնք իր պատուէրներից մէկն ու մէկը չէին կատարում, այն ժամանակ նա զրանց սովորաբար յանձնում էր իր սե ստրուկ Մասուդին, որ նրանց բարբարոսաբար անդամալոյծ էր դարձնում:

Վերոյիշեալ խալիֆան մի անգամ հրատարակեց մի օրէնք, որի շնորհիւ գիշերը ցերեկ դարձաւ, իսկ ցերեկը գիշեր:

Այդ օրէնքի հիման վրայ բոլոր գործերը, ամբողջ առետուրը և հասարակական ու մասնաւոր աշխատանքները պէտք է գիշերը կատարուէին, իսկ ցերեկը կատարեալ խաղաղութիւն պէտք է տիրէր ամենուրեք:

Սակայն նա մի անգամ պատահեց մի կաշեգործի, որ ցերեկով աշխատում էր:

Նա հրամայեց կաշեգործին կալանաւորել և ասաց նրան հետեւալը՝

—Ձէ որ ես ձեզ արգելեցի ցերեկով աշխատելը:

Բայց զժրախաղ նրան կարուկ կերպով պատասխանեց:

— Ծիշո է, Ձերդ Մեծութիւն: Բայց առաջ երբ մենք գործում էինք ցերեկը և այդքան ժամանակամիջոցը մեզ բաւական չէր ապրուստի անհրաժեշտ պիտոյքները ձեռք բերելու, մեր նպատակին հասնելու համար ստիպուած էինք գիշերուայ ժամանակից էլ մի քիչ գողանալ: Եւ այժմ արածս էլ միայն ցերեկուայ ժամանակից գողացածն է:

Այդ խօսքերի վրայ ծիծաղեց Հաբիմը, նրան ազատութիւն շնորհեց և իսկոյն պատուիրեց հին կարգերը վերականգնել:

Օսմանական տիրապետութիւնը լրտեսութիւնը արդէն նոստապատրաստուած գտաւ այն բոլոր երկրներում, որոնք իր իշխանութեանը ենթարկուեցան: Բայց նա այդ լրտեսութեան վրայ դրաւ իր առանձնայատուկ դրոշմը, այնպէս որ այսօր աժդատ լրտեսութիւն չկառուել թիւրքական լրտեսութիւն անուանտակ պէտք է հասկանալ սուլթանական բնորոշ լրտեսութիւնը,

որի նպատակն է փոխադարձաբար միմեանց վրայ հսկել և խուզարկել և այդպիսի միջոցներով պահպանել իրանց կեանքը գոյութեան կռուին կուլ չգնալու համար:

Լրտեսութիւնը կազմում է պալատական բարձր պաշտօնեաների և տէրութեան ղեկավարների կեանքի էլեմենտը, ներանց այժի հիւրը և նրանց ազդեցութեան մշտական ղէնքը: Իսկ այն երևոյթը որ Թիւրքիայում լրտեսութեան համար այդ քան շատ կամազուրկ գործիքներ են գտնուում, դրա պատճառը արդէն ներվազուրկ թիւրք ժողովրդի բնաւորութեան մէջ պէտք է փնտռել:

Ժամանակակից թիւրքերը շատ են տրամադիր թուլութեան: Բնութիւնը, որ նրանց ծանրաբեռնել է բացասական այդպիսի յատկութիւններով, միջոցներ էլ է տուել այդ յատկութիւնները խնամելու: Թիւրքերի երկրի արեգակը այրում է երկար և ջերմ, իսկ երկրի հողը կարելի է բիշ ցանել և առատ հունձ ստանալ:

Իրանց փառաւոր, աշխարհակալ և ծոյլ նախնիքներից թիւրքերը այժմ պահպանել միայն հրամայող յատկութիւն՝ հրապառակ ազգերի ռայաների վերաբերմամբ:

Մահմեդականը մղում էր պատերազմներ, և իր օտարադգի հպատակներին էր թողնում հողագործութեամբ և առևտրով պարապելը: Եւ երբ նա պատերազմից տուն էր վերադառնում ռայան պէտք է յագեցնէր նրա սովածութիւնը, նա պէտք է հարկեր վճարէր, որպէսզի թիւրքը խաղաղ և ամեն յարմարութիւններով ապրէր:

Միլիտարիզմը օսմանական տէրութեան մէջ միշտ այնպէս աւանդական է եղել և այժմս էլ է, որ բոլոր մահմեդականների չորս հինգերորդը զինուորներ են դառնում: Շատ քիչ մարդիկ են առևտրով, հողագործութեամբ և գիտութեամբ պարապում: Որովհետեւ ով զինուոր չէ կամ չէ կարող էլ լինել, դառնում է պաշտօնեայ կամ ծառայ, շատ հազուադիւրս դէպքերում միայն դիւղացի:

Թէ զինուորական ծառայութեան և թէ պաշտօնեաների դասակարգում պրոտեկցիան ամեն ինչ կատարում է:

Թիւրքիայի արտօնեալ դասակարգերն էլ քիչ են, ինչպէս և ազնուականները: Մարդկանց տաղանդը, մտաւոր պատրաստութիւնը և բնաւորութիւնն էլ նշանակութիւն չունին:

Ամենավերջին զինուորը կարող է դառնալ մարշալ, այսինքն փաշա: Ամենավերջին համալը կամ բեռնակիրը կարող է մեծ վեզիրի սատրապածի պաշտօնին հասնել:

Թէ մէկը և թէ միւսը ուրիշ ոչ մի բանի կարիք չունեն,

բացի պրոտեկցիայից. վերջինիս շնորհիւ կարելի է ամեն բան ձեռք բերել: Նոյնիսկ գրելը և կարդալը պարտադիր չէ որևէ մարշալի կամ մեծ վեզիրի համար, չէ՞ որ գրող և կարգացող մարդիկ կարելի է վարձել, բաւական է միայն, որ մարդ կարողանայ իր սեպհական կնիքը դրոշմել պաշտօնական թղթերի վրայ:

Ամբողջ զօրքը և բոլոր պաշտօնեաները դրա համար էլ բաղկացած են թեկնածուներից և սիրելիներից:

Որևէ պաշտօնի հասած մարդն էլ իր շուրջն է ժողովում իր ազգականներին, ընկերներին, ծառաներին և նրանց, որոնք իրան հաճոյք են պատճառում: Վերջիններս էլ փոխադարձաբար պաշտպանում և հովանաւորում են միմիայն իրանց մարդկանց:

Բայց իրանց գոյութիւնը պահպանելու համար այդ մարդիկ շարունակ կասկածում են միմեանց վերաբերմամբ, գիտում և հսկում են միմեանց գործերը, իսկ այդ նպատակին հասնելու համար, միմեանց վրայ լրտեսներ են նշանակում:

Մէկը լրտեսում է միւսին:

Ամենից շատ լրտեսներ Սուլթանը ունի, իր բոլոր պաշտօնեաների, մեծ մուֆթիի, մեծ ներքինու, մեծ վեզիրի, ամենավերջին բէյի և էֆէնդիի, իշխանների, իշխանուհիների, նրանց աների և ամբողջ ժողովրդի վրայ հսկելու համար:

Մինիստրութեան անդամներից մէկի պարտականութիւնն է իր ընկերների կարծիքները ամեն օր մի քանի անգամ Սուլթանին հաղորդելու, բայց այդ խելօքը զաղափար չունի, որ իր մասին էլ օրեկան մի քանի անգամ միսպետին տեղեկութիւններ են հաղորդում:

Իւրաքանչիւր փաշա ունի իր լրտեսները, իւրաքանչիւր լրտես էլ իրը:

Շատերն են սիրով լրտեսութեան նուիրւում, որովհետեւ իրանց կարծիքով այդ պաշտօնի հետ ոչ մի խայտառակութիւն կամ ամօթ չէ կապուած:

Այդ մութ պատուաւոր մարդկանց կարելի է ամեն տեղ, ամեն դասակարգի մէջ և ամեն հիւրանոցներում պատահել: Մարդ նրանց գլխաւորներին ճանաչում և նրանց հետ յարաբերութիւն ունի: Նրանք միմիանց փոխադարձաբար շահագործում են: Լրտեսները ամենամեծ հեշտութեամբ են թէ փող և թէ պաշտօններ ձեռք բերում: Դրանց դադարն ծառայութիւնը միացած պաշտօնականի հետ, աւելի յարմար տանելի է և մէկին միւսների աչքում չէ ցնասում, ընդհակառակն ամեն մէկին

մի տեսակ գաղտնալից և կարեւոր դիրք, մի տեսակ աներևութ ազդեցութեան թովչութիւն է շնորհում:

Ահա այս է թիւրքական լրտեսութեան հոգեբանութիւնը կարճ խօսքով: Վերոյիշեալ փաստերը կարծեմ բաւական պարզ ցոյց տուին այդ լրտեսութեան զարգացման պատմութիւնը, նրա ոյժի և ծաւալման հիմքը:

Մօտ մի քառորդ դար առաջ օսմանեան տէրութեան համար կարծես սկսուեց միւլթարական մի շրջան, որ պէտք է այդ տէրութիւնը ազատէր ամեն տեսակ չարիքներից:

Այդ շրջանում ամինասանհաւանականը նոյնիսկ հաւանական էր թուււթիւրքիւրքեան ցանկանում էր կերպարանափոխուել: Ընդհանուր կրթութեան մեջ յառաջադիմութեան մի տեսակ տրամադրութիւն էր նկատուում: Սկսեցին հոգ տանել նոյնիսկ գիւղատնտեսութեան վրայ:

Սկսուեց նոյնիսկ մամուլի ազատութիւնը, որ մերկացնում էր թիւրքական վարչութեան բացասական կողմերը, և մարտկուռ զօրքի և տէրունական պաշտօնեաների կամայականութիւնները: Այդ մամուլը ժողովրդին բացատրում էր իւր պարտականութիւնները և իրաւունքները և շեշտում էր կառավարութեան իրաւունքների ու պարտականութիւնների վրայ:

Եւ երբ ժողովուրդը մի օր տեսաւ, որ Արդու-Ազիզը տէրութեան հարստութիւնները վատնում և ժողովրդի ոյժերը ջլատում է, այն ժամանակ դահընկէց արաւ նրան ազատութեան հերոս Միդհատ փաշայի շնորհիւ:

Սուլթան զարձաւ Մուրադ Ե.:

Վերջինս մի ազատամիտ և հասկացող մարդ էր: Նրա կառավարութեան օրով վերացաւ լրտեսութիւնը: Լրտես անունը նրա ժամանակ նոյնիսկ ամենաստոր մարդու համար մահացու կերպով վերադարձող նշանակութիւն ունէր:

Դա մի հիանալի ժամանակ, մի տեսակ լուսաւոր շրջան էր, որ տեւեց միայն 93 օր:

Իսկ յետոյ:

Լրտեսութիւնը անյայտացել և նոր ոյժեր էր ժողովում, որպէսզի աւելի մեծ թափով կրկին երևան գար:

Արդուլ Համիդը հրատարակեց սահմանազրութիւն և մի քանի օրից աքսորուեց այդ սահմանազրութեան հեղինակ Միդհատ փաշան:

Սուլթանի արքունիքը այժմ աւելի շատ քան հրեից, ինտրիգաների ասպարէզ դարձաւ: Սուլթանին շրջապատող մարդիկ այժմ լրտեսների շնորհիւ զանազան գաւազրութիւններ էին սարքում, որպէսզի իրանց ոյժը և նշանակութիւնը բար-

ձրացնեն: Իսկ նա՝ իսլիֆան, Թիւրքիայի միահեծան աէրը ընկնում է նրանց ազդեցութեան տակ և բռնաբարւում ու ճընշւում է աւելի բարբարոսորար, քան թէ Թիւրքիայի ամենահեռաւոր գաւառում ապրող սարուկ ուսյան:

Իսկապէս՝ ժողովրդի մտքով դեռ ևս չէ անցնում դաւադրութեան դադարիւր: Նա դեռ ևս շատ բարի և ծոյլ է իր վրայ ծանրացող անտանելի լծի վերջնական թօթափման մասին մտածելու համար: Բայց դեռ որքան պէտք է տևի, մինչև որ ժողովրդի բնական դաւադրութիւնը յաջորդի արուեստական ճանապարհով ստեղծած դաւադրութիւններին:

Արդուլ-Համիդը թողել է Դուլարաղէի պալատը, որովհետև նա այնտեղ էլ այնքան շատ չէր չէզոքացած ապրում, և սպանուած Արդուլ-Ազիզի ստուերը ու հոգեկան հիւանդ Մուրադի հոգին նրան այնտեղից հալածում էին:

Նա իր համար շինել տուեց Իլզը-Քիօսկի ամրոցը, որով հետև այնտեղից նրա համար լայն հորիզոն էր բացւում: Այդ ամրոցը նա շրջապատեց եռապատ պարիսպներով և դրա պահպանութեան համար նշանակեց 15,000 զինուորներ, որոնք անդադար ընծաներ ստանալով նուիրում են իր անձի պաշտպանութեանը:

Սուլթանը իրան շրջապատել է չինական պարսպով, որպէսզի ժողովուրդը իրան փառարանի, երբ նա մի անգամ քաջութիւն է ստանում այնտեղից դուրս գնալու: Բայց դժբաղվաբար լրտեսները նրան հաղորդում են, որ հպատակ ժողովուրդը միայն յեղափոխութեան և Սուլթանին սպանելու մասին է մտածում: Հէնց դրա համար էլ նա աւելի և աւելի է վախենում, աւելի սովոր է փակւում իր ամրոցում և նոյնիսկ չէ համարձակւում, երբ նա սարեկան մի անգամ պէտք է թողնի իր բանտը և գնայ Ստամբուլ մարզաբէի վերաբերուն համբուրելու, ցամաքային ճանապարհ ընտրելու, այլ պաղտապողի կերպով շոգենաւով է այնտեղ գնում, այն ինչ ամբողջ ժողովրդին, հարիւրաւոր նախապատրաստութիւններ տեսնելով, հրապուրում են դէպի կամուրջը...

Ներկայումս պալատական լրտեսութեան ամենազլիւաւոր ներկայացուցիչները համարւում են հետևեալ անձնաւորութիւնները. Ա. անդ Ձէլալէզզին փաշան, Թահիր փաշան, Կադրի, Մահմեդ Ռուսի և Նազիր բէյերը:

Այլանայի Կանի բէյը, որ նոյնպէս մեծ դեր է կատարել և իր Ֆիզիքական ոյժի համար ընտրուել էր Սուլթանի պահպանութեան հսկելու քնած ժամանակ, իր ոտխներից մէկի ձեռքով սպանուեց: Չէ՞ որ Թիւրքիայում շատ բնական է և այն՝

որ լրտեսները միմեանց հետ կոխեցին, նրանք էլ լրտեսներ միմեանց: Ամեն մարդ աշխատում է իր տիրոջը ցոյց տալ, որ ինքը առելի հաւատարիմ է և առելի շատ և լաւ բան կարող է անել:

Ամենակարող Ահմեդ Ջէլալէօղլինը ամենակարող Կադրիի զրպարտութիւնների շնորհիւ երեք անգամ արգէն աքսորուել և կրկին արժանացել է Սուլթանի ներման և աքսորավայրից վերադարձել: Եւ այդ շատ բնական է, որովհետեւ Ահմեդ Ջէլալէօղլինը իսկապէս իր տիրոջ ամենահաւատարիմ ծառան է, ապացոյց որ նոյնիսկ զոհել է իր ամբողջ հարստութիւնը Երիտասարդ-Թիւրքերին արտասահմանից վերադարձնելու և իր հայրենիքի բանտերը լցնելու համար:

Բայց չնայելով դրան՝ նա մի կրթուած արեւելագէտ և միևնոյն ժամանակ մի շատ հպարտ մարդ է, այնպէս որ արժանի չէ համարում երբ և իցէ թերթ վերցնելու իր ձեռքը:

— Ես ամեն ինչ եմ, ասաց նա ինձ մի անգամ, բայց ոչ արքունիքի երկրպագու և պալատական ինտրիգաների բարեկամ:

Այսօր Նադիր բէյը մեծ դիրք ունի: Սուլթանը նրան Իլդը-Բիօսկի ժոռ գտնուող Նշանթաշուս երկու տուն է ընծայել, օրական երկու անգամ նրան Սերայի խոհանոցից կերակուր է ուղարկում և այնքան վող է տալիս, որքան նա կարիք ունի:

Շատ չէ անցել այն օրից, երբ Նադիրը շատերի խօսակցութեան առարկան կազմող նաւատորմին սպայ էր: Ներան կատարելագործուելու համար Լոնդոն ուղարկեցին: Այնտեղ նա լիբերալիզմը գտաւ իր ամենակատարեալ ձևով: Եւ երբ Կ. Պոլիս վերադարձաւ, արգէն Երիտասարդ-Թիւրքերի հոգին և սիւնն էր ներկայացնում:

Կ. Պոլսում նա տեսականապէս զբաղւում էր ոչ միայն ազատութեան գաղափարով, այլ և եռանդուն մասնակցութիւն էր ցոյց տալիս Սերայի բնակալութեան դէմ պատրաստուող ագիտացիային: Նա ուսումնարան հիմնեց, որի անունից հէնց յառաջագիւծութեան հոտ է փչում. բայց նա իսկապէս կարողացաւ երկար ժամանակ իր ծրագիրները դադարի պահել, մինչև որ նրա ընկեր Ֆէյզի բէյը՝ բուսաւորութեան մինիստրութեան մէկ պաշտօնեայ, Նադիրին Սուլթանի ժոռ ամբաստանեց: 1896 թ. օգոստոսին, Նադիրը ձերբակալուեցաւ և կանչուեցաւ դատի Իլդը-Բիօսկում: Երբ նա Սերայը թողեց ու հեռացաւ, արգէն հռչակաւոր լրտես էր:

Նա իր նոր գործունէութիւնը փառաւոր կերպով սկսեց: Ամենից առաջ սուլթանին ներկայացրեց իր այն ծրագիրը, որ կարելի ու մաշել էր իր ընկերների հետ միասին: Յետոյ նա

հերկայացրեց իր ամբողջ կուսակցութեան ցուցակը և գաղտնի Ատեանին հաղորդեց իր նամակագրութիւնները, իր՝ մինչև այդ ժամանակ դեռ ապրող ընկերների հետ: Դրա հետևանքը եղաւ այն, որ Կ. Պոլսի հրամանատար Քեաղիմ փաշան և Հաշուակալ Սորհրդի նախագահ Զիւհդի բէյը արտորուեցին, առաջինը Մակեդոնիա, իսկ վերջինը դէպի Միջագետք: Այդպէս է ժամանակակից Ներսիսաւորդ-Թիւրքերի կարիերան—ազատութեան հետապնդող մինչև լրտեսութիւն...

Լրտեսութեան մի ուրիշ մեծութիւնն էլ: Մի քանի ժամանակ սրանից առաջ մայրաքաղաք եկաւ Ալբանացի Մահմեդ Ռասիմ բէյը: Նա կայսերական թիկնապահ Ալբանացի Թահիր փաշայի շնորհիւ նշանակուեց Հիւսքեար Զառը՝ այսինքն կայսերական սերժանտ: Բայց արդէն երկրորդ օրը նա զրպարտեց իր մի քանի պաշտօնակիցներին, և որովհետև վերջիններս աւելի լաւ պրոտեկցիա ունէին, դրա համար էլ Մահմեդ Ռասիմը Սերայից վճռուեցաւ: Սակայն նրա բարի կռիւքը վարձատրուեցաւ և հէնց դրա համար էլ ստացաւ Կ. Պոլսի մարտական վերատեսչի պաշտօնը:

Բայց շուտով Մահմեդ Ռասիմը ցոյց տուեց իր երախտագիտութեան ապացոյցը՝ մի քանի անմեղ հայերի իրրև յեղափոխական կաշնաւորելով և բացի դրանից զրպարտելով մաքսերի մինիստր Հասան Ֆէհմի փաշային: Վերջինս իսկոյն և եթ արտորուեցաւ. Կ. Պոլսից և երկար ժամանակ չէ անցել այն օրից, երբ նա Սուլթանից կրկին յետ կանչուեց մայրաքաղաք:

Մի վարպետութեան շնորհիւ Մահմեդ Ռասիմը կարողացաւ իր զիրքը երկարատև դարձնել: Բիթոլիայում գտնուող իր ընկերներից մի քանիսին, ի թիւս որոց և Տաշկո Պիսկան և Դմիտրի Վլահօն, որոնք միացել էին մակեդոնական շարժման հետ, նա զրաւեց Կ. Պոլսի: Նրանք այժմ Տրիպոլիտումն են՝ Աֆրիկայում...

Իրբն մի ընտրող նմուշ այն ծիծաղելի առիթների, որոնցից օգտուում են լրտեսները իրանց նպատակին հասնելու, ցանկանում եմ այստեղ մի պատմութիւն պատմել, որը անցել է իմ բարեկամ խալանացի բժիշկ դոկտոր Գ-ի գլխով:

Դոկտոր Գ.-ը Ստամբուլում Ենի-Ջամիի մօտ գտնուող հրապարակի վրայ բանող փորագրիչներէից մէկի մօտ մի կնիք պատուիրեց. «Արդարադատութիւն, հումադ և ճշմարտութիւն» մակագրութեամբ:

Որոշեալ ժամանակին բժիշկը գնաց իր կնիքը փորագրողից ստանալու, և ձեռքակալուեցաւ: Նրան տարան ոստիկանա-

տուն և բանտարկեցին մի մութ ծակի մէջ: Փամերը անցնում էին միմեանց յետեից. նրան ձերբակալել էին վաղ առաւօտեան. անցաւ կէս օր, երեկոյ և գիշեր: Նրան բոլորովին սոված և ծարաւ էին պահում: Նա զարկում էր դրանք, ուզում էր քանդել փոքրիկ լուսամուտը, օգնութիւն էր կանչում, կարծեւով որ իրան բոլորովին մոռացել են:

Բայց դուր էր նրա ջանքը. նրան բոլորովին մատնեցին անուշադրութեան և թողին, որ ամբողջ գիշերը ազմուկ հանի: Միայն հետեեալ օրը նրան հանեցին բանտից և քննութեան ենթարկեցին: Հարցրին նրա անունը, դատաւարդը, եկամուտը, տեղեկացան թէ սրտեղ է նա ուտում, խմում, քնում, լճն է կարդում, և մինչև այդ օրը ինչպիսի մարդկանց հետ է յարաբերութիւն ունեցել: Բժիշկը թուեց մինչև 200 անուններ, բայց թիւրքական պաշտօնեան գրեց գրանից միայն 6 կամ 7 անունները, որոնք ոստիկանութեան համար աւելի կարեւոր էին...

Վերջապէս բժշկից հարցրին կնիքի նպատակը և նրա վրայ գտնուած մակագրութեան նշանակութեան մասին:

Մակագրութիւնը Սողոմոնինն է, պատասխանում է բւժիշկը: Այդ խօսքերը ես փորագրել էի տնւել բնակարանիս բոլոր դռների վրայ ճիշտ այնպէս, ինչպէս որ մահմեդականները իրենց դռների վրայ Ղուրանից սրբազան ասացուածքներ են փորագրել տալիս:

Այդպէս խօսելուց յետոյ բժշկին արձակեցին:

Մակայն բժիշկը դրանով բոլորովին չհանգստացաւ: Նա գիտէր, որ իրան շարունակ հսկում, գիտում, հալածում են, և բոցի գրանից՝ իրան պատահամար հանգիպող մարդկանց էլ ամեն բոպէ վտանգ է սպառնում: Կարճ ժամանակ տատանուելուց յետոյ, բժիշկը զնայ Ստամբուլից դուրս գտնուող երկաթուղու առաջին կայարանը: Այդ կայարանից հետագրի թեւերից մէկը ուղիղ տանում է գէպի Իլզըզ-Բիօսկ և այդտեղից ուղարկած հեռագիրները անմիջապէս հասնում են Սուլթանի ձեռքը: Այդտեղից մարդս միակ յարմարութիւնը ունի մի բան անմիջապէս հաղորդելու պալատին, խուսափելով մի շարք ինտրիգաներից: Ի հարկէ հազար փորձերից մէկն է յաջողում գրական հետեւանքով:

Դոկտորը Դ-ը Սուլթանին հաղորդեց իր հեռ պատահած անցքի ճշգրիտ նկարագրութիւնը, որի վերջում աւելացրել էր հետեեալը:

«Սուլթանիդ ամենահաւատարիմ ստրուկը՝ սրանով աղերսում է ողորմութիւն և ներումն, որովհետեւ ինքը մինչև այժմ

չէ խմացել, որ արդարադատութիւն, ետանդ և ճշմարտութիւն խօսքերը արգելուած են եղել»:

Հետեւեալ օրը զոկտոր Գ-ին կանչեցին ոտախկանութեան այն ժամանակուայ մինչևտը նազիմ փաշայի մօտ:

Նա ստացել եմ բարձրագոյն պատուէր, ձեզ կայսերական ինքնակալի ոգորմութեանը արժանացնելու, ասաց վեզիրը և յանձնեց բժշկին կատկածելի ու յարրունիս զբաւուած կնիքը և 50 ֆունտ...

Ի.

4. Պոլսի բանօր

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պերայի նահանգապետի մօտ: Մեհմեդ փեշիվան կամ աւագակապետը իբրև ոտախկանութեան պխաւոր: Գալաթա Սերայում: Ոճրադործական արհեստներին նուիրուած սկսնակների մօտ: Դժգոն կալանաւորներ: Մարդասպաններ: Զուարճալի բանտում: Գալաթա Սերայի հարեմում: Այցելութիւն Ստամբուլի մեծ բանտին: Բանտի թատրոնը: Տանջանքները: Սուլթանը և բանտարկուածները:

Թիւրքիայի բանտերի մասին առհասարակ շատ քիչ բան է յայտնի:

4. Պոլսի երկու ամենանշանաւոր բանտերից մէկը Գալաթա-Սերայի առաջարգել բանտն է Պերայում, իսկ երկրորդը Մեծ-Ջափթէյի կենդրոնական բանտը, Ստամբուլում:

Գալաթա Սերայը բաղկացած է երեք մասերից՝ ընդարձակ պարտէզ ունեցող մի ուսումնարանից, Պերայի նահանգապետի պաշտօնական բնակարանից և վերջապէս բանտից:

Նա արդէն վաղուց էի մտադրուել վերջին հիմնադրութիւնը այցելելու, երբ մի օր՝ հայկական խռովութիւններից անմիջապէս յետոյ, վճռական կերպով մտայ բանտի շինութիւնը և պատուիրեցի ցանկութեանս մասին հաղորդելու նահանգապետին:

Միւթէսարիֆը ինձ շատ սիրալիւր կերպով ընդունեց:

Չնայելով, որ էնվեր բէյը (խեղճը արդէն մեռել է) միայն թիւրքերէն էր խօսում և մի վառվռուն հայրենասէր էր, սակայն նա պատկանում էր թիւրքական այն բարձր պաշտօնեաներին, որոնք եւրոպական կուլտուրայի համոզուած բարեկամներն են և միշտ աշխատում են լուր բան սովորել, եթէ դա նոյնիսկ արեւմուտքից է: Մանաւանդ մի տեսակ առանձին յար-

զանք էր տաժում էնվէր բէյը գէպի Գերմանիան: Նրա որդի՝ զինուորական աստիճանաւոր Փազիլ բէյը իր ժամանակին ուսանել է Բերլինում, երկար տարիներ ծառայել է գերմանական զօրքի մէջ, հրաշալի կերպով խօսում է գերմաներէն և նոյնիսկ Բերլինցի մի աղջիկ, իբրև իր միակ կինը՝ բերել է Կ. Պոլիս:

Էնվէր բէյի հայրը Հասան Ալի-բէյնէր, որ իբրև փոստի և հեռագրատան գլխաւոր վերատեսուչ իր ժամանակին ճանապարհների հաղորդակցութեան գործին ամենափայլուն ծառայութիւնն է մատուցել: Երբ Ալին մեռաւ նրա պաշտօնը ստացաւ Պերայի այն ժամանակուայ նահանգապետը, այն ինչ վերջինիս յաջորդը փոստի հանգուցեալ նախարարի որդին էր:

Չնայելով որ Էնվեր բէյը առաջ ոստիկանութեան հետ ոչ մի գործ չէր ունեցել, բայց այնուամենայնիւ նա կարողացաւ իր այդ պաշտօնում, որը գլխաւորապէս ոստիկանական էր, մինչև իր մահը մնալ: Հայկական խռովութիւնների ժամանակ նրա դրութիւնը ամենից գծուարն էր: Նրա պարտականութիւնն էր մայրաքաղաքի ամենանշանաւոր և եւրոպական մասում կարգ և խաղաղութիւն վերականգնել. նա պէտք է պահպանէր վտանգաւոր դրութեան մէջ գտնուող ղեսպաններին և հիւսուտոսներին և նրանց՝ ամեն մի անկանոն քայլի համար բաւականութիւն տար: Եւ վերջապէս նա էր սուլթանի առաջ այդ բոլոր գէպքերի համար պատասխանատուն. Ոստիկանութեան միւս պարազլուխները կարող էին լսել, թաղցնել և վարագուրել ամեն ինչ, բայց Էնվերի գործունէութեան վրայ էր ուղղուած Եւրոպայի հակող ու քննող աչքը: Պէտք է ասել, որ նրան յաջողուեց ճարպիկութեան և տակտի շնորհիւ մի բանի վտանգաւոր բոպէների յաղթել: Այդ բանին պարզ ապացոյց է այն հանգամանքը, որ նա զբաղեցրեց յետոյ դեռ երկար ժամանակ մնաց իր պաշտօնում, այն ինչ տէրունական ուրիշ շատ պաշտօնեաներ միմեանց ետևից փոխեցին իրանց պաշտօնները:

Ես նորին վսեմափայլութեանը լաւ տրամադրութեան մէջ գտայ: Էնվէր-բէյին, իր ճարպիկութեան շնորհիւ յաջողուել էր մի բանի, վաղուց կասկածելի սրիկաների ձերբակալելու և դրա համար էլ, իմ ներս մտնելու բոպէին նա լաւ էր տրամադրուած:

Նա սիրով կատարեց ցանկութիւնս և թոյլ տուեց ինձ բանտը այցելելու:

Էնվեր բէյի որդի Փազիլ բէյը, որ հէնց այդ ժամանակ իր հօր մօտ էր գտնուում, ինչորեք իրեն թոյլ տալ ինձ ուղեկցելու: Շնորհիւ այն հանգամանքի, որ նա հէնց ինքն էլ զբաղեցրեց առաջ բանտը երբէք չէր տեսել, ես կարողացայ բանտում

այնպիսի բաներ էլ տեսնել, որոնք որքան էլ շատ սիրալիր լինէր նահանգապետը, իմ առաջ միշտ գաղտնի մնացած կըլինէին:

Իբրեւ առաջնորդներ և պահապաններ մեզ ուղեկցում էին Պերայի գաղափարն իմանալ և ոստիկանութեան գլխաւոր Մուստաֆա Էֆէնդին՝ Կ. Պոլսի ամենայայտնի և ծանօթ պոլիցիականը, ոստիկանութեան հանգուցեալ մինիստր Քեամիլ Էֆէյի որդի և Պերայի նահանգապետի քարտուղար Մեհմեդ Ալի Բէյը որ մի ինտելիգենտ և երիտասարդ պարսն էր, որ աւելի շուտ պիտանի կը լինէր դեռ պանական որեւէ խորհրդականի պաշտօնի քան թէ ոստիկանութեան համար և վերջապէս Մեհմեդ փեհլու-ւանը:

Վերջինս արեւելեան մի սքանչելիք է:

Գալաթա Սերայի ոստիկանութեան գլխաւոր Մեհմեդ Փելիվանը դեռ մի քանի տարի սրանից առաջ Բրուսայում ամենաերկիւղալի աւազակապետն էր: Տարիներ շարունակ նա կը դուռէ, արհամարհել և յաղթել էր և տէրունական պաշտօնեաներին, և՛ ոստիկանութեան և՛ զօրքին:

Ծերանալուց և յոգնելուց յետոյ նա վճռեց տէրութիւնից կենսաթողակ ստանալ և գրկարաց էլ ընդունուեցաւ. իբրեւ լաւ ծանօթ աւազակներէ կայաների և խորշերի հետ, նա բաւական մեծ ծառայութիւն մատուցեց կառավարութեան և վարձատրութեան փոխարէն նրանից ստացուած մայրաքաղաքում՝ Գալաթա Սերայում այս մշտական և չազ պաշտօնը:

Նա մի յաղթանդամ, մօտ երկու մետր բարձրութեամբ և համապատասխան լայնութեամբ մարդ է: Նա ունի թուխ երես, երկար և կոպիտ բիւրեր և խոպոտ ձայն, այնպէս որ խօսելու ժամանակ կարծես ամեն ինչ դողում է նրա շուրջը: Բայց և միևնոյն ժամանակ այդ վիթխարին երեխայական բարեսրտութեան և արեւցուն յատուկ շողորորթող սիրալիրութիւն ունի:

Այդպիսով մեր խումբը միացնում էր իրար հետ չորս՝ միմեանց հետ յարմարուող էլեմենտներ. այն է իշխանութիւնը, արդարադատութիւնը, զօրքը և հասարակական կարծիքը:

Վերջապէս սկսեցինք մեր պտոյտը բանտում:

Ամենից առաջ մենք ներս մտանք վատ լուսաւորուած և վատահոտ մի լարիւրինթոս, որտեղ լցուած էր ամեն տեսակ մարդկանցով, տղամարդիկ, կանայք, մանուկներ, գանգատողներ, մեղադրեալներ և վկաներ, որոնք բոլորը կկզկէին դեմքի վրայ, ծխում, որ նրանց համար պատրաստուած էր միւթեարիֆի հոգևորականը, իմամը և 10 փարայով վաճառում:

Մենք բարձրանում և իջնում էինք սանդուխներով մինչև որ վերջապէս հասանք մի վանդակապատ դռան. դուռը զարկելուց յետոյ երևաց մի պաշտօնեայ, որին իբրև բանտի վերատեսուչ Ռասիմ բէյ, մեզ ներկայացրին:

Նստիպուած էի գաւազանս, իսկ ֆազիլ բէյը իր թուրը զրսում թողնելու: Դրանից յետոյ մեր առաջ բացուեցաւ դուռը և մենք արդէն Գալաթա Սերայի բանտունն էինք:

Առաջին դահլիճում մենք պատահեցինք քսան տղաների 14—18 տարեկան, գրողանի զոդեր, որ մեծ ապագայ խոստացող սկանալներ էին: Նրանք բոլորն էլ լաւ էին տրամադրուած և թուլթ էին խաղում:

Նրկրորդ դահլիճում մենք պատահեցինք մի աւելի լուրջ հասարակութեան: Այնտեղ ժամ 10 քառակուսի մետր տարածութեան վրայ խմբուել էին 15 մարդիկ, որոնք բանտարկուել էին մարդասպանութեան համար, սպասում էին նախնական քննութեան վերջանալուն, որպէսզի վերջնական դատի ենթարկուեն: Սենեակում ոչ մի կահ կարասիքի կտորի հետք անգամ չկար: Ոչ սեղան, ոչ աթոռ, ոչ անկողին, ոչ նստարան և ոչ էլ գլխի բարձ: Բանտարկեալները արեւելեան սովորութեամբ կկլգել էին, ոմանք քնում, ոմանք նստած կամ պառկած էին, մի ձեռքը կամ ոտնամանները գլխի տակ բարձի վրասրէն դրած: Սենեակի դետինը թէև մարուք էր լուացուած, բայց ներսի օդը ապականուած և ճնշող էր, չնայելով սենեակի բարձր առտուտուղին:

Բոլորովին բարձր, պատի վրայ ես նկատեցի մի շատ փոքր լուսամուտ, բայց որը երկաթեայ թերթերով ծածկուած և ամրացրուած էր: Բանտի վերատեսուչը ինձ պատմեց զբապատճառը: Լուսամուտը սկզբում բոլորովին բաց է եղել և նրա միջով օդը և լոյսը կարողացել են ներս մտնել: Բայց յանկարծ մի օր բանտի հարեան տներից սաստիկ ցանդաւաներ են բարձրանում, որ իբր թէ այդ լուսամուտից բանտարկեալները գէպի հարեան տները և անցորդների վրայ ամեն տեսակ բաներ են շարտում. բանտարկեալները միմեանց ուսի վրայ բարձրանալով հասնում էին մինչև բարձր լուսամուտը և այնտեղից վրէժխնդիր էին լինում փողոցով անցողարձ անող մարդկանցից, որ իրանք զրկուել էին ազատութիւնից:

Այստեղ մենք անցանք մի շարք սենեակներով, որոնք բոլորն էլ յիշեցնում էին մեր նկարագրած սենեակը: Այնտեղ մենք տեսանք ծեր, երիտասարդ, թիւրքեր, հայեր, քրդեր, պարսիկներ, իսպանացիներ և նամանաւանդ բաւականաչափ յոյներ:

Սենեալներին մէկում ամբոխի միջից յանկարծ բարձրացաւ մի յոյն երիտասարդ և ուղիղ զէպի ինձ դալով, թիւրքերէն ասաց հետեւեալը.

«Ձեռնդ, պարոն, արդէն երկու ամիս է, որ ես այստեղ բանտարկուած եմ. հագուստներս բոլորովին կեղտոտուել և պտտաւորուել են և ես նոյնիսկ չգիտեմ, թէ ինչու են ինձ տանջում այստեղ»:

Որովհետեւ Գալաթա Սերայը միայն առաջարկել բանտ է, որտեղի բանտարկութիւնը երեք օրից աւելի չէ տևում, դրա համար ինձ զարմացրին երիտասարդ բանտարկեալի ասած «երկու ամիս խօսքերը»:

Վերադառնալ Ռասիմ բէյը, որ արդէն նկատել էր զարմանքս, հեռացրեց մեզանից գանգատող բանտարկեալին և կարծես ինձանից մի տեսակ ներողութիւն խնդրելով, ասաց մեզ.

Նա գրպան կարող ամենայնպէս գողերից մէկն է, որ չնայելով իր 18 տարեկան հասակին, արդէն 18 անգամ գողութեան համար պատժուել է:

Մի ուրիշ գահլիճում իմ հետաքրքրութիւնս զբաւեց մի ծերունի մարդ: Նա մի թիւրք էր թեր, սպիտակ միւրուրով և լաւ աչքերով:

—Քանի՞ տարեկան ես դու, հարցրի ես նրան.

—79 տարեկան, պատասխանեց նա:

—Ինչու համար է այս ծերունին բանտարկուել:

—Մարդասպանութեան համար, հանգիստ պատասխանեց ծերունին հարցիս:

Ծերունին թուումբաչիների խմբի առաջնորդն է եղել, այսպէս կոչուած վայրենի հրդեհաշէջների պարագլուխը: Մինչև իր ծերանալը նա պատժական օրէնքի հետ ոչ մի անգամ չէր ընդհարուել: Հայկական խռովութիւնների ժամանակ ծերունին մի անգամ նկատեց, որ իր ստոքադրեալներից մէկը բարբարոսաբար կտոր կտոր էր անում մի, արդէն սպանուած հայի մարմինը. նա չկարողացաւ այդ տեսարանին ականատես լինել, ստորադրեալին մատնացոյց արեց իր կողմութիւնը, բայց վերջինս հայհոյեց իր գլխաւորին: Ծերունին այդ բանից սաստիկ բարկացաւ, դաշոյնով վերջ դրաւ իր ստորադրեալի կեանքին. դրա հետեանքը այն եղաւ, որ 80 տարեկան հասակում մըտաւ բանտ:

Ծերունին էլ հաստատում էր, որ ինքը արդէն մի բանի շարաթ բանտարկուած է և մինչև այժմ իրան չեն քննում: Սակայն նա չէր գանգատոււմ:

Իր պատմութիւնը վերջացնելուց յետոյ, ծերունին հան-

դարտութեամբ շարունակեց ծխել իւր նաւգիւէն, որի հաճոյքից եւ նրան զրկել էի իմ հետաքրքրութեամբ:

Թիւրքերը իրանց ճակատագրական խղճով և իրանց հանգիստ համակերպութեամբ աւելի հեշտութեամբ և համբերութեամբ են տանում բանտարկութիւնը: Նրանք շարունակում են իրանց քէֆը և բանտում, այնտեղ էլ վարում են այնպիսի անգործ կեանք, ինչպէս և սրճարաններում և սպասելով սպասում են դատապարտուելու կամ ազատուելու:

Մի քանի սենեակներում տեսարանը բաւական իրիւլիական էր: Ահա պառկել են 12—20 և աւելի սրիկաներ և անմեղ կալանաւորներ մի փոքրիկ տարածութեան վրայ, ծխում, խրժում են և պատմութիւններ են անում:

Օրեկան երկու անգամ բանտարկեալները բանտային վարչութիւնից ուտելիք են ստանում. առաւօտեան ստանում են $\frac{3}{4}$ քիլոգրամ հաց, յետոյ բրինձ կամ գետնախնձոր, իսկ երեկոյեան ևփած միս և նոյն քանակութեամբ հաց, որովհետեւ բանտարկեալները այստեղ առաջարգել բանտումն են գտնում, և նախնական քննութեան մէջ նրանք զեռ մեղադրեալներ և ոչ թէ դատապարտեալներ են:

Իւրաքանչիւր սենեակի վրայ հսկում է մի պահապան, որի պարտաւորութիւնն է օրեկան երկու անգամ բանտարկեալներին վարքի մասին տեղեկութիւններ հաղորդել բանտի վերատեսչին, բայց և որը իրաւունք չունի նրանց ոտնձգութիւնները իր ցանկութեամբ պատժելու:

Բանտի շինութեան մի ուրիշ մասում, որ մի մեծ նախասենեակով բաժանուած է տղամարդկանց սենեակներից, պըտնում է կանանց տեղը, այսինքն բանտի հարեմը:

Կանանց մասի վրայ հսկում է Զեքիէ խանում անունով ծեր կինը, որ մեզ խոնարհ կերպով բարի գալուստ մաղթեց, երբ միութեաբարիֆի պատուէրը լսեց:

Նա առաջնորդեց մեզ մի փոքր և աղօտ լուսաւորուած սենեակ, այնպէս որ մենք սկզբում ոչինչ չտեսանք և հետզհետէ միայն վարժուեցինք այդ տարածութեան աղօտ լոյսին:

Ինչպէս մեզ հաւատացնում էր Զեքիէ խանումը, այդ բանտում միայն այդ երեք կին բանտարկեալներն են, որոնք մեր առաջ էին գտնուած: Դրանցից առաջինը մի յոյն կին էր, որ իր սիրեկանին նպաստել էր գողութիւն անելու, երկրորդը մի գեղեցիկ թրքուհի էր, որ մեր ներս մտնելուց անմիջապէս յետոյ երեսը ծածկեց քողով. նրան էլ բանտարկել էին իր վատ վարքի համար և զրան սպանում էր սաստիկ պատիժը. երրորդ կինը մի քրդուհի էր, որի մօտ էին և նրա 4 փոքրիկ զաւակ-

ները, որոնց ստիպուած էին եղել նոյնպէս բանտարկել իրանց ժօր հետ: Այդ փոքրիկ արարածները, ինչպէս պարզ երևում էր, մութ և տաք բանտում իրանց աւելի լաւ էին զգում, քան թէ դուրսը՝ ազատ երկնակամարի տակ, որովհետեւ շարունակ խաղում էին: Երբ քրդուհին մեր, կանանց մասը մոնելը նկատեց, նա մի վայրենի սկանդալ սարքեց և գոռաց:

«Դուք ուշադրութիւն չդարձրիք իմ ունեցած ազատութեան և ինձ մտցրիք մի այսպիսի ծակ: Դուք ինձ ընկեր դարձրիք մի գողի և մի անառակ կնոջ: Այժմ էլ ինձ մօտ գեաւուր էք բերում: Անիծեալ լինիք դուք»...

Այս խօսքերը լսելուց յետոյ մենք իսկոյն և եթ յետ քաշուեցինք և իմ պտոյտը Գալաթա-Սերայում վերջացաւ...

Ստամբուլում Մեծ Զափթիէյում գտնւում է մայրաքաղաքի իսկական բանտը, որտեղ ապրում են ցմահ դատապարտուած արարածները: Դրանց վրայ աւելի խիստ հսկողութիւն է նշանակուած, նամանաւանդ այն օրից ի վեր, երբ Շեֆիկ բէյը ոստիկանութեան նախարար է նշանակուել:

Երբ ոստիկանութեան նախարար էր Սիրիայի այժմեան գեներալ նահանգապետ Նազիմ փաշան, Ստամբուլում բանտարկեալների զրութիւնը դեռ ևս անհամեմատ լաւ էր: Իբրեւ մի ազատամիտ և եւրոպական կուլտուրայի բարեկամ մարդ, նա բանտարկեալներին ըստ իրանց յանցանքի ծանրութեան բաժանում էր խմբերի և եթէ մէկի յանցանքը դատարանի կողմից դեռ ևս հաստատուած չէր, նրան որոշ արտօնութիւն և ազատութիւն էր տալիս:

Նրա օրով նոյնիսկ պատահել է, որ բանտարկեալները դատաւորների մեծ դահլիճում ուսմականի գիշերները ոստիկանական հսկողութեան ներքոյ ներկայացումներ են կազմակերպել: Ներկայացրել են ծիծաղաշարժ կտորներ մեծ մասամբ Նասրէդդին Սոջայից, որ ապրում էր մեզանից մօտ մի դար առաջ: Կանանց գերերն էլ ներկայացրել էին տղամարդիկ կանացի հագուստներով: Դերասանները իբրեւ վարձատրութիւն ստացել են ծխախոտ և շաքարեղէն: Հարկաւոր է նկատել, որ թիւրքական բանտում թատրոնը արտաքոյ կարգի մի լուսաւոր երևոյթ է: Իսկ դերասանները և հանդիսականները... Մեծ Զափթիէի բանտը վատ հուշակ է ստացել այն խորհրդաւոր գէպքերի շնորհիւ, որոնք տեղի են ունեցել այնտեղ հայկական խռովութիւնների ժամանակ: Այնտեղ շատ յարգի են բարբարոս գարեթի մարդկանց տանջելու համար ստեղծուած զանազան գործիքները:

Մի անգամ ես այնտեղ տեսայ 70 տարեկան մի ծերունի, որը դրանից երկու շաբաթ առաջ միայն 28 տարեկան է եղել:

Սուլթանը յաճախ է ցանկութիւն յայտնել բանտարկեալների վիճակը մեղմացնելու: Տարեկան երկու կամ երեք անգամ նա արդարադատութեան մինիստրից պահանջում է այն բանտարկեալներին ցուցակը, որոնք ուղղուած են և նրանց ներումին է շնորհում: Իր ծննդեան կամ զահակալութեան օրերին նա բանտերը կերակուր և փող է ուղարկում: Սուլթանի օրինակին երբեմն հետեւում են և սլաւատական կանայքը: Բայց զժրագլարար բանտարկեալները ստանում են շատ շատ կերակուրը, իսկ փողը անյայտանում է բանտի սլաշածեսաների գրպանում, եթէ դա տուաջուց արդէն չէ կակել փող բերողներին ձեռքին:

Սուլթանի կամքը միշտ լաւ է (?), բայց այդ կամքից չեն ակնածում այն օրգանները, որոնց յանձնուած է նրա ի կատար ածելը:

(Կը շարունակուի)

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆՐ ԱԶԳԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

Օ ս եր

Կովկասեան լեւոնաշղթայի միջին մասում, նրա հարաւային և հիւսիսային լանջերում, կիրճերում որ և ձորերում, վեհափառ Կազրէզլի շուրջ և սասորտում, ապրում է հնդկա-եւրոպական ընտանիքին պատկանող մի սակաւաթիւ ազգ, որ երբեմն իր իշխանութիւնը տարածել էր մինչև Դոն գետը, և այժմ կրում է նրա անունը. «դոն» օտերէն նշանակում «ջուր», «գետ»: Այդ ազգը հին հռոմայեցիներին, յոյներին և հայերին յայտնի էր ալան անունով, ինքն իրան անուանում է իրոն, իսկ վրացիները՝ օսի: Ժամանակակից լեզուագիտութիւնը դտնում է որ օտերը պատկանում են հնդկա-եւրոպական ընտանիքի իրանեան ճիւղին, և նրանց լեզուն, որ մի քանի բարբառների է բաժանուած, միջին տեղ է բռնում հայ և պարս լեզուների մէջ: Օտերը գեռ Վ՝րդ դարում ընդունել են քրիստոնէութիւն, որ սակայն խոր արմատներ չի գցել նրանց հոգու մէջ և չի ջնջել հին հեթանոսական կրօնի հետքերը: Հարաւային օտերը ենթարկուել են վրացական ազդեցութեան: Բաւական նկզութիւններ է կրել սեփական ազնուական դասակարգից զուրկ այդ ազգը վրացի իշխաններից, որոնք ձգտել են նրանց ճորտ դարձնել:

իրանց հայրենիքի հիւսիսային մասում օսերը շատ են նեղուել կարարողցիներին՝ չերքեզական սազմասէր մի ցեղից, որ տարածեց մահմեդականութիւնն օսերի մէջ: Սակայն օսերի մեծ մասը (մօտ 200 հազար) քրիստոնեայ է և այժմ ձգտում է ինքնուրոյն ազգային եկեղեցի կազմել: Այս յուլիսի 30-ին, Ալահիր գիւղում օս հոգևորականները ժողով կազմեցին, ուր քննելով օս եկեղեցու և ժողովրդի կարիքները, կայացրին որոշ վճիռներ որ ներկայացրին ուղղափառ բարձր հոգևոր վարչութեան («Кавказъ» № 204): Այդ ժողովը պահանջում է. 1) Ամբողջ հիւսիսային և հարաւային Օսեթիայի եկեղեցիները գլուխ ընտրել մի եպիսկոպոս, որի աթոռանիստը լինի Նուզալ գիւղը (Վլադիկավկազի մօտ), ինչպէս հնում. 2) վերացնել ժողովրդից պարտադիր տուրքերը հոգևորականութեան օգտին և դանձարանից նշանակել սոճիկ եկեղեցական պաշտօնեաների համար. 3) Արդօնում եղած միասիօնարական հոգևոր դպրանոցում նշանակել բարձրագոյն կրթութիւն ստացած երկու օս դասատուներ. 4) Նոյնքան օս դասատուներ նշանակել նաև Վլադիկավկազի հոգևոր դպրոցում. 5) Մի վարժունի և մի դաստիարակչունի նշանակել օսերից Վլադիկավկազի թեմական օրիորդաց դպրոցում. 6) Օսեթիայում գոյութիւն ունեցող եկեղեցական-ծխական դպրոցները՝ թէ ըստ ծրագրի և թէ անուշով վերածել օսերի ժողովրդական դպրոցների, դասաւանդումը պարտադիր դարձնելով նրանց մայրենի լեզուով. 7) Մըտցնել ընդհանուր կրթութիւն մինչև 16 տարեկան հասակը դանձարանի հաշուով. 8) Վլադիկավկազի օսերի կանանց ապաստարանը դարձնել կանանց ուսուցչական սեմինարիա և բանալ այն Ալահիրում. 9) Հոգևորականների զգեստը Օսեթիայում եւրոպական տարազի ձև ստանայ. 10) Եկեղեցու պաշտօնեաներին իրաւունք տալ հրաժարուել իրանց պաշտօնից, առանց պատժի կնիքակրուելու այդ պատճառով. 11) Լայն չափերով և կանոնաւոր հիմքերի վրայ դնել բժշկական օգնութիւնը Օսեթիայի գիւղերում:

Առաջ բերելով վերև յիշած պահանջները մենք չենք կարող համակրանքով չվերաբերուել դէպի օս ժողովրդի մէջ դարթած աղգային ինքնաճանաչութիւնը, որ այնքան մօտենում է «Մուրճի» ներկայ տարուայ մայիսեան (№ 5) հաժարում արծարծած տեսակէտներին... Եւ պէտք է աւելացնել որ օսերի ազգային վերածնութիւնը կարող է արագ քայլերով առաջ գնալ, որովհետև այժմ բաւական մեծ թուով բարձրագոյն կրթութիւն ստացած անձեր կան նրանց մէջ:

S.

Օ Բ Ե Ր Լ Է Ն Ե Ր Ը *)

Վ Է Պ

ԲըՆԷ Բազկենի

VI

Ուղեկիցները

Հետևեալ առաւօտ ժան հետիոտն ճանապարհ ընկաւ զոր-
ծարանի համար կտրուկիք ծառերը աչքի անցկացնելու, որոնք
գտնուում էին լեռնաշղթայի զաղաթին, այն լեռնաշղթայի՝ որ ընկ-
նում է Շլուխտի կիրճի ձախակողմը, Շլոսվիւռի անտառում և
սահմանափակում է հովիտը: Ճանապարհը երկար էր և նոր
եկող տեղատարափ անձրևից հողը լպրծուն էր դարձել. բացի
այդ՝ ժան շատ ժամանակ կորցրեց շրջանն անելով մի հսկայ
ժայռի, որ կտրում էր իր ճանապարհը: Կէս օրից շատ էր ան-
ցել արդէն որ հասաւ այն հիւղակի առաջ, ուր դարսուած էին
կտրուած ծառերը:

Հազիւ մի քանի խօսք միայն փոխանակեց անտառային
վարչութեան հսկողութեան տակ եղևնիների հատումի և տեղա-
փոխութեան գործը վարող գերմանացի վերակացուի հետ, և
շարունակելով վերելքը՝ հանդիպեց ատաղձարանի բանուորնե-
րին, որ արեգակը մայր չի մտած՝ շտապում էին վար իջնել ան-
տառախիտ լեռներից՝ արձակ հովիտը:

Արեգակը, դեռ ևս ճառագայթալիր, Վոմերի միւս կողմում
աներևոյթանալու վրայ էր. ժան սրտատրոփ մտածում էր սահ-
մանազիւսի մասին, որը շատ մօտ էր: Այնուամենայնիւ նա չու-
ղեց ճանապարհ հարցնել այն մարդկանց, որ հանդիպելով նրան՝
բարևում էին. որովհետև ամաչում էր ցոյց տալ իր յուզումը—
խիկ խօսքերը կարող էին մատնել—փայտահատների այն խմբա-
կին, որ աշխատում էր այդտեղ և հետաքրքրուած էր երևում
ժանի հանդիպումով:

Նրանք նոր էին հեռացել, որ ժան մտաւ անտառի այն
մասը, ուր գտնուում էին կտրուած ծառերը: Շուրջը ճգատուած

*) Տե՛ս «Մուրճ» № 8.

և կեղևաղերձ եղենինները պառկել էին զառիթափերի վրայ, և իրանց սպիտակ բռնեղով լուսափայլում էին: Նրանք զառիթափերից գլորուել էին և յետոյ յանկարձ կանգ առել, չզիտես, ինչո՞ւ համար: Այլ տեղերում խառն ի խռնոն գլորուել էին իրար վրայ ու ճանապարհը փակել: Անառուում, զառիթափի վրայ, մի աշխատող էր միայն մնացել, մութ գոյն զգեստ հագած, մի ձերուկ, որը ծունկ չորած թաշկինակի ծայրերն էր կապում, ուր լեցրել էր հաւաքած սունկերը: Երբ վերջացրեց, վեր կացաւ, կարմիր թաշկինակի ծայրերը իրար բերելու անկարող մատներով պինդ հուպ տուեց բրդէ գտակին, և խոշոր, յողմող քայլերով վար իջաւ անտառի բուրմունքը ծծելով:

— Հէյ, ձայն տուեց ժանձերուկին:

Մարդը եղնուտ երկու ահագին բռնեղի մէջտեղից գլուխը շուռ տուեց:

— Ո՞րն է ամենակարճ ճանապարհը Շուխաի կիրճը գնալու համար:

— Ի՞նչք ինձ նման մինչև փոքրիկ ջրվէժը և բարձրացէ՛ք: Այլ հարց է, եթէ երկու հարիւր մետր աւելի բարձրանաք և իջնէք այնուհետև ուղղակի Փրանսիական հողի վրայ, այդ գէպըում դուք մի քանի արահետներ կը գտնէք որ ձեզ կը տանեն կիրճը: Բարի գիշեր:

— Բարի գիշեր:

Խոր լուծեան մէջ բառերը հնչեցին և խկոյն մաքեցին: Բայց մի խօսք շարունակեց ձայն տալ ժան Օրերլէի սրտում. «Ի՞նչք Փրանսիական հողի վրայ»: Նա շտապում էր տեսնել այն խորհրդաւոր Փրանսիան, որ իր երազների, իր կեանքի մէջ մի խոշոր տեղ էր բռնում, այն՝ որ խղում էր ընտանեկան միութիւնը, որովհետև հիւները, գոնէ նրանցից մի քանիսը, հաւատարիմ էին մնում նրա հմայքին, այն Փրանսիան, որի հոմար աջնքան ալպացիները մեռել էին, և որին աջնքան ուրիշներ սպասում էին և սիրում՝ այն լուռ սիրով, որ մրմուռացնում է սրտերը: Այնքան մօտ էր Փրանսիային՝ որից նախանձով հեռու էին պահում իրան, այն Փրանսիային, որի համար Ուլրիխ մօրեղբայրը, Պ. Բաստիանը, իր մայրը, ֆիլիսոփապալը և հազարաւոր, հազարաւոր այլ մարդիկ աղօթում էին ամեն երեկոյ: Մի քանի րոպէից հասաւ սարի գլխին, և սկսեց իջնել միւս զառիթափով: Բայց ծառերը թանձր վարադոյր էին կազմում շուրջը: Սկսեց վաղ տալ, որպէսզի մի ճանապարհ, մի արձակ տեղ գտնէ և տանէ Փրանսիան: Նա յօժարակամ, ուրախութեամբ զառիթափով սահում, համարեա գլորուել էր, որքան կարելի է շուտով մի ազատ ելք գտնելու համար: Լեռան այնկող-

մոռւմ արեգակը դիպչում էր հողին. այստեղ, այնտեղ, օդը դեռ
ևս տօթազին էր, բայց եղևինները միշտ պատուար էին
կազմում:

— Կանգնիր, գոչեց մի մարդ՝ յանկարծ մի ծառի ետևից
դուրս գալով:

Ժան թափից տարուած՝ անկարող եղաւ անմիջապէս զըս-
պելու իր վազքը: Բայց վերջապէս կանդ առաւ, եկաւ դէպի
մաքսային պաշտօնեան, որ հարցապնդել էր: Այս վերջինը հե-
ծեալագործի մի տաճնապետ, էր երիտասարդ և չաղ, ճպտած աչքե-
րով, փոքր ինչ վայրենի, փոթոտած դէմքի շուրջը դեղին մա-
զի երկու փունջով. վոժեցու մի իսկական տիպ. նայեց Ժա-
նին և ասաց.

— Ա՛յ, չար սատանայ, ես էլ կարծեցի որ մի մաքսախոյսի
հետ գործ ունեմ. ի՞նչու համար էիք վազում:

— Մի յարմար դիրք էի որոնում Ֆրանսիական մի համայ-
նապատկեր, պէյզաժ տեսնելու համար...

— Միթէ Ֆրանսիան ձեզ հետաքրքրում է: Ո՞ր կող-
մից էք, Գերմանիայից

— Այո:

— Յամենայն դէպս, ո՛չ պրուսիացի:

— Ո՛չ, ալպանցի եմ:

Մարդը հազիւ թեթևօրէն ժպտաց, և ասաց.

— Այդ աւելի լաւ:

Բայց Ժան, առանց խօսակցութիւնը շարունակելու, որ-
պէս թէ մոռացած լինէր իր խնդիրքը, սկսեց դիտել Ֆրանսի-
ական այդ խեղճ մաքսաւորը, նրա գիմադուլութիւնը, համադրեա-
տը, կարծես կամենալով այդ բոլորը անջինջ կերպով դրոշմել
իր մտքի խորքում: Մաքսաւորը՝ Ժանի հետաքրքրութեամբ
զուարճացած էր երևում. ծիծաղելով ասաց.

— Եթէ տեսարան էք ուզում, հետևեցէք ինձ: Ես ունիմ
մի այնպիսի տեսարան, որ ընծայել է ինձ կառավարութիւնը՝
ռոճկիս թերին լրացնելու համար:

Երկուսը միասին սկսեցին ծիծաղել, արագօրէն միմեանց
աչքի մէջ նայելով. ծիծաղեցին, աւելի մի տեսակ համակրու-
թիւնից զրդուած, որ զգում էին գէպի միմեանց, քան այն խօսքե-
րից, որ բիշ առաջ տակ էր մաքսային պաշտօնեան:

— Կորցնելու ժամանակ չունենք, բացադանչեց տաճնա-
պետը. արեգակը մեռնելու մօտ է:

Եղևինների կամարի տակով վար իջան, շուտ եկան լերի
ժայռերի մի ապառաժուտից, որի վրայ միմեանցից մի քանի
քայլ հեռու տնկուած էին երկու սիւներ, որոնք ցոյց էին տալիս

Թէ ռւր վերջանում էր Գերմանիան և ռոտեղից էր սկսում Ֆրանսիան, և այդ ապառաժուտի կատարին, մի հարթութեան վրայ մի խղճուկ խրճիթ դտան, որ ծառայում էր մաքսաւորի համար իբրև բնակարան-դիտարան: Այդտեղից պարզւում էր մի ընդարձակ, հրաշալի տեսարան, որը հետզհետէ դէպի ցած էր իջնում, որքան կտրում էր մարդկային տեսողութիւնը: Վերջապայի այդ պահին՝ մի խարտեաշ լոյս ողողում էր վէտ ի վէտ հողերը, անտառները, գիւղերը, գետակները Բլաուրնլմէ-րի և Լոնժլմէրի լճերը, մեղմացնում էր բելիէֆները և շատ անմշակ, մացառածածկ հողերի՝ ցորենի դոյն էր տալիս: Ժան կանգնած՝ մինչև արբշտութիւն վայելում էր այդ պատկերը: Նա լուռ էր: Յուզումը փոթորկում էր նրա սիրտը: Զգում էր որ ամբողջ հոգին խայտում է:

—Ո՛րքան գեղեցիկ է, Ֆրանսիան, մըմնջեց:

Մաքսային պաշտօնեան՝ որ դիտում էր նրան աչքի ծայրով, շողոքորթուած զգաց իրան իր բնակավայրով, և պատաս-խանեց.

—Յոգնեցուցիչ է, բայց ամառը այս տեղերում զբօսնելը մեծ հաճոյք է պատճառում նրանց, որ ազատ ժամանակ ունեն: Մարդիկ դալիս են այստեղ մինչև անդամ ժէրարմէրից, Սէն-Դիէից, Բլմիրմոնից և աւելի հեռուներից: Շատ մարդիկ գա-լիս են և այն կողմից...

Ուսի վրայից, ցուցամատով դէպի ետ, գերմանական մասը ցոյց տուեց:

Ժան խնդրեց պաշտօնեայից, որ իրան բացատրէ, թէ ռը կող-մըն էին գտնւում քիչ առաջ անուանած երեք քաղաքները: Բայց ուշադրութիւնը ցրուած էր. հետևում էր միայն իր մտածումների թելին: Ինչ որ նրան հրապուրում էր, այդ՝ օդի թափանցկու-թիւնն էր, անսահմանութեան, ապրելու քաղցրութեան և ար-գանդութեան գաղափարը, որ ներկայանում էր իր մտքին՝ Ֆրանսիական այս վէտվէտող հողերի առաջ, և կամ աւելի շուտ, նրան հրապուրում էր այն բոլորը՝ ինչ գիտէր Ֆրանսիայի մա-սին, ինչ կարգացել էր, ինչ լսել էր իր մօրից, պապից, Ուլրիկ մօրեղբօրից, այն բոլորը՝ ինչ գուշակում էր, վերջապէս այն բազմաթիւ յիշողութիւնները, որ թաղուած էին իր հոգու մէջ և որ այժմ յանկարծ վերարողբոջում էին, ինչպէս միլիօնաւոր ցորենահատիկները՝ արեղակի փայփայանքի տակ:

Մաքսաւորը նստել էր իր խրճիթի երկարութեամբ դրուած նստարանի վրայ, հանել էր զրպանից մի կարճ ծխամորջ և ծխում էր:

Երբ տեսաւ որ այցելուն դարձնում է երեսը դէպի ինքը,

աչքերը արտասուքով լցուած, և նստում է նստարանի վրայ, նրա յուզմունքից ինչ որ բան գուշակեց. չէր ըմբոնում տեսարանի գեղեցկութիւնը, շքեղութիւնը, բայց մորմորի այդ արցունքներից անմիջապէս զգածուեց: Դա սրտի պահանջ էր և երկու մարդիկը յուզմունքի հոյակապ հաւասարութեամբ միացան իրար: Բայց որովհետեւ չէր համարձակուում հարցութիւնը անել, մաքրային պաշտօնեան վիզն ուղղելով, որտեղից խօսոյն դուրս ցցուեցին միանունքները, սկսեց լռութեամբ ուսումնասիրել հորիզոնը, որ տարածւում էր իր առաջ:

— Ֆրանսիայի հր կողմերից էք, հարցրեց ժան:

— Այստեղից հինգ մղոն հեռու, լեռներում:

— Ձեր զինուորական ծառայութիւնը կատարե՞լ էք:

Հեծելազօրքի տասնապետը ծխածորջը հեռացրեց շրթունքներից, ձեռքը շտապով տարաւ դէպի կուրծքը, ուր կախուած էր մի մեղայէ:

— Վեց տարի, պատասխանեց: Երկու անգամ միայն արձակուրդ եմ ունեցել: Յիսնապետութիւն և այս մեղայէն ստացաք Տոնկինի կուում:

Եւ շարունակեց:

— Ինչպէս ասում են, ձեզանում զինուորական ծառայութիւնը աւելի խիստ է:

— Այո:

— Ես միշտ լսել եմ որ Գերմանիան մեծ երկիր է, բայց սպան և զինուորը ազգականների նման չեն, ինչպէս Ֆրանսիայում:

Արեգակը խոնարհւում էր. խարտիշագեղ, անսահման տեսարանը տեղ տեղ շէկ, իսկ ստուերոտ տեղերում մանիշակագոյն էր դառնում: Եւ այդ ծիրանին հետզհետէ ընդարձակւում էր, ինչպէս ամպերը որ վաղում են: Օ՛հ, ստուերոտ զառիվայրեր, մթագնած դաշտեր, որքան ցանկանում էր ժան Օբերլէ, որ դուք նորից շողշողայիք լոյսի մէջ: Հարցրեց.

— Երբեմն հանդիպե՞մ էք մարդկանց, որ դասալիք են լինում, թողնում, փախչում են բանակից:

— Չինուորական ծառայութեան չմտած՝ սահմանից անցնողները չեն ճանաչւում, բնականաբար: Ալգասի և Լոուէնի բանակներում ծառայողները միայն փախչում են, և՛ համազղեւտով... Այո, շատերին տեսայ, դժբաղդ երիտասարդներ, որոնք կամ շատ էին պատժուել և կամ իրանց բնաւորութեամբ չէին հաշուում գերմանականի հետ... Երբեմն մեր կողմից էլ դէպի Գերմանիա փախչողներ լինում են, պիտի ասէք, ճիշտ է. բայց այդ հազուադէպ է...

Գլուխը ցնցելով, և բնելու պատրաստուող անտանների վրայ մի խանդավառագին հայեացք դրելով.

— Այս կողմից (Ֆրանսիայից) եղողը, ինչպէս տեսնում էք, որքան որ էլ նրա մասին վատ ասէ, չի կարող ուրիշ տեղերից համ անել: Դուք մեր երկրի հետ ծանօթ չէք, պարոն, և սակայն, դատելով ձեր երևոյթից՝ մարդ կարող է երգում ուտել որ մեր կողմից էք:

Ժան կարմրեց: Կոկորդը սեղմում էր: Անկարող եղաւ պատասխանելու:

Մարդը վախենալով՝ որ ասել է արդէն աւելի քան հարկաւոր էր, յարեց.

— Ներեցէք ինձ, պարոն, մարդ չգիտէ յաճախ թէ ում հետ գործ ունի, և այսպիսի դէպքերում աւելի լաւ է լռել այդ հարցերի մասին: Պէտք է որ վերսկսեմ իմ պտոյտը և վաւ իջնեմ...

Զինուորական բարեւ տալով պատրաստուում էր հեռանալու, երբ Ժան բռնեց նրա ձեռքը և սեղմեց:

— Ձէք սխալուում, բարեկամս, տոաց:

Յետոյ, գրպանում մի բան պտրելով և կամենալով՝ որ այդ մարդը իրան յիշէ մի քիչ աւելի երկար, քան մի որեէ անցորդի, — սիգարի տուփը մեկնեց նրան:

— Խնդրեմ, վերցրէք մի սիգար:

Եւ իսկոյն մի երեխայական ուրախութեամբ՝ տուփը թափ տուեց մաքսային պաշտօնեայի ձեռքի մէջ, որ երկարում էր դէպի իրան:

— Բոլորը վերցրէք: Ինձ մեծ հաճոյք կը պատճառէք: Մի՛ մերժէք:

Իրան թւում էր թէ մի բան տալիս էր Ֆրանսիային:

Մարդը մի բոպէ վարանման մէջ մնաց, բայց փակեց ափը՝ ասելով.

— Կիրակի կը ծխեմ: Շնորհակալ եմ, պարոն: Յետեւ-թիւն:

Թափով բարեկց և համարեա անմիջապէս անյայտացաւ եղևինների մէջ, որ ծածկում էին լեռը: Ժան ունկն դրեց նրա քայլերի ազմուկին որ հետզհետէ նուաղում էր: Նա ունկն էր դընում մանաւանդ այդ անծանօթի հետեւալ խօսքերին, որ թնդում էին իր հոգու մէջ և լցնում նրան մի անբացատրելի յուզմունքով. «Դուք մեր կողմից էք...». «Այո՛, ես ձեր կողմից եմ, զգում եմ, տեսնում եմ, և այդ ինձ ասում են իմ կեանքի շատ բաները...»:

Մութը ընկնում էր:

Ժան տեսնում էր, որ որշուրջը ամեն ինչ մոայլում էր:

Նա խորհում էր իր ընտանիքի այն անդամների մասին, որ կրողուել էին այդտեղ, մոլթի մէջ խորասուզուած այդ դիւղերի շրջակայքում, որպէսզի Ալզասը միացած մնայ այն ընդարձակ ընդառնութիւն, որ տարածուած էր իր առաջ: «Հայրենիք, քաղցր հայրենիք, իմ հայրենիք: Բոլոր նրանք, որ խօսում են քո մասին, խօսում են խանդաղատանքով: Եւ նոյնիսկ ես, ինչո՞ւ եմ եկել: Ինչո՞ւ խոսվուել եմ այնպէս, որպէս թէ դու իմ առաջ կանգնած լինէիր մարմնացած, կենդանի:»

Անցաւ մի քանի րոպէ էլ և երկնքի ծոցում, այնտեղ, ուր սկսւում էր կապոյտը, առաջին աստղը պլպլաց: Նա մենակ էր, ազօտ և տիրապետող ինչպէս գաղափարը:

Ժան վեր կացաւ, որովհետեւ մոլթը հետզհետէ խտանում էր և ձեռք առաւ այն արահետը, որ գնում էր դէպի սարը: Բայց աչքերը չէր կարողանում անջատել աստղից: Եւ քայլելիս՝ մեն մենակ, լուծեան մէջ, մտորում էր, բաժանուած Վոթերի կատարում. ասում էր աստղին, և ասուերներին, որ ներքեւում էին մնացել:

«Ես ձեզանից եմ: Երջանիկ եմ, որ ձեզ տեսայ: Սարսափում եմ ձեզ սիրելով այնպէս, ինչպէս ես եմ սիրում:»

Շուտով հասաւ սահմանազրուխը, և այն հիանալի ուղիով, որ կտրում է Շլուխտի կիրճը, նորից իջաւ դերձանալան հողի վրայ:

Հետեւալ օրը, Աւագ Երեքշաբթի, վերադարձաւ Ալշէյմ և յանձնեց հօրը պատրաստած տեղեկագիրը: Ամբողջ տնեցիները նրա գալուստն ընդունեցին այնպիսի ակնյայտ հաճոյքով, որ յուզեց երիտասարդին: Երեկոյեան, պապի և գործարանատիրոջ միջև կատարուող «խորհուրդից» յետոյ, որին մասնակից եղաւ և՛ Ժան, որովհետեւ նոր էր վերադարձել անտառներին այցելութիւնից, Լիւսիէն կանչեց եղբորը միժ, դեղին սրահում, կրակի մօտ, որի դիմաց տաքանում էր: Տիկին Օրերէ կարդում էր պատուհանի առաջ: Ամուսինը դուրս էր եկել, որովհետեւ կառապանը յայտնել էր նրան, որ ձիերից մէկը կաղում է:

—Հը՛, ասա տեսեմ, հարցրեց Լիւսիէն. տեսած բաներիցդ ամենագեղեցիկը ի՞նչ էր:

—Դո՛ւ:

—Ո՛չ, հանաք մի անի. ասա. քո ճանապարհորդութեան ընթացքում:

—Ֆրանսիան:

—Ո՞րտեղ:

—Շլուխտում: Չեմ կարող երեակայել այն յուզումը, որ

զգացել եմ... Դա մի խոովք էր, յայտնութեան նման մի բան... Ինձ հասկանալու երևոյթը չունեա:

Լիւսիէն անտարբեր շեշտով պատասխանեց.

— Ինչպէս չէ: Չափազանց ուրախ եմ, որ մեծ հաճոյք ես զգացել Ֆրանսիան տեսնելով: Տարուայ այս եղանակում զբօսանքը, արդարեւ, շատ ակորժելի պէտք է լինի: Գարնան առաջին ծաղիկները, անտառի շճնչը, չէ: Ա՛հ, սիրելիս, այդ բոլորի մէջ պայմանադրական անքան բան կայ:

Ժան հարցի վրայ շատ չծանրացաւ: Լիւսիէնն է որ՝ կուսցած դէպի եղբայրը, շարունակեց խօսել, գաղտնիք հաղորդելու ձայնով, որը նա երանգաւորում էր և որքան կարելի է երաժշտական դարձնում:

— Մենք այստեղ գեղեցիկ այցելութիւններ ընդունեցինք... Զհ, այնպիսի այցելութիւններ սակայն, որ մալ մնաց կռիւ առաջացնէին ընտանիքի մէջ: Երեակայի՛ր, երկու գերմանացի սպայ, անցեալ չորեքշաբթի օր, աւտոմոբիլով եկան, կանգ առան մեծ դարձասի առաջ և թոյլտուութիւն խնդրեցին տեսնել գործարանը: Բարեբաղդաբար քաղաքացու շորերով էին: Այլ չէյմի՛ բնակիչները այնպէս կարծեցին որ դրանք սովորական, պարզ մարդիկ են: Որքան շիկ էին, բարեկամս, մէկը ծերուկ էր, մի հրամանատար, միւսը երիտասարդ, որ շատ վայելուչ կերպարանք ունէր և բարձր ընտանիքի յատուկ հպարտ սովորութիւններ: Տեսնէ՛ր, թէ ինչպէս բարեկեց հայրիկին. ես պարկուճն էի, ինձ էլ բարեկեցին և այցելեցին ամբողջ գործարանը մեր հօր առաջնորդութեամբ և ցուցումներով: Այդ միջոցում յիմար Ղիկտորը չէր նախազգուշացրել պապին, որը մեզ կոշտ կերպով ընդունեց, երբ ներս մտանք: Թւում է թէ ես պէտք է փախուստ տայի նրանցից... Եւ որովհետեւ այդ պարոնները ոտք չկոխեցին մեզ մօտ, «իմ տանը», ինչպէս պապն անուանում է, զայրոյթը երկար չտևեց: Բայց այնուամենայնիւ իր հետեանքն ունեցաւ...

Լիւսիէն մի թեթեւ, խեղդուկ ծիծաղ արձակեց:

— Միբեղիս, տիկին Բաստիանը իմ վարմունքը չհաւանեց:

— Ուրեմն դու ներկայ էիր, երբ այդ պարոնները այցելում էին գործարանը...

— Այո:

— Մինչև լի՞րջը:

— Հայրս պահեց ինձ... Յամենայն դէպս ես չեմ հասկանում թէ ի՞նչ գործն է այդ՝ գիւղապետի կնոջ... Անցեալ կիրակի, եկեղեցու դրան առաջ նա ինձ բարեկեց մի այնպիսի սառ-

նութեամբ... ի՞նչ, միթե դու մեծ նշանակութիւն տալիս ես Բաստեանների բարեին:

—Այո, ինչպէս բոլոր ազնիւ մարդկանց բարեին:

—Ի հարկէ ազնիւ մարդիկ են, բայց ի՞նչ են հասկանում կեանքի պահանջներից: Նրանց կողմից եկած պարտաւր ինձ նոյնքան անտարբեր է թողնում, որքան մի ընդէի համար յարութիւն առած եգիպտական մի մոմիայի պարսաւը: Ես նրան կը պատասխանեմ. «դուք այդ տեսակ բաներից ոչինչ չէք հասկանում: Դուք ձեր գլխանոցի կապերը միայն կապեցէք».

շատ զարմանալի է, որ դու էլ ինձ նման չես խորհում, եղբայր:

Ժան փայփայեց քրոջ ձեռքը և պատասխանեց.

—Մոմիաներն անդամ կարող էին դատել մեր ժամանակի մի քանի բաները, այսինքն այն բաները, որոնք պատկանում են ամեն ժամանակներին:

—Օհ, որքան լուրջ է պարհնը: Դէ, ասան տեսնենք, Ժան, ի՞նչ է իմ յանցանքը: Այն որ մօմն էի գալիս, որ աչքերս ուրիշ կողմ չդարձրի, որ պատասխանեցի նրանց բարեին և հնազանդուցի հօրս կամքին, երբ նա ինձ ասաց որ ընկերանամ իրան, և յետոյ մնամ իրա մօմ:

—Անկասկած, ո՛չ:

—Ուրեմն ի՞նչ էր յանցանքս:

—Ոչինչ: Ես պարել եմ դերմանացի շատ ջահել աղջիկների հետ, միթե դու չես կարող պատասխանել մի սպայի բարեին:

—Ուրեմն լսւ եմ արել:

—Էապէս, այո: Միայն թէ մեր շուրջը այնպիսի արդարացի վշտեր կան, այնպիսի ազնիւ վշտեր: Պէտք է իմանալ որ այդ վշտերը մի բառով կամ մի շարժումով կարող ես վերանորոգուել:

—Ես դրան ո՛չ մի նշանակութիւն չեմ տալ: Այն դէպքում, երբ իմ արածը վատ չէ, ոչ ոք, ո՛չ մի ժամանակ չի կարող ինձ խանգարել. լսում ես:

—Ահա այդտեղ է մեր տարբերութիւնը, Լիւսիէնս: Մենք գաղափարով այնքան չենք բաժանուած, որքան զգացումներով... Դո՛ւ գաստիարակութիւնը արգելք է հանդիսանում զգալու մի ամբողջ շարք զգացումների...

Համբուրեց, քրոջը և խօսակցութիւնը պատուեց ուրիշ հարցերի շուրջը:

(Կը շարունակուի)

ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ

Արևիկն ամբողջական խաւարումը

Այս օգոստոս 17/30-ին արեւ ամբողջական խաւարում պիտի ունենայ: Այս յայտնութիւնը, գիտութեան շնորհիւ, այլ ևս զարհուրեցնող բնաւորութիւն չունի բնաւ քաղաքակրթուած ժողովուրդներու համար: Վհուկներու, կախարդներու, չար աստղերու մանկական բացատրութիւնները տեղի տուած են գիտական ճշմարտութիւններու առջև: Ու այսօր ամբողջական խաւարում մը ապագայ աղէտի մը կամ պատուհասի մը նշանն ըլլալէ դադրած, գիտական նորանոր ու շահեկան խուզարկութիւններու առիթ մըն է հիանալի, գրաւիչ: Ահա ի՞նչու բոլոր քաղաքակրթուած երկիրները մեծամեծ պատրաստութիւններ կը տեսնեն օգտուելու համար աստղաբաշխութեան մեզ ընծայած ամենագեղեցիկ, ամեն պարագայի մէջ ամենագրաւիչ երևոյթներու մէկէն: Աստղաբաշխական ընկերութիւնները, զրեթէ բոլոր գիտաբանները մեծ ծախքերով գիտական միասխաններ կը պատրաստեն, որոնք, պարագային համեմատ, շատ երկար ճամբորդութիւններ ընելով, պիտի ջանան գաղտնիք մը ևս խել մեր լուսաշող աստղէն, անոր ընդերքներուն մէջ մխելով իրանց հսկայ և կատարելագործուած գործիքներու, հեռագիտակներու անզաղտնապահ, սուր ու թափանցիկ նայուածքները: Յուսանք որ ջինջ ու պայծառ երկինք մը, ինչպէս և առատ ու գնահատելի արդիւնքներ՝ լիովին կը պսակեն կատարուած մեծ ջանքերը:

Ի՞նչ կարեւորութիւն կրնայ ունենալ սակայն արևին ամբողջական խաւարումը գիտութեան համար:

Այս հարցումին պատանխանելէ առաջ տեսնենք նախ, թէ ի՞նչ է անոր բնական պատճառը:

Ամեն ժարգ գիտէ թէ լուսինը երկրի շուրջը կը դառնայ, և թէ երկիրն ալ, իր կարգին, իր լուսինով մէկտեղ՝ արեւին բոլորափըը, թէև առերևոյթ կերպով արեւն է որ կը դառնայ

մեր երկրին շուրջը, արեւելքէն, արեւմուտք: Արեւ և լուսին այսպէս ուրեմն երկրին ընդհանրութեամբ շրջան կընեն, մէկը մօտէն, իսկ միւսը շատ հեռուէն: Իրենց այս թաւալումին մէջ կընայ պատահիլ որ արեւ, լուսին և երկիր մէկ գծի վրայ գան, ու լուսինը գտնուի արեւին և երկրին մէջտեղը: Այն ատեն արեւին ճառագայթները պիտի չկրնան հասնիլ երկրին մէկ մասին վրայ, ուր արեգակնային խաւարում տեղի պիտի ունենայ: Երբեմն լուսինը արեւին միայն մէկ մասը կը ծածկէ, երբեմն ալ ամբողջութիւնը. առաջին պարագային խաւարումը մասնակի է, երկրորդին՝ ամբողջական:

Հասկանալի է որ արեւին խաւարումները նոր լուսիններու ատեն միայն կրնան պատահիլ: Եւ եթէ արեւ և լուսին միեւնոյն շրջանակին վրայ դառնային, ամեն նոր լուսինին արեգակնային խաւարում պիտի պատահէր, ինչ որ տեղի չունի, քանի որ արեւն ու լուսինը տարբեր շրջանակներ կը գծեն մեր երկրին շուրջը:

Իսկ եթէ երկիրը գտնուի արեւին ու լուսինին մէջտեղը, ինչ որ կը պատահի լուսնի լրումներուն, այն ատեն ալ լուսինն է որ կընայ խաւարիլ, քանի որ երկիրը կընդմիջէ արեւին ճառագայթները, որոնք չեն կրնար լուսաւորել լուսինը, և սա կը խաւարի մեզ համար: Քիչ մը վերջ յիշուած պատճառով է որ ամեն լուսնի լրումին լուսնի խաւարում չի պատահիր:

Այսպէս՝ ըսել է թէ արեւին և լուսնին խաւարումները ամենաբնական ու ամենապարզ երևոյթներ են, ու ընտելացած լուսնի չունին գուշակողական, վհուկական են. երևոյթներու հետ:

Ասով հանդերձ մերան երկար դարեր անցած են մինչև որ այս ամենապարզ ճշմարտութեան գիտութիւնը ձեռք բերուած է: Եւ չէ՞ մի որ տակաւին այսօր վայրենի և կիսավայրենի ցեղերը տարօրինակ ըմբռնումներ ունին անոնց մասին, ու անոնցմէ կը սոսկան, ինչպէս կենդանիները, որոնց համար ի հարկէ արեգակնային ամբողջական խաւարումները բոլորովին տարօրինակ ու անբացատրելի երևոյթներ են, չարագուշակ ու սարսափեցնող:

Արեւին և լուսնին խաւարումները, դարձեալ ընական օրէնքով, հաւասարաչափ չեն կրնար ըլլալ, 18 տարուան և 11 օրուան ժամանակամիջոցի մը մէջ, որ ատեն գրեթէ 223 նոր լուսնի տեղի ունի, ընդհանուր կերպով 70 խաւարում կը պատահի, որուն 29-ը լուսնի, իսկ 41-ը արեւի: Մէկ տարուան մէջ

միջին հաշուով 4 խաւարում տեղի կունենայ. այդ թիւը 7-էն աւելի և 2-էն ալ պակաս չկրնար ըլլալ:

Վերի թիւերուն համեմատ արեւի խաւարումները լուսնի խաւարումներէն շատ աւելի յաճախակի են, միայն թէ մինչդեռ լուսնի խաւարում մը երկրիս կիսագունդներէն մէկուն ամէն կէտերէն տեսանելի է, արեւինը միայն որոշեալ տեղերէ կրնայ տեսնուիլ, այնպէս որ կէտի մը վրայ պատահած արեգակնային խաւարումը կրնայ ուրիշ կէտի մը համար անտեսանելի մնալ: Ահա ի՞նչու միևնոյն տեղին վրայ գրեթէ երեք անգամ աւելի լուսնի խաւարում կը պատահի:

Արեգակնային ամբողջական խաւարումները ալ աւելի հազուադէպ են: Միևնոյն տեղին վրայ երկու դարը մի անգամ տեղի կունենան ընդհանրապէս. եթէ այս տարի Թիֆլիզէն արեգակնային ամբողջական խաւարում մը դիտելը կարելի ըլլար, երկու հարիւր տարի պէտք պիտի ըլլար սպասել, նորէն Թիֆլիզէն ուրիշ ամբողջական խաւարում մը դիտել, կարենալու համար: Այս ըսել է թէ հաստատուն դիտարանները շատ քիչ անգամ կրնան օգտուիլ այդ երեքթէն. այս պատճառով է որ գիտունները ստիպուած են մեծ ծախքերով տեղափոխուիլ և տեղափոխել շատ մը փափուկ գործիքներ, երբեմն շատ հեռուները:

Արեգակնային ամբողջական խաւարումը, որ խաւարումներու ամենէն շահեկանն է, միևնոյն կէտին վրայ առ առաւելն 8 րոպէ միայն կրնայ տեսլ, այն ալ հասարակածին վրայ: Ուրքան հեռանաք հասարակածէն գէպի բնեւեբը, այնքան տեղողութիւնը կը կարճնայ: Պէտք է ուրեմն աճապարել գիտնալ, չորս հինգ րոպէները շուտով կ'անցնին, րոպէներ սրտնք անքան թանկագին են: Եւ եթէ ամպ մը ծածկէ երկինքը...

Գիշեր ատեն ճրագի առջև գունդ մը բռնեցէք. կլոր ստուեր մը պիտի ձգէ տեղ մը. այդ տեղին համար խաւարում պատահած է: Կանոնաւոր շարժումով մը շրջանակաձև տեղափոխեցէք գունդը ճրագին առջև, ու անոր ձգած ստուերը իր կարգին պիտի տեղափոխուի շերտի մը ձևով: Միևնոյնը տեղի կ'ունենայ արեւին ամբողջական խաւարումներու համար: Լուսինն ու արեւը (այսինքն երկիրը) կը տեղափոխուին, հետևաբար ստուերն ալ կը տեղափոխուի, ժապաւէն մը ձևացնելով, որ իր ամենալայն վիճակին մէջ 310 կիլոմետր լայնութիւն կրնայ ունենալ: Այս տարուայ Օգոստոս 30-ինը՝ 200 կիլոմէտր լայնութիւն միայն պիտի ունենայ, ինչ որ բազմաթիւ երկրին մեծութեանը շատ ոչինչ բան է:

Ամբողջական խաւարումի շերտի մը երկու կողմերէն գու-

գահեռական կերպով կը տարածուին մասնակի խաւարումներու զանազան շերտերը, որոնց վրայ գտնուողները արեւ աւելի կամ նուազ չափով խաւարած կը ածնեն:

Յառաջիկայ ամբողջական խաւարումին շերտը պիտի սկսի կանազայէն, ուր խաւարումը արեւածագին տեղի պիտի ունենայ շեղ կերպով, պիտի կտրէ անցնի Ատլանտեան ովկիանոսը, պիտի անցնի Սպանիոյ հիւսիսային կողմէն, Բալէարեան կղզիներէն, Տունուզէն, Եգիպտոսէն, ու պիտի վերջանայ Արարիոյ մէջ, ուր խաւարումը արեւմուտին պիտի պատահի: Երբէք ամբողջական խաւարումի շերտը կիսագունդի մը ամբողջ շրջանը չկրնար ընել: Հետեւեալը գիտունները այդ նեղ շերտին վրայ ստիպուած են դիւր ընել:

Վերի տողերը բաւականաչափ ցոյց կուտան թէ՛ սրբան կարճատև են արեւակնային ամբողջական խաւարումները, և սրբան անձուկ պայմաններու մէջ տեղի կ'ունենան. մէկ կողմ թողունք ամպի մը քմահաճոյքը:

Արդ ի՞նչու համար այդքան վաղանցուկ և կարելի է ըսել դժուարին պայմաններու մէջ ներկայացող երևոյթի գննութեանը համար այնքան մեծամեծ աշխատութիւններ ու ծախսեր կ'ըլլան. ի՞նչ կարևորութիւն կրնայ ունենալ արեւին ամբողջական խաւարումը:

Մի քանի բառով ըսեմ թէ մեր երկրին, հետեւեալը և մեր կեանքի թելը կախուած է արեւէն, այդ հրաշառ գունդէն, որ միլիօնաւոր անգամներ մեծ է մեր երկրէն, ու 150 միլիօն կիլոմետրի չափ ալ հեռի է մեզմէն: Ան է որ մեզի կեանք կուտայ, ան է որ իր լոյսին, ջերմութեան, ձգողութեան շնորհիւ ոյժ կուտայ մեր երկրին ու անոր վրայ ապրող էակներուն, ան է, որ անձրևները, հովերը և ուրիշ օդերևոյթաբանական երևոյթները կարելի կ'ընէ, ու անոնց մէջ փոփոխութիւններ կը մտցնէ: Առանց արեւին երկիրը դիակ մը պիտի ըլլար անկենդան: Իրաւունք ունէին ուրեմն հիները, երբ կը պաշտէին արեւ իրեն կենսատու աստղ:

Արդ՝ ձգենք գիտական հետաքրքրութիւնը, ամենանեղ հասարկութիւնը կը պահանջէ, որ մօտէն ճանչնանք այդ մեր կենսատու հեռուոր ու փառաւոր աստղը:

Հասկանալի է, որ արեւին վրայ կատարուած ուղղակի գննութիւնները դժուար ըլլան այլ և այլ պատճառներով. իսկ ամբողջական խաւարում մը ծածկելով անոր ահագին փայլունութիւնը՝ կարելի կ'ընէ գննութիւնները:

Շատ հին ատեններէ ի վեր գիտուած է որ ամբողջական խաւարումի մը ատեն լուսնին շուրջը լուսաւոր պտակ մը կը

դռնուի, ուրիշ տեղ տեղ վարդագոյն ահագին բոցեր կը ժայթքեն: Զանազան պատճառներու կը վերագրուէր այն. ոմանք լուսինն բոլորաբը կազմուած ըլլալ կը կարծէին զայն, ուրիշներ արեւին շուրջը, ուրիշներ ալ օդերևութաբանական պարզ երևոյթ մը կը կարծէին զայն, առանց իրական գոյութեան:

Մինչև 1860 թ. այս տարրեր կարծիքները քով քովի ապրեցան. պէտք է ըսել թէ խնդրին լուծումը ինքնին ալ այնքան դիւրին չէր. արդարեւ ամբողջական խաւարումները հազիւ մէկ քանի բոյլէ կը տեսնէ, ու այդ կարճ ժամանակամիջոցին մէջ գննողներու աճապարանքով գծած նկարները իրարմէ բոլորովին տարբեր էին: Միւս կողմանէ պատկն ու բոցերն ալ շարունակ իրենց ձևը կը փոխեն:

1860-ի խաւարումի միջոցին լուսանկարը իր փառաւոր դերը կատարել կը սկսի նաեւ աստղաբաշխական գննութիւններուն մէջ: Խաւարումի շրջանը վերջացած էր. իսկոյն կը տեսնուի, որ բոցերն իրական գոյութիւն ունին ու կը վերաբերին արեւին: Նոյնը նաեւ պատկին համար: Այնպէս որ արեւի մասին մեր ունեցած գաղափարը իսկոյն կը փոխուի կամ կ'ամբողջանայ: Արեւը այլեւ չէր վերջանար լուսագունդովը, այլ ասոր շուրջը կար մի գազային մթնոլորտ, որ արեւի սաստիկ լոյսին պատճառով անտեսանելի կը մնար ու կը տեսնուէր միայն այն ատեն, երբ արեւը կամ լուսագունդը ծածկուէր:

Լուսանկաշափին գիւտը, ու անոր կիրարկումը աստղաբաշխութեան մէջ, հաստատեցին լուսանկարին ըսածները, ու միևնոյն ատեն որոշ գաղափար մը տուին մեզի արեւին քիմիական կազմութեանը վրայ: Այսպէս՝ գննութիւնները ցոյց տուին որ արեւն ալ կազմուած է մեզ ծանօթ մետաղներէն և մետաղակերպներէն, այսինքն արեւին և մեր երկրին խմորը միևնոյնն է: Ի՞նչ բեղմնաւոր և ի՞նչ հիանալի հաւաստում, դիւտ:

Տրուած ըլլալով արեւին ջերմութեան բարձր չափը, բոլոր նիւթերը, իհարկէ գազային վիճակին մէջ միայն կրնան գտնուիլ այնտեղ: Կեղբոնական մասին մէջ, ուր ջերմութիւնը ամենաբարձր աստիճանին կը հասնի, գազերը ահագին կերպով ճնշուած են ու սնկայլ. դէպի եղբրքները գալով գազերը ճառագայթումի շնորհիւ կը պաղին մի քիչ ու լուռաւոր կը դառնան, կազմելով լուսագունդը: Կեղբոնէն աւելի հեռանալով գազերը հտոգնատէ աւելի կը նօսրանան, կը գոռին, ու կը կազմեն արեգակնային վարդագոյն մթնոլորտը, որը կը շրջապատէ արեւը, ինչպէս մեր մթնոլորտը կը շրջապատէ երկիրը: Արեգակնային մթնոլորտին մէջ կը գտնուին երկաթի, ջրածինի, մագնեղիովի, նազրի, նիկէլի և այլն գազեր: Այս է արեւուն գունագունդը (chromosphere):

Գունագունդէն վերջն ալ ընդարձակօրէն կը տարածուի պսակը կամ պսակային միջնօլորտը, որը կը հալի այլեւ անհունութեան մէջ:

Այս չորս մասերը—կեդրոնական մութ զանգուածը, լուսագունդը, գունագունդը և պսակը—հանդարտ վիճակի մէջ չեն կրնար ըլլալ: Ահագին հոսանքներ շարունակ կը շրջագային անոնց մէջէն, դէպի դուրս և դէպի ներս: Երբեմն դէպի դուրս նետուած գազային հոսանքները այնքան դժուար կ'ըլլան, որ բոցեղէն հսկայ լեզուներու նման կը ճեղքեն կ'անցնին գունագունդը և պսակը, տարածուելով երկրի տրամագծին 15 անգամին չափ երկայնութեան վրայ: Գազային այդ հոսանքները պատուելով լուսագունդը՝ տեսանելի կ'ընեն ներքին մութ զանգուածը, համեմատաբար շատ փոքր խորութեան մէջ: Այդ մութ գոյնով պատռուածները կը կոչուին արեգակնային արատներ, որոնք երբեմն մօտեցնում են կ'ըլլան, որ զանոնք ծածկելու համար տամեակներով երկիր պէտք պիտի ըլլար: Անցեալ փետրուար ամսին այդ տեսակ արատ մը դիտուեցաւ յուլիսի մէջ ալ հըսկայ արատներ ծածկեցին արեւին երեսը: Այս տարի արեւ իր մեծագոյն գործունէութեան մէջ է, անցեալ տարուան և այս ամառուան արտասովոր տաքերը այդ գործունէութեան կը վերապրուին:

Աստղաբաշխական գործիքները կարող չեն արել զանգուածի մէջ միեւրո իրենց սրաթափանց ակնարկը: Լուսագունդը անթափանցիկ խաւով մը կը շրջապատէ այն: Միևնոյնը չէ դուրսի երկու գազային խաւերուն համար, ասոնք թափանցիկ են, ու ասոնց մէջ կը շարունակուի ներքին գործունէութիւնը, կարելի է ըսել, ասոնց մէջ կարելի է գտնել ներքին գործունէութեան արձագանգը: Ահա պսակին ուսումնասիրութեանց մեծ կարեւորութիւնը, և որովհետեւ այդ ուսումնասիրութիւնը կարելի է միայն ամբողջական խաւաւորումներու առանց, ահա ասոնց ալ կարեւորութիւնը: Հրեղէն լեզուներու ուսումնասիրութիւնը, շնորհիւ պ. պ. Ենսընի և Լոկիերի աշխատութիւններուն, այլեւ պէտք չունի ամբողջական խաւաւորումի մը հազուադէպ և վաղանցուկ երևոյթին: Շատ յուսալի է որ միևնոյն գիտունները յաջողին գտնել նաև պսակին ուսումնասիրութեան միջոցը, նոյնիսկ արեւին ներկայութեանը:

Արեւին մասին տուած տեղեկութիւններս արդիւնքն են վերջին մի քանի տասնեակ տարիներու ընթացքին մէջ պատահած ամբողջական խաւաւորումներու առանց կատարուած զննութիւններուն: Ներկայ և ապագայ զննութիւնները հետզհետէ

աւելի պիտի ճշտեն արեւին նկատմամբ մեր ունեցած ծանօթութիւնը:

Պսակին զննութեանը քով կան ուրիշներ ալ, որոնք կարեւոր են. այսպէս է Փայլածուն և արեւին միջև ենթադրուած մոլորակներու խուզարկութիւնը: Մինչև հիմա, ծանօթ ամենածառիկ մոլորակն է Փայլածուն, որ շատ քիչ անգամ կը տեսնուի պարզ աչքով, արեւին ոտատիկ լոյսին մէջ ընկղմած ըլլալուն պատճառով: Այդ մոլորակը սակայն իր շրջանին մէջ տարօրինակութիւններ ցոյց կուտայ, որոնց պատճառը կը կարծուին արեւին աւելի մօտ գտնուող մոլորակներ, որոնք մինչև հիմա անտեսանելի կը ֆնան: Ամբողջական խաւարումի մը ատեն այս զննութիւնը, հետզհետէ զօրաւոր և կատարելագործուած գործիքներու, մասնաւոր լուսանկարին շնորհիւ, յուսալի է որ պիտի արդիւնը տայ ու իրականացնէ Լըվէրիէի 1859-ին ըրած ենթադրութիւնը: Յիշենք որ նոյն գիտունին կը պատինք Նեպտուն մոլորակին գիւտը:

Ամբողջական խաւարումներու ատեն շատ մը հետաքրքրաշարժ զննութիւններ կրնանք ընել նոյնիսկ մեր շուրջը և առանց գործիքի: Այսպէս ամբողջական խաւարումներու սկզբին և վերջին շատ տարօրինակ երևոյթ մը կարելի է գիտել. փոխ ի փոխ սպիտակ և սև շերտեր աւելի կամ նուազ արագութեամբ սողոսկելով կանցնին: Երբեմն այդ շերտերը գունաւոր կ'ըլլան:

Ուրիշ շատ շահեկան երևոյթ մըն է երկինքին ցածնալը: Արդարեւ ամբողջական խաւարումին սկզբները երկինքը ցած, վար ինկած կերելի և եթէ ամպեր գտնուին, երևոյթը որոշ չափով ահաբեկիչ ալ կրնայ ըլլալ:

Վերջապէս ոչ նուազ շահեկան է գիտել ամբողջական խաւարումի ատենը կենդանիներու վերաբերմունքը: Եթէ մարդը կրցած է սոսկալ այդ երևոյթէն, ու տակաւին այսօր նոյնիսկ կէս քաղաքակրթուած ժողովուրդներ անկէ կը սոսկան, աւելի իրաւամբ կենդանիները տարօրինակ պիտի գտնեն այդ յանկարծական միջազնումը: Ոմանք զարհուրելով ասպին անդին կը վազվզեն, ուրիշներ, իրենց վախէն, իրարու մօտ կը կծկտին, արտադրները կը խօսին, բուերն ու չղիկները իրենց թագստոցներէն դուրս կելլեն, կայլն:

Յիշանք ուրեմն որ օգոստոս ^{17/30}-ի ամբողջական խաւարումը այս ամէն կէտերուն մասին լիովին արդիւններով բեղուն ըլլայ, ու պսակէ ակնկալութիւնները:

Լոգան

Մ. Նալբանդեան

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԻՑ

Համայնօրէն տեսութիւն գեղարուեստի դպրոցներու սկզբէն մինչև նորագոյն շրջանները: ¹⁾

Հոլանդիայի մէջ գեղարուեստներու ծագումը շատ պատմաբաններ մութ կը գտնեն. արուեստի ծանօթ առաջին արտայայտութիւնները կը սկսին յայտնուիլ այն ժամանակ, երբ՝ իրենց կեանքի պահպանումին համար՝ բնակիչները ծովի մակերևոյթին հաւտար և մերթ ցած երկրին մէջ խուժել սպառնացող կատաղի ալիքներուն առաջ հզօր պատնէշներ կանգնեցնէին, լայնածաւալ ճահիճները ցամաքեցնէին, և վերջապէս երկիրը մաքրելէ յետոյ իրենց մէջ ազգային ինքնագլխակցութեան արթնանալը կը զգան, և միջոց կ'ունենան խորհիլ գեղարուեստներու մասին:

Հոլանդական արուեստը ծագումէն իսկ բնորոշուած է իր քաղաքական զգալի հակումովը և ուղղութեամբը:

Տարիքներու դէմ մզած անընդհատ կռիւը, վտանգի հաւանականութեան առաջ յարատեւ մտածումը, երկրի տափակ դիրքը և առանձնայատկութիւնները անխուսափելիօրէն ազդած են հասարակութեան մտածելու եղանակին վրայ՝ դրական և իրապաշտ ուղղութեամբ, միջոց չտալով երեւակայելու, «փրկիսփայելու» և վերացական մտապատկերներ յօրինելու:

Հոլանդացի արուեստագէտներու իւրաքանչիւրը բնութեան այս կամ այն երևոյթը առանձինն պաշտամունքով մը սիրած է, բաւականաւորով դայն դիտել, ըմբռնել և անկեղծօրէն թարգմանել՝ անշուշտ աւելցնելով իր անձնական կնիքը:

Բակունի մէկ ասացումաժքը՝ «Արուեստը մարդն է, որ միացած է բնութեան»՝ կրնայ հոլանդական դպրոցը ճշգրտօրէն բնորոշել:

Եւ իսկապէս Հոլանդիայի բնութիւնը, մռայլ օրուան մը տակ դիտուած հիւսիսային երկրի իր մեկամաղձոտ տեսարաններով՝ Ռիւյսդալէներ, զարնանային արշալոյսի մը շողերուն տակ,

1) Տե՛ս «Մուրճ» № 7.

Պանայ մարգերուն մէջտեղ, գետակի մը եզերքին նիրհող դիւ-
շով՝ Ալբէր Կիրեր, ցերեկուան տաքէն խոնջած ու ծառի մը
ստուերում հանգչող հովիւին շուրջը ծուլօրէն պառկած կովերու
տեսարաններով՝ Պոլլա Պոտտերներ, երեկոյեան հանդարտ
վերջալոյսով մը մարմրող երկնքի մը տակ իրենց գեղջկական
երգերը եղանակող հովիւներու կեանքին երգիչ՝ Ալբրիէն-Վան-
Դէր-Վէլդներ, հանդարտ ճահճի մը մէջ իր դէմքը ցոլացնող
լուսնին և գիշերային անաբաններու սիրահար՝ Վան-Դէր-Հիյր-
ներ ծնած է, որոնք կատարեալ իրապաշտներ եղած են, առանց
սակայն ատով պակաս ուշագրաւ ըլլալու:

Սակայն Հոլանդիա ընական պայմաններու բերմունքով չէ
կրցած արձանագործութեան մէջ աչքառու տեղ մը գրաւել:
Տարրական նիւթը գրեթէ բացարձակապէս պակսած է իրեն:
Երկրի ճախճախուտ և տափակ դիրքին պատճառաւ մարմարի
հանքեր չէ ունեցած, որով, արուեստի այդ ճիւղէն զրկուած,
հոլանդացիք մշակած են նկարչութիւնը, մարդկութեան տալով
հանճարներու խորապէս տպաւորիչ շարք մը, որոնց գլուխ-
գործոցները գեռ երկար դարեր պիտի կրնան իրենց անմա-
հութիւնը ապահովել:

Քանդակագործութեան աւելի լուրջ ճիգեր եղած են դէպի
հարաւ՝ Բրիւսի մէջ, ուր նկարչութեան առաջին արտայայտու-
թիւններուն հետ միաժամանակ երեցած են՝ XV-րդ դարու
սկիզբները՝ քանդակագործական արտադրութիւններ, թագաւո-
րական մահարձաններու, զերեզմաններու ձևին տակ. բայց այդ
սկզբնաւորութիւնը շարունակութիւն չէ ունեցած գրեթէ: Մի-
այն նորագոյն ժամանակներս զեղարուեստի այդ ճիւղը սկսած
է փայլիլ մի քանի յայտնի նոր ոյժերով:

Ինչպէս այլուր, նոյնպէս և Հոլանդա, արուեստը իր սկզբնա-
ւորութեան ժամանակ, ուղղութեամբ թէպէտ կրօնական,
սակայն աւելի մարդկային և միշտ բնական եղած է, քան թէ
խալական վարպետներու արտադրութիւնները, որոնք իրենց
յղացումներուն մէջ վերապական ախպարի մը, գերբնականին
ձգտումը ունեցած են:

Հոլանդացի արուեստագէտները իրենց Աստուածամայրե-
րու տիպերը իրենց շուրջը, իրենց կիներուն մէջ են դտած,
ներկայացնելով զանոնք իրական կեանքի պարզ արտայայտու-
թիւններուն մէջ, ու շեշտելով այն իրապաշտ ձգտումը՝ որ ըս-
կըսած է XIV րդ դարէն, և որուն մարմնացումը եղած էր՝ ինչ-
պէս տեսանք՝ Իտալիոյ մէջ Փրա-Բարթոլոմէօ:

Սակայն արուեստը կեանքին մօտեցնելու, կեանքով բա-
ցատրելու այդ բարերար ձգտումը իտալական Վերածնութեան

առաջ կը տկարանայ, իր հիմնադիրներու և հետևողներու աստիճանական անհետացումովը:

Նորերու հոսանքն է որ կըսկսի ղէպի հոռւմ, ուր իրենց մայր-հողէն կտրուած, իրենց համար բոլորովին նոր հասկացողութիւններով և մտապատկերներով լեցուն միջավայրի մը մէջ, առանց ըմբռնել կրնալու իտալական խորհրդապաշտութիւնը, թափանցել կրնալու դասական գեղեցկութեան պաշտամունքին մէջ, կը վերադառնան կրկին իրենց հայրենիքը, արտադրելու համար գործեր, որոնք նախկին իրապաշտ դպրոցի սկզբունքներու մնացորդներու և նոր դաւանանքներու կեղծ ու բռնապարօսիկ նմանութեան խառնուրդներ կըլլան:

Իրերու այդ վիճակին մէջ քաղաքական նշանաւոր փոփոխութիւններ կուգան կարևոր ու պատմական յեղաշրջումներ կատարել նաև գեղարուեստներու մէջ, որոշելով դերերը, և յըստափօրէն ու վերջնականապէս գծելով ծրագրուող ուղղութիւնները:

Գերմանական և սղանիական տիրապետութիւններու, և վերջինիս կղերին լուծը թօթափելու համար երկարատև յեղափոխութիւններէ յետոյ, հոլանդական Միացեալ-Նահանգները կը կազմուին, ընդգրկելով բոլորքական կրօնքը, մինչդեռ հարաւային մասը (Ֆլաման—այժմեան Բելգիան) կը մնայ կաթոլիկ կրօնքին և անոր մտապատկերներու հորիզոնին մէջ սլարփակուած:

Այդ քաղաքական և կրօնական կարևոր փոփոխութիւնները՝ ինչպէս ակնարկեցի՝ իրենց անխուսափելի ազդեցութիւնը ու հետևանքները կ'ունենան երկու բաժնուած երկիրներու գեղարուեստներուն վրայ, և մինչդեռ հարաւակողմը Ֆլաման արուեստը միշտ սպանիական իշխանութեան ու կաթոլիկ կրօնքի ազդեցութեան տակ տակաւ առ տակաւ ամբողջովին կ'իւրացնէ իտալական Վերածնութեան սկզբունքները, հիւսիսում՝ հոլանդական արուեստը նոր հուատքի մը ազդեցութեան տակ դարձեալ զուտ ազգային ու անձնական բնոյթը, իրապաշտ ուղղութիւնը կը վերընդունի, աւելի ժողովրդական ու պարզ դոյն մը ստանալով՝ ինչպէս իր ընդգրկած կրօնքը:

Կաթոլիկ կրօնքի նախընտրած նիւթերը բացարձակօրէն կը հետանան հոլանդական արուեստի հոգերէն: Կաթոլիկ հաւատքի իր երկնայինի ձգտումով գրեթէ ամբողջապէս անտես ըրած երկրայինը Լուտերի վարդապետութեան զբոլումով և հոլանդացի արուեստագէտներու միջոցաւ իր արժանաւոր տեղը կը ստանայ սկիզբ դնելով «Համաշխարհային մօր» այսինքն, ընտելեան դադափառին:

եկեղեցական նկարներու այլևս ոչ մի պահանջ չըլլալով, կրօնական նկարչութիւնը կ'անհետանայ, իր տեղը ձգելով հասարակական կեանքի տեսարաններուն, գիւղական օճախին, խնճոցներուն, բաց դաշտի աշխատանքներուն և բնութեան տեսարաններուն, ստեղծելով կեանքի տեսարաններու նկարչութիւնը (Genre):

Ուկրաինայի ակիբներու դէմ իր թումերու շինութենէն և հաւատաքնական չարչարանքներէն վերջնականապէս ազատելէ յետոյ, այդ փոքր ազգը՝ նոյնիսկ զատուած Ֆլաման Դըպրոցէն՝ գրեթէ մէկ դարի (1584—1682) ընթացքին մէջ գերազանցած է գեղարուեստի վառարաններ համարուող կեդրոնները, տալով յիսունէ աւելի արուեստագէտներ, որոնց մէջ Ռամբրանտները, Ժերար Դօուները, Ռիչարդսոնները, Պոլլուս Պոտտէրները՝ որք կենդանիներու Ռաֆայէլը կոչուած է՝ Բրաուէրները, Հորթէմանները, և Թէնիէները իրենց տիրական հանճարներու շողշողուն աստղերը կը դնեն:

Ռամբրանտ (1607—1669) այդ նորածին, բայց ինքնուրոյն և զօրեղ դպրոցին ամենափայլուն ներկայացուցիչը և ժարմնացումն է եղած այնպէս, ինչպէս Ռիւբէնս (1577—1640) եղած է Ֆլաման դպրոցին համար:

Սակայն «ոչ մէկ դպրոցի մէջ—կը գրէ Թորէ (Thore)—Ռամբրանտի և Ռիւբենսի պէս իրարմէ տարբերուող նկարիչներ չկան: Իրարու արամագծօրէն հակառակ են: Մէկը իր մէջ ամփոփուած նկարիչ մըն է, իսկ միւսը ինքզինքը ցուցադրող մը: Մէկը բնորոշ պարզութիւնը կը փնտռէ, միւսը փառասէր պճնազարդութիւնը: Մէկը իր էֆֆէկտները կը խնայէ, միւսը իր կտաւներուն չարս անկիւնները կը շոայլէ զանոնք: Մէկը ամբողջ ներքինն է, միւսը համակ արտաքինը: Մէկը խորհրդուոր, խորունկ և անբժբանելի է... միւսը գիւրահաղորդ, քաշող և անգիտագրելի: Ռամբրանտի առաջ մարդ ինքն իր մէջ կ'ամփոփուի, իսկ Ռիւբենսի առաջ մարդ կը ոգևորուի»

Այս կարճ բայց շատ բնորոշ տողերը երկու հակայ վարպետները կը թարգմանեն, կը բացատրեն յստակօրէն:

Հոլանդիայի համար անկման շրջանը կը սկսի 1713-ին՝ ժողովրդական կառավարութեան տապալումէն ու թագաւորութեան հաստատումէն յետոյ, տեղունելով Վան-Դէր-Ուէրֆերու և Հիւլզդրիմներու ժառանգուած տակ, որոնք եգիպտական փերշին արուեստագէտներուն համար իրենց նախորդներու նկարազրահան և ուժեղ կողմերը կը կսկեն, կը փայլեցնեն առողջ-դեղեցիկը հիւանդ-սիրտունի փոխարկելով, և հոլանդական արուեստը իր զօրութեան գագաթնակէտին հասնելէ ու բովանդակ

փայլով դար մը շողշողալէ յետոյ, ալ բարձրանալու տեղ չունենալով կը սկսի խոնարհիլ:

Ֆրանսական արուեստը զգալի չափերով օգտուած է հռլանդական առողջ սկզբունքներէն: Մեր կեանքի (ժանրը) և, բնութեան տեսարաններու (պէյզաժ) երկու նկարչութիւնները ուղիղ գծով կը սերին հռլանդացիներէն. անոնք մեր վարպետներն են, և մենք իրենց աշակերտները կը ֆուսնք» կը գրէ Ժ. Դիւֆուր (George Dufour) իր «Գեղարուեստները քաղաքակաւութեան մէջ» գրքում:

Հռլանդական արուեստը սակայն իր ծնունդը կը պարտի Ֆլաման արուեստին, սերելով Բրիւժի առաջին գեղարուեստական դպրոցէն:

Աւելի ուշ Անվէրս՝ իր վաճառականական յարմարութիւններով, որոնք՝ ինչպէս տեսանք Աթէնքի վերաբերմամբ՝ այնքան կարևոր դեր մը խաղացած են գեղարուեստներու զարգացման մէջ, սկսած է նշանաւոր տեղ մի գրաւել գեղարուեստական, քաղաքական և վաճառականական տեսակէտներով:

Բրիւժի դպրոցը արուեստագէտ Վան-Էյկ եղբայրներով (1366—1441) և անոնց իւզաներկի կատարելագործութեան զիւտով յայտնի դարձած է պատմութեան մէջ:

Այդ գիւտը ամբողջ Եւրոպայի մէջ տարածուելով մեծապէս նպաստած է գեղարուեստներու ծաւալման հետեւաբար և ընդհանուր քաղաքակրթական գործին, զիւրութիւն տալով կտաւներու վրայ և փոխադրելու յարմար պատկերներ պատրաստելու. թէպէտ պրոֆ. Լոմ կառարկէ թէ XIV-րդ դարու կէսին մէջ Ֆրանսայում ժան Կոստ նկարիչը իւզաներկը կը ճանչնար և կը գործածէր, ու կընդունի, թէ Վան-Էյկները միայն աւելի կատարելագործած ըլլան զայն:

Նկարչութեան այդ շարժուն զրութեան մէջ զրուելը՝ պատմութեան մէջ միջակ կարևորութիւն ունեցող զէպք մը չէ, ան (նկարը) այսուհետեւ պիտի կրնայ՝ ինչպէս քիչ յետոյ տպագրուած գիրքը՝ ձեռքէ ձեռք անցնիլ, ծովերը կտրել, մինչև այդ ժամանակ իր առաջ փակուած տուները մտնել, և բոլորին բերել կրթութիւն, մխիթարանք և լոյս» կը գրէ Պ. Մանց (Paul Mantz) այդ գիւտին ակնարկելով, մինչդեռ մինչև այդ գիւտը պատկերները եկեղեցիներու, մենաստաններու և վանքերու մենաշնորհներն են եղած, և հետեւաբար շատ անկատար կերպով կրցած են կատարել այն բարերար ու կրթիչ գիւրը, որուն պէտքը և նշանակութիւնը՝ միջանկեալ ըսելով՝ դեռ հայերս կը վարանինք տեսնել և ըմբռնել:

Անվէրս XV-րդ դարուն է որ կը սկսի խակական գեղա-

բուհատական վառարան մը դառնալ, իր դպրոցի հսկայ վարպետներուն գերիշխանութեամբ ընկճելով և իր մէջ ձուլելով միւս ֆլաման դպրոցները:

Այդ փայլուն դպրոցին նախահայրը եղած է Կէնտին Մէցիս (1469—1531) անուն երկաթագործ մը, որ գեղարուեստի սիրով աւելցուն, և ունենալով անշուշտ որոշ ընդունակութիւններ, թողած է մուրճը՝ վրձինը ձեռք առնելու համար:

Կէնտին Մէցիս յամառ ու համբերատար աշխատանքի գլուխ-գործոցներ արտադրած է, նկարելով հագուստի բանուածքներու իւրաքանչիւր թելը, ծաւերու իւրաքանչիւր տերեւը կամ բոյսերու շիւղերը: Նկարելու այդ ձևին մէջ գրեթէ մէկ ու կէս դար յետոյ՝ ժերար—Դօու ոչ պակաս ապշեցուցիչ աշխատանքի գլուխ-գործոցներ արտադրած է, և այսօր Պարիզում Լուվրի թանգարանը այցելողները հոլանդական դպրոցի այնքան ուշագրաւ նկարներու բաժնին մէջ հիացումով կանգ կանեն, իր հոգակաւոր «La Femme hydropique» նկարին առաջ, ուր մանրամասնութիւնները՝ անասելի ճշտութեամբ և բնականութեամբ մը՝ իրենց կատարելութեան գազաթակէտին հասած են:

Կ. Մէցիսի մահէն յետոյ է որ՝ ինչպէս տեսանք Ֆլաման արուեստագէտները Վինչիներու և Ռաֆայէլներու հանճարներէն մագնիսացած Խտալիա կը դիմեն, ինչպէս ժամանակակից Դիւրերի (1471—1528) մահէն յետոյ գերմանացիները զիմած են, բայց այս վերջիններուն նման հոն չմնալով կրկին իրենց հայրենիքը կը վերադառնան, իտալական գաղափարապաշտութիւնը (իդէալիզմ) Ֆլաման դպրոցին իրապաշտութեան հետ միախառնելու համար, պատրաստելով այն դպրոցը, որուն լուսապսակը պիտի կազմէ Ռիբէնս:

Ու մինչդեռ այդ միջոցին հիւսիսում հոլանդական քոյր արուեստը առողջ ու խաղաղ մթնոլորտի մը մէջ իր կատարելագործման կը զիմէ, հարաւում նոր ապստամբութիւններէ ու նոր ճնշումներու արհաւիրքները տեսնելէ յետոյ, հասարակութիւնը կը նետուի կեանքի վայելքներու գիրկը, լիաթոք ու միանգամ ծծել ուզելով անոնց պինովցնող քաղցրութիւնները:

Այդ միջոցին է որ Ռիւբէնս կը յայտնուի՝ գրեթէ մարմնացում մը այդ կեանքին՝ իր ներկայացուցած տիպարներու առողջ ու լեցուն կազմուածքով, զուարթ խառնուածքով, ու կեանքի անզիմադրելի տենչանքը, զայն անփութօրէն ապրելու երջանկութիւնը ունեցողներու ուրախ ու զեղուն արտայայտութիւններով, որոնց այնքան հարադատ և թրթուռ յայտնի մէկ կտորը կը գտնուի այսօր Լուվրի թանգարանին մէջ (La Kermesse—Տօնավաճառը):

Իր կեանք ըտերող, կեանի վայելքներով առլցուն, առողջ մարմինները, ուժեղ ու յաղթանդամ կազմուածքները անխուսափելի հետեանքները եղած են զինքը շրջապատող կեանքին, ժամանակին, հասկացողութիւններուն ու միջավայրին:

Ռիւբէնս իր ձևի, աշխատութեան, գաղափարի և կազմաւորութեան ուժեղ արտայայտութիւններով, անբաղդատելի բեղունութեամբ ափսոսի կատարելութեան մըն է հասած, որ դեռ այսօր իր լայն ու հսկայ ոճով, ապշեցուցիչ բազմազանութեամբ և անսահման երևակայութեամբ հիացում և պատկառանք կ'ազդէ: Իր բեղմնաւոր երևակայութեան հլու վրձինը իր ճարտարու անխոնջ ձեռքին մէջ արտադրած է հազար հինգ հարիւրէ աւելի մեծ և փոքր՝ ծիծաղելի տեսարաններէն սկսելով մինչև կրօնական խոկուններ ներշնչող հաւասար վարպետութեամբ նկարուած կտանները, որոնք իր ամբողջ գործերուն կէսը միայն ըլլալ կ'ենթադրեն՝ «Լուվրի թանգարանը քառասուն երկու մեծ ու փոքր կտորներ կը հաշուէ վեճ վարպետին գործերէն»:

«Ստեղծելու, կարգադրելու ձիրքը, նկարչական լեզուի պայծառութիւնը, տաշութիւնը, փայլը, շարժումը, այն բոլորը՝ ինչ որ առաջին կարգի նկարիչ մը կը կազմեն, այդ բոլորը Ռիւբէնս ունի իր մէջ» ըսած է Շարլ Բլան (Ch. Blanc), Անվերսում, Ռիւբէնսի երեք հարիւրամեակին տոթիւ արտասանած բանախօսութեան մէջ:

Ռիւբէնսի և Ռամբրանտի մահէն յետոյ հաւատարիմ հետեւողներ որոշ ժամանակ մը իրենց ոչ նուազ ուշադրաւ ու տիրական վրձինին շնորհիւ կրցած են արուեստը պահպանել իր կատարելութեան բարձրութեան վրայ, ինչպէս ժառ Փոր-դաէնս (1593—1678) Անտուան Վան Դիկ (1599—1641) Դաւիդ Թէնիէ (1610—1690) և այլն:

Վան Դիկ՝ Ռիւբէնսի աշակերտը՝ իր համեմատաբար կտրճ կեանքին մէջ կրցած է իր վարպետին հաւասար փայլով մը, փայլիլ, եթէ ոչ հսկայ և բարդ կազմաւորութիւններու մէջ՝ ինչպէս են առհասարակ Ռիւբէնսի գործերը՝ գոնէ իր կենդանագիր նկարներուն մէջ, որոնք հասած են նրբութեան և շնորհալիութեան գրեթէ անմրցելի կատարելութեան մը:

Ժորդաէնս իր աշխատելակերպով շատ հարազատ մնացած է իր վարպետին՝ Ռիւբէնսի՝ սկզբունքներուն. իր առողջ ու հաղորդիչ ծիծաղի մի մէջ անփութօրէն ապրող կենսալից ու կարմիր գէժքերով անձնաւորութիւնները խաբուելու՝ չափ կը յիշեցնեն այն տիպարները, որոնց պատմական դարձուցած է Ռիւբէնս իր տիրական վրձինով:

Պարիզի մէջ ապրած ու մեռած երկու արուեստագէտներ՝

Ֆիլիպ զը Շամպլենը (1602—1674) և Վան-Դէր-Մէօլէն (1634—1690) գրեթէ Փլաման և հոլանդական զպրոցներու անկումը կուրուագրեն, որոնցմէ վերջը անորոշութեան մշուշը կը տիրէ այն երկրին վրայ, որ գեղարուեստական հզօր ու շլացուցիչ փայլով մը շուրջը լուսաւորելէ յետոյ, արիւնալից կախներու թատրը կը գառնայ, միայն անցեալ դարուն Ֆրանսացի արուեստագէտ Դավիդի նոր զպրոցին հետ ունեցած շփումով վերակենդանանալու և այժմեան նոր հոսանքները կադմելու համար, որոնք սակայն հունին այն փայլը ու չին գրաւեր այն տեղը գեղարուեստներու աշխարհին մէջ, որ զրաւած էին Ռիւբեններու և Ռամբրաններու արուեստները:

Գերմանական արուեստի նախնական ուղղութիւնները թէպէտ յունական արուեստի ազդեցութեան կնիքը կրող՝ ինչպէս այլուր՝ բայց աւելի ուշ, նկարչութեան մէջ մեծապէս ազդուած են իրենց զրացիներու՝ Վան-Էյկ եղբայրներու հիմնած զպրոցէն, աւելի չափաւորելով այդ զպրոցի իրապաշտական ձգտումները:

Գերմանական նկարչութիւնը ունեցած է զանազան գեղարուեստական զպրոցներ, որոնք հիմնուած են նախ Բոհեմիայում՝ որը Բրիւլլի և Վիւսմանի ձեռքով, և ապա Կոլոնիի մէջ Վիրհէլմ և Ստէֆանի ձեռքով և որոնք հիւսիսի առաջին գեղարուեստական զպրոցները հիմնողները եղած են: Առաջինը կը ծաղկի 1380-ին, իսկ երկրորդը՝ որ նախորդին հետևորդը կը համարին՝ 1410-ին:

Այդ երկու մայր-զպրոցներէն է որ ճիւղաւորելով կը յառաջանան Վերին-Գերմանիայի մէջ Աւգսբուրգի, Դրէզդէնի և Նիւրնբերգի զպրոցները, որոնցմէ վերջինը իր ազդեցութեան տեղութեամբ և առաջ բերած վարպետներով ամենաուշադրաւ է եղած:

Աւգսբուրգի զպրոցին հիմնադիրը եղած է Հանս Հոլբայն (հայր), բայց Հանս Հոլբայն (որդին) (1448—1543) է որ կը նկատուի իբր գերմանական նկարչութեան առաջին վարպետը:

Իր՝ նախ Բագէլ, և ապա վերջնականապէս Անգլիա հաստատուելով՝ իր հօր հաստատած զպրոցը կը տմպունի:

Բայց Հանս Հոլբայնի (որդի) ազդեցութիւնը գերմանական արուեստին վրայ նշանակելի է եղած. ինքն է որ գիտցած է իտալական Վերածնութեան ձևերը և մտքերը պատուաւորել «աղբային արուեստ»ին հետ, առանց սակայն դայն խաթարելու, թէպէտ Վերածնութեան գաղափարներուն իրական ներմուծողը կը համարուի Հանս Բիւրկմայէր, (1472—1531) զոր ծակցելով՝ այդ ուղղութեամբ Ա. Դիւրէրի (1471—1528) հետ,

որ աւելի յայտնի և հեղինակաւոր եղած է, և որը գերմանական Ռաֆայէլը կոչած են, գերմանական արուեստին ամբողջական արտայայտութիւնը և մարմնացումը ըլլալուն համար:

Դիւրէր օտար մնալով այդ ժամանակի կրօնական կուիւներուն, իտալական դադափարապաշտ ոճին և հոլանդական իրապաշտութեան նրբութիւններով բարեխաւնուած չէզոք արուեստը մըն է ստեղծած, հասնելով իր ժամանակի արուեստագէտներուն համար անմերձեանալի կատարելութեան մը: Բայց ինչ որ իր արուեստին առաւելութիւնը կը ներկայացնէր, մասնաւորապէս Նիւրէնբէրգի դպրոցին և ընդհանրապէս գերմանական արուեստին այլասեւումը և ինքնուրոյնութեան կորուստը պիտի ըլլար:

Դիւրէրի մահէն անմիջապէս յետոյ իր աշակերտները և գերմանացի միւս արուեստագէտները երկու մասի բաժնուած են իւրաքանչիւրը հետեւելով իտալական կամ հոլանդական՝ այսինքն դադափարապաշտ (իդէալիստ)՝ կամ իրապաշտ (ռէալիստ)՝ դպրոցներուն, որոնց ամենակենսունակ մասերէն քաղելով՝ սակայն՝ Դիւրէր կրցած էր բնորոշ և ինքնուրոյն գոյն կրող արուեստ մը ձևակերպել:

Յետագայ նկարիչները յօժարաւամբնացած են արուեստը ուսումնասիրել Տիցիանօյի կամ Ռաֆայէլի աշակերտներուն քով, ձգելով որ ազգային արուեստը անմշակ թառամի:

Վերածնութիւնը հիւսիսում՝ նոյնպէս և Գերմանիա՝ արծանագործութեան մէջ յայտնուած է իրականի ձգտումովը, մանրամասնութիւններու խնամոտ վերարտադրութեամբը՝ որ յաճախ սակայն փաստած է ամբողջութեան՝ ու՝ զէմքերու, արտայայտութիւններու և հագուստներու հարազատ մնալու ճիւղերովը:

Գերմանիա թէպէտ Իտալիոյ հետ բազմաոմամբ նուազ բարեյաջող պայմաններու մէջ գտնուած, բայց և այնպէս իր գլխաւոր երեք գեղարուեստական դպրոցներու փայլուն շրջանին ժամանակ արտադրած է նաև յայտնի քանդակագործական գործեր, որոնց մէջ մեծ տեղ մը վրաւած են փայտեայ արձանները, ապահովարար աշխարհագրական զիրքի և պայմաններու բերմունքով մարմարի հանքերէ զրեթէ զրկուած ըլլալուն պատճառաւ:

Կրօնական բաժանումը, կոիւնները, բողոքական տիրող կրօնքին աննպաստ հող մը ստեղծելը, «երեսնամեայ պատերազմ» ին (1618—1648) սոսկումները անշուշտ մեծապէս շեշտած է այն անտարբերութիւնը, որ եկած է տարածուել նաև վերոյիշ-

եալ երեք դպրոցներուն վրայ, Դիւրէրի, Հոլրայնի և Պրասնախի մահէն յետոյ:

Մինչև անցեալ դարու սկիզբները՝ երբ գերմանական արուեստը երկար ընդարմացումէ մը և քաղաքական աննպաստ պայմաններէ ազատուելով վերադարձնում մը կ'ունենայ՝ գերման նկարիչները յայտնի եղած են աւելի հոլանդական կամ իտալական դպրոցներուն մէջ, օտար երկնքի տակ:

Սակայն այդ վերադարձնումի դործը գերմանացիք շատ տարօրինակէս հասկցած են: Ֆրանսայի մէջ Դավիդի գեղարուեստական հասկացողութիւններու յայտնի յեղաշրջումէն ազդուած, գերմանացիք փոխանակ նոր հոսանքներուն հետ ղէպի ապագան դիմելու, արուեստը վերսկսած են այն վիճակէն, ուր ձգած էր Դիւրէր իր մահուան ժամանակ, այսինքն երեք դար առաջ:

1810-ին գերմանացիներու խմբակ մը կ'երթայ հաստատուիլ Հոովմի մէջ, հիմնելով «Արուեստագէտներու Տուն» մը, ուր յետագայ դպրոցներուն ապագայ պետերը կ'երթան կազմուիլ: Քրիստոնէութեան և պապականութեան աւերակներով շրջապատուած, ապրելով անցեալին մէջ, ներշնչուելով անցեալէն, անտես ընելով ներկան և իր ձգտում-պահանջները, ու մէկ խօսքով ծայրայեղութեան տանելով հիւսիսը՝ դիմելու, հիներէն ներշնչուելու այն զաղափարը և ձգտումը, որը Դավիդ օգտակար և անհրաժեշտ էր գտած արուեստը անկումէ մը փրկելու համար...

Քրիստոնէական գաղափարին ջերմ երկրպագու, իրենց հայրական հաւատքն իսկ կը սկսին մոռնալ, և խուսափելու համար այն կարծեցեալ պակասէն՝ որուն մէջ հոլանդացի արուեստագէտները մեղադրուած են, այն է իրականը զաղափարականացնել չկրնալին, թափէն տարուած, իրենք կիցնան հակառակ սխալի մի մէջ, չկրնալով այլ ևս գաղափարականը իրականացնել:

Գեթթէ այդ առթիւ գեղեցիկ և խորունկ սրախօսութիւն մը ըրած է:

Օր մը քանի մը բարեկամներու թախանձանքէն ստիպուած ըլլալով գերմանական արուեստի այդ շրջանի ուղղութիւններուն վրայ իր կարծիքը յայտնելու, հառաչած և ըսած է:

«Կոկոնը շատ լաւ կը տեսնեմ, բայց ֆուր է ծաղիկը»:

Այդպէս, գերմանական արուեստը՝ Գեթթէի բառերով իսկ՝ չէ՛ ծաղկած. և եթէ հիւսիսը գեղարուեստներու հաղիւ մերձենալի բարձրութիւններուն հասած է, այդ կը պարտի հոլան-

դական գեղարուեստական դպրոցներուն և անոնց յայտնի ներկայացուցիչներուն:

Հետևարար նորագոյն շրջաններում, իտալական XV-րդ դարու արուեստը ներմուծելով Գերմանիա, կեղծ արուեստ մընէ յառաջացած, որ միջավայրին թարգմանը չէ, ուր տիպարները, բարքերը, շրջապատը, երկինքը խորթ են, և այդ ամենամեծ սխալն է որ գործած են գերմանացիք, քանի որ գեղարուեստները՝ ինչպէս տեսանք՝ կեանքին, ապրուած կեանքին և միջավայրին, սովորութիւններուն գերազանցօրէն հաւազատ թարգմանը եղած ժամանակ կրցած են սնուիլ, զարգանալ և ապրիլ: Ծիծաղելի պիտի ըլլար հասկանալ ճգնիլ իտալական երկնքին տակ ապրուած տեսարան մը, հիւսիսի գորշ մառախուղներուն մէջ:

Բայց բարեբաղդաբար անցեալ դարու առաջին կէսին Բերլինի մէջ Ռոկհի, Ֆրանկֆորտ-սիւր Մայնի մէջ՝ Դէն-նըկէրի ջանքերով արձանագործութեան վերածնութեան փորձերը, և Դիւսէլդորֆի, Միւնխէնի դպրոցներուն արտադրած Կառլլախի, Լէմբախի նման արուեստագէտներու նկարչութիւնը իրական կեանքի հոսանքին մէջ գնելու ճիգերը յաջողած են արուեստը գետեղել միջավայրի, ժամանակի պահանջներու և ձգտումներու հողին վրայ, պատուաւոր տեղ մը սկսելով գրաւել գեղարուեստական աշխարհին մէջ:

Հր. Ալեանաք

(Կը շարունակուի)

ԱՄՊԵՏԱԿԱՆ ՈԳԻՆ ՃԱՊՈՆԻԱՅՈՒՄ

Գնդապետ Է. Էմէլսընի *)

Այդ կարելի է արտայայտել միայն մի խօսքով.— Բուշիլով՝ որի բառացի թարգմանութիւնն է. «պատերազմիկների վարձուների կանոն», այսինքն, «ասպետութեան պարտաւորութիւնները», կամ մի բառով «ասպետականութիւն»։ Բուշի չին-ճապոնական բառ է, որ նշանակում է պահակ, հետևորդ, ինչպէս անգլիերէն Knight և գերմաներէն Knecht խօսքերը իրանց նախնական իմաստով։ Ճապոնիայում այդ բառը հոմանիշ է Սամուրայի, «աւատական ճապոնի երկսուր մարդ»-ուն. բայց այնուհետև ճապոնացիները Բուշի էին անուանում ծովային ու ցամաքային բանակի պատերազմիկներին։ Բայց յայտնի գրադէտներ, ինչպէս բարոն Սույիմացու և զոկու, Ինագո Նոտիրէ, Բուշիլով բառին տալիս են «Ճապոնի հոգին» իմաստը։ Թերևս աւելի ճիշտ լինէր, թարգմանել այդ բառը «Ճապոնի ոգին»։ Այս վերջին ոճը բացատրելու համար զործածւում են նաև հետևեալ խօսքերը Նամսուո-դամաշիի։ Այս ասացուածքը խորհրդանշական է. տկնարկում է կեռասնու ծաղկին, որը խորհրդանշանն է նաև ճապոնական նաւատորմին։

Ահա այս մասին բանաստեղծ Մուսօրիի մի հասուածք.

«Ճապոնի օրհնուած կղզիներ։

Եթէ օտարականները փորձեն թափանցել Նամսուոյի Ոգուն,

Ասացէր նրանց չետեսեալք.

Կեռասնու ծաղիկը փթթում է վայրի եւ բուրումնաւէտ,
Նորածագ-Արեգակի վարդագոյն ճաճանչների տակ։»

Ճապոնացիները՝ ինչպէս անցեալում իրանց յաջողութիւն-

1) Գնդապետ Է. Էմէլսըն՝ որ իբրև պատերազմական թղթակից հետեւել էր այս վերջին սուս-ճապոնական պատերազմին և ապրիլով Միկագոյի երկրում, մօտիկ ճանաչել է Ճապոնիան, «La Revue» հանդիսութւն տալել է վերոյիշեալ ուսումնասիրութիւնը։

ները, նոյնպէս և ներկայում իրանց յաղթանակները ուսաների վրայ, վերագրում են Բուշիլո-յի շնորհին: Այդ համոզումն ունի սպայախումբը և անդամ եամագատա մարաջախտը՝ որ ջանաց բացատրել այդ՝ ճապոնական բանակում գտնուող օտար զինուորական կցորդներին և մեզ՝ մի քանի պատերազմական թըղթակիցներին և նուիրեց մեզ մի մի փառակազմ օրինակ դուկտ. Նոտիրէի հոչակաւոր աշխատասիրութիւնից Բուշիլո-յի մասին Այս գրքում, որի բնադիրը անգլիերէն է, հեղինակը ի միջի այլոց այսպէս է խօսում. «Ասում են, որ, իբր թէ Ճապոնիան այս վերջին պատերազմում յաղթող է հանգիստացել շնորհի: Կրուպի թնդանօթների և Մուրատա հրացանների, և այդ յաջողութիւնը, աւելացնում են, ճապոնացիները պարտական են ներկայ զինուորական ուսումներին: Այս բոլորը ճշմարիտ են, այո, բայց կիսով չափ: Ամենավերջին սիստեմի թնդանօթներն ու հրացանները իրանք իրանց չեն արձակւում. ամենակատարեալ զինուորական կրթութիւնն իսկ անկարող է մի վատասորտի հերոս գարձել: Ո՛չ, շնորհիւ մեր նախնիքների հոգիներին է որ յաղթանակեցինք Նալուի, Կորէայի և Մանջուրիայի ճակատամարտներում. շնորհիւ նրանց ոգիներին է, որ մեր բազուկները չընկճուեցին, և արիացան մեր սրտերը: Դեռ ևս չեն մեռել մեր նախահայրերի ուղիւները: Ով աչք ունի կարող է ներանց յստախօրէն տեսնել: Մեր զինուորները նորագոյն մտքերին հետամուտ լինելով հանդերձ, իրանց սրտերի մէջ պահում, պահպանում են անցեալի բոլոր աւանդութիւնները: Իրաւամբ է որ ասում են. «Ճապոնացուն քերեցէք և նրա կեղեի տակ պիտի գանէք մի Սամուրայի:»

Ֆրանսական առածն էլ ասում է. «Քերեցէք ուսին և նրա տակ կը գտնէք թաթարը»: Զարմանալի բան. նոյնիսկ մի ուս է արդարացի կերպով նկատել, որ ոչ զէնքերի վերազանցութիւնը, ոչ թուական առաւելութիւնը, և ոչ էլ զօրավարների հանձարն է, յաղթանակել տալիս պատերազմում, այլ թնդանօթների ետեւ կանգնող զինուորների ոգին, և զինուորների մէջ վառուող ժողովրդական ոգին: Տոլսայի նշանաւոր գրքի՝ Պատերազմի և Խաղաղութիւն գործի մէջ է յայտնուած այս խորթափանց միտքը: Նրա միւս աշխատասիրութեան մէջ, Պատերազմի կազմախօսութիւնը՝ հեղինակն էլ աւելի սրտշակի լուսաբանում է այդ հարցը. — «Զինուորական գիտութիւնը, զօրքի ոյժը նրանց թուից է չափում: Նապոլէոնն է տեսել, որ ճակատամարտների տատուածը այն կողմն է, որն ամենից շատ զօրք ունի: Այդ ասութիւնը՝ մի բանակի ոյժը, ըստ պատերազմական գիտութեան, հիմնում է մերկնագլխու թեան այն տեսութեան վրայ, որ,

որ շարժումի մէջ գտնուող երկու մարմինները սոսկ էրանց զանգուածի համեմատութեամբ նկատի առնելով՝ հաստատում է, որ նրանց շարժումի ոյժը հաւասար կամ անհաւասար է, նայած թէ մարմինների զանգուածը հաւասար է կամ անհաւասար: Պատերազմում, զօրքերի շարժումի գումարը հաւասար է նրանց զանգուածին՝ բազմապատկած $\times$ քանակութիւնով: Պատերազմական գիտութիւնը՝ յիշուած պատմութիւնից քաղուած շատ օրինակների վրայ, գտել է, որ զինուորների մասսան չի համապատասխանում բանակների ոյժին, և որ փոքրաքանակ զնգեր յաճախ յաղթել են բազմաքանակ ոյժերի: հետեւապէս ընդունում է, որ կայ մի անձանթ գործօն, որը աշխատում է բացատրել մերթ երկրաչափական կոմբինացիաներով, մերթ սպառազինութիւնների տարբերութեամբ, այլ մանաւանդ—որովհետեւ այս նրա համար ամենից պարզն է թւում,—զինուորական պետերի հանճարի տարբերութեամբ:

«Բայց ի զուր են մի այսպիսի կարողութիւն վերադրում յիշեալ գործօնին. արդիւնքները չեն համապատասխանում պատմական իրողութիւններին: Պէտք է հրաժարուել այն սխալ մտքից՝ այնքան թանկ՝ հերոսներ շինողների համար, որ անծանօթ $\times$ -ը իբրեւ թէ նրանումն է, երբ զօրավարները լաւ են յըմանում և գործադրում պատերազմի ծրագիրը:

« λ -ը զինուորների ոգին է. բանակը կազմող մարդկանց կուռեկու առաւել կամ նուազ զօրեղ ցանկութիւնը, առանց ուշք դարձնելու այն բանի վրայ, թէ հանճարեղ, թէ տխմար պետի հրամանի տակ են գործում, երկու թէ երեք զծի վրայ են կուռեւ, լախտերով են զինուած, թէ մի բողբոսում 30 հաւուած արձակող թնդանօթներով:

«Կուռեկու պատրաստ զինուորները, միշտ կանգնում են կուռի համար ամենանպատատւոր դիրքի վրայ: Նրանք, որ մահից աւելի, յաղթութեան մասին են խորհում, անկասկած աւելի գերադանց են, քան նրանք՝ որոնց միակ ցանկութիւնն է ողջ առողջ դուրս դալ պատերազմից: Բանակի ոգին է անս այդ գործօնը, որ բազմապատկուելով զանգուածի, քանակի հետ, տալիս է ոյժը»:

Տօլստօյի այս տեսութիւնը՝ որ ըստ հեղինակի սովորութեան, արամաքանութեան մինչև վերջին սահմանն է մղուած, հաստատութիւն գտաւ Պորտ-Արտուրի անկումի գործում: Ընդունելով հանգերձ, որ ցամաքի վրայ ուղմների դէմ, ճապոնացիների տարած բոլոր յաղթանակները արդիւնք էին զերազանց ռազմագիտութեան և թուական առաւելութեան, չպէտք է ուրանալ, որ Պորտ-Արտուրի անկումը ամբողջապէս պայմանաւորուած էր

ճապոնացիները ազգական ոգու գերազանցութեամբ: Պէտք չէ մոռանալ, որ միայն Պորտ-Արտուրի առաջ ճապոնացիները աւելի սպանուածներ և վիրաւորուածներ ունեցան քան ռուսները: Առաջին ճամարիտ կռիւը որ անդի ունեցաւ Նանշանում, — որ ճապոնացիները իրանց թշնամիներէց հնգապատիկ աւելի զոհեր տուեցին — ճապոնացիները ճակատամարտը տարան շնորհիւ միմիայն իրանց անդիմադրելի եռանդին: Բերլինի Gazette militaire-ի թղթակիցը՝ գերմանացի մի ձեռնհաս ղեկավարական, իր յօդուածներէց մէկում պնդում է, թէ ճապոնացիները Կինչուի գիւղը գրաւեցին հետեակագործերի յաղթութեամբ կատարած թիկնային ազգական մի շարժումի շնորհիւ. բայց գերմանացի ղեկավարականի ասածը սխալ է, քանի որ Նանշանի բերդին կից նեղ դաշտը հազիւ չորս կիլոմետր լայնութիւն ունէր, և այդ դաշտի իւրաքանչիւր կողմը գտնուող ուսական ամրոցները ձգուած էին մինչև ծովեզերք. բացի այդ, փաստ է և այն որ ճապոնացիները, վերջ ի վերջոյ, բլրի մի կողմից մարտանաւերի թնդանոթների օգնութեան ղիմեցին, և սկսեցին ուժեղացնել ռուսներէ զերբերը. բայց նոյնը արին և ռուսները իրանց ազգականութեամբ, հակառակ կողմից. հետեակագործերի յարձակումը մի այլքան նեղ տարածութեան վրայ, այնքան նեղ, որ յարձակողների մի մասը պարտաւորուեց աջ կողմից մտնել ծովու մէջ — պէտք է անուանել ոչ թէ թիկնային, այլ պարզապէս ճակատային յարձակում: Փախով Պորտ-Արտուրի անկումին, թէև զօր. Ստեսէլ պնդեց, որ իր զօրքերը երեք անգամ աւելի քիչ էին, քան պաշարող բանակը, և թէ իր սղծածութեանը սպառուել էր, բայց իրողութիւնները չապագուցին նրա այդ խօսքերը: Նոյնիսկ այն ժամանակ, երբ զօր. Ստեսէլ Պորտ-Արտուրում ինձ ասում էր թէ իր տրամադրութեան տակ գտնուող խոշոր ուժերը բաւական չեն մի յարձակումի դիմադրելու, ես զօր. Կոնդրատէնկոյից իմացայ, որ մի քանի ամսուայ համար խոշոր ուժը կայ: Զօր. Ստեսէլ միևնոյն ժամանակ ինձ հաւաստում էր, որ Պորտ-Արտուրը պաշարող բանակի ղեկավարների թիւը հասնում է 120,000-ի. բայց երբ մի քանի օր յետոյ զօր. Նոգիի բանակատեղը գնացի, տեսայ որ Պորտ-Արտուրը պաշարող ճապոնացիների թիւը իսկապէս հազիւ 50,000 էին:

Պորտ-Արտուրը գրաւող Բուշիլո-ն էր: ճապոնացիների ասելով՝ Բուշիլո-յի գինգանի, գլխաւոր կռուակիցն է զօր. Նոգին: Ռուս-ճապոնական պատերազմի ընթացքում նշանաւոր հանդիսացող Բուշիլոյից զօր. Նոգին, իրան հաւասար արժանիքով միայն մի մրցակից ունեցաւ, այն է՝ հրամանատար Տագէօ Հիրոյ, որ Պորտ-Արտուրի անցքը փակելու նպատակով

ծով. Տոգոյի կատարած յուսահատական մի փորձի ժամանակ իր կեանքը զոհեց իր մարդկանցից մէկին ազատելու համար: Հիրոզն է, որ իր մահուանից առաջ «Նորածագ-Արեգակին» և Ճապոնի «Կեռասենու ծաղիկներին» ձօնուած մի վերջին երգ հիւսեց:

Հիրոզն է նոյնպէս, որ զինուորական կեանքի մէջ մի նորութիւն մտցրեց, պատերազմի դաշտից նամակներ գրելով իր բարեկամներին, Ռուսաստանում. նա շատ մեծ ցաւ էր յայտնում, որ պատերազմի անողորմ պայթումով իրանց բարեկամութիւնը խզուեց: Որովհետեւ ռուս-ճապոնական պատերազմը անխուսափելի էր, Հիրոզ հաւանականաբար հրաժարուեց նաև ամուսնանալ իր ջերմապէս սիրած ռուս աղջկայ հետ:

Ժողովրդական այս միևնոյն հերոսը՝ Ճապոնիայի ազգային ըմբշամարտական խաղի, Jiu-jitsu-ի մեծագոյն շահատակներից մէկն էր, ինչ որ նրա համար պատուի գերագոյն տիտղոս էր: Ամբողջ ազգը սգաց նրա մահը և նրա անունը արձանագրուեց փառքի տաճարում, իրբն մէկը Ճապոնի պատեհրադմական աստուածներից: Եւ ճապոնական ազգը կոյր հաւատքով ընդունուեց նրա այն խօսքերը, թէ եօթը անգամ նորից աշխարհ պիտի գար կռուելու՝ Ճապոնիայի ապագայ սերունդների համար:

Զօրապետ Նոգի թէև երիտասարդական հասակում չէ, և իրբն իր ցեղի բանաստեղծ նաւաստին Տագէօ Հիրոզի հրապոյժըն ու բոմանտիկ եռանդը չունի, բայց այնուամենայնիւ բոլոր ճապոնացիների աչքում նա հաւասար է ուրիշ որևէ հերոսի: Նա էլ բանաստեղծ է. և որքան քաջ պատերազմիկ, նոյնքան վարպետ ըմբիշ է Jiu-jitsu խաղի մէջ: Բացի այդ՝ քաջ սուսերմարտիկ է և գժում է ձիերի համար, որքան որ էլ նրա հայրենակիցները, իբրև ծովային աղագ, սիրահար չլինեն ձիու: Ասում են նոյնիսկ, որ իր պատերազմի ձիերը Տոկիօյի մէջ աւելի լաւ տեղ էին բնակում, քան իր ընտանիքը. ասում են նոյնպէս, որ սամուրայական սուրով կատարուած սուսերախաղի մէջ յաղթում էր իր որդիներանց, երբ նրանք դեռ ողջ էին: Միու-ժիցուի մէջ իր ցոյց տուած ճարպիկութիւնը սկսում է երիտասարդական հասակից. երբ Վերահաստատութեան, բեստաւրացիայի պատերազմի ժամանակ՝ սուրի մի հարուած ընդունելով սրունքից, գերկընդ-խառն կռիւ տեղի ունեցաւ, նա յաջողեցաւ ընկնել իր հակառակորդներից երկուսին, իրա հետ նրանց տարաւ զցեց մի գետի մէջ և ապա միայն ինքը ազատուեց: Միայն այն կարճ և յուզիչ ոտանաւորը, որ նա գրեց Պօրտ-Արտուրի առաջ իր անդրանիկ դաւակի մահից յետոյ, բաւական էր նրան իրբն բանաստեղծ Սեպտեմբեր, 1905.

հռչակելու: Այդ քերթուածը այնուհետև պատերազմական մահերդ դարձաւ, որը ամեն մարդ բերան գիտէ Ճապոնիայում: Ահա նրա խօսքերը.

«Տխուր է եւ ցաւագին՝ այն պատկերը, որ պարզում է պատերազմի դաշտը, երբ ահագին տարածութեան վրայ նոր տեղի է ունեցել նախնիրը: Օղը դեռ տոգորուած է արիւնի հոտով, որ թրջեց հողը:

«Եւ երբ կանգ եմ առնում Կինչուի ամրոցի առաջ, մայր մոնող արեգակի ճառագայթների տակ, ըստ չեմ գտնում արտայայտելու համար իմ տխուր մտածումները: Բայց տեսէ՛ք, նոյնիսկ իմ՝ ոսգմական քաջարի նմոյզը կրել է զլուխը»:

Անթիւ ու անհամար քերթուածներ փառաբանեցին Նոգիին և պատերազմի դաշտում մեռած նրա զաւակներին: Ահա, մին այն քերթուածներից, որ ստացաւ Նոգի իր հայրենի դաւառից, իրան համակրող մի անձանօթից.

«Անդրանիկ եղբայրը՝ Կացունորի՝ քաջերի քաջն էր:

«Կրտսեր եղբայրը՝ Նասունորի՝ քաջ եւ միեւնոյն ժամանակ կատարեալ մարդ էր: Նրանց հայրը՝ զօրավարը՝ կոչում էր Ակինորի: Հաստատակամ էր եւ անպարտելի:

«Երբ մէկին մեռած բերեն, մի՛ շտապիր կատարելու յողարկաւորութեան հանդէսը, սպասիր, որ միւս երկուսն էլ հետեւեն նրան, եւ այն ժամանակ երեքը միասին լծադիր մի շերիմում:

Պատերազմիների ընդհանուր ճակատագիրն է մեռնել կոռւելով:

Այնտե՛ղ, Նանշանո՛ւմ, կոռուի տար միջոցում, անդրանիկ զաւակը ընկաւ, թշնամու հետ կոռուելիս ճակատ առ ճակատ:

«Այնուհետեւ Պորտ-Արտուրում, երբ ումըները սուլում էին, կրտսեր ճիւղը խորտակուեց եւ խլուեց հին բունից»:

Զօրապետ Նոգի, երբ իր զաւակների մահուան գոյժն առաւ, յուզումի ամենափոքր նշանն անգամ ցոյց չտուեց և ընդհանուր սուգի մէջ աւելի քան երբէք, հանգարտ երեաց:

Բայց ո՛րքան մեծ եղաւ խեղճ մօր վիշտը, երբ հետեւում էր իր անդրանիկ որդու դագազին: Բայց նրա ցաւը անշուշտ աւելի մեծ չէր կարող լինել այն վշտից, որ զգում էր ամբողջ ազգը իր զաւակների կորուստը ողբալիս:

Հին ժամանակներում, Կուզնոկիում երեք իշխաններ կային, որոնց զաւակները ընկան կռուի դաշտում իրանց վեհապետի համար:

Ճապոնիայի պատմութեան մէջ այս փառաւոր օրինակին վրայ աւելանում է և՛ երեք Նոգիների օրինակը: Պորտ-Արտուրի

անկուճի նշանաւոր պատմութիւնը չալիտի պատմութիւնը ապագայ սերունդներին, առանց յիշատակելու երեք Նոգիների հերոսական քաջութիւնները:

II

Հիմա տեսնենք որո՞նք են Բուշիդո-յի սկզբունքները: Այս հարցը *ex abrupto* լուծել նոյնքան դժուար է, որքան մի քանի տառով արեւմտեան երկրների ասպետական ոգու էութիւնը բացատրել: Յիշենք միայն ճապոնացի ամենայայտնի հերոսներից մի քանիսի անունները, որոնք համարուում են Բուշիդո-յի մարմնացում, ինչպէս Բայար, անվախ և անստգիւտ ասպետը, որ մարմնացնում է ֆրանսիական ասպետական ոգին: Փորձենք ուրեմն մի հայեացք գցել Բուշիի դաստիարակութեան գլխաւոր կէտերի վրայ:

Երբ Ճապոնիայում տիրում էին աւատական կարգերը, իւրաքանչիւր Բուշիի համար պարտադիր էր իմանալ սրախաղ, աղեղաձգութիւն, Ժիու-ժիցու (լմբշամարտ), Նավարա (անձնապաշտպանութիւն), ձիավարութիւն, զինուորական տակտիկա, գրաւորութիւն, բանաստեղծութիւն, երաժշտութիւն, պատմութիւն և բարոյագիտութիւն: Նավարան, անձնապաշտպանութիւնը, ճապոնական այդ ազնիւ արուեստը՝ մի խառնուրդ է լմբշամարտութեան կամ կուսամարտութեան, քայլաձգութեան (ոտքի հարուածներ տալ): Նավարա-ի գլխաւոր նպատակն է, հակառակորդին կռուելու անկարողութեան մատնել, կռուփով կամ ոտքով մի այնպիսի հարուած տալ նրան, որ սարսի, անզրպանայ, և կամ այնպէս վայր գցել, որ ուշաթափ լինի: Ճապոնիայում գրեւու արուեստը սաստիկ է յառաջադիմել: Բացի չինական հնաւանդ տառերից, որ բազմաթիւ տեսակներ ունի, Ճապոնիայում երկու կարգի գաղափարանիշ տառեր կան. —*Պատականա* և *Հիրականա*. բացի սրանցից պէտք է յիշել նաև *Պանա-մանարի* և *Պանա-ցուկի* տառերը, որոնք մի խառնուրդ են ներկայացնում ճապոնական գրերի: Իւրաքանչիւր գաղափարագիր իր որոշ նշանակութիւնն ունի և յաճախ բեռնագրի ձևով փոքրիկ նկարներ է կրում. այդ տառերը արուեստագիտական առանձին արժէք ունին, որը զանադանում է նայած հեղինակի տաղանդին: Դրա համար էլ Ճապոնիայում մի առած կայ, որ ասում է. «Բաւական է նկարած տառը տեսնել՝ ազնուականին դատելու համար»:

Նշանակելի է այն՝ որ աւատականութեան ժամանակ, ճապոնական զինուորական դաստիարակութեան մէջ, արդի զի-

նուորական գիտութեան կարևոր ճիւղերից մին՝ մաթեմատիկան՝ զանց էր աննուաժ: Նախկին Բուշինները, հաշուել չիմանալը պատիւ էին համարում—մանաւանդ զրամ—ինչպէս Եւրոպայում Միջին Դարի ասպետները, որ անարկում էին ընթերցասիրութիւնը: Ճապոնացի պատերազմիկների զաւակները նոյն իսկ այլ հայլ գրամների արժէքը չէին ճանաչում: Ազնուականները իրանց զրամական բոլոր գործերը յանձնել էին տան մատակարար վերակացուին, որ սոցիալական կարգի մէջ, ամենասուրբին Սամուրայից էլ ցածր էր համարւում: Միայն անկիրթ մարդը կարող էր փողի մասին խօսել: Բայց այժմ շատ բան է փոխուել, և ինչպէս ուրիշ երկրներում, ճապոնական զինուորական կրթութեան մէջ մաթեմատիկական գիտութիւնները կարևոր տեղ են գրաւել, և աղեղաձգութեան վարժութիւններին յաջորդել է հրացանով և թնկանօթով նշան անելու վարժութիւնը:

Անկասկած մի Բուշիի դաստիարակութեան ամենակարևոր մասն է կազմում էթիկան, բարոյագիտութիւնը: Ճապոնական բարոյագիտութեան ուսուցումը այնքան ընդարձակ է, որ կարելի է նրա վրայ հատորներ կազմել: Դոկտոր Ինադո Նոտիբէ մի աշխատութիւն ունի այս նիւթի վերաբերեալ: Ինչպէս գիտել է տալիս այս վերջինը, Բուշիւ-յի բարոյականի հիմնաքարն է բուդդայական կրօնի ուսումը, հերոսների և նախնիքների պաշտամունքը և Շինտոյի կրօնքի ուսումը, որ, ճապոնիայի ազգային կրօնքն է: Այսպէս փառաբանւում են բուդդայականութեան երկու էական վարդապետութիւնները՝ ճշմարտութիւնն և ուղղամտութիւնը, որոնք կազմում են Բուշիի ամենամեծ առաքինութիւնները. զրանց կողքին՝ ֆիզիքական քաջութիւնը մի երկրորդական ձիրք է, որ պահանջւում է հասարակ զինուորից: Բուշիւ-յի մի առածը ասում է. «Ճշմարիտ քաջութիւնը կայանում է իր պարտականութիւնը կատարելու մէջ»: Միտօցի մի իշխան ասում էր. «Ամենահասարակ կրօնը՝ խեղկատակն անգամ, կուռի ամենատաք բոպէին կարող է խիղախել ու սպանուել: Բայց իրական քաջութիւն է հարկաւոր ապրելու համար կեանքի դժնդակ պայմաններում և սպասելու մահուան, երբ պէտք է մեռնել: Այս պատճառով Սամուրային մասնաւոր բառեր ունի որակելու համար «ազնուականի քաջութիւնն» ու «սրիկայի քաջութիւնը»: Երբ մէկը մեռնում էր մի անանարգ գործի համար, նրա մահը կոչւում էր «շան մահ»:

Ամեն բաներից բարձր էր նկատւում ճշմարտութիւնը և անկեղծութիւնը: «Ճշմարտութիւնը՝ ասում էր մի հռչակաւոր նախկին Դայիմօ՝ անհրաժեշտ է բարձր պահելու համար Բուշիի

նկարագիրը, ինչպէս կմախքը՝ մարմինը: Ինչպէս որ չէինք կարող առանց մեր ոսկորների օժանդակութեան կանգուն մնալ, այնպէս էլ պարզ քաջութիւնը, հմտութիւնը կամ այլնշանաւոր յատկութիւնները բաւական չեն, որպէսզի մի Սամուրայի դառնայ կատարեալ մարդ:»

Մի ուրիշ անձ, ոչ նուազ նշանաւոր, պարզելով Բուշիւօյի սկզբունքները, այսպէս է սահմանում ճշմարտութիւնը. «Մի պարկեշտ կամքի ոյժ է: Ահա թէ ինչ է ասում.—«Ճշմարիտ լինել, իր՝ ինչպէս և ուրիշների առաջ, ոյժ ներշնչել է իրան, առանց վարանումի անելու պահանջուած բանը, պահանջուած ըրպէին. խփել է, երբ հարկաւոր է խփել, մեռնել է քաջութեամբ, երբ հասել է մահուան ժամը:»

Սամուրային իր ճառերի մէջ խօսում է և՛ ճշմարտութեան, և՛ ուղղամտութեան, և՛ քաջութեան մասին, այնպէս որ յաճախ նրանց նշանակութիւնը շփոթում է: Արեւմտեան երկրների ասպետականութեան լեզուի մէջ «ճշմարիտ» բառը մի ընդհանուր բառ է և «ճշմարիտ ասպետ» խօսքը կարող է նշանակել թէ՛ քաջ, թէ՛ ուղղամտ և կամ պարզապէս կատարեալ մարդ: Այսպէս և Գիշի բառը, որի նշանակութիւնն է «անկեղծ մարդ» դարձել է հոմանիշ Բուշիի կամ Սամուրայիի: Ակոյ աւատական իշխանի համբաւաւոր կուսակից «քառասունը եօթ Ռոննները», որ իրանց կեանքը զոհեցին իրանց տիրոջ մահուան վրէժը հանելու համար, և երբ իրանց նպատակին հասն, վերջ տուին իրանց կեանքին, առհասարակ կոչւում են «քառասունը եօթ գիշիները»:

Բուշի-նօ-իցի-գոն, այսինքն «Սամուրայի խօսքը» նուիրական է: Այնպէս, որ մի Սամուրայի համար գրաւոր խօսք տալ կամ պահանջելը շատ նուաստացուցիչ է: Մի ճապոնական երգ այսպէս է ասում.—«Ամենքը պէտք է հաւատան Սամուրային: Նա բարձր է հասարակ մահկանացուներից, ինչպէս կենսանու ծաղիկը՝ ծաղիկների թաղուհին՝ բարձր է միւս ընդր ծաղիկներից: Մի Սամուրայի երբեք իր խօսքին չի գրժում:»

Ահապէս է թիւն այն պատմութիւնների, ուր փառաբանւում է Սամուրայի ճշմարտասիրութիւնն ու պատուասիրութիւնը: Ահա մի օրինակ. մեծ Հիդէյոշիի նախորդ Շոգուն՝ Օտա Նորունագայի սիրական մանկլաւիկի՝ Մորի Ռամմարուի պատմութիւնը.—Մի օր Նորունագա տեսաւ, որ իր մանկլաւիկը համրում էր իր թանկագին սուրի պատեանի վրայ գտնուող ոսկի շրջանակները: Ուղեց այդ գէնքը մանկլաւիկին նուիրել, առանց զրգուելու ուրիշների նախանձը: Շոգունը նոյն երեկոյեան կանչեց իր մարդկանց և ասաց, որ սուրը պիտի նուիրէ

հրան, ով կը գուշակէ պատեանի վրայ գտնուող շրջանակների թիւը: Մինչդեռ ամենքը փորձում էին ճիշտ թիւն ասելով մըրցանակը շահել, միայն Ռամմարուն լուռ էր մնում: Շոգունը հարցրեց թէ ինչո՞ւ չէր մասնակցում մրցումին: «Տէր իմ, պատասխանեց մանկլաւիկը, ինձ համար պատուարեք չէ մասնակցել մրցումին, որովհետեւ մի անգամ հաշուել եմ և ճիշտ թիւը գիտեմ»: Ներկայ եղողներից ոչ ոք կարողացաւ ճիշտ թիւը գուշակել: Շոգուն սուրը նուիրեց մանկլաւիկին:

Նոյն մանկլաւիկը, նախազգուշացրեց Նորունագային, երբ հրա պալատում յեղափոխութիւն ծագեց, որի ժամանակ սպանուեց Շոգունը: Մանկլաւիկը նկատել էր, որ Ակէխի Միցուն հիտէն՝ իշխանի հօր հարկատուներից մէկը, պալատում տրուած մի խնջոյքի ժամանակ այն աստիճան ընկղմուել էր մտածմունքների մէջ, որ անզգալաբար ձեռքից վայր էր գցել փայտեայ այն ցպիկները, որով կերակուրը բերան էին տանում: Եւ որովհետեւ գիտէր թէ Ակէխին շատ վայելուչ և քաղաքաւութիւն մարդ է, մանկլաւիկը մտածեց, որ այդ աստիճան իր անձը սեղանի վրայ ժողանայու համար, բանի տակ անպատճառ մի դաւադրութիւն կար: Յայտնեց Շոգունին, բայց սա չուղեց ուշք դարձնել մանկլաւիկի երկիւղի վրայ, որը չափազանցած և միայն նախանձի արդիւնք համարեց: Բայց մի քանի գիշեր յետոյ, արդարև ապստամբութիւնը պայթեց պալատում և Սամուրայի մանկլաւիկը՝ իր տիրոջ կողքին կռուելով մեռաւ:

III

Ահա մի ուրիշ խոստմնապահ Սամուրայի պատմութիւնը. — Հիրազա Տակամունէ XVI դարում ապրող մի մեծ Դայիմօ էր: Նա երեք տարի պաշարեց Կանագէէ դղեակը և վերջապէս գրաւեց, շնորհիւ մի այնպիսի ճարպիկ ուղղմական խաղի, որը պատիւ կարող էր բերել հին Սպարտացիներին: Դղեակի պաշտպանը, Սուգիհարա Տագասօկէ, ամբողջ ճապոնիայում հռչակուած էր իբրև վարպետ աղեղնաձիգ: Պաշարումը տեւել էր արդէն երեք տարի, երբ Հիրազա Տակամունէ վճռեց վերջ տալ անօգուտ սպանդին. հրաւիրեց թշնամուն զուրս գալ դղեակից, և առաջարկեց երկու անգամ նշան բռնել իրան. եթէ Տագասօկէ կարողացաւ սպանել իրան, իր մահուամբ բնականաբար դղեակի պաշարումը պիտի վերջանար. իսկ եթէ երկու հարուածից յետոյ անկարող եղաւ սպանելու, պէտք է որ անձնատուր լինէր. այդ դէպքում պիտի խնայուէր իր և իր մարդ-

կանց կեանքը: Տաղաօկէ վստահ իր նշանաձգութեան վրայ, ընդունեց առաջարկը և մինչև իսկ, որոշուած չափից կրկին հեռաւորութեան վրայ կանգնեցնել տուեց Հիրազային և այն էլ գիշեր ժամանակ նշան առնելու պայմանով: Երկու պետերի հանդիպումը տեղի ունեցաւ, ինչպէս որոշել էին, զգեակից դուրս և լուսնակ գիշերով:

Առաջին նետը ծակեց Հիրազայի կուրծքը. այս վերջինը անշարժ կանգնած հեգնօրէն աղաղակեց. «Միրելի Սուգիհարա, ծերութիւնդ է արդեօք արգելք դառնում, որ լաւ նշան առնես: Շատ ցածր խփեցիր:»

Տաղաօկէ խաբուելով՝ երկրորդ անգամ աւելի բարձրից նշան առաւ, և նետը Տակամունէի մագերի վրայից անցաւ: Տաղաօկէ ստիպուած եղաւ անձնատուր լինել: Երբ զգեակից դուրս գալով իր հետևորդների հետ հեռանում էր, հանդիպեց մի խումբ մարդկանց, որոնց մի ուրիշ Դայիմօ օղնութեան էր ուղարկել իրան: Երբ այս Դայիմօն՝ առանց գիտնալու թէ բանին լինումն է, սկսեց յանդիմանել Տաղաօկէին անձնատուր լինելու համար, այս վերջինը պատասխանեց միայն. «Հիրազան իր խօսքը պահեց. ես էլ ուզում եմ իմը պահել. որպէս Բուշի՝ ես նախամեծար եմ համարում ամբողջ ունեցածս և կեանքս զոհել քան պատիւս:» Այս պատմութիւնը ստէպ է կրկնում իբր օրինակ տանջանքի մէջ գտնուող Բուշիների ստոյիկեան առաքինութեան և ոյժի:

Մի Սամուրայիի անվայել էր ցաւի կամ յուզումի նշաններ ցոյց տալ իր գէմբի վրայ: Հերոսութիւն էր ոչ հաճոյք և ոչ բարկութիւն արտայտել՝ և նոյնիսկ սիրոյ արտայայտութիւններն անգամ արգելուած էին ուրիշների ներկայութեանը:

Ահա լինելու համար զօր. Նոգի ամենքի հիացումը գրաւեց, երբ Պորտ-Արտուրի առաջ իր երկու զաւակների մահուան գոյժըն առնելով տիրութեան ոչ մի նշան ցոյց չտուեց: Նա իր զաւակների մահուան ակնարկութիւնն է անում Նանչանի ճակատամարտի և 203 մետր բարձրութիւն ունեցող բլուրի զբլաւման վրայ գրած քերթումների մէջ միայն, որոնք այսօր նշանաւոր են դարձել: Բարոնուհի Նոգին անձամբ պատմել է, որ զօրավարը թէև տիպար հայր և ամուսին է, բայց Պորտ-Արտուր գնալուց յետոյ երբէք նամակ չգրեց և իրան թոյլ չըտուեց մի բառ անգամ գրել՝ յայտնելու համար իրանց երկու զաւակների մահը: Սակայն զօրավար Ստեսել պատմեց ինձ, որ Պորտ-Արտուրի անձնատուութեան ժամանակ երբ միմեանց հանդիպել էին, զօր. Նոգի ամենանուրբ քաղաքավարութիւն էր ցոյց տուել, և ոչինչ չէր խնայել, որպէսզի չվիրաւորէ յաղթուած

Թշնամու դիւրագգածութիւնը: Այդ դէպքում զօր. Նոգի կատարելապէս հետեւեց Բուշիդօ-յի վեհանձն սկզբունքներին: Բուշիդօ-Նագտկէ (քաղցրութիւն պատերազմիկի կողմից) մէկն է այդ սկզբունքներից: Ինչպէս Տէնիսըն, այնպէս էլ մի Բուշի բանաստեղծ երգել է. «Ամենաքաջերը՝ ամենաքաղցր մարդիկն են, և ամենախանդակաթները՝ ամենայանդուզն մարդիկը»:

Նրանք, որոնք հմուտ են ճապոնական արուեստին, անշուշտ յիշում են այն ծանօթ նկարը, որ ցոյց է տալիս մի քահանայ, կովի վրայ նստած հակառակ կողմից: Ճապոնական աւանդութեան համեմատ այդ քահանան՝ Ճապոնիայի ամենանշանաւոր պատերազմիկներից մէկն է եղել. Սումուրօ-Ուրայի (1184 թ.) մեծ և վճռական ճակատամարտում, նա՝ գիրկընդխառն կռիւ մղողեց Թշնամի հեծեւորքի առաջապահներից մէկի հետ և նրան վայր առաւ ձիուց: Այդ նախնական ժամանակներում, Բուշիդօ-յի կանոնների համեմատ, մի ասպետ չէր կարող իր սուրը կեղտոտել ստորին ծագում ունեցող մի Թշնամու արիւնով՝ նրա հետ դէմ դիմաց կռուելով: Այդ պատճառով ասպետը հարցրեց հակառակորդից, նրա անունը. երբ պատասխան չստացաւ, կատաղօրէն քաշեց հանեց նրա գլխակաւոր սաղաւարտը: Եւ շատ դարմացաւ, երբ տեսաւ որ իր հակառակորդը տամնվեց տարեկան, անբեխ մի երիտասարդ էր: Վերցնելով նրան և նստեցնելով իր ձիու քամակը, ասաց. «Երիտասարդ իշխան, վերադարձէ՛ք ձեր մօր մօտ. այս ձեր տեղը չէ: Կուժապայայի սուրը չպէտք է հոսեցնէ մի երեխայի արիւնը»: Երիտասարդը մերժեց փախչել, ասելով, որ նախամեծար է համարում մեռնիլ, քան արժանանալ այդ տեսակ վերաբերմունքի: Ասպետը նորից սուրը քաշեց պատեանից, բայց յանկարծ յիշելով, որ իր զաւակն էլ, այդ օրը, առաջին անգամ կռոււմ էր, սուրը տեղը դրաւ: Նոյն ընդմիջում մի խումբ մարդիկ անցնում էին ճակատամարտի դաշտից:

—Եթէ ձեր ձեռքով չմեռնեմ, գոչեց երիտասարդը, անպատիւ մահ պիտի գտնեմ այս ստոր ծագումով մարդկանց կողմից:

Այն ժամանակ Կուժապայա սպանեց երիտասարդին: Բայց նա այնքան ցաւ զգաց դրա համար, որ երբ վերադարձաւ, ամեն պատիւ մերժեց, գլուխը քերծեց, և հակառակ կողմից կովի վրայ նստելով, երկարատե ուխտադնացութեան ելաւ. կովի վրայ հակառակ կողմից նստաւ, կռնակը միշտ դէպի արեւելք, այսինքն դէպի ապաւան՝ դարձրած լինելու համար: Աւելի վաւերական են գուցէ, տիրապետութիւն ձեռք բերելու համար իրար դէմ կռուող Թշնամի ցեղերի՝ պատերազմում միմեանց

ցոյց տուած վեհանձնութեան մասին շրջող մի քանի հրաշալի պատմութիւնները, որ վերաբերուած են մեծ աշխարհակալ Հիւգօյի ժամանակաշրջանին: Էշիգօյի աւատական իշխան Ուէզուգի Կէնշին և Կայի իշխան Տակէդա Շինգէն՝ մի անգամ միմեանց դէմ կռիւ էին մղուած: Այդ կռիւը իսկապէս առաջ էր ելել նրա համար, որ Բուշիյո-յի հիւրասիրական կանոնները չէին յարգուել. ապա թէ ոչ Տակէդա և Ուէզուգի՝ ոչ քաղաքական և ոչ անձնական պատճառ ունէին կռուելու: Շինանօյի բարոններէց մէկը, Մուրակամէ Եօշիկիօ, իր կալուածքներէց արտաքսուած լինելով Շինգէնի կողմից, գնաց Կէնշինի մօտ և խնդրեց, որ ապաստան ու պաշտպանութիւն շնորհէ և վրէժխնդիր լինի: Կէնշին պատրաստուած էր Կիօտօ դնալու և պահանջելու պետական խորհրդականի իր պաշտօնը. բայց երբ տեսաւ որ իր հօր ամենաոխրելի թշնամիներէց մէկը՝ Մուրակամէն, եկել է իրանից ապաստան խնդրելու, իսկոյն ընծայեց նրան պաշտպանութիւն և Բուշիյո-յի օրէնքները յարգելով՝ շատ վեհանձնօրէն վարուեց իր հօր թշնամու հետ: Կէնշին հրամայեց այն զինուորներին՝ որոնք պիտի ընկերանային իրան մինչև Կիօտօ, յարձակուել Կայի վրայ: Տասը հազար մարդկանց գլուխն անցնելով՝ յանկարծ իջաւ այն լեռան ստորոտը, որը տանուած էր դէպի Կայ: Անցքը պաշտպանուած չէր. հազիւ 800 պահապան զինուոր՝ Շինգէնի ապագայ գահաժառանգ Կացուեօրիի հրամանատարութեամբ՝ բանակ էին դրել անցքի մօտերը: Թէրմոպլէի 300 քաջերի նման, Կացուեօրիի արևի զօրքերը խոյացան դէպի անցքը, դիմադրելու համար Կէնշինի ջախջախիչ բանակին: Կէնշին այնքան հիացաւ Կացուեօրիի զինուորների քաջութեան վրայ, որ հրամայեց իր բանակին առանց ճակատամարտ մղելու յետ քաշուել. միայն մի նետ արձակել տուեց Կացուեօրիի բանակի մէջ. նետի շուրջը փաթաթել էր մի նամակ՝ ոտանաւոր գրուած՝ շնորհաւորելու Կացուեօրին՝ իր զինուորների արիութեան համար: Դրանից յետոյ տեղի ունեցած մի կռուած, նոյն էշիգօյի ասպետը՝ շատ սիրելի դարձաւ իր ժողովրդին և անգամ իր թշնամիներին, որովհետև ահագին ջանք գործ էր դրել աղի սովի ատաջքն առնելու, որը արդիւնք էր առևտրի խանգարման և Կայի իշխանի դէմ մղուած կռիւների: Նրբ լսեց, որ ժողովուրդի մէջ աղի սով է տիրում, Կէնշին զայրացած ապաղակեց, որ նա կռուում էր յանուն զինուորական պատուի և ոչ թէ սովի աղէտին մատնելու համար շինականներին: Եւ Կայի ժողովրդին բաժանել տուեց իր մագաղիններում ամբարուած աղի մթերքը և միևնոյն ժամանակ արգելեց Էշիգօյի վաճառականներին աղը թանգ դնով ծախել օտար

գաւառի բնակիչներին: Կէնշին յայտնի էր իր խիղախ գործերով: Յաճախ մի բուռը մարդկանց գլուխն անցած՝ որոնում էր Շինգէնին, որպէսզի մի վճռական կռուով հաշիւը վերջացնէ նրա հետ:

Մի օր, Կաւմանականի մայի (1554) համբաւաւոր ճակատամարտում, կռուի ամենատաք բոսիւն, յաջողուեց նրան պատահել Շինգէնի. երբ պատրաստում էր սպանել նրան, Շինգէնի թիկնապահներէց մէկը նիզակը խրելով տիրոջ ձիու կողը, խրտնեցրեց ձիուն և այդպէս ազատեց տիրոջը: Քիչ յետոյ երբ զինադադար կնքուեց, Կէնշին մի ամբողջ թանկագին զրահ ուղարկեց Շինգէնի, որպէսզի յանձնէ ուղղամիտ թիկնապահ Սամուրային, իրրև վարձատրութիւն նրա մատուցած ծառայութեան: Բուշիլոյի մասին գրուած ճապոնական գործերի մէջ յատկապէս յիշուած է այս պատմութիւնը իրրև հոյակապ օրինակ «Թշնամուն ընծայուած յարգանքի»:

Շինգէն պատրաստում էր մի նոր արշաւանք կատարել Էշիգոյի վրայ, երբ յանկարծ մեռաւ (1573). երբ նրա մահուան լուրը հասաւ Կէնշինի, այս վերջինը ճաշում էր. իր հակառակորդի մահը լսելով՝ Կէնշին իրան այնքան վատ զգաց, որ անկարող եղաւ վերջացնել ճաշը: Նա չուղեց լսել իր հարկատու իշխանների և դաշնակիցների խորհուրդը՝ օգուտ քաղելով Շինգէնի մահից յարձակուել նրա վրայ, գրաւել նրա հողերը: «Մի՞թէ կարելի է լինել այդ աստիճան անարգ, և կործանել մի իշխանական գերդաստան, որի պետի կենդանութեան ժամանակ չկարողացայ ոչինչ անել:»

Կէնշին, իր մեծ հակառակորդի և մրցակցի մահից յետոյ, էլ չկռուեց Կայի դէմ: Պատմում են, որ Շինգէն՝ շատ ժամանակ յետոյ, ըմբռնելով իր հակառակորդի նկարագրի ազնւութիւնը, մահուան անկողնում, խորհուրդ է տուել իր որդուն հաշտութիւն կնքնել և նոյնիսկ դաշնակցել Կէնշինի հետ միւս Դայիմոնների դէմ: Կացուեօրի շատ հպարտ էր և իր հօր խորհրդին չհետևեց. թէև Կէնշին նրան ջնեղեց, բայց Նոբունագայի Շոգունը յարձակուեց նրա վրայ, վերջի վերջոյ յաղթեց և հողերն էլ գրաւեց: Այդ իշխանական տան անկումը (1582 թ.) ճապոնիայի Միջին Դարու պատմութեան ամենաողբերգական անցքերից մէկն է:

IV

Պորտ-Արտուրի անձնատուութեան առիթով՝ վերջին ժամանակներումս, ճապոնական վիճարանութիւնների ընթացքում քանիցս յիշատակուեց մի ուրիշ ոչ նուազ ողբերգական դէպք:

Դա Շիմիցու Մունէհարու կամ Շոդաէմոն յորջորջող իշխանական տան անկման պատմութիւնն է, Տակամացուի գղեակի յանձնուելուց յետոյ: Շոդաէմոնը մի փոքրիկ բարոն էր, որ բնակւում էր Բիցհուում, երբ Տայկօ Հիդէյօշի աշխարհակալը յարձակուեց նրա վրայ: Շոդաէմոնը Մորի ցեղի հարկատու իշխաններից մէկն էր. որքան որ էլ միւս բոլոր ասպետները անձնատուր էին եղել, ինքը յամառօրէն ղիմադրեց, պաշտպանելով իր գղեակը Տայկօյի ջախջախիչ ոյժերի դէմ:

Պաշարումը երկար տևեց: Վերջի վերջոյ Տայկօ առաջարկեց նրան անձնատուր լինել, խոստանալով Բիցհուի իշխան կարգել: Շոդաէմոնը մերժեց Տայկօյի առաջարկը: Տայկօ այն ժամանակ Կամբէ գետի ընթացքը փոխեց, որպէսզի գղեակը ջրով ողողէ և այդպիսով ստիպէ նրան անձնատուր լինել: Շոդաէմոնը նորից ղիմադրում էր, դեռևս յուսալով, որ Մորիի իր վեհապետից օգնութիւն կը ստանայ: Եւ անա յանկարծ մի պատգամաբեր, թշնամու գիծը պատռելով՝ եկաւ յայտնեց նրան, որ չպէտք է որևէ յոյս դնէ Մորիից օգնութեան վրայ, և թէ լաւագոյն բանն է անձնատուր լինել: Տեսնելով, որ ղիմադրութիւնն էլ անօգուտ է և չուզելով գղեակի անկումից յետոյ ապրել, մարդ ուղարկեց Տայկօյի մօտ և յայտնեց, որ համաձայնում է գղեակը յանձնել և իր անձը զոհել, այն պայմանով սակայն, որ խնայեն իր մարդկանց, կանանց և երեխաների կեանքը: Նրա առաջարկը ընդունուեց և Շոդաէմոն պատրաստուեց անձնապան լինել: Մի Սամուրայի վախենալով՝ որ ֆի գուցէ իր տէրը Բուշիդօ-յի բարդ կանոններով նուիրագործուած Հարա-կիրիի ⁽¹⁾ արարողութիւններից որևէ մէկը մոռանայ, ինքը անձնասպան եղաւ, ցոյց տալու համար թէ ի՞նչպէս պէտք էր անել: Որոշուած օրը Շոդաէմոն, իր հետ վերցնելով ափն Սամուրայիները, որոնք ուղում էին իր հետ անձնասպան լինել, նաւակով գնաց նշանակուած տեղը, ուր պիտի Հարա-կիրի անէր երկու բանակների ներկայութեամբ: Տայկօ Հիդէյօշի պատուիրակներ էր ուղարկել ընդառաջ և ճոխ սեղան սարքել՝ Շոդաէմոնի և նրա հետևորդների համար: Շոդաէմոն՝ իր վերջին ընթրիքը՝ մի Սամուրայիի յատուկ շնորհալի ձեւերով կատարելուց յետոյ, վերկացաւ և իր նաւի կամրջակի վրայ կանգնած՝ սպասող ահագին բազմութեան առաջ, Նօի մեծ դրամայից մի հատուած երգեց սամիզէն ածելով: Յետոյ ինքն ու Սամուրայի անձնասպան եղան Հարա-կիրիի ծէսերի և Բուշիդօ-յի աւանդութիւնների

1) Փորը ճղելով անձնասպան լինելու գործողութիւնը կոչուած է Հարա-կիրի:

համեմատ: Ճապոնական արուեստի համար երկար ժամանակ սիրական նիւթ դարձաւ Շոգաէմոնը՝ հովահարը ձեռքին իր նաւի վրայ կանգնած երգելիս: Պորտ-Արտուրի անկման ժամանակ, այս այնքան յուզիչ մահուան պատմութիւնը ճապոնացի բոլոր պատմիչների կողմից դիտմամբ վերարծարծուեց, իբր մի ցայտուն օրինակ, որին զօր. Ստեսէլ կարող էր հետևել, բայց չհետևեց:

V

Պորտ-Արտուրն անձնատուր լինելուց առաջ ճապոնացիների մեծ մասը հաստատ կարծում էր, թէ զօր. Ստեսէլը պիտի գերադասէր անձնապան լինել, քան ապրել բերդաքաղաքի անկումից յետոյ: Նոյնիսկ մի կարևոր, առաջագէմ թերթ, ազնուապետական Միպպոնը, այն միակ լրագիրը որ հաճում է կարդալ Միկադօն, հետևեալը գրեց.

«Զօրավար Ստեսէլի անձնատուր լինելը յարգանքի արժանի է, որովհետև նա ոչինչ չխնայեց իր երկրի շահերի համար. բայց եթէ նրա տեղը մի ճապոնացի լինէր, այն ժամանակ հարցը բոլորովին այլ կերպարանը կը ստանար: Վերանորոգման պատերազմի ընթացքում Արիդու և մինչև անգամ Հակոդատէի Գորիօկակա բերդերն անձնատուր եղան: Այդ բերդերի պաշտպանները Նիպպոն այլ եայլ ցեղերի ներկայացուցիչներ էին և կուտւմ էին կայսերական դրօշակի դէմ. ուրեմն ճապոնացի հպատակներ՝ Արիդու և Գորիօկակայում անձնատուր եղան ճապոնացիների. բայց այնուամենայնիւ, նրանք ըննադատութիւնից զերծ չմնացին: Բայց եթէ Կուամոտոյի կայսերական բերդը՝ Սացումայի բանակի առաջ, այս վերջինի ապստամբութեան ժամանակ, նոյնիսկ պաշարի բացարձակ սպառման պատճառով՝ անձնատուր եղած լինէր, սպաները երբէք չէին արժանանայ ներդրամութեան: Նմանապէս, եթէ ճապոնացի սպաներ՝ 1894—1895-ի կուռի ընթացքում անձնատուր եղած լինէին չինացիներին, ինչ հանգամանքի տակ էլ որ այդ անձնատուութիւնը տեղի ունեցած լինէր, հաւանական է, որ այդ սպաները երբէք չընդունուէին ճապոնիս: Զօր. Ստեսէլ՝ իբրև պայման ազատութեան, ստորագրութեամբ յանձնառու եղաւ այլևս զէնք չվերցնել ճապոնիայի դէմ, և ներկայ պատերազմի ամբողջ ընթացքում ճապոնական շահերի հակառակ որևէ բանում չմասնակցել:

«Զօրապետ Ստեսէլի այդ վարմունքը շատ տարօրինակ է թւում մեզ՝ ճապոնացիներին: Յարը, երևի, թոյլ տուեց այս պիտուրականին վերադառնալ երկիր. բայց նմանօրինակ դէպքում

հչ մի ճապոնացի սպայ, բացի Միկադոյի առանձին թոյլտուութեան, չպիտի համարձակուէր հայրենիք վերադառնալ: Եթէ մի ճապոնացի զինուորական ներկայ պատերազմի ընթացքում, Ռուսաստանի շահերի հակառակ չդորժելու հանդիսաւոր ստորագրութիւն տուած լինելով Ճապոնիա վերադառնար, անկասկած հչ մի ճապոնացի յարաբերութիւն չպիտի ունենար նրա հետ: Եթէ զօրաբանակի հրամանատարութեան չափ կարեւոր պաշտօն ունեցող մի սպայ, իր մարդկանցից և սպաներից մեծ մասին թշնամու ձեռքը պերի թողած՝ Ճապոնիա վերադառնար, հազիւ կարելի է երեակայել թէ լինչպիտի ընդունելութեան կ'արժանանար. ոչ միայն նրա վարմունքը խիստ քննադատութեան կ'ենթարկուէր, այլ...

«Հանգուցեալ հրամանատար Հիրոգը երդում արեց, որ եօթանգամ պիտի աշխարհ դար, կռուելու իր վեհապետի և իր երկրի համար: Եթէ նա դժբաղդութիւնն ունենար ռուսների ձեռքէն ընկնելու, պատուաւոր խօսք տալով ազատ արձակուելուց հազար անգամ պիտի նախընտրէր իր երկրի թշնամու դէմ կըռուել, արհամարհելով բանտարկութիւնն ու մահը: Հրամանատար Հիրոգին խանդավառող ոգին, Բուշիդօ-յի ոգին էր, հէնց այն ոգին, որ ոգևորում է մեր բանակն ու նաւատորմը:

«Մենք վստահ ենք, որ թշնամու դէմ կռուող մեր բոլոր մարդիկը պարտութեան դէպքում պիտի մերժէին ազատ արձակուել այդպիսի պայմաններով: Նոյնիսկ չինական վստասիրտ նաւատորմի ծովակալ Փինգը՝ իր վրայ վերցնելով պարտութեան պատասխանատուութիւնը՝ անձնասպան եղաւ, խնայելու համար իր սպաների և նաւաստիների պատիւը:

«Եթէ Ռուսաստանի զինուորական պատուի օրինագիրքը կարող է ազատ արձակել զօրավար Ստեսէլին, ճապոնականը երբէք չի կարող նոյնն անել: Ճապոնական Բուշիդօ-ն երբէք չէր ների մի սպայի այն՝ ինչ որ արեց Ստեսէլ: Գուցէ սխալ է քննադատել այս զօրավարին մեր Բուշիդօ-յի տեսակէտից, որովհետեւ նրան դատելու համար պէտք է նկատի առնել նրա երկրի բարբերն ու սովորութիւնները: Բայց մեր սպաներն ու զինուորները երբէք չեն մոռնայ, որ պարտաւոր են գործել Բուշիդօ-ի սկզբունքների համաձայն:»

Բարոն Սուեմացու, La Revue-ի բարձր աշխատակիցը, իր մի նշանաւոր գործում, Բուշիդօ-յի խնդրում Հարա-կիրի-ի դերի մասին խօսելով, պերճախօսօրէն պաշտպանում է ճապոնացիների մէջ արմատացած անձնասպանութեան այս դավաբը, հաստատելով, որ անհրաժեշտ է Հարա-կիրի-ն

անպատուութիւնից խոյս տալու, մի բարեկամի աղաատելու, կամ իր մի յանցանքը քաւելու համար:

Ճապոնական պատմութեան մէջ շատ օրինակներ կան, որ ազնուականները իրանց կեանքը զոհել են ամենայարգելի նկատումներից զրդուած. նրանց ցոյց տուած օրինակները աւելի ուշագրաւ են, քան Արեւմուտքի պատմութեան մէջ երևացած Սոկրատի, Կատոնի, Բրուտոսի, Պետրոնէի, կամ Սենեկայի օրինակները: Հեղինակը դիտել է տալիս, որ միայն ճապոնացին չէ, որ մահը նկատում է իբր միակ քաւութիւն անպատուութեան: Դոկտ. Նոտիրէ նոյնպէս, իր վերև յիշուած գործում, Հարա-կիրի-ի նուիրած գլխում նկատում է, որ Արեւմուտքի գրականութեան մէջ էլ կարելի է գտնել մի հաշակաւոր բանաստեղծի հետեւալ. տողերի նման խօսքեր.

«Երբ պատիւը կորչում է, աւելի լաւ է մեռնել.

«Ամօթից փրկուելու միակ միջոցը մահն է:»

Մի Սամուրայի լինելու էր, անկասկած այն մարդը, որ հետեւալ խօսքերն է ասել:

«Ո՛չ որ չպէտք է ապրի ամօթ կրելուց յետոյ. որովհետև ամօթը նման է ծառի վրայ առաջ եկած վէրքին, որ քիչ քիչ տարածուած է և ժամանակի ընթացքում աւելի վտանգաւոր դառնում:»

Սակայն մի Սամուրայի հոմար պատուաբեր չէ բնաւ անօգուտ մահ վնասուել: Ճապոնացիների սիրած պատմութիւններից մէկում խօսւում է մի պատերազմիկի մասին, որ պարտութիւն պարտութեան վրայ կրելուց՝ իր ընտանիքն ու բարեկամները կորցնելուց, վերջին նետն արձակելուց, ու իր հեծած ձին սպանուելուց յետոյ միայն որոշեց ապաստան գտնել մի ծառի խոռոչում և չուղեց մեռնել յանկարծաբանելով հետեւալ քերթուածը, որ հաշակաւոր է Ճապոնիայում:

«Դուք ըռլորդ, աղէտնե՛ր, դուք պարտութիւններ և պատուհասներ,

«Ձեր կարող հոգիս կրել մինչև երկիր.

«Դուք ինձ միայն սովորեցրիք աւելի հեշտութեամբ կրել դժբաղդութեան բեռը»:

Այսօր, Ճապոնիայում, օտար ծագում ունեցող պրոֆէսորների մէջ նկատուում է մի ձգտում. այն է Բուշիդօ-յի սկզբունքը, արիւնով վրէժխնդիր լինելու հնացած կարգերը, Հարա-կիրի-ն ողբալ, որը սակայն նոյնքան հին է, որքան սուսերամարտութեան և ազնւանազութեան սովորութիւնը: Այսպէս Տոկիօյի համալսարանի պրոֆէսոր Շիգա, Պորտ-Արտուրի առման վրայ գրած իր մէկ յօդուածի մէջ ասում է. «Բուշիդօ-յի սկզբունքնե-

րը, անհատական քաջութիւնը, այդ բոլորը ոչինչ չարժեն առանց ներկայ գիտութեան օժանդակութեան:»

Դա անժխտելի է. բայց պրոֆէսորը աւելի ճիշտ արտայայտած կը լինէր իր ժողովրդի իսկական զգացումները, եթէ ասէր, որ ներկայ գիտութիւնը մենակ ոչինչ չարժէ պատերազմի ընթացքում, եթէ անհատական քաջութիւնը Բուշիդօ-յի դաստիարակութեամբ չէ մամրադնդուած:

Բուշիդօ-ն այն ոյժն է, որ յաղթեց չինական պատերազմում: Եալուի գետաբերանի առաջ կործանուած չինական մարտանաւերը՝ նոյնքան նոր էին և նոյնքան լաւ նաւաստիներ ունէին, որքան ճապոնական նաւատորմի մարտանաւերը և նաւաստիները. ինչպէս և չինացիների հրաձգութիւնը ոչ նուազ աւերիչ էր, քան ճապոնացիներինը: Աւելին կայ: Չինացիներին հրամայում էին եւրոպացիները: Բուշիդօ-ն էր որ ցիրուցան արեց սակայն ծովակալ Վիտգէֆտի նաւատորմը, որը ծով. Տոգոյի նաւատորմի չափ ուժեղ էր. միևնոյն Բուշիդօ-ն էր որ փախցրեց և Պորտ-Արտուր մտցրեց իշխան Ռախտոմսկուն: Նրանք որ լաւ ճանաչում էին ռուսական նաւատորմը, յայտարարեցին, որ ռուսները այն ժամանակ միայն կարող էին յոյս ունենալ յաղթելու ճապոնացիներին, երբ կը յաջողէին թշնամու իւրաքանչիւր մարտանաւի դէմ հանել երկուսը: Սա՛՝ ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մի յարգանք՝ ընծայուած՝ ճապոնական Բուշիդօ-յին՝ նոյնքան անկեղծ յարգանք, որքան Կուրոպատիկինի յետագայ խօսքերը. «Եթէ ուզում ենք Մանջուրիայում մի որեւէ կտիւ շահել, անհրաժեշտ է, որ թուական գերակշիւ առաւելութիւն ունենանք:»

Պատերազմի դաշտում ճապոնական զինուորի ցոյց տուած ուժուց դատելով ասում եմ, որ և՛ Բուշիդօ-ն, և՛ Հարա-կիրի-ն, որը համարեա արգէն բոլորովին ջնջուել է ներկայ պատժական օրինազրքով, պիտի վերացուեն: Բայց Բուշիդօ-յի ոգին կենդանի կը մնայ ճապոնիայում այնքան երկար ժամանակ՝ որքան նա կարող կը լինի ճապոնացի զինուորի մէջ անաղարտ պահել իդէալական առաքինութիւնները. քաջութիւն, զօրեղ նկարագիր, աննենգութիւն, քաղաքավարութիւն, վեհանճնութիւն, համեստութիւն, շիտակութիւն, ճշմարտութիւն և զինուորական պատիւ:

ՔՆՆԱԳԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԾՍՈՒԹԻՒՆ

Վ. Լուկիեիչ՝ «Կապիկներ», պատկերազարդ, թարգմ. Յ. ք. Սառիկեանի,
1905, Թիֆլիզ, 15 կ.:

Պ. Վ. Լուկիեիչը յայտնի է իրրև բնական պիտուածիւնները լաւ ժողովրդականացնող գրող և դասախօս: Նրա գրչի տակից դուրս են եկել բազմածիւ բրօշիւներ, որոնց ամբողջութիւնը բնագրիւմ է տիեզերքի բոլոր երևոյթները: Յ. ք. Սառիկեանը արդէն թարգմանել էր «Բնական երկու մեծ թագաւորութիւնները», այժմ տալիս է «Կապիկները» և մտադիր է թարգմանել պ. Լուկիեիչի և միւս աշխատութիւնները: Այժմ, երբ վերաբացւում են մեր դպրոցները, հայ մանուկների համար մտաւոր շատ լաւ մնունդ են ներկայացնում յիշած հեղինակի բոլոր ժողովրդականացրած գրքոյկները:

Թարգմանական լեզուն վատ չէ:

Գ. Լեւոնեան՝ «Դժագրութեան և նկարչութեան տարրական դասընթաց», առջին մաս, 1905, Թիֆլիզ, 20 կ.:

Մեր դպրոցները բաւական զուրկ են լաւ կազմած դասագրքերից. այդ կողմից առատութիւն է միմիայն կրօնական դասագրքերի մէջ, որոնց մեծագոյն մասը մի աւելորդ բեռն է և լոկ շահադիտական գործ... Պէտք է մեծ ուշադրութիւն դարձնել միւս առարկաների դասագրքերը կազմելու վրայ: Վերև առաջ բերած դասագրքերը կարող է համարուել՝ աջող ձեռնարկ «Դժագրութեան և նկարչութեան»:

Դոկտր Կ. Փառայեան, «Ճնդարձակ դպրացական առողջապահութիւն», 1905, Ալէքսանդրիա, 2 լ., բաժանորդագրութեամբ:

Այս օգտակար և մեր կրթական գործի համար անհրաժեշտ

հրատարակութիւնը սկսել է լոյս տեսնել պրակներով: Յարդ տպած 64 երեսներից կարելի է հզրակացնել որ հայ ուսուցիչները, ծնողները և նոյնիսկ հասակաւոր աշակերտները կ'ունենան մի հմուտ ուղեցոյց՝ դպրոցական առողջապահական դասադաս հարցերում: Պարզ ոճը, բաղձաթիւ պատկերները դիւրաւ մատչելի են զարմնում ճոխ բովանդակութիւնը: Յանկալի է, որ մեր բոլոր կրթարանները բաժանորդ գրուեն և այդպիսով արագացնեն այդ աշխատութեան տպագրութիւնը այս ուսումնական տարուայ սկզբում:

С. А. Мелик-Саркисянц, «Хлопковое дело в Ферганской области и меры к его упорядочению», Москва, 1904 г.

Ինչպէս գրքի վերնադրից երևում է, որ պ. Մելիք-Սարգսեանի նպատակն է ծանօթացնել ընթերցողին բամբակագործութեան այժմեան դրութեան հետ ֆերգանում, և ցոյց տալ այն միջոցները, որոնց շնորհիւ գիւղատնտեսութեան այդ ճիւղը կարող է զարգանալ այնտեղ:

Դժուար է ամբողջ Ռուսաստանում ցոյց տալ մի տեղ, որը աւելի յարմար լինի բամբակագործութիւնով պարապելու համար, որքան ֆերգանն է: Այստեղ բամբակի մշակութիւնը վերջին 10—15 տարում արել է մեծ առաջադիմութիւն, որը կարելի է տեսնել հետևեալ թուերից. 1889 թ. բամբակի ցանքսերը բունում էին 50,396 դեսետին, 2,270,000 փութ բամբակի (կորիզներով) արդիւնարեւութիւնով. մինչդեռ միևնոյն թիւը՝ 1901 թ. հասնում էր 233,685 դեսետաինի, 11,688,320 փութ բամբակով: Հետաքրքիր է այստեղ նկատել, որ տեղական բամբակի ցանքսերը զգալի կերպով պակասում են, իսկ ամերիկական բամբակինը աճում: Օրինակ. 50,396 դես. ցանքսերից 22,490 դես. տեղականն էր բունում, իսկ 27,906 դես. ամերիկականը. մինչդեռ 1903 թուին 149,019 դես. առաջինի ցանքսերը բունում էին 12,954 դես., իսկ երկրորդինը՝ 136,065 դես.:

Այդ նոյն աղիւսակից, որտեղ բերուած են վերոյիշեալ թուերը, երևում է, որ բամբակի ցանքսերի տարածութիւնը վերջին տարիների ընթացքում ոչ թէ չեն աճում, այլ նոյնիսկ զգալի կերպով պակասում են: Այս երևոյթը բացի պատահական պատճառներից, բացատրւում է, գլխաւորապէս նրանով, որ ֆերգանում համարեալ էլ ազատ հող չի մնացել և երկրորդ, որ կեանքի համար անհրաժեշտ պիտոյքների գները շատ բարձր են, այնպէս, որ ֆերգանի գիւղացիք ստիպուած են աճեցնել Սեպտեմբեր, 1905.

աւելի էկրտինսիւ բոյսեր, ինչպէս են ցորեն, գարի, որպէսզի
դոնէ ապահովեն իրանց ապրուստը:

Նստելով այսպիսով իր գրքի առաջի մասում բամբակադործութեան ղարգայման աննպաստ պայմանների մասին, պ. Մելիք Սարգսեան գրքի երկրորդ մասում առաջարկում է մի շարք միջոցներ:

Այս մասում պ. Մելիք-Սարգսեան ոչ մի նորութիւն չի ասում, այլ կրկնում է այն բոլոր միջոցները, որոնք դեռ մի քանի անգամ առաջարկուել են բամբակադործների համաժողովներում, և որոնց մասին մենք առիթ ենք ունեցել խօսել «Մուրճ»-ի այս տարուայ համարներից մէկում*):

Յամենայն զէպս գիրքը կազմուած է գործին և պայմաններին լաւ տեղեակ մարդու ձեռքով և հետաքրքիր է:

Նր. Սար.

ՆՈՐ ՄՏԱՅՈՒԱԾ ԳՐԲԵՐ

- 1) Մեսրոպ վարդապետ, «Էջմիածին և հայոց հնագոյն եկեղեցիներ» (հայերէն, ռուսերէն և գերմաներէն լեզ. և բազմաթիւ պատկերներով), 1905, Պետերբուրգ, 1 ր.:
- 2) «Կանոնադրութիւն զեմսովային նահանգական և զաւուական հաստատութիւններին», Բարձրագոյն հաստատուած 1864 թ. յունիսի 1-ին:
- 3) Փառնակէս, «Չուտողի մալը ուտողին հալալ ա» կամ «Ճարպիկ փաստարան», վողըվիլ 1 արար., 1905, Երևան, 40 կ.:
- 4) Փառնակէս, «Նօլերա», վող. 1 արար., 1905, Երևան, 40 կ.:
- 5) Մ. Տէր-Սարգսեան, «Իմարկածները» (զուարճալի իրողութիւն) 1905, Երևան, 20 կ.:
- 6) Միր-Հաղօր, «Յեղափոխական վիպակներ», 1905, Բոստոն, 5 սէսթ:
- 7) Nerses Ter-Mikaëlian. «Das Armenische Hymnarium» Studien zu seiner geschichtlichen Entwicklung. 1905, Leipzig:
- 8) «Натуральная оспа и совѣты матерямъ при оспопрививаніи дѣтей. сост. ст. мед. Г. Апресянцъ.

*) № 1 էր. 140.

- × 9) Ա. Պալեան, «Թրքուհին», (Միջագետքի մը Եղեմիոյ կոտորածէն), 1905, Գահիրէ, 50 սանթիմ:
- 10) Տիկին զը Փալօֆ, 1 «Հայրենիքի համար», 11 «Տառնապետ Անվար», Թարգմ. ֆրանս. Մ. Ղ. 1905, Նոր-Ջուղայ, 10 շահի:
- × 11) А. Агаронянъ. «Разсказы» (Трилистникъ, Толпа, Темница) пер. А. Генджіанъ, 1905, Армавиръ, 30 коп.
- × 12) Վ. Լուսինի. «Կապիկներ», (պատկերազարդ) Թարգմ. Յակոբ քն. Սառիկեանի, 1905, Թիֆլիս, 15 կոպէկ:
- 13) Совѣщаніе учителей начальныхъ училищъ. (перепечатано изъ №197 газ. «Кавказъ»), 1905, Тифлисъ.
- × 14) Ատրպետ, «Երկերի ժողովածու», հատոր չորրորդ, 1905, Թաւրիզ, 1 ր.:
- × 15) Գարեգին Լևոնեանց, «Գծազրութիւն և նկարչութիւն», Ամաս, 1905, Թիֆլիս, 20 կոպէկ:
- × 16) Լ. Ն. Տոլստոյ, «Կրէյցերեան Սօնատ», Թարգմ. Մ. Մ. Ղազարեան, 1905, Թիֆլիս, 50 կոպէկ:
- × 17) Մարգար, «Հալածանքի Ծնունդը», քերթուածք, (Բարիի երգերից), 1905, Ալեքսանդրապօլ, 20 կոպէկ:
- 18) Г. М. Тумановъ. «Характеристики, и воспоминанія» книга вторая, 1905, Тифлисъ, ц. съ пересылкой—50 к.
- 19) С. А. Меликъ-Саркисянъ «Хлопковое дѣло, въ Ферганской области и мѣры къ его упорядоченію» 1904, Москва.
- × 20) Դոկտ. Կ. Փաշայեան, «Պատկերազարդ Դպրոցական Առողջապահութեան» առաջին երկու պրակները. Ալեքսանդրիա:
- × 21) Մ. Մինասեան, «Բնաշրջականի մը ներշնչումները», 1905, Բոստոն:
- 22) Հաշիւ Նոր-Նախիջևանի հայազգի աղքատաց Եկեղեցական Հոգաբարձութեան 1904 թ. գործունէութեան, 1905, Նոր-Նախիջևան:
- 13) Ա. Ի Կրամնեցկի, «Արցունք», աղատ Թարգմ. օր. Մ. Ս. 1905, Ս. Պետերբուրգ, 15 կ.:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Լսմանիւրդցին բուրբ-քարաւների մասին:—Համալսմանականների տոհմիւն:—Միջոցներ բաղաւթիական կռիւներին վերջ դնելու:—Հայոց դպրոցների վերաբերեալ կարգադրութիւն:—Պետական Գումայի իրաւասութիւնը: Համալսարաններին շնորհուած ինքնավարութիւնը:

Անցած օգոստոս ամսուս տեղի ունեցած մի քանի միութարական անցքերը, այն է՝ հայոց եկեղեցական կալուածների և ուսումնարանների վերադարձումը, Պետական Գումայի հաստատումը, խաղաղութեան կնքումը Ճապոնիայի հետ և տեղական ինքնավարութեան նախապատրաստական աշխատանքները—առանձին ողորութիւն չարուցին մեղանում՝ շնորհիւ արեան, հրդեհի և անլուր բռնութիւնների այն ահաւելի տեսարանների, որոնց նմանները անցել են միմեայն հայի գլխով, սկսած այն օրից, երբ թուրք-թաթարական օրդունները իրանց անվերջ ասպատակութիւնների ասպարէզ դարձրին փչացած Բիւզանդիոնի ոյժին ապաւինած Հայաստանը: Թուրք-թաթարական գաղանդութիւնների տկանատես հայ պատմագիր Լատիվիւրդյու Նկարագրութիւնները կարգալիս մարդ տկամայ համեմատում է մեր օրերը, և սոսկումով նկատում՝ որ Նի-րդ վարից իվեր շատ քիչ են փոխուել «մարդագէմ գաղաններին» ցեղային բնագոյնները, թուրք-թաթարների այժմեան և այն ժամանակուայ գործողութիւնների մէջ տարբերութիւնը միայն այն է, որ նետի փոխարէն այժմ դրանք հրադէն են գործածում: Տուրքիի հրոսակները ասպատակութիւններով աւերեցին Հայաստանի բոլոր գաւառները, շէն քաղաքներն, աւանները և գիւղերը, սրի, հրի և թալանի մատնելով ամեն ինչ: Բոլոր աշխարհը լցուել էր գիւղերով, «շէնք և անշէնք, ճանապարհք, անապատ տեղիք, քարանձաւք և առապարք, անառաւսիտ մայրիք, և ավափայ վայրք»: Սպանութեան զիւղները իրար վրայ թափուած ամբողջ շեղջեր էին կազմում, թշուառ հայերից պիտանիներին նրանք գերեցին, իսկ որոնք գին չունէին այդ գաղանների աչքում, անխնայ մորթուեցին: Աւերակ դարձնելով երկիրը, ժողովելով կողոպ-

տուածը և գերիներին տանում էին բոլորը իրանց հետ: Եւ որովհետեւ գերիների մէջ կային շատ կանայք, որոնք զրկուած կամ ձեռքերից բռնած մանուկներ ունէին—գերիները խլում էին մանուկներին և զէն ձողւած ճանապարհի վրայ: Եւ այնքան շատ էր այդ թշուառների թիւը, որ ամբողջ ճանապարհը ծածկուած էր մանուկների շարժուող մարմիններով: Այդ մանուկների լացը և բռնութեամբ գերի վարուող մայրերի ողբն ու կոծը հըրճուանք էր պատճառուած երկոտանի ճիւղներին... Լաստիվերդցիից յետոյ, շատ և շատ հայ ականատեսներ եկան նոյնանման տեսարաններ տալու յաջորդ դարեշում: Եւ այժմ, XX-րդ դարու մարադատիւ մասուլի տակից են դուրս գալիս արիւն սառնող նման բարբարոսութիւնների ժառին հեռագրական տեղեկութիւններ: Եթէ Լաստիվերդցին հրաշքով յարութիւն առնէր, նա այժմ ևս կը տեսնէր իր նկարագրած Տուզլիներին, սակայն այլ տարագով, այլ սպառազինութեամբ...

Մեր դիւին թափուած անցեալ և ներկայ փորձանքները պէտք է վերջապէս ստիպեն մեզ լուրջ մտածել մեր կացութեան, մեր ընթացքի, մեր տակտիկայի մասին: Մենք պէտք է ճիշտ հասկանանք թէ որո՞նք են թուրքերի հակահայկական այս վերջին շարժման բուն պատճառները: Շարուն ֆորմուլները և սենտիմենտալ ֆրագները պէտք է մի կողմ նետել և լաւ յիշել Գերցենի հեռեկալ խօսքերը. «доктринерство, схоластика мѣ-маютъ пониманью больше, чѣмъ изувѣрство и невѣжество»... Այո, իրականութիւնից, կեանքից կարուած գոկարինիօրութիւնը և սխալաստիկան՝ բան հասկանալուն աւելի են փաստում, քան չափազանց մոլեռանդութիւնը և տգիտութիւնը...

Մեր հարեան թուրքը մի վերացական գաղափար չէ, այլ՝ շատ որոշ ցեղական ու կրօնական բնադրներով մի տարերային ոյժ, որ իննը դար ամենայնոյի ներգործութիւնն է ունեցել մեր ճակատագրի վրայ: Ինչպէս մենաւոր թումը՝ հայութիւնը դարերի ընթացքում Մերձաւոր Արեւելքում իր վրայ է ընդունել թուրք-թաթարական յորդ հեղեղների հարուածները, իսկամ ովկիանոսի կատաղի ալիքների բաղլումները: Հայ ազգի կրած տանջանքները ու մարտիրոսութիւնները եզակի են մարդկային ամբողջ պատմութեան մէջ: Քաղաքական սոսկալի մրրիկներ, բարբարոսութեան արհաւիրքներ են անցել նրա գլխով, արեան ճապարիք են հոսել նրա բազմաշարժար մարմնից, արցունքների զեռեր նրա աչքերից, և քանի՜ քանի՜ անգամ է հայը շէնացրել իր արիւն քրտինքով՝ իսպառ աւերուած հայրենիքը:

Հայը տրորուել է, ջարդուել, արիւնաքամ եղել, թալանուել, գաղթել, սակայն այնուամենայնիւ տոկուն հայութիւնը

բնաջինջ չի եղել իր հայրենի երկրում և կիսամեռ հասել է XIX-րդ դարի սկզբին, երբ յոյս ունէր նա վերջապէս ազատ շունչ քաշել այնքան նեղութիւններից յետոյ, լուսաւորութեան, մարդասիրութեան դար էր, երբ «ազատութեան, եղբայրութեան և հաւասարութեան» մասին էին խօսում Ֆրանսիայից սկսած ամեն տեղ, ուր թափանցել էր եւրոպական միտքը: Թէև հայութեան մեծագոյն մասը դեռ շարունակում էր մնալ Բոլամի լուծի տակ և իրրեւ իրաւազուրկ ռայա մատնուած էր թուրքի և քրդի կամայականութեան, սակայն նոյն ազգի մի ստուար մասը ապահովութիւն և հանգիստ էր գտել ռուսաց երկգլխեան արծուի թևերի տակ և, բնականաբար, ցանկանում էր, որ կեանքի, գոյքի և պատուի երաշխաւորումներ ձեռք բերուեն նաև իր թիւրքահայատակ եղբայրների համար: Այդ ձգտումը շատ բնական էին գտնում օսմանեան բեժիմի հետ ծանօթ նաև ռուս քաղաագէտները իրանց եւրոպական պաշտօնակիցների հետ միասին: Ինքը եւրոպան ցոյց տուեց, որ խաղաղ-դիպլոմատիական ճանապարհով անկարող են թիւրքահայերը լուծել այդ հարցը և, անտեղեակ հայ առանձնայատուկ և եզակի պայմաններին, մի ահասկ թելադրում էին հային՝ գիմել միւս ազգերի գործ դրած միջոցներին... Եւ հայը սկսեց անալոգիական տակտիկով բողոքել, գէնքով պահանջել ժաղկային իրաւունքներ... Դժբաղդաբար Ռուսաստանին թոյլ չտուին 1878-ին ազատ ձեռներով գործել թիւրքահայերի հարցում: Ժամանակները փոխուեցան և Ռուսիան իր ուշքը կենդրոնացրեց Հեռաւոր Արևելքի վրայ: Այդ օրից շատ նկատելի եղաւ և տեսակէտների փոփոխութիւնը հայերի նկատմամբ: Արտաքին գործերի մինիստրութեան մէջ այդ նոր ընթացքը արտայայտութիւն գտաւ յանձին Լորանով-Րոստովսկու, իսկ ներքին քաղաքականութեան մէջ՝ Իշխան Գոլիցինի և մի շարք իդէօլոգներին, ինչպէս Սուվորին, Վելիչկօ և այլն: Հայ ազգը յայտարարուած էր անվտանգելի մի տարր: Գրչի անխիղճ սրիկաների զրպարտութիւններին համար բացուած էր լայն ասպարէզ՝ հայի անունը վայր գցելու համար ռուս հասարակութեան աչքում. յայտնի է որ «հայկական սեպարատիզմը», «Մեծ Հայաստան մինչև Րոստով Դոնի վրայ» և այլ ստախօսութիւնները հայերի հասցէին, թունաւորում էին ռուսի ամբոխային հոգեբանութիւնը, ատելի դարձնում հային: Թիւրքիան և թուրք տարրը ընդհանրապէս գովաբանում էին և արժանանում ամենամեծ վստահութիւնների: Կովկասի վարչութիւնը և մանաւանդ պոլիցիան լցուեց մուսուլման տարրով: Գոլիցինեան բեժիմի ցոյց տուած անվստահութիւնը գէպի հայ ազգը՝ այնքան հեռու գնաց,

որ փակուեցան հայոց ծխական դպրոցները, խլուեցան եկեղեցական կայքերը, կալուածներն ու գումարները, փակուեցան և կրճատուեցան լուսաւորութեան և մարդասիրութեան զանազան հաստատութիւնները... Այդ բոլորը տեսնում էր թուրքը, որ մինչ այդ հային համարում էր ոռոսներից ամենահովանաորուած ցեղը: Թուրքը չէր մոռացել հայի ցոյց տուած ծառայութիւնները ոռոս-թուրքական և ոռոս-պարսկական պատերազմներում: Ծածուկ սրելով իր համիսլամական դաշոյնը՝ դարերով ասուած «չէկ գեաւուրի» դէմ՝ նա բոլորէ էր սպասում նախ և առաջ իր դանակը փորձելու հայի շինքի վրայ և իր միջից հեռացնելու այդ խոչընդոտը:—Եթէ թուրք ովկիանոսի միջից, որ ձգուած է Չինաստանի արեւմտեան սահմաններից մինչև Միջերկրականը, բնաջինջ անուէն հայ ազգաբնակչութիւնից կազմուած կղզիները, այն ժամանակ կը ստացուի համարեա միապաղաղ իսլամ տարր, որի դէմ շատ դժուար կը լինէր մաքառել. քանի՞ տասնեակ տարիներ են հարկաւոր և ինչ հսկայական ջանքեր այդ թուրքական ովկիանի մէջ ոռոս գաղթականներ հաստատելու, որոնք լինէին նեցուկ ոռոսական տիրապետութեան... Ուրեմն, հայի բնաջնջումով ոչ միայն Թիւրքիան էր ազատուած եւրոպական պետութիւնների դիպլոմատիական միջամտութիւններից ինչ-որ հայերի պատճառով, այլև Կովկասի թուրք համիսլամութիւնը դառնում էր երեք նահանգների (Բագուի, Գանձակի և Նրեանի) միակ տէրը, մի պատրաստի բանակ թիւրքիական առաջխաղացութեան ժամանակ: Այլևս թուրք ազգաբնակչութիւնը բաժան-բաժան չէր լինելու նրանց մէջ խառն ապրող հայերի շնորհիւ... Ահա հայերին կոտորելու նշանակութիւնը համիսլամութեան տեսակէտից. թուրքը չի ուզում որ իր մէջ և իր թիկունքին մնայ հայ տարրը, որ երբեք չի ուզենալ վերադառնալ այն կացութեան, որի մէջ էր նա 75 տարի առաջ Անդրկովկասում. և, բնականաբար, կատաղի կերպով կռուելու է թուրքերի դէմ, երբ պարզուի համիսլամութեան ծրագիրը: Այդ շատ լաւ դիտեն թուրք զեկալարները, որ պէտք է խոստովանել շատ ճարպիկ տակաւիկներ են... Ահա հայերին կոտորելու համիսլամական նպատակը: Դառնանք ժամանակի հարցին:

Սկսում է ոռոս-ճապոնական պատերազմը. ոռոսաց զէնքի անաշոգութիւնը լքցնում է համիսլամականների սիրտը վրոտահութեամբ. կարդացէք «Հէյաթի» № 12-ում պարզաբանութիւնները այդ մասին... Համիսլամական ծրագրերի իրագործման ժամը հասած է համարւում: Պէտք է սկսէին հայերից, որ մի անգամ ընդմիջտ աղատէին իրանց ոճրագործ ձեռները աւելի հզօր թշնամու դէմ կռուելու համար... Մոմենտը չափազանց

նախատառն էր և այն կողմից, որ գեո չէր փոխուած գոլիցի-
 նեան ազմինխտորացիան և պոլիցիան, որ կուրօրէն թրքասէր
 էր և անսահման հայատեաց... Կովկասի Փոխարքան կարճ մի-
 ջոցում չէր կարող նոր մարդկանցով փոխարինել հին բեթիմի
 ներկայացուցիչներին: Թուրք պոլիցիայի և թրքասէր ազմինխ-
 տրացիայի շնորհիւ համիսլամականները կարողացել էին ոչ
 միայն լաւ զինուել, այլև կազմակերպուել: Սկսւում է առաջին
 փորձը Բապուում: Հետևանքները հիանալի են. պոլիցիան և զօր-
 քը արագ և կտրուկ միջոցներ ձեռք չեն առնում, կարելի է
 ազատ սպանել հային, այրել նրա տունն ու տեղը, թալանել նրա
 ունեցած չունեցածը: Ոչ մի յանցաւոր չպատժուեց մինչև օրս:
 Հայերը յանկարծակիի եկած՝ չէին սպասում իրանց «եղբայր»
 թուրքերից այդպիսի նամարդութիւն: Հնարուեց «շէյթան»
 բացատրութիւնը, սենտիմենտալ ճառեր արտասանուեցան, կա-
 տակերգական թափօրներ կազմակերպուեցան: Համիսլամական-
 ները համոզուեցան, որ հայը գեո ևս չի ըմբռնում բանի էու-
 թիւնը, իսկ կառավարութիւնը զբաղուած Հեռաւոր Արևելքի
 պատերազմով. առանձին՝ կարևորութիւն չի տալիս «հայ-թուր-
 քական բնդհարուսներին»... Սպանուող, թալանուող, բնաջինջ
 եղող հային առաջարկւում էր «հաշտուել» նախապարձակ ոճրա-
 դործների հետ: Հայերին մնում էր կամ ոչխարների պէս մոր-
 թոտուել թուրքերի ձեռքով, կամ ինքնապաշտպանութեան զի-
 մել այդ անհաւասար կուում... Քաջալերուած Բապուի ղեպրերից,
 համիսլամականները աւելի մեծ ծաւալ տուին իրանց ապստամբ
 զործունէութեան, պահպանելով նոյն տակախկան. նախ և առաջ
 մէջտեղից վերացնել իրանց նոյառակներին խոչընդոտ կազմող
 հայ տարրը: Շուշուայ և Ջանդեղուրի գաւառներում թուրքը
 պատերազմ է յայտարարում հայութեան: Գործադրւում է կուուե-
 լու այն ձևը, որ յատուկ էր նրա պապերին, ինչպէս տեսանք
 յօդուածիս սկզբում: Այդ ցեղական առհաւութիւնը՝ (առավիզով)
 շատ բնորոշ է: Գանձակի գաւառապետ Րէնտի խօսքերը, 75 տա-
 րուայ ընթացքում «Կովկասի խաղաղացման» պատմութիւնը, գա-
 տաստանական անթիւ անհամար գործերը, միթէ մի կաթիլ կաս-
 կած են թողնում, որ մարդասպանութիւնը, աւազակութիւնը,
 հրկիզութիւնը և թալանը նոյնքան յատուկ է թուրքին, որքան
 յափշտակութիւնը գայլին...

Ով ծանօթ է թուրք-թաթարական ցեղերի հետ, նա զի-
 տէ, որ զրանց մէջ ազբբէջմանները¹⁾ մի եղակի տեղ են բռնում:

¹⁾ Անդրկովկասի և Ատրպատականի թուրքերը իրանց լեզուով և էթ-
 նոգրաֆիական մի քանի կողմերով աւելի են տարբերւում օսմաններից,

Ազրբեյջանները պարսկական նախկին և այժմեան երկրներում հաստատուած թուրքերն են, որոնք երկար դարերի ընթացքում, բռնութեամբ խառնելով իրանց արեան հետ զանազան կովկասեան ցեղեր, իրանց Ֆիզիքական տիպով այժմ տարբերուած են միւս թաթարական ցեղերից: Այդ ազրբեյջանները կամ կովկասեան թուրքերը շիա կրօնի ամենամոլիւսնադ ներկայացուցիչներն են. անհամբերողութիւնը դէպի բրիտանեան նրանց մէջ այնքան ծայրայեղ է, որ ազրբեյջանը պիղծ է համարուած ամեն առարկայ, որին դիպչում է «քեաֆիրը»... Փարսը կամ իսկական պարսիկը, որ իր ծագումով արիական ցեղից է, աւելի հակուած է դէպի իսլամական այն աղանդները, որոնք մարդասէր և հեղ բնաւորութիւն ունին, օրինակ, դէպի բաբիտկանութիւնը... իսկ ազրբեյջանը ամենափանաւորիկոս շիա է: Շիաների մոլեռանդութեան դէպքեր բաւական տեսանք Նախճատանի, Չանդեղուրի և Զիլբայիլի գաւառներում տեղի ունեցած արիւնոտ սոսքերի ժամանակ: Այստեղ առաջ բերել այն, ինչ յայտնի է ամեն մի ընթերցողին լրագրներից, աւելորդ կը լինէր...

Այդպիսով համիսլամականութիւնը երեք թուրք-հայկական նահանգների շիա ազրբեյջանների մէջ գտնուած էր մի պատճառ ընտան և կարող էր փառաւոր կերպով իրադործել պանթիւրքիզմի ծրագրի առաջին մասը, այսինքն՝ հայերի բնաջնջումը: Միւս նահանգներում, որոնց մէջ սիւննիներն են տարածուած, այդ շարժումը դեռ շօշափելի ձևեր չի ստացել մասամբ այն պատճառով որ այն տեղերում թուրքը թոյլ է հայերի համեմատութեամբ: Անշուշտ այդ տեղերում ևս շարժման բռնկումն միայն ժամանակի հարց է: Հայերին կոտորելով և թալանելով թուրք համիսլամականները դործնականապէս աւելի ու աւելի են կազմակերպւում և արդէն այնքան են առաջ գնացել իրանց յանդգնութեան մէջ, որ տեղ տեղ գինուած դիմադրութիւն են ցոյց տալիս ուստ զօրքերին: Մեր ասածներից պարզ է, որ հայերին բնաջնջ անելը մտնում է թուրք համիսլամականների ծրագրի մէջ և շատ հասկանալի է նրանց տակտիկայի տեսակէտից:

Կայ մի այլ պատճառ ևս, որով հայերի կոտորածը Սնդըր-կովկասում նպատակաւորմար է համիսլամականների տեսակէտից. Թիւրքիան համարուած է համիսլամականների իդէալը, ապագայի յոյսը, նա է, որ պէտք է միացնի բոլոր իսլամներին

քան մալոբոսները՝ բուն ուսանքից. ուստի աւելի ջիշտ կը լինէր զրանց համարել թուրքական ընտանիքի առանձին ցեղ, որին կարելի է տալ աղիքեջան անունը:

և «դարձուլ իսլամը» ընդարձակի: Արդ, քանի որ Թիւրքիայում գործում է հայ բողոքող մի քրիստոնեայ տարր, որ եւրոպական քաղաքակրթութեան հիմքերով է ուզում վերանորոգել իսլամական ընթիմը, քանի որ կայ այդ տարրը, որի պատճառով եւրոպական մեծ պետութիւնները խառնում են Թիւրքիայի ներքին գործերում՝ վտանգուած է համարւում օսմանեան սուլթանների գահը: Եթէ բնաջինջ անուի կամ *quantité negligeeable* դարձնուի հայութիւնը Թիւրքիայում—այդ իսլամ առաջնակարգ պետութեան ներքուստ վտանգ էի սպառնալ Փոքր-Ասիայում: Եթէ համիսլամականները անէծք են թափում և սպառնալից ատամներ կրճատում ապստամբ արաբների դէմ, միթէ նրանք հաշտ աչքով կը նայէին հայ յեղափոխական շարժումների վրայ: Փետրուարի արիւնոտ անցքերից յետոյ, թուրք «ինտելիգենտները» և ազդեցիկ բուրժուազիան Բագում բացարձակ կերպով իրանց թշնամութիւնը դէպի հայերը պատճառաբանում էին հայ կոմիտեաների գործունէութեամբ Թիւրքիայում: Դրանց կարծիքով օսմանների տիրապետութեան դէմ գործող այդ կոմիտեաները իրանց նիւթական և բարոյական ոյժը գտնում են Կովկասում, ուրեմն, ջախջախելով տեղիս հայերին նիւթականապէս և ֆիզիկապէս՝ նպաստում են Թիւրքիային, հետեապէս, ծառայում են և համիսլամական նպատակներին... Թէ ինչ գազանային վրէժխնդրութեամբ են լցուած դէպի հայութիւնը շիա-թուրքերը՝ այդ մենք տեսնում ենք ահա 8 ամիս Բագում, Նախճաւանի, Շարուրի, Ջանդեղուրի և Զիրբայիլի գաւառներում, կարողում ենք «Насни» և «Հէյաթ» թերթերի թունաւոր տողերի մէջ: Այժմ մեզ ուղարկուած է մի գրաւոր վկայութեւր իս, որ կասկած չի թողնում մեր վերև ասածների մասին: «Իթթիհաթ» («Միութիւն») կոչուած մուսուլման ընկերութիւնը հրատարակել է մի «պատասխան» ուղղուած հայերին (ուսուերէն լեզուով), որի մէջ կալուում ենք հետեւեալ ձիւղային մտքերն ու զգացմունքները.

«Հսկելով եւրոպական և ասիական Ռուսաստանի և Պարսկաստանի ու Թիւրքիայի սահմանալից տեղերի մեր հաւատակիցների ձայնը,—ստուած է իթթիհաթ ընկերութեան այդ կոչի մէջ,—մենք մուսուլմաններս յայտնում ենք հայերին հետեւալը. Անյիշատակ ժամանակներից մուսուլմանները ապրում են հայերի հետ ձեռք-ձեռքի տուած և համակենցաղի ամբողջ ընթացքում մուսուլմանները աւելի ուժեղ են եղել հայերից և իբրև ուժեղներ՝ հովանաւորել են հայերին, ինչպէս թուրքերն: Դիմելով նորագոյն պատմութեան, մենք տեսնում ենք նոյնը: Սակայն իսլամի ամբողջ պատմութեան մէջ դուք չէք կարող բերել հայերի շնորհակալութեան մի օրինակ մուսուլմաններից այն բարեքների դիմաց, որ մուսուլմանները ցոյց են տուել նրանց շատ դարերի ընթացքում: Չնայած դրան մուսուլմանները թաղուերները շարունակել են շնորհներ ցոյց տալ հայերիդ, մինչդեռ նրանք կարող էին բնաջինջ անել ամբողջ Հայաստանը մի շաբաթում, դրա փոխարէն դուք

միշտ Խալափին միայն ֆեսս էք պատճառել, նրա անհաշտ թշնամին հանգիստ անալով: Դեռ 1098 թ. յունիսի 2-ին, այսինքն աւելի քան 800 տարի առաջ, մուսուլմաններից բարեբարուած մի հայ, Լընսանց բնգունելով իսլամը, դաւաճանեց նրանց և մատնեց Անտիօք քաղաքի ամրութիւնների յատակադիծը պաշարող իսլաւիւրներին: Գործողութեան այդպիսի եղանակի էլը հետեւում դուք մուսուլմանների նկատմամբ ձեր անփառունակ պատմութեան ամբողջ ընթացքում, մինչև մեր օրերը: Յիշենք ձեր վարմունքը վերջին երկու դարերի ընթացքում բոլոր պատերազմներում որ վարել են մուսուլման պետութիւնները ¹⁾: Չնայած ձեր անվերջ դաւաճանութիւններին, ձեր սև ապերախտութեան դէպի մուսուլմանները, դուք միշտ օգտուել էք մուսուլման վեհապետների բարձր հովանաւորութիւնից և օգտուելով ամեն տեսակ արածութիւններով դուք չափազանց հարստացաք և... չաղացաք, յետոյ ճարպից սկսեցիք կատաղել և դէնք բարձրացրիք ձեր բարեբաւոնների դէմ: Նոյն է ձեր վերաբերմունքը դէպի Ռուսաստանը, որ Մեծն Պետրոսի օրերից ձեզ տուել է ազգային և տնտեսական զարգացման բոլոր միջոցները: Միժմ դուք կորցնելով ձեր խելը, կուրացած մի քանի անպաշտպան չինովնիկներին աջող սպանութիւններով անկիւնի յետևից, ոտի էք կանգնել Անդրկովկասի մուսուլմանների դէմ, որոնցից դուք լաւից բացի ոչինչ չէք տեսել: Ձեր բոլոր պատրաստութիւնները օսմանցիների և քրդերի դէմ կոռելու համար, ձեր ազատագրական շարժման օրից սկսած կատարուել են մեր (?) ձեռքով. մուսուլման կոնտրաբանդիստներն են Պարսկաստան և Թիւրքիա փոխադրել ռազմական պաշարների և կոռելու ամեն տեսակ միջոցների անհամար քանակութիւնը, արգելուած հրատարակութիւնների և կոչերի ամբողջ հակել. իսկ ձեր անմոռութիւնը այնտեղ է հասել, որ այդ դէնքը դուք բարձրացրել էք մեր՝ մուսուլմաններին դէմ, ահա թէ ինչպէս շնորհակալ եղաք մեզանից:

Ձեզ ենք ուղղում մեր բարի խօսքը, ձեզ—զանազան կոմիտետների տնդամեկը: Իմացէք, որ ձեր վարմունքը զայրացրել է ամբողջ մուսուլման աշխարհը և, եթէ դուք խելքի չգաք, կը կործանէք վերջնականապէս ձեր աշխատասէր ժողովուրդը:

Իմացէք, որ ծիծաղելի կը լինէր, եթէ 400 միլիօն մուսուլմաններ վախենային մի բռնու հայերից, որոնք ցրուած են ամբողջ երկրագնդի վրայ: Դուք ազատ ուղարկում էք ձեր սպանական նամակները ձեր ընտրած մուսուլմաններին, որովհետև նրանք չեն ծածկուած զանազան կոմիտետների վտարագոյրների ետևից. իսկ մենք չենք ճանաչում ձեզ, հայ յեղափոխականներ, այդ պատճառով այսուհետև մենք յեղափոխական ենք համարելու, ամեն մի հայի արական սեռից, սկսած տասնեհինգ տարեկանից մինչև 70 տարեկանը և ամեն անգամ երբ դուք մեր նկատմամբ թշնամական քայլ անէք, անխնայ կոտորելու ենք ձեզ բոլոր երկրագնդի երեսին, ուր և հայր պատահի մուսուլմաններին. արեւելքում թէ արեւմուտքում, հիւսիսում թէ հարավում, քաղաքում թէ գիւղում, սարի վրայ թէ դաշտում, անտառում թէ առաւելքում, գետի վրայ թէ ծովի վրայ...:

Բացատրութիւնները աւելորդ են...

Մեզ ասում են թէ ինչո՞ւ մինչև օրս, ռուսական տիրապետութեան ժամանակ, Կովկասում տեղի չեն ունեցել վերջին դէպքերի նման արիւնոտ անցքեր: Ճիշտ է, այդ չափով և ծա-

1) Ակնարկ ռուս-պարսկական և ռուս-թրքական պատերազմների վրայ:

ւալով ընդհարումներ չեն եղել. թէև սպանութիւնները, աւա-
ղակութիւնները, գողութիւնները և թալանը անպակաս են պա-
հել հայի գլխից նրա թուրք հարեանները. այդ կը վկայի իւ-
րաքանչիւր գաւառացի հայ: Չպէտք է այն էլ մոռանալ, որ
միշտ, երբ ուռւի գլուխը խառն է եղել արտաքին պատերազմ-
ներով, մուսուլման տարրը Կովկասում շարժուել է, հակաքրիս-
տոնէական և հակապետական ցոյցեր արել: Չպէտք է մոռանալ
և այն, որ մինչև Գոլիցինեան բեժիմը՝ հայի անձի, գոյքի և պա-
տուի պաշտպանութեան հարցը թուրքերի աչքում որեւէ կոս-
կածից դուրս էր: Եւ միայն տեղական վարչութեան անգործու-
թիւնը կոտորածներէ հէնց սկզբում, արգելքը որ զինուորները
կրակ արձակեն՝ հայերին սպանող-հրկիզողներէ և թալանողներէ
վրայ—թուրք ամբոխի աչքում համահաւասար եղաւ խրախոյսի:
Չարագործները տեսան, որ ոչ մի պատիժ չի սպառնում մաս-
նային սպանութիւնների, հրկիզումների և թալանի համար:
Միթէ դա բուականաչափ զրդիչ հանգամանք չէր աւաղակա-
րարոյ թուրք ամբոխի համար: Բոլոր այն ուռւ անաչառ մար-
դիկը, որոնք իրանց մատերը դրել են մեր այդ սոսկալի իրա-
կանութեան վէրքերի վրայ, պ. պ. Սեօմին, Սամենտովսկի, Սե-
նակիւի և Նանգ, անթիւ ապացոյցներ են բերում տեղական իշ-
խանութիւնների յանցաւոր անգործութեան մասին թրքական
խժղժութիւնների ժամանակ: Չորս ամիս է անցել Նախճատանի
և Շարուրի գաւառներում տեղի ունեցած քստմնելի դէպքերից
յետոյ, 50 ից աւելի հայ գիւղեր են աւերուած. յայտնի են թէ ո՞ր
թուրք գիւղերն են յարձակում գործել, ովքե՞ր են գլխաւոր ոճ-
րագործները, սակայն պատժի և վնասների հատուցման մասին
դեռ ևս ոչինչ չի լսուած: Դժուար չէ գուշակել թէ ի՞նչ բացա-
տրութիւններ պէտք է տար թուրքը անյշտի ներողամիտ և
թոյլ վերաբերմունքին: Եւ ահա փետրուարի և մայիսի արիւն-
լուայ օրերից յետոյ եկան օգոստոսեան սև օրերը Շուշիի և Ձան-
գեղուրի համար, Սոգոմ և Գոմորի կործանումը տեսաւ Բա-
ղուն իր համաշխարհային արդիւնագործութեամբ, Նախճա-
տանի գաւառում դեռ շարունակուած են սպանութիւնները և թա-
լանը... Ի՞նչ անել այդ եղեռնագործութիւններին վերջ դնելու
համար:

1) Նախ և առաջ պէտք է, որ թէ իշխանութիւնը և թէ
հայ ժողովուրդը լաւ ըմբռնեն թուրք-թաթարական շարժման
նպատակը, ինչպէս և համիսլամականների կողմից դործադրու-
ող տակտիկան, և ձեռք ձեռքի տուած կռուեն քաղաքակրթու-
թեան այդ կատաղի թշնամիների դէմ:

2) Հայ ազգաբնակչութեան անհրաժեշտ է վստահաբար ինք-

նապաշտպանութեան լայն միջոցներ տալ, որովհետև Ալէքսանդրապոլի, Ախալքալաքի, Նոր-Բայազէթի և Թիֆլիսի գաւառներում, ուր հայ տարրը ուժեղ է թուրքերից, ինչպէս և ըստը կուիւններում, ապացուցեց հայը, որ նա երբէք նախայարձակ չի լինում, այլ միմիայն պաշտպանւում է թուրքերից:

3) Պէտք է խելոյն և ևթ հեռացնել ըստը թուրք պոլիցիականներէն յիշած երեք նահանգներում, ուր դրանք զինաթափ են անում հայերին, զինում իրանց հաւատակիցներին և մասնակցում կոտորածներին, թալանին և բռնութիւններին:

4) Խիստ և արագ դատաստան նախայարձակողների համար և տուգանք փաստաւորների օգտին, ի հաշիւ նախայարձակ հասարակութիւնների: Ծիծաղելի է «պարագլուխներ» որոնել պատժելու համար, երբ յայտնի է թէ ո՞ր թուրք գիւղերի հասարակութիւններն են յարձակում գործել, սպանութիւններ արել, հրկիզել, թալանել, բռնութիւններ կատարել: Այնտեղ, ուր հազարաւոր են եղել յարձակողները, ի՞նչ փնտռել անհատներին... Այդ տեսակ վերաբերմունքը միայն կարող է նպաստել մասսային ոճրագործութիւնների տարածման: Ռուսական տիրապետութիւնը կոփկասում հաստատուեց ոչ այդ սիստեմով...

Այժմ երբ պէտք է հրդեհը հանգցնելու մասին մտածել, իհարկէ ժամանակը չէ խօսել այլ միջոցների մասին, որոնք կապուած են պետական ընդհանուր կարգերի և բեփմի փոփոխութեան հետ: Ամեն բոլէն տանում է հազարաւոր կեանքեր, ամբողջ սերունդների բռնաքաղաքացիական յետ վցուած նիւթական միջոցներ: Սով և ամայութիւն է սպառնում բազմաթիւ գաւառներին: Տատանումները, կարճատեւ և թոյլ վերաբերմունքը միայն նորանոր առաւելութիւններ են տալիս տղըստամբների ձեռքը...

Լ. Ս.

6 Սեպտ.

1874 թուի յունուարի 19-ին Բարձրագոյն հաստատուած կանոններ, որոնք նախապէս հաւանութիւն են գտել Մեծ Իշխան Արվիստեան Փոխարքայի կողմից

1) Համաձայն օրէնքների ժողովածուի XI հատորի, 1 մասի, 975- դ յօդուածին, հայ-լուսաւորչական հոգեւորականութեան պարտաւորութիւնն է մնում հիմնել եկեղեցական դպրոցներ և նրանց վարել, նոյնպէս և հոգացողութիւն մտցնելու դատա-

տուութեան կանոնաւոր և յարմար եղանակ և պահպանելու բարի վարք ուսուցանողներին և աշակերտներին մէջ:

2) Ժողովրդական դպրոցների տեսուչների (инспекторы) վրայ, հայ հոգևորականութեան հիմնելիք և վարելիք ընդհանուր կրթական եկեղեցական-ծխական դպրոցների վերաբերմամբ, պարտաւորութիւն է դրոււմ, համաձայն 1873 թուի նոյեմբերի 22-ին. Բարձրագոյն հաստատուած Պետական Խորհրդի կարծիքին՝ հսկողութիւն ունենալ, 1) որ բոլոր դպրոցներում աւանդուի ուսուսաց լեզուն, իսկ այն դպրոցներում, որտեղ աւանդոււմ են ընդհանուր պատմութիւն և աշխարհագրութիւն, աւանդուեն նաև ուսուսաց պատմութիւն և աշխարագրութիւն՝ ուսուսերէն լեզուով.

2) Որ այս դպրոցներում ուսուցանողները լինեն ուսահայտաւէներ և ունենան պարտ ու պատշաճ բարոյական յատկութիւնները: Իսկ միջնատեղ տնտեսական մասի մէջ կամ նրան կոնտրոլի ենթարկել՝ տեսուչներին իրաւունք չէ տրոււմ:

3) Այն ուսումնարանները, որոնք նպատակ ունեն հոգևորականներ պատրաստել՝ չեն ենթարկուում ժողովրդական ուսումնարանների տեսուչների հսկողութեան և գտնոււմ են բացառապէս հոգևոր իշխանութեան վարչութեան տակ: Այս դպրոցների ուսման դասընթացի և ներքին կարգերի մասին կանոնները պէտք է ներկայացուեն Բարձրագոյն կառավարութեան ի հաստատութիւն: (յօդ. 1004)

ՃԱՄԱՆԱԿԱՒՈՐ ԿԱՆՈՆՆԵՐ ՀԱՅ-ԼՈՒՍԱՒՈՐՁԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԳՈՅՔԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՎԿԱՍԵԱՆ ՓՈԽԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ

Ա. եկեղեցիներին պատկանող գոյքերի վերաշերմամբ

1) Հայ-լուսաւորչական եկեղեցիների գոյքերի կառավարութիւնը յանձնոււմ է ծխական հոգաբարձութիւններին, բացկացած երէցփոխից և անդամներից՝ թւով 2—4, հաւասար իրաւունքներով, որոնց ընտրոււմ են ծխականները իրանց միջից 3 տարով:

2) Ծխական հոգաբարձութիւնների անդամների ընտրութիւնը կատարոււմ է ծխականների ընդհանուր ժողովներում ներկայ եղողների ձայների մեծամասնութեամբ և հաստատոււմ է թեմական առաջնորդից:

3) Ծխականների ընդհանուր ժողովներում ձայնի իրաւ-

ունք ունեն ծխին պատկանող արական սեռի 25 տարի հասակ ունեցող բոլոր անձերը, որոնք օրինական իրաւունք են վայելում հասարակական պարտաւորութիւններ կատարելու և եկեղեցու ծխականներ են հաշոււմ ոչ պակաս քան 2 տարի:

4) Ծխական հոգաբարձուների վրայ պարտականութիւն է դրւում հոգ տանելու պատշաճաւոր թոյլտուութեամբ հիմնելու դպրոցներ, հիւանդանոցներ, անկեղանոցներ, ապաստարաններ և այլ բարեգործական հաստատութիւններ:

5) Եթէ եկեղեցական եկամուտները բաւարարութիւն տալու չլինին ծխերի բոլոր կարիքները հոգալու, հոգաբարձութիւնը առաջադրութիւն է կաղմում ծխականներից որոշ տուրք նշանակելու վերաբերմամբ. այդ տուրքը կարող է լինել միասնապէս կամ մշտական, դրամով կամ իրերով: Այդ առաջադրութիւնը առաջարկւում է ծխականների ընդհանուր ժողովի քննութեան և նրա կողմից ընդունուելուց և այդ մասին վճիռ կայացնելուց յետոյ դառնում է պարտաւորական համաձայնութիւն լայնությունների համար:

6) Իւրաքանչիւր տարուայ ելեմուտի նախահաշիւը՝ կազմուած հոգաբարձութեան կողմից՝ ստանում է ծխականների ընդհանուր ժողովի հաւանութիւնը և հաստատում է թեմական առաջնորդից:

7) Ծխական հոգաբարձութիւնները պարտաւոր են հաշիւ տալ թէ վիճակաւոր առաջնորդին և թէ ծխականների ընդհանուր ժողովներին, որոնք իւրաքանչիւր տարի ընտրում են առանձին վերաստուգող յանձնաժողովներ հաշիւները ստուգելու համար:

Բ) Հոգեւոր սեմինարիաներին պատկանող կալուածների մասին:

Հոգեւոր սեմինարիաների կալուածները (Օր. ժող. XI հ. հրատ. 1896 թ. յօդ. 1206) կառավարում են առանձին հոգաբարձական խորհուրդներ՝ բաղկացած 12 հոգուց, նախագահութեամբ թեմական առաջնորդի:

2) Հոգաբարձական անդամներ ընտրելու համար, թեմական առաջնորդի կամ նրա կողմից նշանակած անձի նախագահութեամբ, հրաւիրւում է վիճակային ընտրողների ժողով՝ երկու-երկու հոգի այն քաղաքի եկեղեցիներից, ուր գտնւում է սեմինարիան. այդ անձերը ընտրւում են ծխականների ընդհանուր ժողովով ներկայ եղողների ձայների մեծամասնութեամբ և մի-մի հոգի վիճակում գտնուող քաղաքային եկեղեցիներից՝ ընտրուած նոյն կարգով, և մի-մի ընտրող իւրաքանչիւր գործակալութիւնից՝ ընտրուած գիւղական եկեղեցիների:

ներկայացուցիչների ժողովով: Հոգաբարձական խորհրդի անդամները ընտրվում են 4 տարով:

3) Հոգաբարձական խորհրդի անդամները հաստատվում են իրանց պաշտօնում Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից:

4) Հոգաբարձական խորհրդի անդամների կէսը 2 տարուց յետոյ դուրս է գալիս պաշտօնից և առաջին անգամ վիճակով:

5) Վիճակային ընտրողների ժողովը, հոգաբարձական խորհրդի լիազորութեան ժամանակամիջոցում, ընտրում է վերաստուգող յանձնաժողով, որի եղբակացութիւնը հաղորդվում է էջմիածնի Սինոդին:

6) Տարեկան նախահաշիւները, ինչպէս նաև հոգաբարձական խորհրդների հաշիւները, հաստատվում են էջմիածնի Սինոդից:

Գ. Վանքապատկան գոյքերի կառավարութիւնը:

1) Վանքապատկան գոյքերի կառավարութիւնը յանձնւում է վանական իշխանութեան:

2) Վանքապատկան գոյքերի կառավարութեան կանոնաւորութեան վրայ հովելու համար կարող են հրաւիրուել թեմական առաջնորդի կողմից և աշխարական անձինք՝ օգնելու վանական իշխանութեան:

—Պետական Դոման, որ հաստատւում է Ռուսաստանում օգոստոսի 6-ին Բարձրագոյն արուած հրովարտակով՝ ունի իւրաւունք քննելու. ա.) այն առարկաներն, որոնք պահանջւում են օրէնքների և շտատների հրատարակութիւններ, ինչպէս և դըրանց փոփոխութիւններ, լրացումներ, գործադրութեան դադարացում և վերացում. բ.) մինխտրութիւնների և գլխաւոր վարչութիւնների ֆինանսական նախահաշիւները և ելումուտքի պետական հաշուեկշիւը, ինչպէս և այդ հաշուեկշիւով չնախատեսուած գանձարանից բաց թողած գումարները,—այդ բոլորը համաձայն այդ առարկաների համար կազմուած կանոնների. գ.) պետական հաշուեկշիւի կատարման մասին պետական կոնտրոլի զեկուցումը. դ.) պետական հասոյթների, գոյքերի օտարացման մասին գործերը, որ պահանջւում է բարձրագոյն համաձայնութիւն. ե.) գանձարանի հաշուով կառուցուող երկաթուղիների գործերը. չ.) գործադրուող օրէնքներից դուրս կազմուող ակցիօներական ընկերութիւններ հիմնելու գործերը. է.) գործեր, որոնք առանձին բարձրագոյն հրամաններով յանձնւում են Դոմայի գնութեան:

Պետական Դոմային իրաւունք է տրւում յարուցանել նախազիծներ՝ վերացնելու կամ փոփոխելու գործադրուող օ-

ընկերները և նախագծեր՝ նոր օրէնքներ հրատարակելու մասին: Այդ նախագիծները չպէտք է վերաբերուեն հիմնական օրէնքներով սահմանուած պետական կազմի հիմքերին:

Պետական Դուման իրաւունք ունի տեղեկութիւններ և լաքատրութիւններ պահանջել մինիստրներէց և պետական սե-
նատից կախում ունեցող զանազան մասերի գլխաւոր կառավա-
րիչներէց՝ այն գործողութիւնների նկատմամբ, որոնք Դումայի
կարծիքով խախտում են գոյութիւն ունեցող օրէնսդրութիւնները:

Կառավարական սենատին օգոստոսի 27-ից տրուած ու-
կադով սահմանուած են ժամանակաւոր կանոններ ժողովրդի
լուսաւորութեան մինիստրութեան բարձրագոյն կրթական հաս-
տատութիւններում: Այդ կանոններով մտցնում է ընտրողական
սկզբունքը, որ գործադրւում էր համալսարաններում մինչև
1884 թուականը:

ԱՐՏԱՒԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Խաղաղութեան դաշինքի Ռուսաստանի եւ Ճապոնիայի մէջ:—Անգլո-ճապոնական
նոր դաշնագիրը:—Մերձաւոր Արեւելիի գործերը:—Թիւրքիա եւ մեծ պետքիւն-
ները:

Վիտտէն օգոստոսի 16-ից, Պորտսմուտից Թագաւոր-Կայս-
րին հեռագրել էր, որ երկար բանակցութիւններից յետոյ Ճա-
պոնիան ընդունեց խաղաղութեան պայմանները: Օգոստոսի
23-ին, ցերեկուայ ժամի 3-ից 47 րոպէ անց, երկու պետու-
թիւնների լիազօրների կողմից ստորագրուեց խաղաղութեան
պայմանագիրը եւ այժմ մնում է, որ Յարը եւ Միկալօն հաստա-
տեն այն՝ իրանց ստորագրութեամբ: Դեռ խաղաղութիւն հաս-
տատելուց առաջ անգլիական մի քանի լրագիրներ յայտնում
էին, որ աշխարհը պիտի դարձանայ, այն չափաւորութեան
վրայ, որ ցոյց կը տայ Ճապոնիան իր պահանջների մէջ:
Եւ արդարեւ, պատմութեան մէջ դեռ չտեսնուած մի շարք
յաղթութիւններից յետոյ, Ճապոնիան ցոյց տուեց զար-
մանալի փափկանկատութիւն զէպի իր յաղթուած թըշ-
նամին: Մենք հաւատացած ենք, որ ոչ մի քրիստոնեայ
պետութիւն, ոչ մի Վիլհէլմ, նման պայմաններում այդպի-
սի մարդասիրական զիջումներ չէր անել, այլ կը չոքէր պար-
տուածի կրծքին եւ իր շէյլովային հաշիւները կը ներկա-
յացնէր...

Աշխարհին յայտնի է, որ Ճապոնիան զէնք բարձրացրեց,
կըր տեսու որ խաղաղ բանակցութիւններով անկարող է հե-
ռացնել այն վտանգը, որ սպառնում է իր անկախութեան շա-
հատակով Ռուսաստանի կողմից: Ապահովել իր այդ անկախու-
թիւնը սպազայ վտանգներից—անո, Ճապոնիայի գլխաւոր նը-
պատակը: Եւ խաղաղութեան պայմանների մէջ նա չդիջեց
միմիայն այն կէտերում, որ ինքը առաջարկած էր յիշած նը-
պատակի համար: Նա զիջեց զրաժական վարձատրութեան, Սա-
լսալին կղզու մի մասի վերադարձման, ինչպէս եւ չէզոք նաւա-
հանգստներում առաւտան դրած ռուսական մի քանի զրահա-

կիրները հարցերում. սակայն պահանջեց անփոփոխ այն կէտերը, որոնց իրագործմամբ Ճապոնիան դառնում է գերիշխող թէ Ճապոնական և թէ Դեղին ծովերի ջրերում, ինչպէս և Կորէայում ու Կլանտունում. իսկ Մանջուրիայից հեռացնում է ռուսական իշխանութիւնը, ուր և հաստատում է «բաց դռների» քաղաքականութիւնը, որից, շնորհիւ ձեռք բերած երկաթուղիների և աշխարհագրական-քաղաքական նպաստաւոր հանգամանքների, անշուշտ ամենից շատ օգտուելու է ինքը Ճապոնիան. արդէն Ճապոնական գաղթականութեան հզօր հոսանքներ են սկսուել առաւելագոյն արիւնով ողողած այդ երկիրը: Պայմանագրի 2-րդ յօդուածի զօրութեամբ Կորէան ընկնում է Ճապոնիայի գերիշխանութեան ներքոյ. 4-րդ յօդուածով Պորտ-Արտուր, Տալիննովան և դրանց կից ցամաքներն ու ջրերը անցնում են Ճապոնիայի ձեռքը. 6-րդ յօդ. Մանջուրական երկաթուղին սկսած Կուանչինգից հարաւ և անխափանքերը դառնում են Ճապոնիայի սեփականութիւն. 9-րդ յօդուածով Ռուսաստանը զիջում է Ճապոնիային Սախալին կղզին մինչև 50° հիւս. լայն.-ը կից կղզիներով. 11-րդ յօդուածով Ռուսաստանը ձկնորսութեան իրաւունք է տալիս Ճապոնահպատակներին ռուսական ջրերում (Օխոտեան և Բերինգեան ծովերում), 12-րդ յօդ. երկու կողմերը կնքում են տուտրական պայմանագիր, որի զօրութեամբ Ճապոնիան ստանում է «ամենից շատ արտօնուած պետութեան» իւրաւունքներ. 13-րդ յօդուածով Ճապոնիան ստանում է ռուս գերիների պահպանութեան համար առատ վարձատրութիւն: Այդ բոլոր կէտերից ճապոնացիների պէս մի ընդունակ ազգ կարճ միջոցում իհարկէ այնպէս կ'օգտուի որ Հեռւոր Արեւելքում նրա առաջնակարգ դիրքը կը դառնայ անսասան: Սակայն յաղթութեան ձեռք բերած պտուղները աւելի ևս ապահով դարձնելու համար Ճապոնիան հեռատեսութիւն ունեցաւ նորագելու իր գաշնակից Անգլիայի հետ զինակցութեան նոր պայմանագիր տալը տարով: Հին պայմանագիրը, կնքուած էր 1902 թ. յունուարի 30-ին հինգ տարով. այդպիսով պայմանաժամի լրանալուց առաջ կնքուած է նոր պայմանագիր, որի մէջ ի նկատի են առնուած պատերազմից յետոյ ստեղծուած նոր հանգամանքները: Այդ նոր պայմանագրով Անգլիան, երաշխաւորելով Ճապոնիայի գերիշխանութիւնը, միաժամանակ ապահովում է status quo-ն Միջին Ասիայում, Պարսկաստանում և Աւստրալիայում երրորդ պետութեան ռոնձկութիւններից: Այդ պայմանագրի զօրութեամբ պահպանւում են և Հնդկաստանի սահմանները ռուսական ձեռնմխումներից:

Աշխարհի վրայ ամեն աղէտ անցողական է, սակայն մի համաժարդկային չարիք կարծես վերջ չունի: Ահա մի դար է որ Եւրոպան ժանդարմի դեր է կատարում ամեն տեսակ գաղանութիւնների և անիրաւութիւնների որջ դարձած մի պետութեան նկատմամբ, որին «Հիւանդ մարդ» անունը տալով թողնում են կատարել քստմեկի ոճրագործութիւններ իր հպատակ քրիստոնեաների նկատմամբ: Այդ «Հիւանդ մարդ», կամ աւելի ճիշտն ասած «կատաղի գաղանդ», շարունակում է իր աւերումները Մակեդոնիայում և Հայաստանում: Բնաջնջման տակտիկային հետևելով Թիւրքիան կանգ չի առնում ոչ մի բանի առաջ. ապահովելու համար Ստամբուլը ապագայում անգամ բուլղարական բանակի առաջխաղացումից, նա հրկիպել տուեց ամբողջ պետութեան մէջ իր ճոխութեամբ և մեծութեամբ երկրորդ քաղաքը—Ադրիանուպոլը: Օգոստոսի 19-ին, հրկիպութիւնը սկսուեց հայկական թաղից և մի գիշերում ոչնչացրեց 400 տուն. երեք օրուայ ընթացքում այրուեց 3000 տուն և 18,000 մարդ զոհուեց անից, տեղից, կարողութիւնից: Frank. Zeitung-ի կարծիքով՝ թուրք վարչութիւնը Ադրիանուպոլը այրելու հրաման ունէր սուլթանից. այդ են պահանջում ռազմագիտական տեսակէտները դեռ չեղած պատերազմի ժամանակ... Եւ այդ անգութ բեժիմը դեռ ևս պահպանում է քրիստոնեայ պետութիւններից, որոնք իրանց զօրքերով ճնշում են Կրետացիներին, որպէսզի փառաւորութիւնի սուլթանի անուանական գերիշխանութիւնը այդ կզոհ վրայ: Մարդասիրութիւնը և արդարութիւնը միմեջ չպէտք է թելադրէր՝ վերջապէս չխանգարել պատմականօրէն անհրաժեշտ մի վերջաւորութիւն, այն է կրետացիների միանալուն իրանց արիւնակից Յունաստանի հետ: Թէ ինչ ղգացմունքներ կարող է աճեցնել թուրք բեժիմը նոյնիսկ մուսուլմանների մէջ, այդ ապացուցում է արաբական ապստամբութեան պետերից մէկի՝ Մահմուդ-Նահեայի՝ սուլթան հրամանը արաբական շէյխերին, մինչև վերջին ծայր կուռել թուրքերի դէմ, խոստանալով դրախտ ամեն մի արաբի, որ կը սպանի զոնէ 5 թուրք!...

Ս. Լ.

ԵՐԻՏԱՍԱՐԴ-ԹԻԻՐՔԵՐԻ ԿՈՉԸ

Արդ-իւլ-Համիդի սպանութեան փորձից լաւագոյն առիթ չէր կարող լինել Երիտասարդ-թիւրքերի համար Սուլթանի և նրա բէթիմի բիւրաւոր չարագործութիւնները մի անգամ ևս ամբողջ աշխարհի առաջ մերկացնելու: Ու «Կարմիր Սուլթանի» կամ Գլադստոնի խօսքերով՝ «Մեծ ժարդասպանի» գլխին շանթեր սկսեցին տեղալ Երիտասարդ-թիւրքերը, որոնց շարքում իր ուժգնութեամբ ամենից աւելի աչքի էր ընկնում զոկու. Աբդուլլահ Ջէվդէթ բէյ, «Իշթիհատի» խմբագիրը: Երիտասարդ-թիւրքիայի մի ուրիշ հատուածը՝ նրանք՝ որ համախմբուած են «Հուրրիյէթ»—Ազատութիւն—լրագրի շուրջը, հրապարակ է իջնում ահա դատապարտելու հարար սուլթանական բռնութիւնները: «Հուրրիյէթ»-ի կուսակցութեան նախագահը՝ Մուխլիս Սէլամի, եւրոպական մամուլի բոլոր օրդաններին ուղղել է հետեւեալ կոչը, որ քաղելով Pro Armenia-ից՝ ներկայացնում ենք մեր ընթերցողներին, իբրև մի հետաքրքիր և բնորոշ դոկումենտ:

ՀՈՒՐՐԻՅԷթ

Օսմանեան Հայրենասէր Ընկերութիւն

Կենտրոնատեղի.

Կ. Պոլիս

Մասնաձիւղեր

1905, Կ. Պոլիս օգոստ. 20-ին:

Պարիզում, Լոնդոնում,

ժընէվում, Գահիրէում

Պարոն խմբագիր.

Այն խռովութիւնների հանգէպ, որ սիրում է ցանկել մեր զփառիւ երկրի բռնակալ վեհապետը՝ Կայսրութեան այլև այլ ազգաբնակութիւնների մէջ, որոնք գիտէ թէ հաւասարապէս աւտում են իր դարչելի սէթիմը, մանաւանդ այն սիստեմատիկ զըր-դումների հանգէպ, որոնց դիմում է նա Մայրաքաղաքի ստրուկ մամուլի միջոցով՝ ազգի տգէտ դասակարգի միջև օտարալիերութիւնն ու ֆանատիկական ոգին բորբոքելու համար—մենք մեր պարտականութիւնն ենք համարում ներկայացնել իրանց իսկական գոյնով՝ յուլիս 22-ի պայթումի հետ կապուող փաստերը, նրանց բնաւորութիւնը, մերկացնելով միևնոյն ժամանակ

քաղաքակիրթ աշխարհի առաջ այն ոճրագործ ջանքերը, որ նա գործ է դնում վերանորոգելու համար մարդկային այն սարսափելի նախճիրները, որոնց շնորհիւ նրա թագաւորութիւնը ստացել է արդէն ամենատիւր հռչակը:

Երկրի ինտելիգենտ դասակարգերի՝ ժամանակակից պատմութեան ընթացքում իսպառ չտեսնուած ամենաջախջախիչ բռնապետութեան դէմ մղած անհաւասար կռուի հետեանքով՝ եթէ շատ յարգելի պատճառներ թոյլ չտուեցին այդ հերոսական գործողութեան հեղինակներին այժմեանից և եթէ հռչակել թէ իրանք էին փորձի կատարողները, եթէ օսմանեան լիբերալիզմի գերագոյն շահերը պահանջում են, որ Սուլթանի ոստիկանութիւնը շարունակէ թափառել հետախուզութիւններ և ենթադրութիւնների լարելը թոյլ մէջ, որոնք միանգամայն անդամալուծում են նրա գործունէութիւնը, յամենայն դէպս անկարելի է ուրանալ, որ այդ խիղախ փորձը անվիճելի պայթումն էր այն զայրոյթի, որ բորբոքում է, հաւասար ուժգնութեամբ, Կայսրութեան այլևայլ ժողովուրդները, և որը կարող է խաղաղուել միմիայն այն դէպքում, երբ կը հաստատուեն այնպիսի կարգեր, որոնք ժողովուրդների ճակատագրը կը դնեն իրանց սեփական ձեռքի մէջ: Իր յղացումով՝ ինչպէս և իր գործադրութեամբ, այդ արի շահատակութիւնը՝ հարազատ թարգմանն է հանդիսանում այն բարեբար համերաշխութեան, որ սրտանց հաւատում ենք, պիտի տապալէ հիմնովին այն որդնոտ ուժիմի շէնքը, որ արժանի է միայն բարբարոս ժամանակների և որը պատրաստում է մի մեծ և փառաւոր Կայսրութեան բարոյական և նիւթական անանկութիւնը:

Մահմեդական, քրիստոնեայ կամ հրէայ, բոլոր օսմանցիները միացած են համիդական բռնալալութեան դէմ մղած կռոււած: Ամենքը ընդունում են իրանցից պահանջուած զոհողութիւնների բաժինը, և երբ ժամը հնչէ, ոչ ոք պիտի փախչի պատասխանատուութիւնիցը այն ձեռնարկութիւնների՝ որ թելադրում է մարդկային պարտականութիւններից ամենանուիրականը—աշխատել նուաճելու այն բնական իրաւունքները, որ տալիս են իրան խորհող էակի յատկութիւնն ու արժանապատուութեան զգացումը:

Ամենաանկեղծ սուղի զգացումով համակուած սրտով է, որ օսմանեան լիբերալները մատուցանում են իրանց յարգանքը այն դժբաղդ և անմեղ զոհերի յիշատակին, որոնց հարուածեց կոյր բաղդը այն հարուածով, որ ուղղուած էր զարշիլի բռնակալի դէմ, որը վաղուց իվեր զոհուած է արդէն մարդկութեան շարքից դուրս: Այդ զոհերը գնացին ստուարացնել թիւը այն բիւ-

բաւոր զժբաղդների, ամեն յեղից և ամեն կրօնից, որ գտել են մահը թիրաքանում, արքորավայրում, ծովերի յատակում, և կամ որ ընկել են սրով՝ իբրև ողջակէզ՝ իրանց արիւնը նուիրելով նըլղըղի բռնակալի բորբոքած ատելութիւններին: Այդ բոլոր արիւնի պատասխանատուութիւնը ժայթքում է նրա՝ վրայ, որին պատմութիւնը կպցրել է. «Կարմիր Սուլթան» մակդիրը և ուրը յամառելով պահպանել բռնապետական միենոյն ուժի մը, օրինաւոր է դարձնում քանդումի այդ դարհուրելի միջոցների պործածութիւնը:

Ժողովրդի ինտելիգենտ դասակարգի համար,— իրանց ատելութեան մէջ այնքան սերտօրէն միացած՝— պարտականութիւնը յատակ կերպով զծուած է: Որքան շատ լինեն զոհերը, նոյնքան լիրերալները պէտք է յամառօրէն շարունակեն հետեւել այն ուղուն, որ ընդգրկել են ազատագրելու համար իրանց գնդութիւնից՝ միլիօնաւոր մարդկային էակներ:

Բայց մեր թշնամին չի սահմանափակում մեզ դէմ կռուելով. լիբերալիզմը ջախջախելու իր անկարողութիւնից մոլեղնած՝ նա դիմում է տգէտ դատակարգերի կոքերին և աշխատում է վառել գազանային կիրքերը, կարծելով, որ այդ է պահով միջոցը ազատաբար շարժումը կանգնեցնելու:

Ահա այդ հակամարդկային վեքենայութիւնների վրայ է մանաւանդ, որ մենք ուղում ենք հրաւիրել քաղաքակիրթ աշխարհի ուշադրութիւնը: Եւրոպան՝ յանուն իր արժանապատուութեան և իր պատուին, պարտաւոր է սանձահարել արիւնոտ խժիժութիւնները մի գգուելի բռնակալի, որ մինչև իր որջը հայածուած՝ թոյլ է տալիս իրան ամենապաժան հարստահարութիւնները՝ յոխորտանքի մի գերագոյն ճիգով:

Յոյս ունենք, որ մեր կոչը անարձագանգ չի մնայ:

Յանուն ազատութեան և մարդասիրութեան սրբազան սկզբունքների, խնդրում ենք ձեզ, պարոն խմբագիր, որ բարեհաճէք հրատարակել ներկայ կոչը ձեր յարգելի լրագրում, և շտապում ենք մատուցանել ձեզ մեր կանխող շնորհակալութիւնների հետ, մեր բարձր յարգանքի հաւաստիքը:

Ի դիմաց «Հուրիյէթ»-ի՝ նախագահ, Մուխլիս Սէլամի:

Լեզուի և գրագումների ի՛նչ անաղին տարբերութիւն մեր յարգելի Աղայեփների և Ջէվդէթ բէյերի, Մուխլիս Սէլամիների միջև...

Տ. Զաւէն

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

«Մուրճ»-ի № 6-ում.

կրես տող տպուած է պէտք է լինի

123 13 վերեւց առաջին՝ նախնական առաջին՝ նախ-
քաղաքակրթութեամբ. նական ճապոնի
կրկրորդ՝ հին ճապոնի ինքնուրոյն
նը, ուր չինական ճա- քաղաքակրթու-
պոնի իր ինքնուրոյն թեամբ. երկ-
քաղաքակրթութիւնն ըրդ՝ հին ճապո-
աւելանում է տեղա- նը, ուր չինական
կանի վրայ... քաղաքակրթու-
թիւնն աւելա-
նում է տեղակա-
նի վրայ...

» № 7-ում.

25	21 վ.	պատուհաններ	պատուհաններ
31	20 »	ազգիկ	ազգիկ
122	15	նորը	որը
125	30	նիւթապաշտական	իրապաշտական

» № 9-ում.

75	12 վ.	VII դար	XII դար
82	5 ներ.	XIX դար	XIV դար

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՅՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԱՐՇԱԼՈՅՍ“

գրական, հասարակական, ֆաղափական, սոցիալիստական պատկերազարդ օրաթերթի

որ լոյս տեսաւ օգոստոս ամսի վերջերից՝ ռուսաց «Русскія Вѣдомости» օրաթերթի մեծութեամբ (տարեկան բաժանորդագինը 7 ռ.):

«Արշալոյս» նպատակն է լինելու ընթերցանութեան թարմ և օգտակար նիւթ մատակարարել հայ ընթերցողներին՝ արծարծելով առնչադիմական լուսամտի գաղափարներ, բացատրելով ընթացիկ կեանքի երևոյթները, հասարակական պէս-պէս հոսանքներն ու հրատապ հարցերը և այդ բոլորի միջոցով նպաստել հայ ազգի զարգացմանն ու քաղաքակրթութեանը: Աշխատակցելու հրաւիրուած են յայտնի հեղինակներ ու մասնագէտներ: Բացի դրանից խմբագրութիւնը լայն ասպարէզ է բանալու հայ երիտասարդութեան առաջ, առանձնապէս աշխատելով տեղ տալ թարմ և օգտակար ոյժերին, և գործադրելով գրական աշխատանքի վարձատրութեան սկզբունքը:

«Արշալոյս» ունենալու է հետեւեալ բաժինները.

1. ԿԱՌԱՎԱՐՁԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ, 2. ԱՌԱՋՆՈՐԴՈՂՆԵՐ, 3. ՀԵՌԱՅԻՆՆԵՐ—(Գործակալութեան և սեփական), 4. 1. ՆԵՐՔԻՆ—ՏԵՍՈՒԹԻՒՆ.—ա. Ներքին լուրեր և բ. Փոքրիկ յօդուածներ ընթացիկ հարցերի մասին: 11. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—ա. Յօդուածներ արտասահմանեան խոշոր գէպերի մասին, բ. Թղթակցութիւններ արտասահմանից, գ. Քաղաքական լուրեր, դ. ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՇՈՒՐՁԸ.—Տեղեկութիւններ արտասահմանեան հայկական կեանքից, քաղուածքներ արտասահմանեան հայ թերթերից, հարկաւոր գէպերում խմբագրական բացատրութիւններով ու նկատողութիւններով: 111. ԿՈՎԿԱՍՏԵԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ.—ա. Յօդուածներ զուտ զաւառական կեանքի տնտեսական, կրթական և այլ ընթացիկ կարիքներին մասին, թղթակցութիւններ և լուրեր, բ. ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ.— Ամփոփ տեսութիւններ թէ՛ տեղական (հայ և օտար) և թէ՛ զաւառական ներկայացումների, համերգների ու հանդէսների մասին: 5. ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ.— Լուրեր, տեղեկութիւններ ու յօդուածներ թիֆլիզի կեանքից: 6. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ.—ա. Հաշիւներ ու տեղեկութիւններ գիտական, դատաստանական, աւետարական-արդիւնաբերական և հասարակական հիմնարկութիւնների մասին, բ. ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Ինքնուրոյն տեղեկութիւններ և թարգմանական ջաղուածքներ օտար մամուլից: 7. ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ ԵՒ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ.— ա. Քաղուածքներ հայ և օտար մամուլից խմբագրական բացատրութիւններով ու նկատողութիւններով, բ. Քննադատական յօդուածներ: 8. ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ: 9. ՄԱՏԵՆԱՊՈՒԹԻՒՆ.— ա. Բեցէնդիաներ հայերէն լեզուով լոյս տեսած զբոսների մասին, բ. Ամփոփ

տեղեկութիւններ օտար լեզուներով լոյս տեսած զբերի մասին, մանաւանդ հայերին, նրանց գրացիներին և Մերձաւոր Արեւելքին վերաբերեալ, դ. Սմբագրատանն ստացուած զբերի ցուցակը, 10—11 ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.— ա. Ինքնուրոյն և թարգմանական վէպեր, մանրավէպեր, բանաստեղծութիւններ ու պատկերներ. բ. Սոցիալական-սոստակագիտական ամբողջօգուածներ ու տետրութիւններ. գ. Գրական և գիտական տետրութիւններ. դ. Բժշկական և առողջապահական օգուածներ. ե. Երգիծաբանական զրուածքներ: ԱՐԴԻԻՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Տեսութիւններ և տեղեկութիւններ արդիւնագործութեան և վաճառականութեան մասին: 12. ՏԵՂԵԿԱՏՈՒ.— ա. Մուրհակներ և բորսա. բ. Օրացոյց. գ. Այսօր (տեղեկութիւններ ժողովների, հանդիսների և ներկայացումների մասին). դ. Ճանապարհորդութիւն. (տեղեկ. երկաթուղիների և նաւերի մասին): ԽՈՐՀՐԴԱՏՈՒ.— Խորհուրդներ և պատասխաններ ընթերցողների առաջարկած իրաւաբանական-բժշկական հարցերին: ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ. ՊՈՍՏԱՐԿՂ. 13. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. 14. ՊԱՏԿՆԵՐՆԵՐ.

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.

Թիֆլիզի և Ռուսաստանի համար		Արտաստեղծութիւնի համար	
4 ամիսը (սեպ.—յուն.)	2 ռ. 50 կոպ.	4 ամիսը	4 ռ.—9 մարկ
3 »	2 »	—11 ֆրանկ—9 շիլլինգ	
2 »	1 » 50 »	—2 զոլլար:	
1 »	» » 75 »		

Խմբագիր-Հրատարակիչ Գ. Մելիք-Խարազեօղևան

Առաջիկայ սեպտեմբեր ամսից Գ. Մելիք-Խարազեօղևանի հրատարակութեամբ սկսելու է լոյս տեսնել նաև «Кавкаскій Вѣстникъ» ռուսերէն ամսագիրը, որի նպատակն է լինելու նպաստել Կովկասի զանազան ազգութիւնների փոխադարձ մերձեցմանը, նրանց համախմբել ընդհանուր քաղաքակրթական շահերի շուրջը և միևնույն ժամանակ ռուս հասարակութեան առաջ պատկերացնել Կովկասի ընթացիկ կեանքն ու կարիքները:

Այդ նպատակով արդէն որոշ համաձայնութիւն է կայացել վրաց առաջադիմական «Ցնորիս Փոքրեկի» լրագրի խմբագրութեան հետ:

«Кавк. Вѣст.»-ի բաժանորդագլինն է 4 ամիսը (սեպ.—յունուար) 3 ռուբ.

«Արշալոյս» և Кавк. Вѣст.» միասին ստացողներ պէտք է վճարեն տարեկան 10 ռ., իսկ 4 ամիսը—3 ռ. 7 կոպ.: Բաժանորդ գրուել կարելի է խմբագրատանը (Թիֆլիս, Գանովսկահա փող. № 11), օտար քաղաքներից պէտք է դիմել Թիֆլիս, Редакция газеты «Аршалуисть»

«Արշալոյսի» գործակալներն են.

Կարսի օրգանում—Հ. Տէր-Պաշտուրեան, Ալեքսանդրապոլում—Ա. Խզմալեան, Գաղափրիստալում—Պ. ք. Պանդաղեան և Վ. Աբաբաջեան, Երևանում—Ա. Երաբատ—զրափաճառանոցը, ա. Էջմիածնում—Գ. Ղազարեան, Բաքում—«Сотрудникъ» զրափաճառանոցը, Սուխի շրջանում—Ա. Յակոբեան, Ախալցխայում—Առամնաբոյժ Պ. Մակարեան, Ախալ-բալախում—Յով. Բարսեղեան, Սաւառոպոլում—Ս. ք. Տէր-Յովհաննիսեան, Մոզդզիլում—Յ. ք. Պաշլանքեան:

Լոյս տեսաւ և ուղարկուեալ է բաժանորդներին

Ն. Փրանգեանի

« Ա Տ Ր Պ Ա Տ Ա Կ Ա Ն »-Ը

(Պատկերազարդ)

296 մեծադիր էջ և 28 պատկերներ:

Գինն է Պարսկաստանում 1 թուման, Ռուսաստանում 1 ռ. 50. Արտասահ.-4 ֆր. Հեղինակից գումարով առնողներին կը զեղջուի 200/0: Գիրքը ուղարկուեալ է միայն այն բաժանորդներին, որոնք արդէն վճարել են բաժանորդագինը: Այս թող ի նկատի ունենան նաև իմ այն գործակալները, որոնցից գեալ չեմ ստացել թէ հասցէները և թէ դրամը: Ապառիկ ոչ ոքի: Դիմել՝ Тифлисъ. Типографія «Гермесъ» Е. Франгяну և գրավաճառանոցներին:

Յ. ԴԱՂԱՇԵԱՆԻ

I

ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ

ռուսերէնից հայերէն

Լոյս տեսաւ **ՈՒԹԵՐՈՐԴ** պրա-կը,

Գինը 1 ռ. 20 կոպ.

Ամբողջ բառարանի բաժանորդագինն է 7 ռ.: ճանապարհածախսով 8 ռուբլի, փառակազմ 9 ռ.: Հեղինակին դիմողները նախապարհածախս չեն վճարում: Դիմել հեղինակին հետեւով պարզ հասցէով. Тифлисъ, А. С. Дагбашяну. Թիֆլիսում բաժանորդ կարելի է գրուել «Գուտտենբերգ» գրախանութում:

II

ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ

հայերէնից ռուսերէն

Լոյս տեսաւ ԱՌԱՋԻՆ պրակը, Գինը 1 ռ.: Ամբողջ բառարանի բաժանորդագինը 5 ռ., առաջին բառարանիս բաժանորդներին համար 4 ռ.:

Գրպանի բառարան ռուսերէնից հայերէն:

Բաժանորդագինը 2 ռ. 50 կ.:

Դիմել հեղինակին վերոյիշեալ հասցէով:

(հ, 2.)

Բացումը է չորս ամսուայ բաժանորդագրութիւն

ՀԱՍԿԵՐ

Մանկական պատկերազարդ ամսագրի

1905 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻՑ ՄԻՆՉԵՒ ՏՄՐՈՒԱՅ ՎԵՐՁԸ

Ամսագիրը լոյս է տեսնելու 32—48 երեսնոց մեծապէր զրօյլներով և հրատարակուելու է հետեւեալ ծրագրով

1. Բանահիւսութիւն՝ արձակ և ոտանաւոր (վէպ, պատմուածք, բեմական գրութեան, պոէմ, բանաստեղծութիւն, առակ և այլ գեղարուեստական երկեր)։—2. Կենսագրութիւն։—3. Ճանապարհորդութիւն։—4. Գիտական-հանրամատչելի յօդուածներ աշխարհագրութիւնից, պատմութիւնից, բնագիտութիւնից և գիտութեան այլ ճիւղերից։—5. Յօդուածներ զեղարուեստի մասին։—6. Մանր լուրեր և Այլեայլ։—7. Ֆիզիքական փորձեր, խաղեր, շարադներ, սերուհներ և զանազան զուարճալիքներ։—8. Թղթակցութիւն մանուկ ընթերցողներին հետ։

—Ամսագրի նպատակն է ա) ներշնչել մանուկ ընթերցողներին վսեմ ձգտումներ, արժարժեքով նրանց մէջ սէր գէպի մարդը և գէպի հայրենի միջավայրը, բ) տալ նրանց ճիշտ հասկացողութիւններ բնութեան և մարդու մասին, գ) զարգացնել նրանց նաշակը և դ) ուրախութիւն եւ աշխոյժ մտցնել մանկական կեանքի մէջ։

Ամսագիրը ունենալու է նաեւ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲԱԺԻՆ, որ հրատարակուելու է իւրաքանչիւր ամիս 16—24 երեսանոց առանձին տետրերով, հետեւեալ ծրագրով

1. Յօդուածներ և սեփորմներ մանուկների ֆիզիքական, մտաւոր և բարոյական կրթութեան զանազան խնդիրներին մասին։—2. Նորութիւններ զարոյցական կեանքից և մանկավարժական գրականութիւնից։—3. Մտեւնախօսութիւն և քննադատութիւն մանկավարժական և մանկական գրքերի։—4. Մանր լուրեր և Այլեայլ։—5. Որհնորդներ, հարցեր և պատասխաններ։—6. Պատարկի։—7. Տալարարութիւններ։

—Այս բաժինը ի նկատի ունի ա) օգնել ծնողներին և առհասարակ մանուկների դաստիարակութեամբ պարագլուխներին լուսարանելու ընտանեկան և հասարակական կրթութեան ճշմարիտ նպատակներն ու միջոցները ներկայ պարագլուխներում, երբ հայ ընտանիքը ենթարկւում է անխուսափելի արմատական փոփոխութիւնների, բ) իրար մօտեցնել զարոյց և ընտարիքը և գ) զործնական ցուցմունքներով գիւրացրել ընտանեկան դաստիարակութեան գործը, մանկական ընթերցանութեան և տնային զուարճութիւնների կազմակերպութիւնը, դաստիարակների և վարժուհիների ընտրութիւնը և այլն։

Չորս ամսուայ բաժանորդագինն է.

ՀԱՍԿԵՐ մանկական

բաժինը Թիֆլիսում 1 ռ. մանկավարժական 1 ռ. 40կ. Թիֆլիսից դուրս բաժնով

Արտասահմանում ԵՐԵՎ Ֆ.

ԶՈՐՍ Ֆ.

Սմարգիր-հրատարակիչ՝ Կատ. Լիսիցեան

Բաժանորդ կարելի է գրուել՝ խմբագրատանը, Թիֆլիս, ճեհերութեան փ. № 29, (Редакция журнала «Аскеръ», կամé-R action du Journal «Hasker») և «Գուտտներեղ» և «Կեղրուչ-նական» գրախանութներում։

- սաստանի եւ ճապոնիայի մէջ:—Անգլո-ճապոնական
 նոր դաշնագիրը:—Մերձաւոր Արեւելքի զործերը:—
 Թուրքիա եւ մեծ պետութիւնները: Լ. Ս. 182
 20. ԵՐԻՏՐԱՍՏՐԴ-ԹԻԻՐԵՐԻ ԿՈՉԸ, Տ. Զ.-ի 185
 21. ՎՐԻՊԱԿՆԵՐ 188
 22. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ
 23. ՅԱԽԵԼՈՒԱԾ. Զէյմն Մորիէր՝ «ՀԱՋԻ ԲԱՅԱՆ ԱՆԳ-
 ԼԻԱՅՈՒՄ», վէպ պարսկ. կեանքից, թարգմ.
 անգլ. Մ. Կարապետեանի. 65—121

ՅԵՐՈՒՆԵԱԿԻՈՒՄ Է ԲԵԺԵՆՈՐԴԵԳՐՈՒԹԻՒՆ

1905 թ.

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

(Նոր շրջան V տարի)

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ի Ն Ը

Ռուսացան՝ տարեկան	10 ռ.	Արաստեման՝ 12 ռ.	(32 Ֆ.)
Կէս տարին	6 »	»	7 » (18 Ֆ.)
1 ամսուան	1 »	»	1 » 20 կ. (3 1/2 Ֆ.)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԻՈՒՄ Է

ԹԻՖԼԻՍԻՍԻՍ — խմբագրատանը (ձախձախածան վողոց, տ. № 12)

Կայսրութեան այլ լեզուից պէտք է ղիմել՝ Тифлисъ, въ редакцію журнала «МУРЧЪ».

Արաստեմանից՝ Tiflis, Rédaction de la revue «MOURTCH».

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագրերից՝ գրել պարս, մանաւանդ քուեր, յասուկ անուններն ու օտար բառերը, եւ քերի վրայն ի՛նչ երեսի վրայ. առանձնապէս ու զարմանել կէտադուքեան, ուղղագրութեան եւ նոր պարբերութիւններ արեւակի ինկու վրայ: Թարգմանութեան հետ պէտք է ուղարկել խմբագրութեանը նաեւ բնագիրը:

2. Ձեռագրութեան մեծ յօդուածները պահւում են խմբագրատանը 6 տարի, իսկ յետոյ ոչնչացնում են: Ձեռագիրը յետ ստանալու համար պէտք է ուղարկել ձանապարհաձախը: Փոքր յօդուածներն ու ոտանաւորները չեն վերադարձնւում:

3. Դրուածքների վարձատրութեան չափը որոշում է խմբագրութիւնը: Խմբագրութեան առանց պայմանների ուղարկուած ձեռագիրները համարւում են անվճարելի:

4. Խմբագրութիւնս իրան է վերապահում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:

5. «Մուրճ» համարը չստացուելու դէպքում պէտք է խմբագրութեանը տեղեկութիւն տալ ոչ ուշ, քան յաջորդ համարի լոյս տեսնելը:

6. Խմբագրութեանը դանաղան հարցումներով ղիմող անձինք պէտք է պատասխանի համար ուղարկեն նամակագրողը կամ պոստային բւանկ:

7. Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 40 կոպէկ: Հասցէի փոփոխումը պէտք է ստացուի իւրաքանչիւր ամսի 10-ից ոչ ուշ, որպէսզի առաջիկայ համարն ուղարկուի նոր հասցէով:

ԸՆԴՈՒՆՈՒՄ: Ընդունւում է ամեն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են,—1 երես ընտղ յայտարարութեան 15 ռ., 1/2 եր.—8 ռ., 1/4 եր.—4 ռ., տողատեղ (կորստ.)—40 կ.:

Ձեռագիրները, նամակները և ծրարները պէտք է ուղղել խմբագրութեան, ԼՅԻՈՆ ՍԱՐԴՍԵԱՆԻ անունով: